
15
Խ-96

ՍԱՄՎԵԼ ԽՈՒԴՈՅԱՆ



ԱՆՁԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԽՈՒՐՈՅԱՆ

ԱՆՁԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2004

159.9
88 5
963

Գրախոսներ
Վ. Ս. Կարապետյան հոգեբանական գիտությունների դոկտոր
Ս. Հ. Սուքիասյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խուդոյան Ս. Ս.
Խ 963 **Անձի զարգացման ճգնաժամային տարիքները**.– Եր.:
Ջանգակ-97, 2004.– 248 էջ:

Սենագրությունը նվիրված է ժամանակակից տարիքային հոգեբանության առավել քիչ ուսումնասիրված ոլորտներից մեկին՝ ճգնաժամային տարիքներին: Հեղինակն առաջարկում է ինչպես տարիքային ճգնաժամերի այնպես էլ մարդու զարգացման փուլերի միանգամայն նոր կոնցեպցիա, որը մշակվել է տարիքային–հոգեբանական հետազոտությունների, հոգեախտաբանության և մարդու պատմական զարգացման փաստերի, տարբեր ժողովուրդների տարիքային ավանդույթների վերլուծության ու համադրության հիման վրա:

Աշխատությունը նախ և առաջ ուղղված է տարիքային հոգեբանության հետ անմիջականորեն առնչվող մասնագետներին՝ հոգեբաններին, հոգեթուժներին, մանկավարժներին, բժիշկներին: Կարծում ենք, որ այն օգտակար կլինի նաև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են մարդու կյանքի ուղու և այդ ուղու «խաչմերուկների» հարցերով:

Խ 0303040000
0003(01) 2004 2004

ԳՄԴ 88.5

ISBN 99930 – 2 – 941 – 1

© Խուդոյան Ս. Ս.
© «Ջանգակ-97» հրատարակչություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԳԼՈՒԽ 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1. Զարգացման ճգնաժամերի տեսական հետազոտությունները ռուսական հոգեբանության մեջ 8
1.1.1. Պ. Պ. Բլոնսկու պատկերացումները տարիքային ճգնաժամերի վերաբերյալ 8
1.1.2. Լ. Ս. Վիգոտսկու տարիքային ճգնաժամերի տեսությունը 9
1.1.3. Զարգացման ճգնաժամերի կոնցեպցիայի հետագա զարգացումը ռուս հոգեբանների հետազոտություններում 14
1.2. Զարգացման ճգնաժամերի պրոբլեմն արևմտյան հոգեբանության մեջ 22
1.2.1. Է. Էրիքսոնի զարգացման ճգնաժամերի կոնցեպցիան 22
1.2.2. Ֆ. Բլոսի զարգացման ճգնաժամերի կոնցեպցիան 25
1.2.3. Ճգնաժամերի կոնցեպցիան տարիքային խնդիրների տեսության շրջանակներում 26
1.2.4. Հասուն տարիքի ճգնաժամերի կոնցեպցիաներն արևմտյան հոգեբանության մեջ 27
1.2.5. Տարիքային ճգնաժամերի տեսությունների դասակարգումն ու վերլուծությունը 31
1.3. Առանձին տարիքների ճգնաժամերի տեսություններն ու էմպիրիկական հետազոտությունները 38
1.3.1. Նորածնության և մեկ տարեկանի ճգնաժամերը 38
1.3.2. Երեք տարեկանի ճգնաժամի տեսությունները և էմպիրիկական հետազոտությունները 39
1.3.3. Յոթ տարեկանի ճգնաժամի կոնցեպցիաները և էմպիրիկական հետազոտությունները 43
1.3.4. Դեռահասության ճգնաժամի տեսությունները և էմպիրիկական հետազոտությունները 45
1.3.5. Պատանեկան ճգնաժամի հետազոտությունները 57
1.3.6. 25–33 տարիքային շրջանի ճգնաժամը 59
1.3.7. Կյանքի կեսի ճգնաժամը 61
1.3.8. Ուշ տարիքի ճգնաժամի հետազոտությունները 65
1.4. Զարգացման ճգնաժամերի էմպիրիկական հետազոտությունների վերլուծություն 69

ԳԼՈՒԽ 2. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՓՈՒԼԵՐԸ

2.1. «Զարգացման ճգնաժամ» հասկացությունը հոգեբանության մեջ 73
2.2. Հոգեկան զարգացում, անձնավորության զարգացում. մարդու տարիքային զարգացում հասկացությունների ճշգրտում 82

2 3. Տարիքային պարբերացման սրոբլեմը և զարգացման ճգնաժամերը ... 85
2 4. Տարիքային պարբերացման սկզբունքները 88
2.5. Ֆունկցիոնալ մոտեցման կիրառումը տարիքային պարբերացման մեջ 91
2.6 Տարիքային ճգնաժամերի տեսակները 135

ԳԼՈՒԽ 3. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

3.1. Անձնավորության զարգացման ինտերիոգենկան մակարդակից ինտրաիոգենականին անցումը և ինքնագիտակցության վերակառուցումները 147
3.2. Ինքնագիտակցության էության հիմնախնդիրը ... 150
3.3. Ինքնագիտակցության տարիքային վերակառուցումների մասին առկա պատկերացումները 155
3.4 Ինքնագիտակցության տարիքային վերակառուցումները ... 157
3.5. Անձնավորության զարգացման ճգնաժամերի առանձնահատկությունները 160
3 6. Անձնավորության զարգացման ճգնաժամերի դիֆերենցիալ ախտորոշման պրոբլեմը 167
3.7. Անձնավորության զարգացման ճգնաժամային տարիքների վերլուծություն 171
3 7 1 Ինքնագիտակցության ծնավորումը և նրնք տարեկանի ճգնաժամը ... 171
3.7.2. Ինքնագիտակցության վերակառուցումը և անձնավորության զարգացման ճգնաժամը դեռահասության տարիքում 185
3.7.3. Դեռահասության տարիքի հետ կապված ժողովրդական ավանդույթները ... 189
3.7.4. Դեռահասության տարիքում ինքնագիտակցության ոլորտին վերաբերող հոգեախտաբանական համախտանիշները 191
3.7.5 Ինքնագիտակցության վերակառուցումը և անձնավորության զարգացման ճգնաժամը 25–32 տարեկանում 193
3.7.6. 25–32 տարիքային շրջանի ճգնաժամի էմպիրիկական հետազոտություն հարցման և կենսագրական (Հիսուս Քրիստոս, Բուդդա, Լ Տոլստոյ, Վ. Վան Գոգ և ուրիշներ) մեթոդներով 204
3.7 7. Ինքնագիտակցության վերակառուցումը և անձնավորության զարգացման ճգնաժամը 55–65 տարիքային շրջանում 215
Եզրակացություններ 222
Գրականության ցանկ 226
Հավելված 237

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ճգնաժամային տարիքների մասին պատկերացումները ծնավորվել են հնագույն ժամանակներում: Օրինակ Հիպոկրատեսը գտնում էր, որ յուրաքանչյուր յոթ տարին մեկ տեղի է ունենում բեկում. ճգնաժամ, որը պայմանավորված է օրգանիզմի վերակառուցմամբ: Նա այս տարիքները առողջության առումով էր վտանգավոր համարում (140, էջ 133–134): Հնուց ի վեր կենցաղային գիտակցության մեջ նույնպես տարածված է եղել «վտանգավոր» տարիքների գաղափարը: Վտանգավոր են համարվել, օրինակ, 7, 14, 21...կամ 9. 18. 27... տարիքները (140)՝ Ըստ լեհ դեմոգրաֆ է. Ռոսեթի (140)՝ լեհերը մինչև օրս սարսափում են 77 տարեկանից, իսկ մեզանում, ինչպես հայտնի է, որոշ տագնապ կա 33 (թերևս Քրիստոսի մահվան տարիքի հետ կապված) և 40 տարիքների կապակցությամբ (օրինակ խորհուրդ չի տրվում նշել 40–ամյակը):

Յուրաքանչյուր յոթերորդ տարվա ճգնաժամային լինելու հարցը դեռևս 17–րդ դարում էմպիրիկական հետազոտության է ենթարկվել: Լեհ գիտնական Կ. Նեյմանը փորձել է վիճակագրական հետազոտություններով պարզել, թե արդյոք յոթնամյակներն իսկապես վտանգավոր են՝ Այդ հետազոտությունները չհաստատեցին յոթնամյակների վտանգավոր լինելը (140, էջ 35):

Հետագայում, ըստ Լ. Ս. Վիգոտսկու (43, էջ 248). զուտ էմպիրիկական ճանապարհով բացահայտվել է նախ 7 տարեկանի ճգնաժամը, ավելի ուշ 3, ապա դեռահասության և մյուս տարիքների ճգնաժամերը (չնայած, պետք է ասել, որ դեռահասության ճգնաժամային լինելու մասին խոսում է դեռևս Ժան–Ժակ Ռուսոն).

Տարիքային հոգեբանության մեջ տարբեր հեղինակների կողմից առանձնացվել են հետևյալ ճգնաժամային շրջանները. նորածնության և

մեկ տարեկանի ճգնաժամերը (43, 167 և ուրիշներ), 3 տարեկանի (Օ. Կրո, Շ. Բյուլեր և ուրիշներ), դեռահասության, 17 տարեկանի (41), 18–20, 22 (141, 46 և ուրիշներ), 25–33 (46, 141 և ուրիշներ), 35–40, 42 տարիքային շրջանների (169, 46 և ուրիշներ) և ծերության ճգնաժամերը (167, 37 և ուրիշներ):

Պետք է ասել, իհարկե, որ ժամանակակից տարիքային հոգեբանության մեջ նշված բոլոր ճգնաժամերը չէ, որ ընդունվում են, ավելին, որոշ հեղինակներ նույնիսկ «զարգացման ճգնաժամ» հասկացությունն անօգտակար են համարում փորձելով համապատասխան երևույթները բացատրել հոգեբուժական կատեգորիաներով (225):

Տարիքային ճգնաժամերի հիմնախնդրին անդրադարձել են բազմաթիվ խոշոր գիտնականներ՝ Լ. Ս. Վիգոտսկին, Կ. Յունգը, Շ. Բյուլերը, Կ. Լևինը, Ա. Ֆրոյդը, է. Էրիքսոնը, Հ. Վալոնը և շատ ու շատ ուրիշներ, սակայն տարիքային այդ երևույթի մասին շատ քիչ բան է հայտնի. «Զարգացման անցումային շրջանների հետազոտման անհրաժեշտության մասին Վիգոտսկու դրույթը,— գրում է Ա. Լ. Վենգերը,— այսօր էլ նույնքան հրատապ է, համարյա նույնքան քիչ իրականացած, որքան հիսուն տարի առաջ» (38, էջ 6) Միևնույն ժամանակ, տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը խիստ հրատապ է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով: Ըստ Լ. Վիգոտսկու հոգեկան զարգացման օրինաչափությունների բանալին հենց տարիքային ճգնաժամերի հետազոտությունը կարող է տալ (ըստ 38, էջ 6): Գործնական տեսանկյունից տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը կարևորվում է նախ և առաջ, բժշկության, մասնավորապես հոգեախտաբանության ոլորտում: Հայտնի է, որ ճգնաժամային տարիքներում կտրուկ աճում է հոգեկան հիվանդությունների քանակը, և շատ հեղինակներ այդ հիվանդությունները դիտում են որպես ճգնաժամերի ելքերից մեկը: Նշենք նաև, որ դեռևս Հիպոկրատեսի ժամանակներից նկատվել է, որ ճգնաժամային տարիքներում մարմնական հիվանդությունների քանակը նույնպես աճում է (հատկապես հասուն տարիքի ճգնաժամերի ժամանակ): Բնականաբար, ճգնաժամերի բազմակողմանի հետազոտությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ ախտաբանական երևույթների առաջացման պայմանները, պատճառները, մեխանիզմները և ավելի լավ կազմակերպել բուժական գործընթացը:

Տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրը կարևորվում է նաև մանկավարժական տեսանկյունից: Ճգնաժամային շրջաններում մարդու զարգացումը տարբերվում է կայուն շրջաններից, հետևաբար պահանջում է մանկավարժական այլ մոտեցումներ Բազմաթիվ հեղինակներ (Ա. Լեոնտև, Դ. Էլկոնին և ուրիշներ) գտնում են, որ հենց սխալ մանկավարժական մոտեցումների հետևանքով են սրվում ճգնաժամերը, ինչն էլ իր հերթին բացասական հետևանքներ է ունենում անձնավորության զարգացման գործընթացի վրա: Ճգնաժամերի հետազոտությունները հնարավորություն կտան մշակել մանկավարժական այնպիսի ստրատեգիաներ, որոնք կմեղմեն այդ շրջանների դժվարությունները, կառավարելի կդարձնեն հոգեկան զարգացման գործընթացներն այդ տարիքներում: Ընդհանրապես, պետք է ասել, որ տարիքային ճգնաժամերի մասին գիտելիքների մասսայականացումը հնարավորություն կտա գիտակցված մոտեցում դրսևորել տարիքային այդ սթրեսոգեն շրջանների նկատմամբ. ասենք անհրաժեշտության դեպքում մասնագիտական օգնության դիմել, դրանով իսկ կանխել ճգնաժամային շրջանների բացասական հետևանքները:

ԳԼՈՒԽ 1
ԶԱՐԳԱՑՄԱՆ ճԳՆԱԺԱՄԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ճԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1.1. Պ. Պ. ԲԼՈՆՍԿՈՒ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ճԳՆԱԺԱՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուս հոգեբաններից առաջին անգամ զարգացման ճգնաժամերի երևույթին անդրադարձել է Պ. Պ. Բլոնսկին (ըստ՝ 119): Նա ճգնաժամերը բացատրում է՝ ելնելով զարգացման դիալեկտիկական օրենքներից: ճգնաժամերը, ըստ նրա, անցումային շրջաններ են, որոնց ընթացքում տեղի է ունենում թռիչք քանակական փոփոխություններից որակականի: Հեղինակը ճգնաժամային շրջանների երկու հիմնական բնութագիր է ներկայացնում.

1. Ծայրահեղ հուզականություն, նյարդայնություն, նյարդային համակարգի հեշտ խոցելիություն:

2. Անհավասարակշռված, բռնկուն վարք, տարօրինակ, այսինքն՝ օբյեկտիվ պայմաններով չհիմնավորված արարքներ (29, էջ 52): Միևնույն ժամանակ, ճգնաժամային տարիքներն առանձնացնելիս Պ. Բլոնսկին հիմնվում է տարբեր չափանիշների վրա՝ Այսպես 3 տարեկանի ճգնաժամի համար բնութագրական է համարվում նևրոտիկ վարքը (29, էջ 52): 5 տարեկանի ճգնաժամի առանձնացման համար հիմք է ընդունվում այն, որ այս շրջանում կտրուկ աճում է երեխայի շարժունակությունը և հասարակական փորձը, իսկ 2 ամսականը ճգնաժամային է, որովհետև այդ շրջանից հետո զարգացումը միանգամայն այլ բնույթ է ստանում, 11 տարեկանում երեխայի ուժերն ու ինտելեկտուալ ֆունկցիաներն են

կտրուկ զարգացում ապրում (29, էջ 53).Բլոնսկին առանձնացնում է նորածնության, 2 ամսականի, 3, 5, 7 տարեկանների և դեռահասության ճգնաժամերը:

1.1.2. Լ. Ս. ՎԻԳՈՏՍԿՈՒ ՏԱՐԻՔԱՅԻՆ ճԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տարիքային ճգնաժամերի պրոբլեմը մանրամասն տեսական վերլուծության է ենթարկել Լ. Վիգոտսկին (նրանից առաջ հիմնականում վերլուծության են ենթարկվել առանձին ճգնաժամային տարիքները).

Վիգոտսկին հոգեկան զարգացումը համարում է ոչ թե էվոլյուցիոն, այլ ռևոլյուցիոն գործընթաց, որի ժամանակ կայուն, հանդարտ, էվոլյուցիոն շրջաններն ընդհատվում են զարգացման ճգնաժամային փուլերով: «Այդ շրջաններում,— գրում է նա,— հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում (մի քանի ամիս, մեկ տարի, ամենաշատը երկու տարի) երեխայի անձնավորության մեջ կտրուկ, արմատական տեղաշարժեր, փոփոխություններ, բեկումներ են տեղի ունենում» (43, էջ 249): Տարիքային ճգնաժամերը, ըստ Վիգոտսկու, պայմանավորված են զարգացման գործընթացի ներքին տրամաբանությամբ, իսկ արտաքին հանգամանքները որոշում են ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները, ըստ որում, ներքին ասելով Վիգոտսկին նկատի չունի միայն կենսաբանական գործոնները. «Ներքին զարգացումը,— գրում է նա,— միշտ իրականանում է այնպես, որ միջավայրը և անձնային պահերը միասնաբար են հանդես գալիս, այսինքն զարգացման մեջ յուրաքանչյուր նոր քայլ անմիջականորեն որոշվում է նախորդ քայլերով, այն ամենով, ինչ արդեն ստեղծվել և ձևավորվել է զարգացման նախորդ փուլում» (43, էջ 385).

ճգնաժամի էությունը Վիգոտսկին տեսնում է պահանջմունքների, մղումների, արժեքների, հետաքրքրությունների վերակառուցման, միջավայրի նկատմամբ երեխայի վերաբերմունքի, հարաբերությունների փոփոխության, նոր գործունեության ձևավորման մեջ (43, էջ 385): Մի խոսքով, փոխվում է երեխայի զարգացման սոցիալական իրավիճակը, որովհետև հինն արդեն սպառած է լինում իրեն, վերակառուցման կարիք է զգում: ճգնաժամային շրջանը, ըստ Վիգոտսկու, անցնում են բոլորը,

ավելին, խոսելով 3 տարեկանի ճգնաժամի մասին նա գրում է. « ..Եթե ճգնաժամն ինչ–ինչ պատճառներով թույլ է արտահայտվում, ապա դա հանգեցնում է հաջորդող տարիքում երեխայի անձնավորության աֆեկտիվ և կամային ոլորտների զարգացման հապաղելուն» (43, էջ 253): Վիգոտսկին սխալ է համարում ճգնաժամային տարիքները միայն բացասական տեսանկյունից դիտարկելը: Ճգնաժամի ընթացքում երեխան կորցնում է իր նախկին հետաքրքրությունները, նյարդային է դառնում, խաթարվում են միջանձնային հարաբերությունները, յուրահատուկ հետզարգացում է տեղի ունենում. «Այնուամենայնիվ,— գրում է նա,— մեծագույն սխալ կլինի կարծել, թե դրանով սպառվում է ճգնաժամային տարիքների նշանակությունը: Զարգացումը երբեք չի դադարեցնում իր ստեղծագործ աշխատանքը և ճգնաժամային շրջաններում էլ մենք տեսնում ենք զարգացման կառուցողական գործընթացներ:

Ավելին այդ տարիքներում այդքան վառ դրսևորվող անկումային գործընթացները ենթարկվում են անձնավորության զարգացման դրական, կառուցողական գործընթացներին, դրանցից անմիջական կախման մեջ են գտնվում և դրանց հետ միասին անբաժանելի ամբողջություն են կազմում: Նշված շրջաններում դեստրուկտիվ աշխատանքն իրականանում է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է անձնավորության հատկությունների և գծերի զարգացման համար· Փաստական հետազոտությունները ցույց են տալիս, որ բեկումնային շրջաններում զարգացման նեգատիվ բովանդակությունն անձնավորության դրական փոփոխությունների հակառակ, ստվերային կողմն է, և այդ դրական փոփոխություններն են կազմում ցանկացած ճգնաժամային տարիքի գլխավոր իմաստը» (43, էջ 253): Վիգոտսկին փորձում է բացահայտել այդ դրական տեղաշարժերը. օրինակ 7 տարեկանի ճգնաժամի ժամանակ, ըստ նրա, աճում է երեխայի ինքնուրույնությունը, դեռահասության շրջանում ճգնաժամն ուղեկցվում է ինտելեկտուալ զարգացմամբ:

Վիգոտսկին զարգացումը դիտում է որպես նորագոյացությունների ձևավորման գործընթաց: Ըստ նրա՝ յուրահատուկ նորագոյացություններ են ձևավորվում նաև ճգնաժամային տարիքներում. «Ինչպես ցույց է տալիս կոնկրետ հետազոտությունը,— գրում է նա,— ճգնաժամային տարիքներում զարգացման ամենաէական բովանդակությունը վերին աստիճանի յուրահատուկ նորագոյացությունների ձևավորումն է: Կայուն տարիքների նորագոյացություններից դրանց հիմնական տարբերությունն այն է, որ դրանք անցումային բնույթ են կրում: Դա նշանակում է, որ հետագայում դրանք չեն պահպանվում այն ձևով, ինչպես առաջացել են ճգնաժամային շրջանում և որպես անհրաժեշտ բաղադրիչ հետագայում չեն մտնում անձնավորության միասնական կառուցվածքի մեջ:՝Դրանք մահանում են. կարծես կլանվելով հաջորդ, կայուն շրջանի նորագոյացությունների կողմից, ընդգրկվում են վերջիններիս կազմում որպես ենթակա կառույց, որն ինքնուրույն կյանք չունի ..՝Որպես այդպիսին, ճգնաժամերի նորագոյացությունները հաջորդ տարիքում մահանում են, սակայն նոր տարիքի ներսում շարունակում են լատենտ ձևով գոյություն ունենալ՝ Չունենալով ինքնուրույն կյանք նրանք միայն մասնակցում են այն ստորգետնյա զարգացմանը, որը կայուն շրջաններում հանգեցնում է նորագոյացությունների թռիչքաձև զարգացմանը» (43, էջ 254): Վիգոտսկին փորձում է որոշել նաև ճգնաժամային տարիքների նորագոյացությունները. այսպես, նրա կարծիքով, 1 տարեկանի ճգնաժամի նորագոյացությունը ավտոնոմ խոսքն է, որը վերանում է ճգնաժամի ավարտի հետ:

Վիգոտսկին առանձնացնում է հետևյալ ճգնաժամային տարիքները ա) նորածնության ճգնաժամ, բ) 1 տարեկանի, գ) 3 տարեկանի, դ) 7 տարեկանի, ե) 13 տարեկանի զ) 17 տարեկանի ճգնաժամերը (43, էջ 256)· Ըստ նրա նշված ճգնաժամերից յուրաքանչյուրն անցնում է երեք էտապ նախաճգնաժամային, ճգնաժամային, հետճգնաժամային. Բուն ճգնաժամը սովորաբար իր գագաթնակետին է հասնում տարիքային փուլի կեսին·

Մենք փորձեցինք ներկայացնել Լ. Ս. Վիգոտսկու տարիքային ճգնաժամերի ընդհանուր տեսությունը առանց կանգ առնելու կոնկրետ ճգնաժամային տարիքների նկարագրությունների և վերլուծությունների վրա (վերջիններս, ըստ էության, ընդհանուր տեսության կոնկրետացումներն են հանդիսանում): Այդ տեսությունը, ինչպես նշում է ինքը Վիգոտսկին, տարիքային ճգնաժամերը «համակարգելու և տեսականորեն մեկնաբանելու» առաջին փորձն էր: Առաջին անգամ տարիքային ճգնաժամերի պրոբլեմը նկարագրականից բարձրացվեց տեսական մակարդակի, գնահատվեց որպես զարգացման հոգեբանության ֆունդամենտալ պրոբլեմներից մեկը, որտեղ թաքնված է «.. հոգեկան զարգացման

ընդհանուր օրինաչափությունների բանալին» (38, էջ 6): Անդրադառնալով բուն կոնցեպցիային պետք է ասել իհարկե, որ այն առավելապես տեսական հիմքերի վրա էր կառուցված, և շատ դրույթներ ժամանակակից էմպիրիկական հետազոտություններով չեն հաստատվում: Այսպես, վիճելի է այն դրույթը, թե ճգնաժամերը պարտադիր ի հայտ են գալիս տվյալ տարիքի բոլոր մարդկանց մեջ, ավելին, մի շարք հետազոտություններ (204, 245 և ուրիշներ) վկայում են, որ ճգնաժամերն ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափություն: Էքոհոգեբանական հետազոտությունները (236 և ուրիշներ) ցույց են տալիս, որ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերում ճգնաժամերն ընդհանրապես բացակայում են, ինչը վիճելի է դարձնում ոչ միայն վերոհիշյալ դրույթը, այլև այն, որ ճգնաժամերն էնդոգեն բնույթ ունեն, պայմանավորված են զարգացման ներքին տրամաբանությամբ (հնարավոր է այս պնդմամբ Վիգոտսկին նկատի ուներ զարգացման այն օրինաչափությունները, որոնք հարուցում են ճգնաժամերը. այս դեպքում ուղղակի հասկացությունների ճշգրտված չլինելու հանգամանքն է թյուրիմացության պատճառ հանդիսանում): Չի կարելի համաձայնել նաև Վիգոտսկու այն պնդման հետ, թե թեթև ընթացող ճգնաժամը բացասաբար է անդրադառնում երեխայի հետագա զարգացման վրա: Հոգեբուժական փաստերը ճիշտ հակառակն են վկայում. սուր ճգնաժամերը հաճախ հանգեցնում են հոգեկան հիվանդությունների, բնավորության ախտաբանական փոփոխությունների (123): Հաստատված չէ նաև ճգնաժամերի դրական նշանակությունը զարգացման գործընթացում, ինչպես նաև այն, որ ճգնաժամից հետո անձնավորության մեջ էական հոգեբանական փոփոխություններ են տեղի ունենում (194):

Լ. Ս. Վիգոտսկին, ինչպես հայտնի է, մանկության շրջանի ընդունված ճգնաժամային տարիքներին ավելացրեց ևս երկուսը՝ նորածնության և 1 տարեկանի ճգնաժամերը: Նորածնության ճգնաժամային լինելը նա հիմնավորում է գոյության միջավայրերի կտրուկ փոփոխությամբ, իսկ 1 տարեկանի ճգնաժամը՝ քայլքի, ավտոնոմ խոսքի ձևավորմամբ: Սակայն պետք է ասել, որ չկան հիմնավոր փաստեր, որ նշված շրջաններում երեխան ճգնաժամ է ապրում: Վիգոտսկին, փաստորեն, զարգացման նոր իրավիճակով պայմանավորված հարմարման գործընթացը դիտում է որպես ճգնաժամ: Մինչդեռ՝ ճգնաժամը (ինչպես զարգացման,

այնպես էլ ցանկացած այլ) ոչ թե հարմարվելու, այլ չհարմարվելու հետևանք է, երբ ծագած կոնֆլիկտը լուծում չի գտնում (194):

Նորածնության շրջանը նոր գոյապայմաններին հարմարվելու շրջան է, ըստ որում, հարմարման մեխանիզմները բնածին են, ժառանգականորեն ծրագրավորված, հետևաբար նորմալ կենսապայմանների առկայության դեպքում առողջ երեխայի մոտ չի կարող ճգնաժամ առաջանալ. Իսկ ոչ նորմալ կենսապայմանների հետևանքով առաջացած ճգնաժամը չի կարող դիտվել որպես զարգացման ճգնաժամ. դա կլինի արդեն զուտ կենսաբանական բնույթի, տրավմատիկ կամ սիտուատիվ ճգնաժամ (210, էջ 672): Նույնիսկ ծննդյան և հետծննդյան առաջին ժամերը, որոնց ընթացքում երեխայի օրգանիզմում հզոր ֆիզիոլոգիական տեղաշարժեր են տեղի ունենում, մեր կարծիքով, չեն կարող դիտվել որպես հոգեկան զարգացման ճգնաժամային շրջաններ: Այդ շրջաններում երեխայի մեջ տեղի ունեցող ֆիզիոլոգիական տեղաշարժերը ակտիվ հարմարողական, բայց ոչ ճգնաժամային հակազդումներ են: Դրանք կարող են դիտվել որպես էքստրեմալ իրավիճակով պայմանավորված սուր սթրես: Իհարկե, արտաքին անբարենպաստ պայմանները կարող են ճգնաժամային իրավիճակ ստեղծել, այսինքն հանգեցնել օրգանիզմի հարմարողական ներուժի սպառմանը, սակայն այս դեպքում մենք գործ ունենք արտաքին հանգամանքներով պայմանավորված կենսաբանական, բայց ոչ հոգեկան զարգացման ճգնաժամի հետ:

Ըստ Վիգոտսկու ճգնաժամերը տեղի են ունենում որևէ կոնկրետ տարիքում (երեք, յոթ, տասներեք, տասնյոթ տարեկաններում), մինչդեռ հնարավոր չէ, որ ճգնաժամը բոլորի մեջ ի հայտ գա միևնույն տարիքում, թերևս ավելի ճիշտ է, երբ առանձնացվում է ճգնաժամային շրջան (մի քանի տարի), որի տարբեր տարիներին տարբեր մարդկանց մեջ, զարգացման անհատական առանձնահատկություններով պայմանավորված, ի հայտ է գալիս ճգնաժամը:

Պետք է ասել, որ ինքը Վիգոտսկին, վերապահությամբ է գնահատում իր ճգնաժամերի կոնցեպցիան. «Մեր փորձը,— գրում է նա,— վերին աստիճանի նախնական է, որոշ չափով սուբյեկտիվ և ամենևին չի հավակնում դառնալ ճգնաժամային տարիքների տեսություն» (43, էջ 374): Միևնույն ժամանակ, այն զարգացման ճգնաժամերի ամենախորը մեկնություններից կարելի է համարել: Վիգոտսկու վարկածներից շատերը

մինչև օրս հրատապ են և փորձարարական ուսումնասիրությունից հետո կհարստացնեն ինչպես ճգնաժամերի, այնպես էլ հոգեկան զարգացման ընդհանուր տեսությունը: Այդ վարկածներից նախ և առաջ պետք է կարևորել այն, որ Վիգոտսկին տարիքային ճգնաժամերը կապում է զարգացման նոր իրավիճակին հարմարվելու, աշխարհի հետ երեխայի հին հարաբերությունների ապառվածության և նոր հարաբերություններ կառուցելու ձգտման հետ: Հետաքրքրական են նաև ճգնաժամային տարիքներում յուրահատուկ նորագոյացությունների ձևավորման, ճգնաժամերի զարգացնող նշանակության գաղափարները, ինչպես նաև այն տեսակետը, որ ճգնաժամերը պայմանավորված են երեխայի գիտակցության վերակառուցմամբ: Մեծ արժեք ունեն նաև կոնկրետ ճգնաժամային տարիքների Վիգոտսկու վերլուծությունները: Միևնույն ժամանակ, տարիքային հոգեբանության ոլորտում տեսական և էմպիրիկական նյութի պակասը էապես դժվարացնում էր ճգնաժամերի ամբողջական տեսության կառուցումը: Բավական է ասել, որ Վիգոտսկու ժամանակներում հասունության շրջանն ընդհանրապես հետազոտված չէր, բացահայտված չէին հասունության ճգնաժամերը, իսկ դա լուրջ խոչընդոտ էր ճգնաժամերի երևույթի իմաստավորման գործում: Բոլոր դեպքերում, Վիգոտսկու հետազոտությունները հզոր խթան հանդիսացան տարիքային ճգնաժամերի հիմնախնդրի կարևորման և հետագա հետազոտությունների համար:

Վիգոտսկու գաղափարներն իրենց հետագա զարգացումը ստացան նրա աշակերտների, մասնավորապես Ա. Ն. Լեոնտևի, Դ. Բ. Էլկոնինի, Լ. Ի. Բոժովիչի հետազոտություններում, իսկ վերջին տարիներին դրանք զարգացնում են ռուս հոգեբաններ Կ. Ն. Պոլիվանովան, Մ. Ե. Ելագինան և ուրիշներ:

1.1.3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորհրդային շրջանի ռուս հոգեբանների մեծ մասը (Ա. Ն. Լեոնտև, Դ. Բ. Էլկոնին և ուրիշներ) ճգնաժամերի առաջացման գործում ավելի մեծ տեղ են հատկացնում էկզոգեն (արտածին) գործոններին՝ գտնելով, որ

ճգնաժամերը պարտադիր երևույթ չեն, արդյունք են անբարենպաստ արտաքին ներգործությունների դաստիարակության կամ սոցիալական այնպիսի իրավիճակի, որը չի նպաստում երեխայի լիարժեք զարգացմանը: «...Ճգնաժամերի «դասական» ըմբռնումն այն է,— գրում է Ա. Ն. Լեոնտևը,— որ դրանք վերագրվում են երեխայի ներքին հատկությունների հասունացմանը և այն հակասություններին, որոնք այդ հողի վրա առաջանում են երեխայի ու շրջապատի միջև. Այդպիսի մոտեցման դեպքում ճգնաժամերն իհարկե անխուսափելի են, քանի որ ինչ պայմաններ էլ լինեն, անխուսափելի են այդ հակասությունները...Սակայն երեխայի հոգեկան զարգացման մասին ուսմունքում ոչինչ այնքան կեղծ չէ, որքան այդ գաղափարը: Իրականում ճգնաժամերը բնավ էլ հոգեկան զարգացման անխուսափելի ուղեկիցներ չեն: Անխուսափելի են ոչ թե ճգնաժամերը, այլ բեկումները, որակական առաջխաղացումները: Ճգնաժամը, ընդհակառակը, վկայություն է այն բանի, որ բեկումը, առաջխաղացումը տեղի չի ունեցել ժամանակին և ցանկալի ուղղությամբ: Ճգնաժամերը կարող են բնավ էլ չլինել, քանի որ երեխայի հոգեկան զարգացումը ոչ թե տարերային է, այլ դաստիարակությամբ ղեկավարվող գործընթաց է» (5, էջ 490): Ընդհանուր առմամբ Ա. Ն. Լեոնտևի տեսակետը պաշտպանում է նաև Դ. Բ. Էլկոնինը: Վերլուծելով 3 տարեկանի ճգնաժամը նա գրում է. «...ճգնաժամն ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ մեծերը, չնկատելով ցանկություններն ինքնուրույն բավարարելու երեխայի միտումը, շարունակում են զսպել նրա ինքնուրույնությունը, պահպանում են համատեղ գործունեության և հարաբերությունների հին ձևը, սահմանափակում են երեխայի ակտիվությունը, նրա ազատությունը: Իսկ եթե մեծերը չեն հակառակվում երեխայի ինքնուրույնության դրսևորմանը (իհարկե որոշակի սահմաններում), ապա դժվարություններ կամ ընդհանրապես չեն ծագում, կամ արագ հաղթահարվում են» (166, էջ 85): Դ. Էլկոնինը դաստիարակության ավտորիտարությունը, կոպտությունը մանկական տարիքի ճգնաժամերի առաջացման կարևոր պայմաններից է համարում, բայց միևնույն ժամանակ արտահայտում է հետևյալ միտքը. «...Կոպիտ դաստիարակչական համակարգի դեպքում ճգնաժամի ախտանշանները ավելի կտրուկ են դրսևորվում, բայց դա ամենևին չի նշանակում, որ ամենամեղմ դաստիարակչական հսմակարգի դեպքում ճգնաժամային շրջանը և նրա դժվարու-

թյունները չեն լինի: Որոշ փաստեր վկայում են, որ հարաբերականորեն մեղմ դաստիարակության դեպքում ճգնաժամային շրջանը մեղմ է ընթանում: Բայց այս դեպքում էլ երեխաները ակտիվորեն ինարավորություններ են փնտրում հակադրվել մեծերին: Նրանց համար այդպիսի հակադրումը ներքին անհրաժեշտություն է» (166. էջ 459). Այսպիսով էլկոնինը ճգնաժամերի առաջացման ներքին միտում է տեսնում և, ըստ էության, կրկնում է Վիգոտսկու այն տեսակետը, թե արտաքին պայմանները որոշում են ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները, բայց ոչ ճգնաժամի առաջացումը:

Ճգնաժամերի պրոբլեմին անդրադարձել է նաև ռուս ճանաչված հոգեբան Լ. Ի. Բոժովիչը: Վերլուծելով մանկական տարիքի ճգնաժամերը նա հանգում է հետևյալ եզրակացության. «...Ճգնաժամային շրջան ապրող երեխաների առանձնահատկությունները վկայում են նրանց ֆրուստրացվածության մասին: Ֆրուստրացիան, ինչպես հայտնի է, առաջանում է ի պատասխան մարդու համար էական ինչ-որ պահանջմունքների դեպրիվացիայի: Այդ իսկ պատճառով կարելի է եզրակացնել, որ երկու տարիքների սահմանագծում նման հակազդում են տալիս այն երեխաները, որոնց մեջ չեն բավարարվում կամ նույնիսկ ակտիվորեն ճնշվում են այն նոր պահանջմունքները, որոնք համապատասխան տարիքի նորագոյացությունների հետ հայտնվում են հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլում» (31, էջ 195):

Լ. Բոժովիչը փորձում է պարզել առանձին ճգնաժամային տարիքներում ձևավորված նորագոյացությունները, դրանց հիման վրա ձևավորվող նոր պահանջմունքները, ինչպես նաև վերջիններիս ֆրուստրացման պայմանները: Այսպես, անդրադառնալով 3 տարեկանի ճգնաժամին նա գրում է. «...Վաղ մանկության վերջում ձևավորված կենտրոնական նորագոյացությունը «ես» համակարգն է և այդ նորագոյացության հիմքի վրա ձևավորված ինքնուրույն գործելու պահանջմունքը... Միանգամայն ակնհայտ է, որ նման հզոր պահանջմունքի առաջացումը պահանջում է էապես փոխել երեխայի կենսակերպը և նրա դաստիարակության նկատմամբ մանկավարժական մոտեցումը: Երեք տարեկանի ճգնաժամի բովանդակության հոգեբանական վերլուծությունը և ընթացքի բնույթը վկայում են, որ հենց այս պահանջմունքի դեպրիվացիան է կյանքի 2 և 3 տարեկանի սահմանագծում առաջ բերում դժվարություն-

ներ երեխայի վարքի մեջ» (31, էջ 201): Ըստ Բոժովիչի 7 տարեկանի կենտրոնական նորագոյացությունը սեփական սոցիալական դիրքի, կյանքում գրաված տեղի, սեփական ես-ի որպես միջանձնային հարաբերությունների սուբյեկտի գիտակցումն է և դրա հիման վրա «նոր, ավելի մեծական դիրքի հասնելու», «նոր, հասարակականորեն նշանակալի գործունեություն ծավալելու» ձգտման ծնավորումը: Այս պահանջմունքի ֆրուստրացիան էլ հանգեցնում է ճգնաժամի:

Ռուսական հոգեբանության մեջ այսօր Վիգոտսկու և նրա աշակերտների գաղափարները զարգացնում են Կ. Ն. Պոլիվանովան, Տ. Վ. Դրագունովան, Մ. Ե. Ելագինան և ուրիշներ: Նրանց հետազոտություններն առավելապես էմպիրիկական ուղղվածություն ունեն և վերաբերում են առանձին տարիքներին, սակայն կան նաև հետաքրքիր տեսական ընդհանրացումներ: Այսպես Մ. Ե. Ելագինան (61) առաջարկում է տարբերակել հոգեկան զարգացմամբ պայմանավորված ճգնաժամը զարգացումից հետ մնալու, տհասության հետևանքով առաջացած ճգնաժամից. «Ամենաէականը, որով զարգացման ճգնաժամերը (ճգնաժամային, անցումային շրջանները) տարբերվում են չհասունացման ճգնաժամերից այն է, որ դրանք (զարգացման ճգնաժամերը–Ա.Խ.) պրոդուկտիվ բնույթ ունեն և արտահայտվում են հոգեկան նորագոյացությունների ծնավորմամբ. Չհասունացման ճգնաժամերը, ընդհակառակը, դեստրուկտիվ բնույթ ունեն» (61, էջ 39):

Ելագինան իր միտքը կոնկրետացնում է 7 տարեկանի ճգնաժամի օրինակով. «Անցումային նախադպրոցականները ներքուստ պատրաստ են դպրոցին...նրանք նեղվում են նախադպրոցական կյանքի շրջանակներում. դա զարգացման ճգնաժամ է: Անցումը դպրոցական կյանքին վերացնում է բացասական ախտանշանները. դպրոցում նրանք իրենց լավ են զգում: Այն անցումային դպրոցականները, ովքեր դեռևս նախադպրոցական աշխարհում են գտնվում, ընդհակառակը. դպրոց ընդունվելուվ, իրենց լավ չեն զգում. սա չհասունացման ճգնաժամն է» (61, էջ 39):

Մանկության շրջանի ճգնաժամերի տեսական հարցերին անդրադարձել է նաև Կ. Ն. Պոլիվանովան: Նախ և առաջ նա ընդգծում է ճգնաժամերի էնդոգեն բնույթը. մանկավարժական մոտե մամբ, ըստ նրա, կարելի է մեղմել ճգնաժամը, բայց ոչ վերացնե այ[illegible] ջանում զարգացման առանձնահատկությունն այ[illegible] է

երեխան իր համար բացահայտում է նոր, իդեալական ծնը և իրականի նկատմամբ նրա վերաբերմունքը հանդես է գալիս որպես զարգացման իրավիճակ» (117, էջ 64): Զարգացման նախկին (միաժամանակ նաև առկա, իրական) իրավիճակն այլևս չի բավարարում երեխային, նա ծգտում է նոր, իր համար դեռևս իդեալական իրավիճակի, սակայն մի կողմից նրա հնարավորությունները դեռևս սահմանափակ են, մյուս կողմից միջավայրը նրան չի տեսնում այդ նոր իրավիճակում և համապատասխան վերաբերմունք չի դրսևորում, հարաբերություններ չի կառուցում: Դրա հետևանքով առաջ է գալիս բախում իրականի և ցանկալիի միջև: Ըստ Պոլիվանովայի երեխայի տարօրինակությունները ճգնաժամային շրջանում պայմանավորված են այն բանով, որ նա «...հին, իրական իրավիճակում գործում է նորի, իդեալականի տրամաբանությամբ» (117, էջ 65):

Ըստ Պոլիվանովայի «...կամայնությունն է միշտ նոր, կայուն շրջանին անցնելու պայմանը. տարբերությունը միայն այն է, թե ո՞ր հոգեբանական բնութագիրն է կամայնության հատկություն ծեռք բերում վարքում անմիջականության կորո՞ստը (յոթ տարեկանի ճգնաժամը), թե՞ խաղային իրականությունից, իրավիճակի թելադրանքից ազատումը: Դեռահասության շրջանին անցնելու պայմանն ու բնութագիրը ինտելեկտուալ ներհայեցողություն է որպես միջնորդավորվածություն, մտավոր գործողությունների կամայնություն» (117, էջ 63):

Այսպիսով Պոլիվանովան գտնում է, որ ճգնաժամային շրջանի կարևոր բնութագիրը հոգեկան այս կամ այն ֆունկցիայի, նորագոյացության կամայնության հատկության ծեռքբերումն է: Ճգնաժամային շրջանում նորագոյացությունը փորձարկվում է «...անջատվելով այն հոգեբանական կոնտեքստից, որի մեջ ծնավորվել էր: ...Միայն այդպիսի փորձարկումից հետո է նորագոյացությունը հանդես գալիս որպես անհատական հատկություն, այսինքն դառնում է անհատի ընդունակություն և ոչ թե պատկանում է այն գործունեությանը, որի մեջ ծնավորվել է» (117, էջ 63): Ըստ Պոլիվանովայի տարիքային ճգնաժամերում առկա են ինչպես դրական, կառուցողական կողմեր, այնպես էլ բացասական, դեստրուկտիվ կողմեր. «Ճգնաժամում զարգացման դեստրուկտիվ կողմն ուղղված է աշխարհի հետ հին հարաբերությունների համակարգին: Ճգնաժամային շրջաններում երեխայի վարքի դրական հնաստ

տը պայմանավորված է նոր հարաբերությունների համակարգի կառուցման փորձով» (117, էջ 64): Ըստ հեղինակի ճգնաժամերն անցնում են զարգացման երեք փուլ նախաճգնաժամային, ճգնաժամային և հետճգնաժամային: Առաջին փուլում « երեխան բացահայտում է, որ այն իրականությունը, որի մեջ ինքը ապրում է, լիարժեք չէ» (117, էջ 65): Երկրորդ բուն ճգնաժամային փուլում Պոլիվանովան առանձնացնում է երեք շրջան: Առաջինում երեխան փորձում է «... կյանքի իրական իրադրություններում իրականացնել իդեալական ծնի մասին իր առավել ընդհանուր, իդեալականացված պատկերացումները» (117, էջ 65): Երկրորդ շրջանում ի հայտ է գալիս կոնֆլիկտը, որը մեծապես պայմանավորված է մեծերի կողմից երեխայի զարգացման իրավիճակը չնկատելով, նախկին հարաբերությունների ու վերաբերմունքի պահպանմամբ: Կոնֆլիկտի դրական իմաստն այն է, որ երեխան բացահայտում է իր իրական հնարավորությունները· «Նախաճգնաժամային փուլում,— գրում է Պոլիվանովան,— երեխան վստահ է սեփական հնարավորություններին, նա պատրաստ է հեշտությամբ վերցնել նոր սոցիալական դեր. Իսկ ճգնաժամի վերջում նա շատ ավելի սթափ վերաբերմունք է ունենում իր նկատմամբ, նրա ժամանակային հեռանկարը շատ ավելի իրական է դառնում» (117, 65): Երրորդ ավարտական շրջանը, բնութագրվում է սեփական կարողությունների, ընդունակությունների ներհայեցողությամբ, ցանկալիի և իրականի միջև կոնֆլիկտն ինտերիորիզացիայի է ենթարկվում: «Ինքնագնահատականի, որպես սեփական հնարավորությունների նկատմամբ վերաբերմունքի դրսևորման տարբերակումը հիմք է տալիս անցնելու հետճգնաժամային փուլին: Դա ճգնաժամի հաղթահարումն է» (117, էջ 65): Այս փուլում երեխայի վարքն իրավիճակին համապատասխան է դառնում, կոնֆլիկտայնությունը վերանում է, անցում է կատարվում նոր, առաջատար գործունեությանը, հաղթահարվում է նախորդ կայուն շրջանը: «...Այն (նախորդ կայուն շրջանը–Ա.Խ.) բովանդակալից ծնով հանվում է այն նորագոյացությունների մեջ, որոնք արդեն ազատ են գործունեությունից, որի մեջ ծնավորվել էին» (117, էջ 65):

Ամփոփելով Լ.Վիգոտսկու հետևորդների կողմից զարգացման ճգնաժամերի վերաբերյալ տեսակետները նախ և առաջ պետք է կարևորել ճգնաժամերի սոցիալ–հոգեբանական պայմանավորվածության, ոչ էն-

դոգեն բնույթի, բոլորի համար պարտադիր չլինելու գաղափարները, որոնցով առաջին անգամ հանդես եկավ Ա. Ն. Լեոնտևը: Միևնույն ժամանակ, ճգնաժամերի էնդոգենության գաղափարը չի կարելի լիովին և անվերապահորեն ժխտել: Դիալեկտիկական, համակարգային մոտեցումները պահանջում են ընդունել, որ հոգեկան երևույթներն առանց ներքին պայմանների առկայության, միայն արտաքին հանգամանքներով չեն կարող պայմանավորված լինել: Բացի այդ, ճգնաժամերի օրինաչափ ծնով ի հայտ գալն արդեն իսկ վկայում է դրանց ներքին մեխանիզմներով պայմանավորված լինելու մասին: Ամբողջ հարցն այն է, թե կոնկրետ ինչ ներքին մեխանիզմներ և ինչ արտաքին հանգամանքներ են հարուցում ճգնաժամը, ինչո՞ւ մի դեպքում ճգնաժամը մեղմ, համարյա աննկատ է անցնում, մյուս դեպքում հիվանդագին ընթացք ստանում:

Վերջին տարիներին ռուս հոգեբաններ Վ. Սլոբոդչիկովը և Գ. Ցուկերմանը, հիմնվելով Վիգոտսկու հոգեկան զարգացման տեսության որոշ դրույթների, ինչպես նաև էքզիստենցիալ փիլիսոփայության, մասնավորապես Մ. Հայդեգերի և Մ. Բուբերի գաղափարների վրա, տարիքային պարբերացման և ճգնաժամերի նոր վարկած են առաջարկում (130):

Ըստ նրանց «...Ամենաընդհանուր հասկացությունը, որը թույլ է տալիս սուբյեկտիվ իրականության զարգացման և օնտոգենեզում նրա շրջաբաժանման տեսություն կառուցել համակեցական հանրությունն է (событийная общность), որի ներսում էլ ձևավորվում են զուտ մարդկային ընդունակությունները, որոնք թույլ են տալիս անհատին նախ տարբեր հանրությունների մեջ մուտք գործել և շփվել մշակույթի որոշակի ծևերի հետ, և երկրորդ դուրս գալ հանրությունից, անհատականանալ և նոր ծևեր արարել, այսինքն դառնալ ինքնատիպ» (130, էջ 40):

Հեղինակներն առանձնացնում են մի շարք մարդկային հանրություններ, որոնց մեջ տեղի է ունենում մարդու զարգացումը: Ըստ այդ հանրությունների էլ հեղինակներն առանձնացնում են տարիքային փուլերը (օրինակ, ըստ հեղինակների, առաջին հանրությունը երեխայի համար ծնողներն են, և այս հանգամանքն էլ որոշում է տարիքային առաջին փուլը, երկրորդ փուլում հանրությունը հարազատ մեծերն են, երրորդում՝ հասարակական մեծերը, չորրորդում ամբողջ մարդկությունը, հինգերորդում մարդը մուտք է գործում համամարդկային և վերմարդկային ոլորտները, էքզիստենցիալ արժեքները):

Հեղինակներն առանձնացնում են երկու տիպի ճգնաժամ ծննդյան և զարգացման: Ծննդյան ճգնաժամերը պայմանավորված են նոր հանրության մեջ անձնավորության մուտքով, որի ընթացքում փոխվում է մարդու աշխարհի հետ ունեցած հարաբերությունների համակարգը, նա մտնում է ուսմակեցության ավելի բարձր մակարդակի մեջ (130, էջ 47): Հեղինակներն առանձնացնում են ծննդյան հետևյալ ճգնաժամերը՝ ա) աշխարհ գալու ճգնաժամը (երկու ամիս երեք շաբաթ), տեղի է ունենում կենսաբանական միասնությանն խզումը, բ) մանկիկության ճգնաժամ (11–18 ամսական), հոգեբանական սիմբիոզի խզումը, գ) մանկության ճգնաժամ (5,5–7,5 տարեկան), իրական և իդեալական ես–երի խզումը, դ) պատանեկան ճգնաժամ (17–21 տարեկան), անձնային և համամարդկային կեցության իմաստների բաժանումը, ե) անհատական կյանքի ճգնաժամ, մարմնական և հոգևոր գոյությունների բաժանումը:

Զարգացման ճգնաժամերը հետևյալ կերպ են բնութագրվում. «Ուսմակեցական հանրության զարգացման ճգնաժամը .. դրսևորվում է որպես անհատական և համատեղ գործունեության և գիտակցության ձևերի խզում (ուզում եմ, բայց չեմ կարողանում քո նման դառնալ)» (130, էջ 47): Զարգացման ճգնաժամերն են. ա) նորածնության ճգնաժամը (3,5–7 ամսական), խզվում է երեխա–մեծ միասնությունը և նոր երեխա–համատեղ գործողությունների առարկա–մեծ միասնության հնարավորություն է բացվում, բ) վաղ մանկության ճգնաժամ (2,5–3,5 տարեկան), խզվում է մեծի հետ երեխայի երևակայական ինքնանմանեցումը և հնարավորություն է բացվում մեծի հետ իսկական նմանության հասնել ուսուցման միջոցով, գ) դեռահասության ճգնաժամ (11–14 տարեկան), կործանվում են կախյալ հարաբերությունները և հավասար հարաբերություններ ստեղծելու հնարավորություն է ստեղծվում, դ) երիտասարդության ճգնաժամ (27–33 տարեկան), ավտոնոմ ես–ի սահմանների վերացում և անցում անոնիմ ծառայելու հնարավորությանը, ե) հասունության ճգնաժամ (55–65 տարեկան), այս ճգնաժամի էությունը հեղինակները հնարավոր չեն համարել բնութագրել:

1.2. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.2.1. Է. ԷՐԻՔՍՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ

Արևմուտքում զարգացման ճգնաժամերի առավել լայն ճանաչում գտած տեսություններից է է. էրիքսոնի հոգեվերլուծության հիմքի վրա ձևավորված տարիքային զարգացման և ճգնաժամերի տեսությունը: է. էրիքսոնը գտնում է, որ զարգացումը տեղի է ունենում էպիգենետիկական սկզբունքով, այսինքն «Այն, ինչ զարգանում է, ունի զարգացման իր սաղմնային ծրագիրը, որին համապատասխան ձևավորվում են առանձին բաժինները. Այդ բաժիններից յուրաքանչյուրն ունենում է իր դոմինանտության ժամանակը. մինչև որ ձևավորվում են բոլոր բաժինները կառուցելով գործառող ամբողջը» (167, էջ 54): Այս սկզբունքը տարածելով անձնավորության հոգեկան զարգացման վրա էրիքսոնն առանձնացնում է այն ոլորտները (հիմնային հոգեբանական կառույցները. նորագոյացությունները, հատկությունները), որոնք տարիքային յուրաքանչյուր փուլում դոմինանտ են դառնում (ասենք վստահությունը մանկիկության շրջանում, ինքնուրույնությունը վաղ մանկության շրջանում և այլն): Այս ոլորտներից յուրաքանչյուրը կապված է մյուսների հետ և սաղմնային վիճակում գոյություն ունի նախքան այն տարիքը, երբ դառնում է դոմինանտ: «Մանկիկը,— գրում է էրիքսոնը,— հենց սկզբից կարող է դրսևորել ինքնուրույնության նման մի բան, երբ, ասենք փորձում է ազատել իր ամուր բարուրած ձեռքը: Սակայն, սովորական պայմաններում, երեխան միայն կյանքի երկրորդ տարում է առաջին անգամ բախվում ինքնուրույն կամ կախյալ էակ լինելու ընտրության անհրաժեշտության հետ, և հենց այդ ժամանակ է նա պատրաստ լինում միջավայրի հետ սկզբունքորեն նոր հարաբերություններ կառուցել: Միջավայրն էլ իր հերթին պարտավորվում է ինքնուրույնության վերաբերյալ երեխային գաղափարներ և կոնցեպցիաներ տալ այնպիսի ձևերով, որոնք որոշակիորեն կարող են ազդել նրա բնավորության, կարողությունների և կենսական ուժի վրա» (167, էջ 104): Այս մեջբերման մեջ արտացոլված են նաև հոգեկան զարգացման գործընթացում միջավայրի դերի մասին էրիքսոնի պատկերացումները. մի կողմից զարգացման ներքին մեխանիզմների շնորհիվ սկսում է դրսևորվել հոգեկան այս կամ հատկությունը (ըստ էրիքսոնի պոտենցիալությունը), որն երեխային պատրաստ է դարձնում կառուցելու իր հարաբերությունները միջավայրի հետ (ըստ էրիքսոնի այդ հատկությունները հենց միջավայրի հետ փոխհարաբերությունների համար են նախատեսված), մյուս կողմից «Հասարակությունը.. ծգտում է այնպիսի կառուցվածքի, որը համապատասխանում է այդ պատրաստականությանը և խրախուսում է փոխհազդեցության պոտենցիալների այդ անընդհատ շղթան, ինչպես նաև ձգտում է ապահովել և խթանել դրանց ի հայտ գալու անհրաժեշտ արագությունը և հաջորդականությունը» (167, էջ 379):

Չնայած էրիքսոնն ընդգծում է հասարակության, պատմամշակութային գործոնի առհելի նշանակությունը երեխայի հոգեկան զարգացման գործընթացում, բայց. այնուամենայնիվ, հետևելով հոգեվերլուծական մոտեցմանը նա այն կարծիքն է հայտնում, թե հիմնային հոգեկան հատկությունները մեծապես պայմանավորված են լիբիդինալ օրգանական շրջանների գործառական նշանակությամբ և միջավայրի հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններով Նա առանձնացնում է այն օրգանական շրջանները, որոնք դոմինանտ են դառնում տարբեր տարիքներում: Այսպես. օրալ–ռեսպիրատոր–սենսորային շրջանը, ըստ նրա, դոմինանտ է մանկիկության շրջանում: Շրջաններից յուրաքանչյուրն ունի իր մոդուսը. այսինքն օրգանի գործառման ձևը. օրգանիզմ–միջավայր փոխհարաբերության տիպը (օրինակ օրալ շրջանին համապատասխանում է ներառնող մոդուսը). Մոդուսներին համապատասխանում են այսպես կոչված սոցիալական մոդալականությունները (օրինակ «ներառնող» մոդուսին համապատասխանում է «ընդունման» մոդալականությունը): Ահա այս ձևով էրիքսոնը կապ է ստեղծում օրգանների ֆունկցիաների. տվյալ օրգանի հետ կապված պահանջմունքների բավարարման առանձնահատկությունների. հոգեկան հատկությունների և սոցիալական փոխհարաբերությունների միջև: Այսպես, վերլուծելով անալ շրջանի առանձնահատկությունները նա գրում է. «Ո՞ր կայուն հատկությունների արմատներն են գտնվում այս մկանային–անալ շրջանում: Ներքին բարեհարմարության զգացողությունից (նկատի ունի ստամոքսաաղիքային տրակտը–Ա.Խ.) ծնվում է ինքնու-

րույնությունը և հպարտությունը. անբարեհարմարության զգացումից՝ կասկածը և ամոթը» (167, էջ 131): Էրիքսոնն առանձնացնում է հոգեկան զարգացման 8 շրջան և համապատասխանաբար 8 ճգնաժամ: «Ճգնաժամ բառը,— գրում է նա,— օգտագործվում է զարգացման մասին պատկերացումների կոնտեքստում այն բանի համար, որ ընդգծվի ոչ թե աղետի վտանգը, այլ փոփոխության պահը, աճած խոցելիության և ներուժի շրջանը և դրա հետևանքով հնարավոր լավ կամ վատ հարմարվողականության օնտոգենետիկական աղբյուրը»՝(167, էջ 105):

Ճգնաժամերը, ըստ Էրիքսոնի, շրջադարձային կետեր են, որոնք ստիպում են մարդուն «ընտրություն» կատարել պրոգրեսի, ռեգրեսի կամ զարգացման հապաղման միջև: Զարգացման ճգնաժամերը հետևանք են այսպես կոչված նորմատիվ կոնֆլիկտների, որոնք պայմանավորված են յուրաքանչյուր տարիքում ի հայտ եկող հակամետ, կենսական հարմարվողականության տեսանկյունից, դրական և բացասական դիրքորոշումների, աշխարհի և սեփական անձի նկատմամբ վերաբերմունքների «ընտրության» անհրաժեշտությամբ: Դրական լուծման դեպքում մարդը դուրս է գալիս ճգնաժամից՝« ...ներքին միասնության ուժեղացած զգացողությամբ, առողջ դատելու զարգացած ընդունակությամբ, նշանակալի մարդկանց և սեփական ստանդարտներին համապատասխանող «լավ» գործողություններով» (167, էջ 100–101):

• Զարգացման ճգնաժամերը, ըստ Էրիքսոնի, պարտադիր ու միանգամայն նորմալ երևույթներ են, բայց միաժամանակ դրանք կարող են անոմալ դրսևորումներ ունենալ, հանգեցնել հոգեախտաբանության, դժվարացնել մարդու հարմարումը միջավայրին: Էրիքսոնի առանձնացրած ճգնաժամերն են՝ ա) մանկիկության շրջանում բազային վստահության ու անվստահության, բ) վաղ մանկության շրջանում ինքնուրույնության–ամոթի, կասկածի, գ) նախադպրոցական տարիքում (էդիպյան շրջանում)՝ նախաձեռնողության–մեղքի զգացման, դ) կրտսեր դպրոցական տարիքում՝ աշխատասիրության–անլիարժեքության զգացողության, ե) դեռահասության և վաղ պատանեկության տարիքում՝ նույնականության–նույնականության կորստի, զ) երիտասարդ տարիքում ինտիմության–մեկուսացման, է) հասուն տարիքում՝ պրոդուկտիվության–լճացման, ը) ծերության շրջանում՝ ամբողջականության–անելանելության: •

է. Էրիքսոնի տարիքային պարբերացման և ճգնաժամերի տեսությունը բարձր է գնահատվում նախ և առաջ այն պատճառով, որ ընդգրկում է մարդու ողջ կյանքը, էապես հաղթահարում է զարգացման նկատմամբ հոգեվերլուծական մոտեցման միակողմանիությունը (մասնավորապես կենտրոնացվածությունը սեռականության վրա, անձի ձևավորումը միայն մանկության շրջանով սահմանափակելը և այլն): Տեսության մեջ վեր են հանվում հոգեբանական նոր և չափազանց կարևոր իրողություններ, մասնավորապես նույնականության և դրա զարգացման նշանակությունն անձի զարգացման գործընթացում: Անդրադառնալով ճգնաժամերի տեսությանը պետք է ասել, որ հեղինակը դրանք դիտում է որպես տարիքային հիմնային նորագոյացությունների ձևավորման շրջաններ, ինչը ենթադրել է տալիս, որ Էրիքսոնը նույնացնում կամ մոտեցնում է «սենզիտիվ շրջան» և «ճգնաժամային շրջան» հասկացությունները: Ինչպես հայտնի է, հոգեբանության մեջ դրանք դիտվում են որպես տարբեր երևույթներ: Հեղինակն այս հարցը, ցավոք, չի քննարկում, ինչի հետևանքով էլ անհասկանալի են մնում բուն ճգնաժամի երևույթի հետ կապված մի շարք հարցեր. Օրինակ պարզ չէ, թե հեղինակն ինչն է դիտում որպես ճգնաժամի ի հայտ գալու պատճառ՝ հենց նորագոյացությունների ձևավորման շրջա՞նը (այս դեպքում ավելի ճիշտ կլիներ «ճգնաժամ»–ի փոխարեն օգտագործել «սենզիտիվ շրջան» հասկացությունը), թե՞ այդ նորագոյացությունների ձևավորման հետ կապված դժվարությունները: Աղուտ են ներկայացված նաև ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունները, ախտանշանները: Ընդհանրապես, հեղինակը բավական համառոտ է ներկայացնում ճգնաժամերի իր կոնցեպցիան: Սովորաբար այս տեսությունը քննադատվում է մտահայեցողական բնույթի (72), հասունության շրջանի ճգնաժամերի էրիքսոնյան բնութագրերի էմպիրիկական չհիմնավորվածության համար (72, էջ 140): Չի հաստատվում նաև տարիքային ճգնաժամերի նորմատիվության դրույթը (123):

1.2.2. Փ. ԲԼՈՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ

Հոգեվերլուծության մեկ այլ ներկայացուցիչ՝ Փ. Բլոսը, զարգացման ճգնաժամերը կապում է անձի անհատականացման (ինդիվիդուալիզա-

ցիայի) գործընթացի հետ. Ինդիվիդուալիզացիան, ըստ հեղինակի, տեղի է ունենում երկու փուլով. առաջին փուլը վերաբերում է կյանքի երրորդ տարվան, «...երբ երեխան սեփական ես–ի և ոչ ես–ի ճանաչողական տարբերությունն է ապրում» (187, էջ 12), երկրորդը դեռահասության շրջանին: Այս տարիքում ինդիվիդուալիզացիան ավարտվում է սեփական նույնականության զգացողության ձևավորմամբ: Այդ զգացողությանը դեռահասը հասնում է անցնելով մի շարք ճգնաժամային շրջաններ «, ինքնագիտակցման և կեցության մասնատման, ընդդիմության, խոովարարության և դիմադրության ջանքերի, փորձարարության, ծայրահեղական քայլերի դիմելու միջոցով...» (187, էջ 12):

Ճգնաժամային այս երկու տարիքները, ըստ Բլոսի, ունեն մի շարք ընդհանուր գծեր՝ անձնավորության սենզիտիվության աճը, զարգացման նոր պահանջներին համապատասխան սեփական ես–ը փոխելու ձգտումը, տարիքային խնդիրները լուծել չկարողանալու հետևանքով հոգեախտաբանական ախտանշանների ի հայտ գալը, հարազատներից բաժանումը և ընտանիքից դուրս սիրո օբյեկտներ փնտրելը:

1.2.3. ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Տարիքային խնդիրների տեսությունը մշակվել է Ռ. Հավիգուրսթի կողմից անցյալ դարի 70–ական թվականների սկզբին: Այս տեսության համաձայն, մարդու կյանքը և տարիքային զարգացումը բազմաթիվ խնդիրների (tasks) յուրացման գործընթացներ են: Ըստ հեղինակի տարիքային խնդիրն այն է, որ «...ի հայտ է գալիս անհատի կյանքի որոշակի շրջանում և, որի հաջող լուծումը հանգեցնում է երջանկության և հետագա խնդիրների հաջող լուծմանը, իսկ անհաջողության դեպքում անհատն իրեն դժբախտ է զգում, չի խրախուսվում հասարակության կողմից և դժվարություններ է ունենում հետագա խնդիրների առնչությամբ» (217, էջ 2): Տարիքային խնդիրների ի հայտ գալը կարող է պայմանավորվել ֆիզիկական հասունացմամբ, հասարակության պահանջներով, մարդու ցանկություններով, արժեքներով և այլն: Յուրաքանչյուր տարիքային շրջան ունի իր յուրահատուկ խնդիրները, որոնք պետք է լուծվեն ժամանակին, քանի որ հետագայում դրանց լուծումը կամ էապես կդժվարանա, կամ անհնար

կդառնա: Հեղինակը որպես տարիքային խնդիրներ է դիտում խոսքի, քայլքի, սեռադերային վարքի յուրացումը, ամուսնու ընտրությունը, երեխաների դաստիարակությունը և այլն,

Ինքը Հավիգուրսթը, տարիքային ճգնաժամերի խնդրին հատուկ չի անդրադարձել, սակայն տեսությունից տրամաբանորեն բխում է ճգնաժամերի բացատրությունը, այն է՝ ճգնաժամերն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ մարդը դժվարությունների է հանդիպում տարիքային խնդիրները լուծելիս կամ չլուծելիս: Տարբեր հեղինակների մոտ կարելի է հանդիպել այս գաղափարի զանազան մեկնաբանությունների: Օրինակ Ջ. Քոլմենը (200), քննարկելով դեռահասության ճգնաժամը, գտնում է, որ ոչ պրոբլեմային հասունացման դեպքում մարդը հաջորդաբար լուծում է տարիքային խնդիրները որոշակի ժամանակահատվածի ընթացքում կենտրոնանալով միայն մեկ խնդրի վրա: Զարգացումը ճգնաժամային բնույթ է ստանում, երբ տարբեր պատճառներով խնդիրներ կուտակվում են, և մարդը ստիպված է որոշակի ժամանակահատվածի ընթացքում լուծել միանգամից մի քանի խնդիր: Նման ծանրաբեռնումը կարող է հանգեցնել նաև հոգեախտաբանական դրսևորումների:

1.2.4. ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻՔԻ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասուն տարիքի ճգնաժամերի առաջին հետազոտողներից էր Դ. Լևինսոնը (228): Ըստ նրա մարդը հասունության շրջանի հաջորդական փուլերի ընթացքում արտաքին և ներքին հանգամանքներին հարմարվելու, տարիքային խնդիրները լուծելու գործընթացում ձևավորում է իր կյանքի կառույցը կամ համակարգը. այսինքն՝ սոցիալական դերերի համալիրը (ընտանեկան, աշխատանքային և այլ դերեր), անձնավորությունը, կարողությունների և հմտությունների համակարգը և այլն: Կյանքի պայմանների փոփոխության կամ անձնավորության զարգացման ընթացքում փոխվում, վերանայվում են կյանքի հին կառույցները և ձևավորվում նորերը: Ըստ Լևինսոնի հասուն տարիքում առկա են կայուն և անցումային շրջաններ: Վերջիններիս ընթացքում տեղի է ունենում կյանքի կառույցի վերափոխումը: Հասունության շրջանի առաջին անցումը տեղի է ունենում 17–22 տարեկանում: Այս անցման հիմնական

պրոբլեմներն են անկախության ձգտումը, նույնականության ձևավորումը, ծանոթացումը մեծերի աշխարհին, աշխատանքի որոնումը, երազանքի ձևով ապագայի մոդելի ձևավորումը, հնարավորությունների ստուգումը և այլն: Հաջորդ անցումը տեղի է ունենում 30 տարեկանում (28–33): Կյանքն այս շրջանում սկսում է ավելի բարդ, լուրջ, իրական թվալ, մարդն սկսում է վերագնահատել իր կյանքի նախկին կառույցը: Կյանքի կեսի ճգնաժամը, ըստ հեղինակի, տեղի է ունենում 40–45 տարեկանում: Մարդուն այս տարիքում սկսում են տանջել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ի՞նչ արեցի կյանքիս հետ», «Ի՞նչ եմ ուզում ինձանից և ուրիշներից» և այլն, ավելի լավ կյանք կառուցելու, ավելի կառուցողական, ստեղծագործական լինելու մեծ ձգտում է առաջանում: Հեղինակն առանձնացնում է նս երկու անցում 50–55 և 60–65 տարեկանում. Ըստ հեղինակի վերջին անցման պրոբլեմները պայմանավորված են ֆիզիկական ուժերի անկմամբ, առողջության վատթարացմամբ:

Տարիքային անցումները կարող են ընթանալ մեղմ, առանց ցնցումների և ճգնաժամային ախտանշաններով:

Հասունության ճգնաժամերը հետազոտել է նաև Գ. Շիհին: Ըստ հեղինակի «...զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելիս, դեն են նետվում նախկին պաշտպանական կառույցները. Մարդը դառնում է խոցելի, բախտի քմահաճույքին հանձնված, բայց նաև ազատ, սաղմնային իրադրության մեջ, անհայտ ուղղություններով շարժվելու ընդունակ» (247, էջ 24): Ըստ հեղինակի զարգացման գործընթացում ճգնաժամերը դրական դեր են խաղում. դրանք հաղթահարելով, մարդը հայտնվում է հավասարակշռված, կայուն վիճակում: Ճգնաժամերը ոչ թե արտաքին, այլ ներհոգեկան պրոբլեմների արդյունք են: Այդ պրոբլեմները խախտում են ներքին հավասարակշռությունը, դրանով իսկ «...ցույց են տալիս փոխվելու, զարգացման հաջորդ փուլի համար նոր հենակետեր գտնելու անհրաժեշտությունը» (247, էջ 25): Մարդկանց մեծամասնությունը (ըստ հեղինակի մոտ 90 %–ը) սովորաբար չի նկատում սեփական պրոբլեմների տարիքային անցումայնությամբ պայմանավորված լինելը, դրանց ներքին ծագումը, և բացասական ապրումները բացատրում է արտաքին իրադարձություններով:

Ըստ հեղինակի, ճգնաժամերի ընթացքում աննկատելի փոփոխություններ են տեղի ունենում մարդու ներաշխարհի չորս ոլորտներում:

Առաջինը վերաբերում է միջանձնային հարաբերություններով պայմանավորված սեփական ես–ն այլ կերպ ընկալելուն: Երկրորդը սեփական կեցության նկատմամբ ապահովության կամ անապահովության զգացողության ոլորտն է: Երրորդը ժամանակի զգացողության ոլորտն է (ապագան կառուցելու համար որքա՞ն ժամանակ է տեսնում): Չորրորդը ակտիվություն դրսևորելու կամ լճանալու ցանկությանն է վերաբերում: Հասունության առաջին ճգնաժամը կամ անցումը (հեղինակն այս հասկացությունները նույնացնում է) տեղի է ունենում 18–22 տարեկանում: Սա այսպես կոչված արմատներից կտրվելու շրջանն է, երբ մարդը դուրս է գալիս ընտանեկան միջավայրից մտնելով «մեծ աշխարհ»: «Այս անցման խնդիրն է,— գրում է հեղինակը,— հասակակիցների խմբում սեփական տեղը գտնելը. սեռային դերերին հարմարվելը, շրջապատում ցանկալի դիրքի հասնելը, աշխարհայացքի ձևավորելը» (247, էջ 32): Երկրորդ ճգնաժամը 30 տարեկանի շրջանում է: Այս դեպքում վերանայվում են նախկին ընտրությունները, արժեքները, մասնագիտական առաջընթացն առաջնային տեղ է գրավում: Մարդն իրեն կաշկանդված է զգում, անկայունության, անկման, կործանման զգացողություններ են ի հայտ գալիս: Ամուսնացածները վերանայում են ընտանիքի մասին իրենց պատկերացումները, իսկ չամուսնացածների և երեխաներ չունեցողների մեջ ամուսնանալու, ծնող դառնալու հզոր ցանկություն է առաջանում:

40 տարեկանը Շիհին դիտում է որպես սահմանային ճգնաժամ: Ժամանակը սկսում է սահմանափակ թվալ: «Երիտասարդության կորուստը, որպես իրական փաստ ընկալվող ֆիզիկական ուժերի անկումը, սովորական դերերի հետ կապված նպատակների մարումը, բացարձակ ճշմարտությունների բացակայության ըմբռնմամբ պայմանավորված հոգևոր երկվությունը...այս անցումն իսկական ճգնաժամի են վերածում» (247, էջ 35–36): Այս տարիքում մարդը կասկածի տակ է դնում այն, ինչին հասել է. «...արվածի համար վիշտ է ի հայտ գալիս, որովհետև մահանում է հին ես–ը» (247, էջ 36): Կանանց համար սա «վերջին հնարավորության շրջանն է», միևնույն ժամանակ, ըստ հեղինակի, նրանց մեջ սկսում է ի հայտ գալ սոցիալական ինքնահաստատման ձգտում: Շատ տղամարդիկ այս շրջանում իրենց սպառված և չգնահատված են զգում, ավելի շատ են կենտրոնանում իրենց առողջության վրա, շատերը փոխում են մասնագիտությունը (247, էջ 37):

Սեկ այլ հեղինակ Ռոջեր Գոուլդը, անձնավորության հասունացման գործընթացն ընկալում է որպես մանկությունից եկող իռացիոնալ գաղափարների, միտումների հաղթահարում (213): Այդ գաղափարները նկատելիորեն սահմանափակում են մարդուն, լուրջ խոչընդոտ են հասուն մարդու համար սեփական կյանքը լիարժեք տնօրինելու գործընթացում: Հասունացումը տեղի է ունենում ճգնաժամային անցումներով. Այդ շրջաններում մարդը բախվում է նոր խնդիրների, որոնք պայմանավորված են կյանքի, զարգացման տրամաբանությամբ, հասարակության պահանջներով: Այս խնդիրները լուծելու համար մարդը պիտի հրաժարվի անցյալից եկող կեղծ ընդհանրացումներից: Գոուլդը հասունության յուրաքանչյուր շրջանին, այդ թվում նաև ճգնաժամային շրջաններին մետաֆորիկ անվանումներ է տալիս դրանցով բնութագրելով այդ շրջանների էությունը. այսպես, 16–22 տարիքային շրջանը նա դիտում է որպես հասունության առաջին ճգնաժամ տալով այդ տարիքին «ծնողների աշխարհի լքումը» անվանումը: Միևնույն ժամանակ, Գոուլդը փորձում է առանձնացնել այն կեղծ ընդհանրացումները, որոնք պետք է հաղթահարվեն յուրաքանչյուր ճգնաժամային շրջանում: Այսպես, հեղինակը 28–34 ճգնաժամային շրջանը բնութագրում է որպես «սեփական ներաշխարհի առջև բացվելը» և հիմնական կեղծ ընդհանրացումը, որից մարդը պիտի հրաժարվի. այն է, թե «կյանքը հեշտ է և վերահսկելի»: Գոուլդը մանրամասն բնութագրում է նաև յուրաքանչյուր ճգնաժամային շրջանի հոգեբանական առանձնահատկություններն ու հիմնական պրոբլեմները (այդ բնութագրերը կներկայացնենք առանձին տարիքային ճգնաժամերը քննարկելիս):

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արևմտյան մեկ այլ հեղինակի՝ Դ. Բիի հասունության շրջանի հոգևոր զարգացման անցումների կոնցեպցիան, ըստ որի՝ «ամեն անգամ, երբ մարդը տեղափոխվում է զարգացման մի մակարդակից կամ փուլից մյուսը, տեղի է ունենում յուրահատուկ մահ և վերածնունդ մահ նախկին ես–ի, նախկին հավատամքի կամ նախկին հավասարակշռության: Նորմայի շրջանակներում դա նախ և առաջ ի հայտ է գալիս որպես մեկ այլ փուլի կամ տեսադաշտի նշմարում կամ կանխագուշակում, նախագգացում, որին հաջորդում է մի շրջան (որը կարող է կարճ կամ երկար տևել), որի ընթացքում մարդը պայքարում է՝ գործ ունենալով իր ներքին երկու ես–երի հետ: Երբեմն

գործընթացը ձախողվում է և մարդը վերադառնում է նախկին հավասարակշռությանը: Երբեմն մարդը շարժվում է դեպի նոր հավասարակշռություն՝ նույնացնելով իրեն այդ նոր հավասարակշռության հետ» (177, էջ 305): Ըստ հեղինակի այս գործընթացի միջին շրջանում մարդը, կարծես, հոգեկան խանգարման վիճակում է հայտնվում, կորցնում է իր ես–ը: Հաճախ ի հայտ են գալիս տարբեր համախտանիշներ, ասենք դեպրեսիա: Հեղինակն առանձնացնում է հասունության երեք անցում՝ չնշելով կոնկրետ տարիքային շրջաններ՝ Այդ անցումներն են՝ ա) անցում սոցիալական կամ մշակութային կապանքներից անհատականությանը, բ) անհատականությունից անցում ամբողջականությանը, գ) ամբողջականությունից անցում տրանսպերսոնալ գիտակցությանը: Ըստ հեղինակի նման անցումները հաճախ խթանվում են արտաքին իրադարձություններով (հարազատի մահը, աշխատանքի փոփոխություն, ամուսնություն և այլն). Այս տեսությունը, իհարկե, գուտ մտահայեցողական բնույթ է կրում, միստիկական երանգ ունի և վերաբերում է մարդու անձնային հասունացմանը, զարգացմանը և ոչ թե նորմատիվ, տարիքային զարգացմանը, սակայն կարծում ենք այն արժեքավոր է նրանով, որ անցումը, ճգնաժամը կապվում է ինքնագիտակցության վերակառուցման գործընթացին: Ըստ հեղինակի իհարկե, նման վերակառուցումները տեղի են ունենում միայն հասունության շրջանում, մինչդեռ, ինչպես հայտնի է, ես–ի, ինքնագիտակցության հզոր վերակառուցումներ են տեղի ունենում և մանկության, և դեռահասության շրջաններում (3 և 12–14 տարիքային շրջաններում):

1.2.5. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ցույց տրվեց նախորդ գլխում, տարիքային ճգնաժամերը բացատրող մի շարք տեսակետներ են ձևավորվել. Պետք է ասել, որ չնայած տարբեր մոտեցումներին այդ տեսությունները բխում են մի քանի ելակետային դրույթներից: Դրանցից առավել տարածված է ճգնաժամերն անցումայնությամբ, այսինքն՝ տարիքային մի փուլից մյուսին անցումով բացատրելը: Ճգնաժամերը, ըստ որոշ հեղինակների (Պ. Պ. Բլոնսկի, Լ. Ս. Վիգոտսկի և ուրիշներ), պայմանավորված են զարգաց-

նան գործընթացում քանակական փոփոխություններից որակականին անցման դիալեկտիկական օրինաչափություններով. այն բանով, որ էվոլյուցիոն զարգացումը սկսում է ռևոլյուցիոն բնույթ կրել: Ճգնաժամային շրջանում վերակառուցվում է զարգացման ողջ իրավիճակը, սկսում են ձևավորվել նոր հոգեբանական և սոցիալ–հոգեբանական իրողություններ, մահանում են հները.

Այլ հեղինակներ ճգնաժամերը կապում են մի առաջատար գործունեությունից մյուսին անցնելու դժվարությունների (Դ. Էլկոնին և ուրիշներ), առարկայական աշխարհի և մարդկանց հետ երեխայի բազային հարաբերությունների վերակառուցման հետ (ցիտ. ըստ 52. 117), զարգացման նախկին և ցանկալի իրավիճակների և դրա հետ կապված իրական և իդեալական ես–երի միջև ծագած հակասությամբ (119):

Արևմտյան հոգեբանության մեջ նույնպես բազմաթիվ հեղինակներ ճգնաժամերը կապում են մի տարիքից մյուսին անցման և դրանով պայմանավորված դժվարությունների հետ (Ս. Հոլ, Կ. Լևին, Դ. Լևինսոն և ուրիշներ): Անցումայնության կոնցեպցիան, անշուշտ, թե տեսական առումով և թե էմպիրիկական փաստերի տեսանկյունից բավական հիմնավորված է. Բնականաբար, տարիքային մի փուլից մյուսին անցումը հնարավոր չէ, որ միանգամայն հարթ, առանց պրոբլեմների ընթանա. չէ՞ որ իրավիճակի ցանկացած փոփոխություն հանդես է գալիս որպես սթրեսոգեն գործոն և հարմարման անհրաժեշտություն է առաջ բերում: Սակայն պետք է ասել, որ բացահայտված տարիքային ճգնաժամերը միշտ չէ, որ համընկնում են անցումային շրջանների հետ: Այսպես, առավել տարածված է դեռահասության ճգնաժամն անցումայնությամբ բացատրելը, սակայն ճգնաժամն ի հայտ է գալիս 12–15 տարեկանում. անհասկանալի է, թե ինչ անցում է տեղի ունենում այդ շրջանում: Եթե դա անցում է սեռական հասունացմանը, ապա այդ անցումը տեղի է ունենում 9–10 տարեկանում, հետևաբար ճգնաժամն էլ այդ տարիքում պիտի ի հայտ գար. Իսկ եթե դեռահասության շրջանը դիտենք որպես անցում հասունությանը, ապա ակնհայտ է, որ ոչ ֆիզիկական, ոչ հոգեբանական, առավել ևս սոցիալական առումներով դեռահասը, նույնիսկ պատանին հասուն չի կարող համարվել: Բացի այդ, տարիքային անցումները որոշելը մեծապես կապված է տարիքային պարբերացման պրոբլեմի հետ, որը, ինչպես հայտնի է, այսօր լուծված չէ (146 և ուրիշներ): Գոյու-

թյուն ունեն բազմաթիվ պարբերացումներ, որոնցից և ոչ մեկը լիարժեք հիմնավորված չէ, իսկ դրանց կառուցման սկզբունքները դեռևս 30-ական թվականներին քննադատել է Լ. Ս. Վիգոտսկին (41): Բնականաբար, այս պարագայում խիստ դժվարանում է տարիքային անցումները որոշելը, առավել ևս տարիքային ճգնաժամերը հասկանալը: Օրինակ՝ ի՞նչ անցում է կատարվում 3 տարեկանի ճգնաժամի դեպքում վաղ մանկությունից նախադպրոցական տարիքի՞ն: Դ. Ֆելդշտեյնն իրավացիորեն նշում է, որ այս պարբերացումը հիմնված է տարբեր սկզբունքների վրա (146, էջ 129) և դրանով իսկ անհիմն է, քանզի հակասում է դասակարգումների կառուցման տարրական կանոններին (79): Մի դեպքում հիմք է ընդունվում «մանկություն» կենցաղային հասկացությունը, դրան ավելացվում է «վաղ» որոշիչը (յուրաքանչյուր նախորդ տարին հաջորդի համար վաղ է), մյուս դեպքում վերցվում է կրթադաստիարակչական համակարգի աստիճանը (նախադպրոցական շրջան)՝ Բնականաբար, այն հասարակություններում, որտեղ դպրոց չկա. տարիքային այդ փուլն էլ չի կարող լինել՝ Այս տեսանկյունից անհասկանալի է, թե ինչ անցումների մասին է խոսքը 18–22, 27–32, 35–42, 55–60 տարիքային շրջաններում (Գ. Շիհի, Դ. Լևինսոն և ուրիշներ):

Մեկ այլ հանգամանք ևս. ի՞նչ է նշանակում վաղ, միջին, ուշ հասունություն (դասակարգումն ընդունված է արևմտյան հոգեբանության մեջ): Չէ՞ որ, եթե 22 տարեկանը 16–ի համեմատությամբ հասուն է, ապա 32 տարեկանն ավելի հասուն է, քան 22 տարեկանը և այդպես շարունակ:

Հասունացումը գործընթաց է, որը շարունակվում է մարդու ամբողջ կյանքում մանկությունից մինչև ծերություն: Հասունության միասնական չափանիշներ չկան, և շատ հեղինակներ հասունությունն ավելի շուտ ընկալում են որպես անձնավորության բնութագիր քան օրինաչափորեն ի հայտ եկող տարիքային փուլ (Վ. Ֆրանկլ, Գ. Օլփորթ և ուրիշներ). չէ՞ որ մեկը կարող է 20 տարեկանում ավելի հասուն լինել, քան մյուսը 40–ում: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ «հասունություն» հասկացությունը չի կարող հանդես գալ որպես տարիքը բնութագրող, տարիքի էությունն արտահայտող հասկացություն:

Այսպիսով տարիքային անցումները պարզելու և անցումայնությամբ ճգնաժամերը բացատրելու համար նախ և առաջ անհրաժեշտ է մշակել տարիքային փուլերի առանձնացման օբյեկտիվ սկզբունքներ և հստակ

չափանիշներ: Բացի այդ, հայտնի է, որ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող շատ հասարակություններում ճգնաժամերն ընդհանրապես բացակայում են, իսկ զարգացած հասարակություններում ճգնաժամային տարիքներում գտնվող մարդկանց միայն մի մասն է ճգնաժամ ապրում. եթե ճգնաժամի պատճառը միայն անցումը լիներ, ապա ճգնաժամերն ամենուրեք պիտի պարտադիր լինեին: Նշենք նաև, որ տարբեր տարիքային ճգնաժամերն իրենց բնութագրերով էապես տարբերվում են միմյանցից, ինչը վկայում է նաև դրանց պատճառների և մեխանիզմների տարբերությունների մասին, հետևաբար, ըստ մեզ, սխալ է ենթադրել, թե բոլոր ճգնաժամերը տարիքային մի փուլից մյուսին անցնելով են պայմանավորված (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ավելի ուշ):

Երկրորդ ելակետային դրույթը և դրանից բխող տեսությունների խումբը ճգնաժամերը բացատրում են յուրաքանչյուր տարիքի առաջատար պահանջմունքների բավարարման, տարիքային խնդիրների լուծման դժվարություններով: Ռուս հոգեբաններից անցումայնության գաղափարին զուգահեռ այս տեսակետն են զարգացնում Լ. Բոժովիչը, Ե. Սապոգովան և ուրիշներ: Արևմուտքում այս տեսակետը լայնորեն տարածված է հատկապես դեռահասության ճգնաժամի բացատրության մեջ (Շ. Բյուլեր, Ա. Ֆրոյդ և ուրիշներ): Ռ. Հավիգուրսթի զարգացման խնդիրների տեսության հայտ գալուց հետո մի շարք հեղինակներ (Հ. Ռեմշմիդտ, Զ. Քոլմեն և ուրիշներ) ճգնաժամերը սկսեցին բացատրել տարիքային խնդիրների լուծման դժվարություններով, իսկ զարգացման սոցիոլոգիական տեսություններում (ըստ Հ. Ռեմշմիդտի) ճգնաժամերը կապվում են նոր սոցիալական դերերի յուրացման, դերային հարաբերությունների կառուցման դժվարությունների հետ:

Պետք է ասել, որ նշված տեսություններում նույնպես ճգնաժամերը հիմնականում կապվում են տարիքային անցումների հետ, սակայն հիմնական շեշտը դրվում է տարիքային հիմնախնդիրների հաղթահարման դժվարությունների վրա: Կարծում ենք, որ այդ տեսություններում նույնպես տարիքային ճգնաժամերի հետ կապված կարևոր և հիմնավորված հանգամանք է նշվում: Իսկապես, ցանկացած հոգեբանական ճգնաժամ կարող է հայտ գալ միայն այն ժամանակ, երբ մարդը բախվում է այնպիսի խնդիրների, որոնց լուծումը լուրջ դժվարությունների հետ է կապված (194): Այս առումով այս կոնցեպցիաները ներդաշնակորեն լրացնում են նախորդներին. անցնելով տարիքային հաջորդ փուլին մարդը բախվում է նոր խնդիրների, որոնց լուծման ուղիները նա աղոտ է պատկերացնում, չունի դրանք լուծելու հմտություններ, ինչը ֆրուստրացիոն վիճակ է ստեղծում և հանգեցնում ճգնաժամի:

Պետք է ասել, որ այս տեսություններում որոշակի հակասություն կա. այն է, որ տարիքային խնդիրների, պահանջմունքների ֆրուստրացիաները տեղի են ունենում տարիքային ամբողջ փուլի ընթացքում, սակայն ճգնաժամերն ի հայտ են գալիս խիստ որոշակի տարիքներում: Իհարկե, կարելի է ենթադրել, որ ճգնաժամային տարիքներն այն շրջաններն են, երբ մարդն առաջին անգամ է բախվում իր համար միանգամայն նոր խնդիրների, և հենց այդ հանգամանքն է պայմանավորում ճգնաժամը: Սակայն բանն այն է, որ դժվար է նշել այնպիսի պրոբլեմներ, որոնք վերաբերեն միայն մեկ տարիքի և ի հայտ չգան նաև այդ տարիքից թե առաջ և թե հետո (օրինակ թվում է, թե ինքնորոշման պրոբլեմներն առաջին անգամ ի հայտ են գալիս դեռահասության շրջանում, սակայն, ինչպես ցույց տվեց Ֆրոյդը, երեխան շատ ավելի վաղ է բախվում դրանց, բացի այդ, անկախ հիմնախնդրի նորությունից, եթե այն չի լուծվում, կարող է հանգեցնել ճգնաժամի). Նշված հակասության լուծման փորձ կարելի է համարել Զ. Քոլմենի մոտեցումը, ըստ որի ոչ թե տարիքային սպեցիֆիկ պրոբլեմների հետ բախումն է հանգեցնում ճգնաժամի (ըստ նրա հնարավոր չէ նշել այնպիսի պրոբլեմներ, որոնք բնորոշ լինեն միայն մեկ տարիքի), այլ այն, որ հիմնախնդիրները կուտակվում են (ըստ 123): Կարծում ենք, այս մոտեցումն էլ լիովին չի լուծում հակասությունը, քանի որ հիմնախնդիրների կուտակում կարող է տեղի ունենալ ցանկացած տարիքում, բայց ճգնաժամերն ի հայտ են գալիս խիստ որոշակի տարիքներում: Հակասությունը, թերևս, հնարավոր լինի հաղթահարել, եթե հիմնավորվի, որ մարդը որոշակի շրջաններում խիստ զգայուն է դառնում որոշակի հիմնախնդիրների նկատմամբ, ինչի հետևանքով էլ դրանց ֆրուստրացիան շատ ավելի ծանր է ապրվում, քան այլ տարիքային շրջաններում: Այս հարցը մասամբ քննարկվում է Է. Էրիքսոնի ճգնաժամերի կոնցեպցիայի մեջ, որտեղ հեղինակը ճգնաժամային տարիքները դիտում է որպես աճած «խոցելիության և ներուժի շրջաններ» (167, էջ 105): Սակայն Էրիքսոնը խոսում է ոչ թե տարիքային որոշակի խնդիրների, պահանջմունքների նկատմամբ աճած խոցելիության, այլ

կոնկրետ նորագոյացությունների (անենք բազային վստահության (կամ անվստահության) ձևավորման հետ կապված ճգնաժամերի մասին. Փաստորեն ստացվում է, որ հեղինակը նկատի ունի այն, ինչը հոգեբանության մեջ անվանվում է որոշակի հոգևրաճնական իրադրությունների ձևավորման սենզիտիվ շրջան.

Ճգնաժամերի բացատրման վերջին ելակետային դրույթն այն է, որ կյանքում առկա են շրջաններ, որոնց ընթացքում տեղի է ունենում մարդու անհատականացումը, որի հետևանքով էլ առաջանում են ճգնաժամները (Փ. Բլոս և ուրիշներ). Այս կոնցեպցիայի կողմնակիցները հիմնվում են այն փաստի վրա, որ ճգնաժամերի ժամանակ, մասնավորապես 3 տարեկանում և դեռահասության շրջանում անձնավորության կտրուկ տեղաշարժեր են տեղի ունենում: Այս հանգամանքն իսկապես ևսևան է քանի որ ճգնաժամային շատ ախտանշաններ կարծես թե բխում են ես–ի մեջ տեղի ունեցող փոփոխություններից. Սակայն անհասկանալի է, թե ինչով են պայմանավորված այդ փոփոխությունները, ինչո՞ւ է հենց այդ շրջաններում տեղի ունենում անհատականացման գործընթացը (միգուցե դա ճգնաժամի հետևանք է և ոչ թե պատճառ), բացի այդ, եթե այս կոնցեպցիան իրավացի է թվում 3 տարեկանի և դեռահասության ճգնաժամերի դեպքում, ապա մյուս ճգնաժամերի համար նույնը չի կարելի պնդել (թերևս հենց այդ պատճառով էլ Փ. Բլոսը միայն նշված երկու ճգնաժամերն է ընդունում): Մեզ թվում է, որ անհատականության ձևավորումն անընդհատ գործընթաց է և այն չի կարելի որևէ առանձին տարիքային շրջանի վերագրել. չէ՞ որ ցանկացած տարիքում էլ (հատկապես արտաքին կտրուկ փոփոխությունների դեպքում) մարդու մեջ կարող են խոր փոփոխություններ կատարվել:

Ամփոփելով տարիքային ճգնաժամերի պրոբլեմի տեսական հետազոտությունները փորձենք ուրվագծել այն հարցերը, որոնք ճշգրտումների, լրացումների, հետագա ուսումնասիրությունների կարիք ունեն.

1. Ճշգրտման կարիք ունի «տարիքային ճգնաժամ» հասկացությունը: Տարիքային ճգնաժամերին նվիրված ողջ գրականության մեջ մենք չկարողացանք հանդիպել այս հարցի քննարկմանը, մինչդեռ շատ տարաձայնություններ, տեսական և էմպիրիկական շատ հիմնախնդիրներ ծագում են այս հասկացության ճշգրտված չլինելուց: Մի շարք հեղինակներ, փաստորեն, միևնույն հասկացությունն օգտագործելով, տարբեր իմաստներ են նկատի ունենում (օրինակ լիովին տարբեր են Լ. Վիգոտսկու և Էրիքսոնի տարիքային ճգնաժամերի ըմբռնումները):

2. Տարիքային տարբեր ճգնաժամերը համեմատական վերլուծության ենթարկված չեն: Այս հանգամանքը նույնպես լուրջ խոչընդոտ է տարիքային ճգնաժամերի պրոբլեմի լուծման գործում. չէ՞ որ առանց բացահայտելու այն ընդհանուրը, որը միավորում է բոլոր ճգնաժամերը, հնարավոր չէ հասկանալ ոչ վերջիններիս էությունը, ոչ պատճառները և ոչ էլ առաջացման մեխանիզմները:

3. Տեսական և էմպիրիկական հետազոտությունների միջև առկա է մեծ խզում: Շատ տեսաբաններ ուղղակի անտեսում են էմպիրիկական հետազոտությունները, մյուս կողմից շատ էմպիրիկական հետազոտություններ զուտ նկարագրական բնույթ են կրում, ուղղված չեն որևէ տեսության հաստատմանը կամ ժխտմանը:

4. Շատ տեսություններ կառուցված են ոչ թե բոլոր, այլ առանձին տարիքների ճգնաժամերի հետազոտությունների հիման վրա. է. Էրիքսոնի (որի տեսությունը, ինչպես արդեն նշել ենք, ավելի շուտ վերաբերում է սենզիտիվ շրջաններին), Վ. Սլոբոդչիկովի, Գ. Ցուկերմանի տեսություններից բացի, ոչ մի այլ տեսություն չի ընդգրկում տարիքային բոլոր ճգնաժամերը:

5. Հիմնական տեսությունները կառուցված են մանկության և դեռահասության շրջանների ճգնաժամերի վրա, իսկ հասունության ճգնաժամերը տեսական առումով շատ քիչ են ուսումնասիրված.

6 Տարիքային զարգացման փուլերի և ճգնաժամերի հիմնախնդիրները փոխպայմանավորված են, և առանց իմաստավորելու ու ճշգրտելու տարիքային փուլերը հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել ճգնաժամերի մասին: Ինչպես նշեցինք, տեսությունների մեծ մասը ճգնաժամերը բացատրում է տարիքային մի փուլից մյուսին անցմամբ, սակայն մինչև օրս չկա հիմնավորված, համընդհանուր ընդունման արժանացած տարիքային պարբերացում, որի հետևանքով էլ անհասկանալի է, թե տարբեր ճգնաժամերի ժամանակ ինչ անցումներ են կատարվում և այդ անցումներն ինչպես են պայմանավորում ճգնաժամերը. Այս հիմնահարցը լուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հիմնավորված սկզբունքներով տարիքային փուլերը միմյանցից բաժանող, տարբերակող պարբերացում մշակել.

1.3. ԱՌԱՆՁԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԻ ԾԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.3.1. ՆՈՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆԻ ԾԳՆԱԺԱՄԵՐԸ

Այս տարիքների ծգնաժամայնությունը հաստատող հիմնավոր հետազոտությունների մենք չենք հանդիպել: Սովորաբար, նորածնությունը համարվում է նոր կենսակերպին հարմարվելու կենսաբանական բարդ շրջան երբեմն առաջին օրերին երեխայի քաշի անկումն է դիտվում որպես ծգնաժամային ախտանշան:

Ըստ էրիքսոնի սա աշխարհի և մարդկանց նկատմամբ երեխայի մեջ բազային վստահության կամ անվստահության ձևավորման ծգնաժամն է (փաստորեն սենզիտիվ շրջան, որը տևում է մինչև մեկ տարեկանը):

Թերևս, 1 տարեկանի ծգնաժամը նույնպես գուտ տեսական կառույց է: Ըստ Վիգոտսկու «Հենց քայլքի ձևավորումն էլ այս ծգնաժամի բովանդակության առաջին պահն է» (41, էջ 318): Երկրորդ պահը, ըստ հեղինակի, վերաբերում է խոսքին. սա խոսքի ձևավորման լատենտ շրջանն է (43, էջ 318): Երրորդ պահն այն է, որ երեխայի մեջ ի հայտ են գալիս առաջին կամային դրսևորումները: Փաստորեն, խոսքը ձևավորվող նորագոյացությունների և ոչ թե ծգնաժամի մասին է:

Ռուս հոգեբան Կ. Ն. Պոլիվանովան փորձ է արել զարգացնել 1 տարեկանի ծգնաժամի վերաբերյալ Լ. Վիգոտսկու առաջ քաշած դրույթները: Հիմնվելով մեկ երեխայի դիտման մեթոդով կատարված հետազոտության վրա հեղինակը եզրակացնում է. «Ամենօրյա դիտումների արդյունքում բացահայտվեցին երեխայի մեկ տարեկանին բնորոշ ախտանշանները: Քննելով դրանք մենք կարող ենք եզրակացնել, որ մեկ տարեկանում երեխան իր զարգացման ընթացքում անցնում է մի քանի էտապ. ա) երեխայի մեջ հայտնվում են ...նրան գրավող առարկաներ և իրավիճակներ, բ) տեղաշարժման նոր եղանակը մի կարճ ժամանակահատվածի ընթացքում երեխայի ուշադրության կենտրոնում է հայտնվում, վերածվում է յուրահատուկ, առարկայով միջնորդավորված պահանջմունքի, գ) ցանկությունը բավարարելու արգելքը (կամ՝ հետաձգումը) հանգեցնում է հիպոբուլիկ հակազդումների (վարքում) և մղման

ի հայտ գալուն (որպես հոգեկան կյանքի բնութագիր), դ) խոսքը զսպված աֆեկտի իմաստ է ստանում

Այսպիսով ծգնաժամի ընթացքում զարգացման բովանդակությունը բնութագրվում է «սուբյեկտիվացիա» հասկացությամբ. ինչը նշանակում է սուբյեկտի կողմից սեփական ցանկությունների և գործողությունների բացահայտում...» (118, էջ 49):

Ըստ էրիքսոնի սա ինքնավարության կամ ամոթի և կասկածների ձևավորման ծգնաժամային շրջանն է (մինչև էդիպյան շրջանը մոտ 3 տարեկանը):

Նշված ծգնաժամերի հոգեբանական լմպիրիկ հետազոտությունների մենք չենք հանդիպել (ընդհանրապես, այս շրջաններին որպես հոգեբանական տարիքային ծգնաժամերի մասին մեծ վերապահությամբ կարելի է խոսել. նույնիսկ ծննդյան պահը, որին հոգեվերլուծական որոշ ուղղություններում մեծ նշանակություն է տրվում, չի կարող դիտվել որպես հոգեբանական առումով ծգնաժամային գործընթաց. այն բնական կենսաբանական ակտ է, որի մեխանիզմները «մշակել է» բնությունը միլիոնավոր տարիների ընթացքում):

Նորածնության ծգնաժամի ախտանշաններ են համարվում քաշի կորուստը առաջին օրերին (149 և ուրիշներ), մահացությունների մեծ քանակը, ֆիզիոլոգիական տեղաշարժերը, որոնք ուղղված են նոր միջավայրին հարմարվելուն (195, էջ 178–183):

Որպես մեկ տարեկանի ծգնաժամի ախտանշաններ են նշվում քայլքի և ավտոնոմ խոսքի ձևավորումը (43) և կամային ակտերի, մասնավորապես առաջին անգամ մեծերին հակադրվելու հանգամանքը, հիպոբուլիկ, աֆեկտիվ հակազդումները (43):

1.3.2. ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆԻ ԾԳՆԱԺԱՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարիքային այս շրջանի առավել լայն ճանաչման արժանացած տեսությունը թերևս Զ. Ֆրոյդի էդիպյան կոնֆլիկտների տեսությունն է: Ինքը Ֆրոյդը, տարիքային կամ զարգացման ծգնաժամ հասկացությունը չի օգտագործում, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է է.էրիքսոնը, այն հանգամանքը, որ էդիպյան պրոբլեմները նորմատիվ բնույթ ունեն.

ի հայտ են գալիս որոշակի տարիքային փուլում և սուր հոգեբանական կոնֆլիկտներով են ընթանում, վկայում է այն մասին, որ խոսքը հենց տարիքային ճգնաժամին է վերաբերում: Այդ պատճառով էլ, մեր կարծիքով: Ֆրոյդի էդիպյան տեսությունը կարող է դիտվել որպես 3 տարեկանի ճգնաժամը բացատրող կոնցեպցիա: Հիշեցնենք, որ ըստ Ֆրոյդի մոտ երեք տարեկանից երեխայի մեջ սկիզբ է առնում նորմատիվ ներոզ, որը պայմանավորված է սեռական զարգացման ֆալլիկ շրջանի պրոբլեմներով: Երեխայի սեռական զգացողությունները կենտրոնանում են սեռական օրգաններում. «...Միաժամանակ,— գրում է Ն. Կամերոնը,— կասկած է առաջանում, որ այդ հաճելի զգացողությունները կապված են «ուրիշի» հակառակ սեռի ծնողի հետ» (193, էջ 70): Ըստ Ֆրոյդի սկիզբ է առնում սերը հակառակ սեռի ծնողի նկատմամբ և ատելությունը, խանդը նաև վախը նույն սեռի ծնողի նկատմամբ. «Փոքրիկ տղան,— գրում է Ֆրոյդը,— միայնակ է ուզում տիրել մորը, հոր ներկայությունը դիտում է որպես խոչընդոտ, վրդովվում է, երբ հայրը սիրաբանում է մորը, իր գոհությունն է արտահայտում, երբ հայրը բացակայում է: Նա, հաճախ, իր զգացմունքները բառերով է արտահայտում՝ խոստանալով մորն ամուսնանալ նրա հետ» (149, էջ 211):

Ահա այս սիրավեպի հիման վրա էլ սկիզբ է առնում խոր ճգնաժամ, երեխայի մեջ ի հայտ են գալիս ամբիվալենտ զգացմունքներ ծնողների նկատմամբ (սեր, ատելություն, մեղքի զգացում իր «անբարոյական» ֆանտազիաների համար», պատժվելու վախ), սուր կոնֆլիկտներ են առաջանում ներհոգեկան և միջանձնային հարաբերությունների ոլորտներում, այդ կոնֆլիկտները հաճախ վերածում են նևրոտիկ խանգարումների: Ֆրոյդի գաղափարները զարգացնում է հոգեվերլուծության մեկ այլ ներկայացուցիչ է. էրիքսոնը: Նա նույնպես այս տարիքի ճգնաժամը կապում է էդիպյան պրոբլեմների հետ: Ըստ էրիքսոնի «Ինֆանտիլ սեքսուալությունն ու արյունապղծության տաբուն, կաստրացիոն բարդույթն ու գերես–ը միանում են, որպեսզի առաջ բերեն այն յուրահատուկ մարդկային ճգնաժամը, որի ընթացքում երեխան պետք է կտրվի ծնողների հետ նախագենիտալ կապվածություններից և դանդաղ ընթանա ծնող դառնալու, ավանդույթները շարունակողի ճանապարհով.. բնազդի բեկորները, որոնք մինչև ճգնաժամը ուժեղացնում էին երեխայի մարմնի ու բանականության աճը, հիմա բաժանվում են մի կողմից մանկական հավաքածուի, որն ընդմիշտ ապահովելու է աճի պոտենցիալների առատությունը, մյուս կողմից ծնողական հավաքածուի, որն ուժեղացնում և պահպանում է ինքնահսկումը, ինքնակառավարումն ու ինքնապատժումը» (167, էջ 359):

Այստեղից էլ, ըստ էրիքսոնի, ի հայտ է գալիս ճգնաժամի երկընտրանքը նախաձեռնողության, ինքնավստահության կամ մեղավորության զգացումների ձևավորումը: Առաջինը « ..ենթադրում է նախաձեռնելուց (կամ մեկի, ինչ–որ բանի վրա հարձակվելուց և նպատակին հասնելուց) հաճույք ստանալը: Մյուսը, որ ձևավորվում է սովորական պարտություններից հետո...հանգեցնում է խոնարհության, մեղքի զգացման և տագնապի» (167, էջ 358–359): Վերջինս այս տարիքի հիմնական վտանգն է հանդիսանում, այն ճգնաժամի բացասական ելքն է, այսպես կոչված էդիպյան մեղքի զգացողությունը.

Հոգեվերլուծության մեկ այլ ներկայացուցիչ Փ. Բլոսը, ճգնաժամերը կապում է այսպես կոչված ինդիվիդուալիզացիայի անհատականացման գործընթացի հետ: Նա, ինչպես արդեն նշել ենք, առանձնացնում է անհատականացման երկու փուլ երեք տարեկանում և դեռահասության շրջանում, որոնց բնորոշ են նմանատիպ ախտանշաններ սեփական ես–ի նկատմամբ զգայունության աճ, փոխվելու ձգտում, տարիքային խնդիրները հաջողությամբ չլուծվելու դեպքում հոգեախտաբանական դրսևորումներ, հարազատներից անջատվելու ձգտում և այլն:

Բիոգենետիկական ուղղության ներկայացուցիչ Օ.Կրոն 3 տարեկանի ճգնաժամը բացատրում է այն բանով, որ երեխան սկսում է հասկանալ և ճանաչել սեփական ներաշխարհը:

Ֆրանսիացի հոգեբան Հանրի Վալոնը 3 տարեկանի ճգնաժամը բնութագրում է որպես պերսոնալիզացիայի շրջան: Երեխան զգայուն է դառնում իր ես–ի նկատմամբ, ձգտում է ինքնահաստատվել, ամեն կերպ ձգտում է ուշադրության կենտրոնում լինել, մյուս կողմից երեխան ձգտում է նմանվել մեծերին: Հաճախ միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում երեխայի ինքնուրույնության կամ սեփական կամքն ուրիշներին պարտադրելու ձգտումների պատճառով (ըստ 4, էջ 30–31):

Երեք տարեկանի ճգնաժամի տեսական հարցերի առաջին հետազոտողներից է Լ.Վիգոտսկին: Վերլուծելով ճգնաժամի ախտանշանները

նա հանգում է այն եզրակացության, որ ճգնաժամի ժամանակ առաջին պլան է մղվում երեխայի ես–ը, ինչպես նաև ազատագրվելու, ինքնուրույնություն դրսևորելու միտումը: «Ճգնաժամը,— գրում է Վիգոտսկին,— դրսևորվում է հիմնականում այնպիսի գծերով, որոնք թույլ են տալիս նկատել բունդը ավտորիտար դաստիարակության նկատմամբ, ինքնուրույնություն պահանջող երեխայի բողոքը ավելի վաղ տարիքում ձևավորված խնամքի ձևերի և նորմերի դեմ» (43, էջ 372): Միևնույն ժամանակ, փոխվում և երեխայի վերաբերմունքն իր և շրջապատող մարդկանց նկատմամբ, ձևավորվում է զարգացման սոցիալական նոր իրավիճակ, որին հարմարվելու ընթացքում էլ հենց ի հայտ է գալիս ճգնաժամը:

Վիգոտսկու աշակերտները Ա. Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկոնինը, Լ. Ի. Բոժովիչը, նույնպես այն կարծիքին են, որ ավտորիտար դաստիարակությունը մեծ դեր է խաղում 3 տարեկանի ճգնաժամի ձևավորման գործընթացում: Նրանք ճգնաժամը կապում են նաև առաջատար գործունեության, զարգացման սոցիալական նոր իրավիճակի, միջանձնային հարաբերությունների փոփոխությունների հետ. Դ. Էլկոնինն այն կարծիքին է, որ այդ ճգնաժամային տարիքի կարևոր պահերից է այն, որ երեխան վարքի աֆեկտային կարգավորման ձևերից անցնում է կամային կարգավորման ձևերին: Լ. Բոժովիչը նշում է, որ ճգնաժամի առաջացման գործում մեծ դեր է խաղում այն, որ երեխան լիովին պատրաստ է նոր հարաբերությունների համար, սակայն մեծերի վերաբերմունքը նրա նկատմամբ մնում է նույնը: Ռուս հոգեբանները մեծ տեղ են հատկացնում ճգնաժամային տարիքների նորագոյացությունների հարցին: Ըստ Լ. Բոժովիչի 3 տարեկանի ճգնաժամի հիմնական նորագոյացությունը «ես» համակարգի ձևավորումն է: Ըստ Մուխինայի այս տարիքի հիմնական նորագոյացություններն են սեփական ես–ի առանձնացումը միջավայրից, իր անձի համեմատումն ուրիշների հետ:

Երեք տարեկանի ճգնաժամի էմպիրիկական հետազոտություններ է կատարել ռուս հոգեբան Տ. Գուսկովան (52). Ըստ հեղինակի՝ ճգնաժամն ի հայտ է գալիս 2,6–3,2 տարեկանում: Առավել բնորոշ ախտանշաններն են ա) քննադատության նկատմամբ ուժեղ աֆեկտիվ հակազդումը, բ) երևակայական օբյեկտի հետ խաղը, գ) նեգատիվիզմը, դ) համառությունը, ե) խիստ բունդ հակազդումը հաջողությանը, զ) գործունեության արդյունքների կանխատեսումը, է) ինքնուրույնության ձգտումը: Այս ախտանշանները ճգնաժամի միջուկն են կազմում: Հեղինակը նշում է նաև ավելի քիչ հանդիպող մի շարք ախտանշաններ ինքնակամությունը, արգելքների նպատակաուղղված խախտումը, մեծահասակների կողմից գնահատվելու սուր պահանջը, իրականության նպատակաուղղված աղավաղումը, ապրումների ցուցադրական դրսևորումը, ստախոսությամբ պատժից խուսափելը, հիշաչարությունը, անհաջողության սուր ապրումը, պարծենկոտությունը և այլն:

Ավանդաբար ընդունված է երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանները համարել նեգատիվիզմը, համառությունը, ըմբոստությունը, մեծերի արժեզրկումը, բողոքները և բունդը, ինքնակամությունը, մեծերի նկատմամբ բռնակալությունը (43):

1.3.3. ՅՈԹ ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐԸ ԵՎ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լ.Վիգոտսկին այս ճգնաժամի հիմնական ախտանշաններն է համարում անմիջականության, նախվության կորուստը, կամակորությունը, սեթևեթանքը: Ճգնաժամի կարևորագույն առանձնահատկությունը, ըստ նրա, «...երեխայի անձնավորության ներքին և արտաքին ոլորտների տարբերակումն է» (43, էջ 377). Երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները, ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ, ի հայտ է գալիս ապրումների սուր պայքար (43, էջ 380): Նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ յոթ տարեկանում փոխվում է երեխայի զարգացման սոցիալական իրավիճակը, վերաբերմունքը միջավայրի և միջավայրի վերաբերմունքը նրա նկատմամբ, պայմանավորում են այս ճգնաժամը:

Ա. Ն. Լեոնտևը 7 տարեկանի ճգնաժամը բացատրում է նոր առաջատար գործունեությանը և դրանով պայմանավորված նոր սոցիալական հարաբերություններին անցնելու վաղաժամ կամ ուշացած լինելու հանգամանքով. եթե երեխան ժամանակին է անցնում գործունեության նոր տեսակին, այսինքն հոգեբանորեն պատրաստ է լինում նոր գործունեությանը, ճգնաժամն ի հայտ չի գալիս (89, էջ 287):

Ըստ Լ. Բոժովիչի 7 տարեկանում ի հայտ է գալիս ավելի «մեծական»

դիրք գրավելու, այսինքն դպրոցականի ստատուսին հասնելու ձգտումը, երեխան սկսում է գիտակցել իր սոցիալական ես–ը և դրա նկատմամբ իր վերաբերմունքը (31, էջ 48–49): Ճգնաժամը Լ. Բոժովիչը հետևյալ կերպ է մեկնաբանում. «...Երեխայի մեջ տեղի է ունենում գիտակցված հակասություն նրա իրական հասարակական դիրքի և ներքին ձգտման միջև. Անցումը նոր դիրքին երբ ժամանակին չի լինում, ապա երեխայի մեջ ի հայտ է գալիս անբավարարվածություն, ինչն էլ պայմանավորում է ճգնաժամային շրջանում երեխայի վարքը» (31, էջ 49): Այլ կերպ ասած նոր սոցիալական դիրքի հասնելու պահանջմունքի ֆրուստրացիան է, ըստ Բոժովիչի, պայմանավորում 7 տարեկանի ճգնաժամը:

Ժամանակակից արևմտյան հոգեբանության մեջ մենք չենք հանդիպել 7 տարեկանի ճգնաժամին վերաբերող ոչ տեսական, ոչ էլ էմպիրիկական հետազոտությունների, ավելին, կարելի է ասել, որ արևմուտքում այս տարիքը ճգնաժամային չի համարվում: Թերևս, բացառություն է կազմում միայն է. էրիքսոնի կոնցեպցիան, որի մեջ այս շրջանը աշխատասիրության կամ անլիարժեքության զգացողության ձևավորման ճգնաժամը կամ, որ թերևս ավելի ճիշտ է, սենզիտիվ շրջանն է համարվում: Ըստ էրիքսոնի «մտնելով լատենտ շրջան նորմալ զարգացած երեխան մոռանում է կամ ավելի ճիշտ սուբլիմացիայի է ենթարկում ուղղակի հարձակման միջոցով մարդկանց «անելու» կամ հապճեպ «հայր» կամ «մայր» դառնալու համառ պահանջմունքները. հիմա նա սովորում է հարգանքի արժանանալ օգտակար և անհրաժեշտ գործով զբաղվելու միջոցով. Նա արդեն տիրապետում է քայլքին և օրգանների մոդուսներին, սեփական փորձի հիման վրա համոզվում է, որ ընտանիքում իրականանալի ապագա չկա և այդ պատճառով էլ հաճույքով համաձայնվում է իրեն ներդնել աշխատանքային հմտություններ ձեռք բերելու գործում...Նրա մեջ զարգանում է ջանասիրությունը, աշխատասիրությունը...» (167, էջ 363): Աշխատանքային (ուսումնական) գործունեության մեջ անհաջողությունները, բավարար չափով չխրախուսվելը կամ այն, որ երեխային գնահատում են ոչ թե իր ուսումնական գործունեության արդյունքների, այլ ծագման, մաշկի գույնի և նման այլ բնութագրերի հիման վրա, երեխայի մեջ կարող են ձևավորել անլիարժեքության և ոչ արեկվատության զգացողություն (167, էջ 364–365):

Յոթ տարեկանի ճգնաժամի ռուս հոգեբանների կողմից իրականացրած էմպիրիկական հետազոտությունները հիմնականում ուղղված են հաստատելու այն միտքը, որ ճգնաժամը պայմանավորված է երեխայի դպրոցին պատրաստ լինելու և նոր դպրոցականի ստատուսին հասնելու պահանջմունքի ֆրուստրացիայի հետ: Այսպես, Մ. Ելագինան, ինչպես նշել ենք, առանձնացնում է զարգացմամբ և հասունացած չլինելով պայմանավորված ճգնաժամները: Ըստ նրա դպրոցին պատրաստ երեխաների համար նախադպրոցական կյանքը «նեղ» է թվում. ի հայտ է գալիս զարգացման ճգնաժամը (61, էջ 38): Հաճախելով դպրոց այս երեխաների ճգնաժամային ախտանշանները անցնում են, իսկ այն երեխաները, ովքեր պատրաստ չեն դպրոցին, հայտնվելով դպրոցում, դրսևորում են չհասունացման ճգնաժամի ախտանշանները (61, էջ 38):

Ե. Սապոգովայի հետազոտությունները հաստատում են Լ. Բոժովիչի և Մ. Ելագինայի տեսակետները: Այն նախադպրոցականները, ովքեր 6–7 տարեկանում դպրոցին պատրաստ լինելու հատկություններ էին դրսևորում, նախքան դպրոց գնալը, ճգնաժամային ախտանշաններ էին դրսևորում, իսկ հաճախելով դպրոց, այդ ախտանշանները վերանում էին (ըստ Սապոգովայի այս երեխաները հետազոտվողների մոտ 58 % էին կազմում): Իսկ այն երեխաները, ովքեր 6–7 տարեկանում դեռևս պատրաստ չէին խաղային գործունեությունը ուսումնականով փոխարինելու (հետազոտվողների 42%–ը), դպրոց հաճախելով, ճգնաժամային ախտանշաններ էին դրսևորում (127, էջ 36–43):

1.3.4. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռահասության ճգնաժամի ինչպես անցյալի, այնպես էլ նոր տեսություններում առանձնահատուկ նշանակություն է տրվում երկու հանգամանքի սեռական հասունացման գործընթացին և ինքնագիտակցության արթնացմանը: Դեռևս ժան–ժակ Ռուսոն դեռահասությունը դիտում էր որպես ինքնագիտակցության ածի, անձնավորության ծննդյան շրջան (ըստ 120): Սթենլի Հոլը դեռահասությունը բնութագրում էր որպես ինքնագիտակցության ճգնաժամի, անհատականության զգացողության ձևավորման շրջան (215): Հոլը դեռահասության ընթացքում ի հայտ ե-

կող բացասական ախտանշանները բացատրում էր այս տարիքի անցումային լինելով: Ե. Բյուլերը դեռահասության ճգնաժամի պատճառը սեռական հասունացումն է համարում: Նա դեռահասության փուլում առանձնացնում է նեգատիվ և պոզիտիվ շրջաններ: Նեգատիվ շրջանի հիմնական բնութագիրը նախկին հետաքրքրությունների մահացումն է, սկսում է ի հայտ գալ սեռական մղումը, ինչն էլ պայմանավորում է այս շրջանի բացասական ախտանշանները (տագնապայնությունը, ագրեսիվությունը, լարվածությունը, անհմաստ բունտը, նեգատիվիզմը և այլն): Պոզիտիվ շրջանը բնութագրվում է նոր հետաքրքրությունների, արժեքների ի հայտ գալով. դեռահասը ձգտում է մտերմիկ հարաբերությունների, արթնանում է սիրո զգացմունքը:

Պերսոնոլոգիական ուղղության հիմնադիր է. Շպրանգերը դեռահասության կարևորագույն բնութագիրն է համարում «ես»-ի բացահայտումը, ներհայեցողության ծնավորումը: Դեռահասը սկսում է զգալ իր անհատականությունը, գիտակցել իրեն և իր կյանքի ուղին (ըստ 76, էջ 35):

Կուրտ Լևինը դեռահասության կարևորագույն բնութագիրն է համարում կենսագործունեության դաշտի ընդարձակումը: Այս տարիքի հիմնական պրոբլեմները, ըստ նրա, պայմանավորված են դեռահասի մարգինալ ստատուսով նա ոչ երեխա է և ոչ էլ մեծ, անորոշ վիճակում է, ինչն էլ ներքին հակասությունների, ոչ ադեկվատ վարքի, մի ծայրահեղությունից մյուսի մեջ հայտնվելու, անինքնավստահության պատճառ է հանդիսանում (ըստ 76, էջ 36):

Դեռահասության ճգնաժամը հատուկ ուշադրության է արժանացել հոգեվերլուծության մեջ: Ըստ այդ կոնցեպցիայի դեռահասության շրջանում սեռական հասունացման շնորհիվ լիբիդոն նոր, հզոր ուժով է արթնանում. նորից հրատապ են դառնում էդիպյան կոնֆլիկտները, որոնց հաղթահարման միջոցով դեռահասը պետք է հրաժարվի նախկին օբյեկտային հարաբերություններից, մանկական սեռականությունից, ռեգրեսիվ միտումներից և անցում կատարի դեպի նոր օբյեկտային հարաբերություններ, հասուն սեռականություն: Հոգեվերլուծաբաններ Ֆ. և Ռ. Թայսոնները ահա թե ինչպես են ներկայացնում դեռահասության որպես հոգեսեռական զարգացման փուլի պրոբլեմները. «Այս կենսաբանական փոփոխությունները հզոր ազդեցություն են թողնում հոգեկան զարգացման վրա: Հորմոններով խթանվող իմպուլսների ալիքի հետ

միասին նրանք արթնացնում են զարգացման ավելի վաղ մակարդակների կոնֆլիկտները, որոնք խախտում են սուպերէգոյի և էգոյի, բնազդների և պաշտպանությունների միջև լատենտ շրջանում ծեռք բերված հավասարակշռությունը առաջ բերելով հոգեկան ակտիվության բուռն մղում: Սեռական և ագրեսիվ բնազդների ճնշման ուժգնացման շնորհիվ արթնանում են նախաէդիպյան և էդիպյան նախկին ցանկությունները և դրանց հետ կապված կոնֆլիկտները: Միայն թե հիմա դրանք կարող են սպառնալից բնույթ կրել, քանի որ պատանին արդեն ունի հետերոսեքսուալ սեռական հարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ ներուժը: Առկա է ոչ միայն իրականացման պոտենցիալ հնարավորությունը, այլև, կոգնիտիվ հասունության շնորհիվ, պատանին կարող է գիտակցել մանկական ինցեստուոզ երազանքների նշանակությունը: Այս ամենի հետևանքով, նա մի կողմից աճող պահանջ է զգում ճնշելու իր վաղ շրջանի ցանկությունները, մյուս կողմից փորձում է ազատվել վաղ շրջանում սեռական բավարարման վրա դրված տաբուից (ինչն անհրաժեշտ է գենիտալ սեռական հարմարման համար): Վերջին հանգամանքն էլ ավելի է սրում առկա կոնֆլիկտը. .. Պատանին պետք է իր բնազդները լիցքաթափելու այնպիսի ուղիներ գտնի, որոնք հասուն սեռական հարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ բնազդային և հուզական ազատության առավելագույն մակարդակ ապահովեն: Դա նախ և առաջ ենթադրում է սեռականորեն ակտիվ ծնողների հետ հասուն նույնացումը, ինչը պատանուն հնարավորություն կտա խթանել սեփական սեռական ակտիվությունը... Հասուն գենիտալության բարեհաջող կազմակերպումը պահանջում է, որ ինցեստուոզ ցանկությունները շարունակվեն ճնշվել այնքան ժամանակ, քանի դեռ չեն կատարվել այս կարևոր նույնացումները» (137, էջ 79–80):

Դեռահասության ճգնաժամի հոգեվերլուծական կոնցեպցիայի ծնավորման վրա մեծ ազդեցություն են թողել Աննա Ֆրոյդի հետազոտությունները: Ըստ հեղինակի դեռահասի էգո-ն հարաբերականորեն թույլ է իդ-ի աճող իմպուլսներին հաջողությամբ դիմակայելու համար, իսկ լատենտ շրջանի պաշտպանական մեխանիզմներն այս տարիքում ոչ ադեկվատ են դառնում, որի հետևանքով դեռահասն ուժեղ տագնապներ է ունենում, մեղքի զգացում ապրում, ռեգրեսիվ միտումներ դրսևորում: Զարգացման այս դժվարությունների հաղթահարման գործում Ա. Ֆրոյ-

դը կարևորում է ադեկվատ պաշտպանական մեխանիզմների, նոր օբյեկտների հետ նույնացումների, անձնավորության ենթակառույցների նոր հավասարակշռության ձևավորման դերը:

Հոգեվերլուծության շրջանակներում դեռահասության ճգնաժամի առնչությամբ նոր մոտեցումներ են զարգացրել Ա. Ֆրոյդի աշակերտներ է. էրիքսոնը և Փ. Բլոսը.

Ըստ է. էրիքսոնի դեռահասության շրջանում տեղի է ունենում նույնականության կամ դերերի շփոթի ճգնաժամը: «...Դեռահասության և վաղ պատանեկության շրջաններում... սեռական հասունացմամբ բարդացած ինտենսիվ ֆիզիկական աճի հետևանքով էգո–ի հիմքը հանդիսացող նույնականությունը և անընդհատությունը նորից կասկածի տակ են դրվում ...» (167, էջ 366): Նույնականությունը ես–ի նոր ինտեգրացիան է, որը, սակայն, ավելին է, քան մանկական նույնացումների միագումարը. այն միավորում է նաև լիբիդինալ բովանդակությունները, ընդունակությունները և սոցիալական դերերի ընձեռած հնարավորությունները (167, էջ 366): «... էգոյի նույնականության զգացումը,— գրում է էրիքսոնը,— աճող վստահությունն է այն բանում, որ անհատի անցյալով նախապատրաստված ներքին նույնությունը և անընդհատությունը համընկնում են ուրիշների համար անհատի նշանակության նույնությանը և անընդհատությանը...» (167, էջ 367): Այս ճգնաժամի հիմնական վտանգը, ըստէրիքսոնի, դերերի շփոթն է, որի հիմքում ընկած են սեռական նույնականության առնչությամբ կասկածները (167, էջ 367): Վերջին հանգամանքը կարող է հանգեցնել ոչ ադեկվատ նույնականության ձևավորմանը և դրսևորվել հետևյալ կերպ. պատանին կարող է խուսափել մտերմիկ միջանձնային հարաբերություններից, մեկուսանալ, կարող է կորցնել ժամանակի զգացողությունը, վախենալ փոփոխություններից, հասունացումից, հրաժարվել կյանքի հեռանկարներ կառուցելուց: Մեկ այլ դեպքում պատանին անընդունակ է դառնում ստեղծագործ գործունեությանը, չի կարողանում կենտրոնանալ, օգտագործել իր ռեսուրսները կամ էլ լիովին տրվում է մի որևէ գործունեության անտեսելով մյուսները: Երբեմն էլ պատանին բացասական նույնականություն է դրսևորում. մերժում է այն դերերը, որոնք իր համար ադեկվատ են համարվում միջավայրի կողմից (209, էջ198):

Ջ. Մարչիան փորձել է դեռահասության շրջանում նույնականության

ձևավորման գործընթացը էմպիրիկորեն հետազոտել: Այդ գործընթացում նա առանձնացնում է չորս փուլ. ա) անորոշ նույնականություն. պատանու մեջ համոզմունքներ դեռևս չեն ձևավորվել. նույնականության ճգնաժամը դեռևս ի հայտ չի եկել, բ) նախնական նույնականություն. պատանին դեռ ճգնաժամի մեջ չի հայտնվել, սակայն նախնական ընտրություններն ուրիշների ազդեցությամբ արդեն կատարվել են, գ) ճգնաժամային շրջան. պատանին նույնականության որոնումների մեջ է, դ) նույնականության ձևավորման շրջան. պատանին ճգնաժամից դուրս է գալիս. ձևավորվում է որոշակի նույնականություն (ցիտ. ըստ 27, էջ 202–203):

Փ. Բլոսը դեռահասությունը մարդու անհատականացման երկրորդ շրջանն է համարում: Ինչպես և նախորդ շրջանում (երեք տարեկանում), այնպես էլ հիմա ինքնուրույնության ձգտում է առաջանում, որին հասնելու համար դեռահասը պետք է հաղթահարի իր մանկական հուզական հարաբերությունները և վարքի ձևերը: Հեղինակը դեռահասության շրջանի երկու կարևոր առանձնահատկություն է նշում: Նախ ռեգրեսի միտումը, որն այս տարիքում իր առանձնահատկություններն ունի: Օրինակ Բլոսը ռեգրեսի դրսևորում է համարում կուռքերի ստեղծումը, ինչը ծնողական իդեալիզացիայի նոր տարբերակ է: Ռեգրեսիվ վարք է նաև իդեալներին, գաղափարներին անվերապահ տրվելը, որը բնորոշ է պատանեկությանը:

Հեղինակը դեռահասությանը բնորոշ ամբիվալենտությունը նույնպես դիտում է որպես ռեգրեսի արտահայտություն: Ըստ Բլոսի, ռեգրեսն այս տարիքում միանգամայն նորմալ երևույթ է և նպաստում է անհատականության ձևավորման գործընթացին: Նա գտնում է, որ այս տարիքի մյուս կարևոր բնութագիրը նոնկոնֆորմիզմն է, որով դեռահասը պաշտպանվում է իր ռեգրեսիվ միտումներից: Նոնկոնֆորմիզմն օգնում է դեռահասին ինքնահաստատվել, ընդգծել իր անհատականությունը (ցիտ. ըստ 123, էջ 212–213):

Արևմուտքում դեռահասության ճգնաժամը հաճախ բացատրվում է զարգացման տարիքային խնդիրների տեսության դիրքերից (218 և ուրիշներ): Այս դեպքում « ..զարգացումը հասունացման շրջանում հանգեցվում է այդ տարիքին բնորոշ զարգացման խնդիրներին բախվելուն» (123, էջ 221): Ճգնաժամն ի հայտ է գալիս, երբ այդ խնդիրների լուծման

ընթացքում դեռահասի անհատականության է մատնվում (123, էջ 293). Դեռահասության տարիքի հիմնական խնդիրներն են՝ ա) սեփական արտաքինի ընդունումը և մարմնի արդյունավետ օգտագործումը, բ) կանացի և տղամարդկային դերերի յուրացումը, գ) նոր մեծ հասակակիցների հետ նոր հասուն հարաբերությունների հաստատումը, դ) հուզական ոլորտում ծնողներից և այլ մեծերից անկախության հասնելը, ե) մասնագիտական կարիերային նախապատրաստվելը, զ) ամուսնության և ընտանեկան կյանքին նախապատրաստվելը, է) հասարակայնորեն պատասխանատու վարքի ձևավորումը, ը) արժեքների համակարգի և բարոյական գիտակցության ձևավորումը (123, էջ 147–148).

Ե. Էրեւերքը դեռահասության ճգնաժամը կապում է այն բանի հետ, որ կարճ ժամանակահատվածի ընթացքում դեռահասի զարգացման ուղիներում կտրուկ տեղաշարժեր են տեղի ունենում, որոնց հետևանքով էլ պայմանավորված է ճգնաժամը: Հեղինակը ճգնաժամի առանձնահատկությունները պայմանավորում է նաև այն բանով, թե ինչպես են լուծվել տարիքային նախորդ շրջանների զարգացման խնդիրները (207):

Ջ. Քոլմենը նույնպես դեռահասության ճգնաժամը տարիքային խնդիրների տեսանկյունից է քննում, սակայն այլ մեկնաբանություն է տալիս: Ըստ նրա ճգնաժամն ի հայտ է գալիս ոչ թե այն բանի շնորհիվ, որ դեռահասն ինչ-որ առանձին տարիքային խնդիրը չի կարողանում լուծել (հեղինակն այն կարծիքին է, որ յուրաքանչյուր տարիք ունի իր յուրահատուկ խնդիրները, սակայն ոչ մի խնդիր բնորոշ չէ միայն մեկ տարիքի), այլ որովհետև ինչ-ինչ պատճառներով տարիքային խնդիրները կուտակվում են (ցիտ. ըստ 123, էջ 223–226):

Զարգացման տարիքային խնդիրների կոնցեպցիային մոտ են դեռահասության, այսպես կոչված, սոցիոլոգիական տեսությունները (հատկացությունը ըստ 123). Այս մոտեցման ներկայացուցիչները (Ջ. Էլդեր և ուրիշներ) զարգացման մեջ կարևորում են սոցիալական դերերի յուրացման գործընթացը և դեռահասության դժվարությունները հենց դրա հետ են կապում: Այս տարիքում մի շարք դերեր փոփոխությանն են ենթարկվում, մյուս կողմից դեռահասը ստիպված է լինում յուրացնել մի շարք նոր դերեր, ինչը այս տարիքում ի հայտ եկող կտրուկ փոփոխությունների, զարգացման ընդհատուն բնույթի հետևանքով դժվարանում

է. Դեռահասը դերային շփոթի մեջ է հայտնվում, անորոշություն է տիրում նրա սոցիալական ստատուսի մեջ: Դրն է նոր դերերի մեջ բախում է առաջանում «Այս հանգամանքով ստացնավորված անհանգստությունը նրան դեռահասին–Ս. Հ.) հուզեցնում է պատասխանատվական հարցերին. «Ո՞վ են ես» «Ինչպիսի՞ն եմ ես», «Ի՞նչ են իմ հավարում» Այս հարցերն ավելի հրատապ են դառնում ֆիզիկական ոլորտի վրա գերկենտրոնացածության շնորհիվ, ինչը պայմանավորված է տեղի ունեցող մարմնական փոփոխություններով» (123, էջ 227):

Ռուս հոգեբաններից դեռահասության ճգնաժամի ընբռնման հարցում մեծ ներդրում ունի Լ. Ս. Վիգոտսկին: Նախ, նա դեռահասության դժվարությունները կապում է այն հանգամանքի հետ, որ այս տարիքում զարգացման սեռական, ընդհանուր օրգանական և սոցիալ–մշակութային ոլորտների հասունացման մակարդակներն իրար չեն համընկնում: Սեռական հասունացումը առաջ է ընկնում ընդհանուր օրգանական և սոցիալ–մշակութային հասունացումից, այսինքն երեխայի մեջ արթնանում է սեռական բնազդը, սակայն սերնդի շարունակման ֆունկցիայի իրականացմանն, ընտանեկան ակտիվության համար նա դեռ պատրաստ չէ, բացի այդ, վերջնականորեն ձևավորված չէ նաև նրա ուղղվածությունը (43, էջ 391).

Դեռահասության ճգնաժամի մյուս կարևոր բնութագիրը, ըստ Վիգոտսկու, հին հետքերությունների մահացումն է և նորերի ի հայտ գալը. Դրանով էլ հենց պայմանավորված է դեռահասության շրջանում նեգատիվ և պոզիտիվ փուլերի առկայությունը (43, էջ 24–25):

Ըստ Վիգոտսկու դեռահասության շրջանի հիմնական նորագոյացությունները կապված են ինքնագիտակցության և անձնավորության ձևավորման գործընթացում տեղի ունեցող որակական վերակառուցումների հետ. «Այն, ինչ ընդունված է անվանել անձնավորություն,— գրում է նա,— ոչ այլ ինչ է, քան մարդու ինքնագիտակցությունը. որն ի հայտ է գալիս հենց այս շրջանում. մարդու նոր վարքը դառնում է վարք իր հասար, մարդը գիտակցում է. իրեն որպես հասլտնի միասնություն: Սա անցումային տարիքի վերջնական արդյունքն ու կենտրոնական պահն է» (43, էջ 227)

Դեռահասության ճգնաժամի վերաբերյալ Լ. Վիգոտսկու մոտեցումը հետագայում զարգացրեցին Ա. Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկոնինը, Լ. Ի. Բոժո-

վիչը, Տ. Վ. Դրագունովան, Կ. Ն. Պոլիվանովան և ուրիշներ: Ճգնաժամի առաջացման գործում նրանք կարևորում են սոցիալական գործոնների, դաստիարակության դերը: Դ. Բ. Էլկոնինը և Տ. Վ. Դրագունովան դեռահասի ինքնագիտակցության կարևոր բնութագիր են համարում մեծ լինելու զգացողությունը (166. 59): Դրագունովան այն կարծիքին է, որ այս տարիքում մեծերի հետ բախումները պայմանավորված են այն հանգամանքով, որ մեծերը հաշվի չեն նստում դեռահասի հասուն երևալու ձգտման հետ, վերաբերվում են նրան որպես երեխայի:

Լ. Ի. Բոժովիչը դեռահասության ճգնաժամի գործընթացում կարևորում է նոր ի հայտ եկած պահանջմունքների ֆրուստրացիայի գործոնը. «Դեռահասության ճգնաժամն, ի տարբերություն մյուս տարիքների ճգնաժամերի, ավելի սուր և ձգձգված բնույթ է կրում, քանի որ ֆիզիկական և մտավոր արագ զարգացման հետևանքով դեռահասի մեջ ի հայտ են գալիս մի շարք այնպիսի պահանջմունքներ, որոնք այդ տարիքի դպրոցականների ոչ բավարար սոցիալական զարգացման հետևանքով չեն կարող բավարարվել: Այսպիսով՝ այս ճգնաժամային շրջանում պահանջմունքների դեպրիվացիան շատ ավելի ուժեղ և դժվար հաղթահարելի է, քանի որ դեռահասի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման մեջ սինխրոնությունը բացակայում է» (32, էջ 229): Լ. Բոժովիչն այս տարիքի կարևոր նորագոյացություններից է համարում ինքնորոշումը:

Դեռահասության ճգնաժամը թերևս միակն է, որ բազմակողմանի էթնոհոգեբանական հետազոտության է ենթարկվել: Ըստ որում, նման հետազոտություններ են կատարել այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Ռ. Բենեդիկտը, Մ. Միդը, Բ. Մալինովսկին և ուրիշներ: Ռ. Բենեդիկտը հետազոտության է ենթարկել դեռահասների հասունացման առանձնահատկությունները Մեքսիկայի, ԱՄՆ–ի, Կանադայի հնդկացիների մոտ, Աֆրիկայի, Նոր Գվինեայի մի շարք ցեղերում: Համեմատելով իր հետազոտությունների արդյունքները զարգացած երկրներում հասունացման առանձնահատկությունների հետ նա մշակել է դեռահասության տարիքում ընդհատվող և չընդհատվող զարգացման կոնցեպցիան (120, էջ 12–14): Ըստ հեղինակի պրիմիտիվ ցեղերում մեծերին և դեռահասներին ներկայացվող պահանջները, նրանց ակտիվության ձևերն էապես միմյանցից չեն տարբերվում, ինչն ապահովում է այսպես կոչ-

ված չընդհատվող զարգացումը առանց հակասությունների ու ճգնաժամերի: Վերջիններս, ըստ Բենեդիկտի, քաղաքակրթության արդյունք են և պայմանավորված են այն հանգամանքով, որ դեռահասի և հասուն մարդու վարքի նորմերը, կենսակերպերը էապես տարբերվում են, որի շնորհիվ զարգացումն ընդհատուն բնույթ է ստանում:

Մ. Միդը հետազոտել է Սամոա կղզու, Նոր Գվինեայի և ԱՄՆ–ի հնդկացի դեռահասներին (100): Նրանց մեջ հեղինակը ճգնաժամային ախտանշաններ չի նկատել: Ըստ Միդի հասունացման գործընթացն այս ցեղերում տեղի է ունենում սահուն, առանց կոնֆլիկտների, իսկ դեռահասությունն ավելի շուտ ընկալվում է որպես երջանիկ, անհոգ շրջան: Հասուն դառնալը ծեռնադրությամբ է ընդգծվում, որից հետո դեռահասներն ընդգրկվում են հասարակական կյանքում: Սեռական հարաբերությունները այս շրջանում չեն արգելվում, մեծերի կողմից դեռահասների տնտեսական, հասարակական և բարոյական ճնշումները թույլ են: Այս հանգամանքներով էլ հեղինակը բացատրում է անճգնաժամային անցումը:

Ա. Շլեգելը հնդկացիների հոպի ցեղում, այնուամենայնիվ, նկատել է դեռահասության ճգնաժամին բնորոշ ախտանշաններ, որոնք, ըստ նրա, քողարկված բնույթ են կրում (123, էջ 192): Հեղինակը ճգնաժամը բացատրում է մեծերի կողմից դեռահասների սոցիալ–հոգեբանական ճնշմամբ:

Հ. Ռեմշմիդտը, ամփոփելով դեռահասության էթնոհոգեբանական հետազոտությունները, գտնում է, որ պարզունակ ցեղերում ճգնաժամերը հիմնականում բացակայում են, ինչը բացատրվում է այդ հասարակությունների ոչ բարդ կառուցվածքով (հասարակական կյանքը կազմակերպվում է ավանդույթներով, չկան ալտերնատիվ զարգացման հնարավորություններ), սեռական հարաբերությունների թույլտվությամբ, մանկական սոցիալական դիրքից մեծականին անցման կտրուկ բնույթով (ծեռնադրությունների միջոցով) և այլն:

Դեռահասության ճգնաժամը բազմակողմանի էմպիրիկ հետազոտության է ենթարկվել նաև զարգացած հասարակություններում, սակայն հաճախ դրանց արդյունքներն ուղղակի հակասում են միմյանց: Այսպես, ամերիկացի գիտնականներ Դոուվանը և Ադելսոնը, 60–ական թվականներին հետազոտելով մոտ 3000 ամերիկացի դեռահասների (կիրառվել

են անհատական հարցազրույցի, հարցումների և պրոյեկտիվ թեստերի մեթոդներ), հանգել են այն եզրակացության, որ «միջին դեռահասին...ամենևին բնորոշ չեն ոչ անձնային ճգնաժամերը, ոչ ես–կոնցեպցիայի կրախը, ոչ նախկին արժեքներից հրաժարման միտումը» (ցիտ. ըստ 72, էջ 51–52): Հեղինակների եզրակացությունն այն է, որ ճգնաժամը դեռահասության տարիքին բնորոշ չէ:

Ք. Շիլանդը լոնգիթյուդոնալ հետազոտության է ենթարկել հոգեբուժական օգնության դիմած և «նորմալ» երեխաների: Ըստ հեղինակի տվյալների կրտսեր դպրոցական հասակում զարգացման դժվարություններ ունեցող «նորմալ» երեխաների միայն 20 %–ն է քիչ թե շատ դժվարությունների հանդիպել դեռահասության տարիքում. մինչդեռ կրտսեր դպրոցական տարիքում զարգացման դժվարություններ ունեցող և հոգեբուժական օգնության դիմած երեխաների մոտ կեսն է դեռահասության շրջանում հիվանդագին շեղումներ դրսևորել (ցիտ. ըստ 72, էջ 53):

Դ. և Ջ. Օֆֆեր ամուսինները (241, 242), լոնգիթյուդոնալ հետազոտության ենթարկելով դեռահասներին (8 տարվա ընթացքում հետազոտվել է 80 դեռահաս 14–ից մինչև 22 տարեկան. կիրառվել են Ռորշախի թեստը, նույնականության հետազոտման հարցարաններ, զրույցներ ծնողների հետ և այլն), հանգել են այն եզրակացության, որ այս տարիքում որոշակի դժվարություններ կան, սակայն դրանք չեն կարող որակավորվել որպես ճգնաժամ, իսկ ճգնաժամ ապրող դեռահասների (ըստ հեղինակների դժվար զարգացող) քանակը խիստ փոքր է (հինգից մեկը): Հեղինակները դեռահասության շրջանում զարգացման երեք ձև են առանձնացնում. ա) հանդարտ, առանց դժվարությունների զարգացում, բ) որոշակի դժվարություններով ընթացող զարգացում (հուզական անկայունություն, պրոբլեմներ հասակակիցների հետ և այլն), գ) դժվար զարգացում, որը կարող է բնութագրվել որպես ճգնաժամ (այս դեպքում հաճախ առկա են լինում կլինիկական ախտանշաններ):

Ջ. Հաթըոեյը և է. Սոնաչեսին MMPI թեստով հետազոտության են ենթարկել 11000 դեռահասների: Ըստ հեղինակների «...Ավելի քիչ են հանդիպում ներոտիկ, քան սոցիոպաթիկ և փսիխոտիկ բնութագրերը» (216, էջ 39): Համեմատելով իրենց տվյալները հասուն մարդկանց հետազոտությունների արդյունքների հետ հեղինակները եզրակացնում են, որ

նորմայից շեղումները հասուն մարդկանց շրջանում նկատելիորեն ավելի քիչ են հանդիպում: Հեղինակները ներկայացնում են նաև տարբեր հոգեախտաբանական դրսևորումների հաճախականությունը դեռահասների մեջ: Ըստ նրանց 1000 դեռահաս տղաների մոտ հանդիպում է 182 փսիխոպաթ, 186 շիզոֆրենիայով հիվանդ և 210 հիպոմանիայի ախտանշանը դրսևորող դեռահաս: Աղջիկների մեջ նույն հոգեախտաբանական դրսևորումները համապատասխանաբար հավասար են 199–ի, 102–ի, 174–ի (216, էջ 119–121):

Ամերիկացի հետազոտողներ Յ. Պյուսեկը և Դ. Ֆլահերթին լոնգիթյուդոնալ հետազոտության են ենթարկել դեռահասների ես–կոնցեպցիայի զարգացումը 11–18 տարիքային շրջանում: Ըստ հեղինակների դեռահասների ես–կոնցեպցիայի մեջ էական խզումներ, բեկումներ տեղի չեն ունենում, զարգացումը կայուն, շարունակական բնույթ է կրում, փոփոխությունները տեղի են ունենում դանդաղ, հարաճուն ձևով (205, էջ 34–37):

Ի. Կոնը, հիմնվելով ամերիկացի գիտնականներ Ռ. Սիմոնսի և Ռոզենբերգ ամուսինների հետազոտությունների վրա, գրում է. «... Դեռահասության տարիքում ինքնագիտակցության զարգացման առումով ամենից ավելի դժվարին ու բեկումնային է 12–14 տարիքային շրջանը: 12–13 տարեկան դեռահասների շրջանում ուժեղանում է ինքնադիտման հակումը, նվազում է ես–ի նկարագրերի կայունությունը, որոշ չափով նվազում է ընդհանուր ինքնահարգանքը և էապես փոխվում է որոշ հատկությունների ինքնագնահատումը: ...15 տարեկանից հետո նորից նկատվում է ինքնահարգանքի աճ, թուլանում է ամոթխածությունը...» (11, էջ 10):

Ջ. Մասթերսոնը և Ա. Ուոշբորնը համեմատական հետազոտության են ենթարկել 11–18 տարեկան առողջ և հոգեկան հիվանդություններ ունեցող դեռահասների հոգեբանական բնութագրերը (101 հիվանդ և նույնքան էլ առողջ): Ըստ հեղինակների հետազոտված առողջ դեռահասների միայն 17 %–ը ոչ մի ախտանշան չի դրսևորել, իսկ մնացածը տարբեր, թեթև հոգեախտաբանական դրսևորումներ են ունեցել (տագնապայնություն, դեպրեսիա և այլն). 20 %–ի մեջ ավելի ծանր ախտանշաններ են բացահայտվել: Ըստ հեղինակների առողջ դեռահասների մոտ 65 %–ի մեջ ի հայտ է գալիս տագնապայնություն, իսկ 41%–ի մեջ դեպրեսիա: Հեղինակները նշում են, որ հիվանդների շրջանում այս ախտանշաններն ավելի հաճախ են հանդիպում: Պարզվել է նաև, որ հիվանդնե-

րի մեջ մեծ թիվ են կազմում անբարենպաստ ընտանիքների երեխաները (ցիտ. ըստ 72, էջ 54):

Ի. Մ. Վերենիկինան հետազոտության է ենթարկել 12 տարեկան երեխաների ինքնագնահատականի առանձնահատկությունները (184 երեխա): Ըստ հեղինակի այս շրջանում ինքնագնահատականը ճգնաժամ է ապրում. տղաների մոտ 34 %–ը և աղջիկների 20 %–ն իրենց լիովին բացասաբար են գնահատում: Երեխաների մոտ 70 %–ը, ընդհանուր առմամբ, իրենց բացասական գնահատական են տալիս, սակայն իրենց մեջ նաև դրական գծեր են տեսնում (39, էջ 74):

Լ. Էյմսը Ռորշախի թեստով հետազոտության է ենթարկել տարբեր տարիքի մարդկանց, այդ թվում նաև 8–16 տարեկան դեռահասների, որոնք վերաբեստավորվել են 1–2 տարի անց. Ըստ հեղինակի այս շրջանում տարիքի հետ աճում է հոգեկան կայունությունը, միայն որոշ անկայունություն է նկատվում 11–15 տարեկանում (173, էջ 89–125):

Գերմանացի գիտնական Դ. Լանգենը (ցիտ. ըստ 123, էջ 306) հետազոտության է ենթարկել «տարիքային ճգնաժամ» ախտորոշում ստացած 108 դեռահասների կատամնեզը: Պարզվել է, որ նրանց 1/3–ը հետագայում զանազան փսիխոտիկ վիճակներում է հայտնվել, նս 1/3–ի մեջ բնավորության հիվանդագին փոփոխություններ են ձևավորվել, իսկ մնացածը դեռահասության ճգնաժամը հաղթահարել են առանց որևէ հետագա բարդության:

Ըստ Հ. Ռեմշմիդտի «30–40 % դեպքերում այդ ճգնաժամերն ավարտվում են վարքի և ապրումների լիակատար ադեկվատության վերականգնմամբ, այսինքն առողջացմամբ: Մնացած դեպքերում շիզոֆրենիական փսիխոզ է զարգանում, անձնային խանգարումներ են ձևավորվում, տեղի է ունենում անձնավորության նևրոտիկ զարգացում» (123, էջ 306):

Տարբեր հեղինակներ առանձնացրել են դեռահասության ճգնաժամի հետևյալ ախտանշանները. անլիարժեքության զգացում, ընկճվածություն, հիպոխոնդրիկ տագնապներ, դիսմորֆոֆոբիա, դեպերսոնալիզացիոն երևույթներ, նարցիսիզմ, քննադատության հանդեպ խիստ զգայունություն, մեծերի հանդեպ նեգատիվիզմ, կուռքերի ստեղծում, օրինազանց վարք, տանից փախուստներ, սևեռուն կենտրոնացում այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են «ո՞վ եմ ես», «ինչո՞ւ եմ ծնվել», «գեղեցի՞կ եմ, թե՞ տգեղ»:

1.3.5. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռ. Գոուլդը, Ջ. Վեյլանտը և Դ. Լևինսոնը առանձնացնում են պատանեկան անցումը կամ ճգնաժամը 16–22 տարեկանում: Ճգնաժամը նրանք հետևյալ կերպ են բնութագրում. «Ծնողներից հեռացման, հասունացման շրջան է, ինքնուրույնության, անկախության պահանջ է ի հայտ գալիս...» (46, էջ 135): Մոտավորապես նույն ձևով է ներկայացնում այս ճգնաժամը կամ անցումը Գ. Շիհին («անցում» կամ «ճգնաժամ» հասկացությունները տարիքային հոգեբանության մեջ սովորաբար օգտագործվում են որպես հոմանիշներ): Ըստ հեղինակի այս անցման խնդիրներն են գտնել սեփական տեղն ու դերը կյանքում և հասակակիցների միջավայրում, սեռադերային կողմնորոշումը, աշխարհայացքի և արժեքների ձևավորումը (247, էջ 32):

Վ. Մորգունը և Ն. Տկաչևան անցումային են համարում 17–18 տարեկանը գտնելով, որ այս տարիքում խոր տեղաշարժեր են տեղի ունենում, որոնք սակայն բարենպաստ պայմաններում կարող են առանց կոնֆլիկտների ընթանալ (102, էջ 58):

Է. Էրիքսոնն այս շրջանը բնութագրում է որպես մերձավորության կամ մեկուսացման ճգնաժամ և վերագրում ամբողջ երրորդ տասնամյակին, այդ պատճառով էլ այս ճգնաժամի վերաբերյալ Էրիքսոնի տեսակետը կներկայացնենք հաջորդ տարիքային շրջանում:

Գերմանացի գիտնական Գ. Թոմեն, անդրադառնալով պատանեկան ճգնաժամին, գտնում է, որ այն մեծապես պայմանավորված է սոցիալ–տնտեսական, պատմամշակութային հանգամանքներով (141): Այսպես, վերլուծելով իր և Ու. Լերի կենսագրական մեթոդով իրականացրած հետազոտությունների արդյունքները Թոմեն հանգում է այն եզրակացության, որ 1890–1930–ական թվականների շրջանում ծնվածները ճգնաժամային իրավիճակում են հայտնվել 15–19 տարեկանում, և դա պայմանավորված է եղել սոցիալական պայմաններով, իսկ 1920–1930–ականներին ծնվածների մեջ կոնֆլիկտային իրավիճակը սրվում է նրանց կյանքի հերրորդ տասնամյակում. «...այսինքն այն ժամանակ, երբ կայանում էր Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը: Այդ երիտասարդ տղամարդիկ իրենց հայրերի սերնդի ծակատագրական որոշումների զոհերն էին և դեռ չէին հասցրել ավարտել անցյալի իմաստավորումը» (141, էջ 180):

Բ. Լիվեհուդը պատանեկան ճգնաժամը վերագրում է 16, 17–21, 24 տարիքային շրջաններին, որոնց ընթացքում, ըստ հեղինակի, տեղի է ունենում անձնավորության արթնացում: Եթե այդ արթնացումը տեղի չի ունենում, ապա «...Անձնավորությունն իր միջավայրից կախյալ վիճակի մեջ է մնում կամ էլ բողոքողի կեցվածք է ընդունում այն ամենի նկատմամբ, ինչն ընկալվում է որպես հեղինակություն ..» (90, էջ 149)։ Ըստ հեղինակի այս տարիքում հրատապ են այնպիսի հարցերը, ինչպիսիք են «Ո՞րն է իմ տեղը կյանքում», «Իրականում ինչպիսի՞ն է այս աշխարհը ի՞նչ ուժեր են այստեղ գործում»: Այլ կերպ ասած այս տարիքում աշխարհայացքային փոփոխություններ են տեղի ունենում, վերաբերմունք է ձևավորվում հասարակական իրականության նկատմամբ (90, էջ 154–155): Այս ճգնաժամի մյուս կարևոր հիմնախնդիրը, ըստ հեղինակի, կենսաբանական և հոգևոր սեռականությունների միջև ներդաշնակության ստեղծումն է:

Անդրադառնալով պատանեկան ճգնաժամի էմպիրիկական հետազոտություններին պետք է ասել, որ հաճախ, հատկապես արևմտյան հոգեբանության մեջ դեռահասության և պատանեկան տարիքները նույնացվում են և հետազոտվում որպես տարիքային մեկ շրջան. օրինակ նույնականության ճգնաժամը, որը մի շարք հոգեբանական դպրոցներում բնութագրվում է որպես ինքնագիտակցության արթնացում և վերագրվում դեռահասության շրջանին 13–14 տարեկանին, արևմտյան հոգեբաններից շատերը (է. էրիքսոն և ուրիշներ) տարածում են նաև պատանեկան տարիքի վրա և համապատասխան ուղղվածություն տալիս էմպիրիկական հետազոտություններին Ինչ վերաբերում է բուն պատանեկան ճգնաժամի էմպիրիկական հետազոտություններին (այսինքն այն հետազոտություններին, որոնցում տարբերակվում են դեռահասության և պատանեկության կամ վաղ հասունության ճգնաժամերը) ապա դրանց թվին կարելի է դասել Լևինսոնի, Գոուլդի Վեյլանտի, Շիհիի հետազոտությունները, որոնց արդյունքներն ընդհանուր գծերով ներկայացվեցին վերևում (այդ հետազոտությունները հիմնականում նկարագրական բնույթ են կրում, ուղղված են ճգնաժամի ախտանշանները բացահայտելուն):

Պատանեկան տարիքի պրոբլեմներին նվիրված հետազոտություններ են կատարել Վ. Ֆրանկլի աշխատակիցները: Ըստ նրանց պատանեկան տարիքին բնորոշ է էքզիստենցիալ վակուումի կենսական դրսևորության, կյանքի անիմաստության զգացողության հոգեվիճակը (148, էջ 24–30): Այս հետազոտությունները նվիրված էին ոչ թե պատանեկան ճգնաժամին, այլ Վ. Ֆրանկլի նոոգեն նևրոզների կոնցեպցիայի հիմնավորմանը, սակայն կարծում ենք, որ դրանցով բացահայտվել է նաև պատանեկան ճգնաժամին բնորոշ ախտանշաններից մեկը:

Որոշ հետազոտություններ վկայում են, որ պատանեկան տարիքում (մասնավորապես 19–23 տարեկանում) կտրուկ բարձրանում է ինքնագնահատականը (248):

Պատանեկան ճգնաժամի ախտանշանները ներկայացնում ենք հիմնականում ըստ Գոուլդի, Լևինսոնի, Վեյլանտի, Շիհիի հետազոտությունների արդյունքների. Ըստ այդմ պատանեկան ճգնաժամին բնորոշ են աշխարհայացքի, արժեքների փոփոխությունը, բունտը ծնողների կողմից պարտադրվող արժեքների, աշխարհայացքային ցուցումների նկատմամբ, քմահաճ վարքի դրսևորումը, անօգնականության զգացողությունը, ոչ առեկվատ վարք դրսևորելու տագնապները, զանազան փիլիսոփայական, աշխարհայացքային հարցերի պատասխանների որոնումները, իդեալների հաճախակի փոփոխությունը, կյանքի անիմաստության զգացողությունը, տագնապայնությունը, աշխատանքի վայրերի, մասնագիտությունների, զուգընկերների և ընկերների հաճախակի փոփոխությունը, քշնամանքը ընտանիքի անդամների նկատմամբ, նմանակման համար օբյեկտների փնտրտուքը:

1.3.6. 25–33 ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ

է. էրիքսոնն առաջիններից էր, ով անդրադարձավ այս տարիքային ճգնաժամին: Ըստ հեղինակի այս շրջանի երկու հակադիր միտումներն են մերձեցումն ու մեկուսացումը. «... Սեփական նույնականության հաստատմանն ուղղված համառ պայքարի և որոնումների արդյունքում ձևավորված նորաբույս հասուն մարդը պատրաստ է և լի ցանկությամբ կապելու իր նույնականությունն ուրիշների նույնականությանը. Նա պատրաստ է մերձավոր հարաբերություններ հաստատել կամ, այլ կերպ ասած, ի վիճակի է ինտիմ, ընկերական հարաբերությունների մեջ մտնել և այդ հարաբերություններին հավատարիմ մնալու բարոյա-

կան ուժ դրսևորել նույնիսկ այն դեպքում, երբ դրանք նշանակալի զոհեր և գիջումներ են պահանջում» (167, էջ 369). Այս պատրաստականությունը մարդուն հնարավորություն է տալիս ուրիշների հետ հաստատել այնպիսի հարաբերություններ, որոնք պահանջում են սեփական ես–ի անտեսում. Այդ կարգի հարաբերություններից էրիքսոնը նախ և առաջ նշում է ամուսնությունը:

«Այս փուլի վտանգը,— ըստ էրիքսոնի,— մեկուսացումն է, այսինքն մերձավոր հարաբերություններ պարտադրող կապերից խուսափելը» (167, էջ 373): Ճգնաժամի այսպիսի հանգուցալուծման դեպքում մարդն իր ես–ին ուղղված վտանգ է սպասում ուրիշների կողմից, վախենում է կորցնել իրեն, հանձնել իր հարաբերությունների «տարածքն» ուրիշին» (167, էջ 370): Նման դիրքորոշումը սեփական նույնականության համար պայքարի շարունակությունն է:

Ամերիկացի գիտնական Հ. Ջոնսի և համահեղինակների հետազոտությունները վկայում են, որ 30–ին մոտ երիտասարդների շրջանում նշանակալի թիվ են կազմում ծայրահեղ հիասթափված, անհինքնավստահ մարդիկ, ովքեր նախկինում այդպիսին չեն եղել (ցիտ. ըստ 141): Գ. Թոմանն նշում է, որ ճգնաժամն ավելի ընդգծված է կանանց շրջանում (141, էջ 186): Վիճակագրական տվյալներից ելնելով հեղինակը նշում է, որ օրինազանցությունն ամենամեծ թիվն է կազմում հենց 30–ի շրջանում (141, էջ 187):

30 տարեկանի ճգնաժամի էմպիրիկական հետազոտություններ են կատարել նաև Դ. Լևինսոնը, Գ. Վեյլանտը, Ռ. Գոուլդը, Գ. Շիհին (228, 253, 213, 247): Ըստ Դ. Լևինսոնի (հետազոտության է ենթարկել 40 տղամարդու)՝ այս շրջանում արժեքների, նպատակների, երազանքների, աշխարհայացքի, միջանձնային հարաբերությունների, մասնագիտական կողմնորոշման ոլորտներում կտրուկ փոփոխություններ են տեղի ունենում, հաճախանում են ամուսնալուծությունները, տղամարդիկ խիստ անհինքնավստահ են դառնում, միևնույն ժամանակ, ավելի հստակ են պատկերացնում, թե ինչ են ուզում իրենցից և կյանքից: Ըստ Գոուլդի (հետազոտվել է 600 մարդ, հիմնականում զրույցի մեթոդով), այս տարիքում հաճախանում են կոնֆլիկտները հարազատների հետ, կյանքը դադարում է հեշտ և հասկանալի թվալ, աճում է ամուսնալուծությունների թիվը, ընտանեկան կոնֆլիկտները հաճախ ծնողական պարտականությունների հողի վրա են առաջանում:

Ըստ Գ. Շիհիի այս տարիքում թե տղամարդկանց և թե կանանց համար աշխատանքային կարիերան խիստ հրատապ է դառնում: «Աշխատանքային ոլորտում խառնաշփոթ ու ճգնաժամ է տիրում, մեծ փոփոխություններ են տեղի ունենում...Ձգտում է առաջանում ջնջել անցած կյանքը և երեսուն տարեկանում ամեն ինչ նորից սկսել» (161, էջ 136): Ըստ հեղինակի 30–ի շրջանում մարդը ձգտում է փոփոխություններ կատարել նաև իր անձնական կյանքում ընտանեկան ոլորտում: Ով ամուսնացած չէ, ուզում է ամուսնանալ, երեխաներ չունեցող ընտանիքը որոշում է երեխա ունենալ, հաճախանում են ամուսնալուծությունները (161, էջ 135–137):

Բ. Լիվեհուդն այս տարիքը կազմակերպական շրջան է համարում, քանի որ երիտասարդը «... հակված է բոլոր հիմնախնդիրները կազմակերպական ճանապարհով լուծել: Պետք է կարողանալ վերլուծել փաստերը, ընդհանրացումներ կատարել, տրամաբանական որոշումներ կայացնել հիմնվելով փաստերի մեկնաբանման և կանխատեսումների վրա» (90, էջ 169): Ըստ Վ. Մորգունի և Ն. Տկաչևայի այս շրջանում սանձնավորության նոր ծնունդ է տեղի ունենում (102):

Այս ճգնաժամի հիմնական ախտանշաններն են (ըստ Վեյլանտի, Լևինսոնի, Գոուլդի, Շիհիի) նախկին արժեքների վերաիմաստավորումը, նպատակների, հետաքրքրությունների փոփոխությունը, անկման, կործանման, հիասթափության զգացողությունը, կասկածները սեփական ես–ի նկատմամբ, անլիարժեքության զգացողությունը, ինքնաճանաչմանն ուղղված ուժեղ փնտրտուքները, գերզգայունությունը մասնագիտական առաջխաղացման, երեխաներ ունենալու կամ դաստիարակելու հարցերի նկատմամբ և այլն:

1.3.7. ԿՅԱՆՔԻ ԿԵՍԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Կ. Յունգը, թերևս, առաջիններից էր, ով հատուկ ուշադրություն դարձրեց կյանքի կեսի (35–42 տարեկան) ճգնաժամին: «Վիճակագրությունը ցույց է տալիս,— գրում է նա,— որ մոտ 40 տարեկանի շրջանում տղամարդկանց մեջ հաճախանում են դեպրեսիաները: Կանանց մեջ նևրոտիկ դժվարությունները, որպես կանոն, ի հայտ են գալիս ավելի վաղ: Կյանքի այս փուլում, այսինքն 35–40 տարեկանում, մարդու հոգե-

կանում էական փոփոխություններ են կատարվում: Սկզբում, իհարկե, դրանք չգիտակցված. աչքի չընկնող փոփոխություններ են...որոնք սկիզբ են առնում անգիտակցականում: Երբեմն, աստիճանաբար, փոխվում է բնավորությունը, այլ դեպքերում ի հայտ են գալիս հատկություններ, որոնք մանկական հասակում չեն եղել կամ սկսում են թուլանալ նախկին հակումներն ու հետաքրքրությունները, իսկ դրանց տեղը նորերն են գրավում» (169, էջ 194): Ըստ Կ. Յունգի այս շրջանում նաև արժեքների վերակառուցում է տեղի ունենում. «Մարդն անհրաժեշտություն է զգում հասկանալ իր նախկին իդեալներին հակադրվող իրողությունների արժեքը, համոզվել իր նախկին համոզմունքների սխալականության մեջ, ընդունել նախկին ճշմարտությունների կեղծ լինելը...» (170, էջ 117): Ըստ հեղինակի. «Սասնագիտությունների փոփոխությունը, ամուսնալուծությունները, կրոնին դիմելը...հակադրությունների մեջ մտնելու այս գործընթացի ախտանշաններն են» (170, էջ 117). Այս տարիքը Յունգը «վտանգավոր» է համարում՝ բնութագրելով որպես «փոթորկի և գրոհի» շրջան, որի ընթացքում մարդը պիտի հաղթահարի իր ներքին հակասությունները:

է. Էրիքսոնն այս ճգնաժամի կոնկրետ հետևանքները չի նշում, սակայն ելնելով նրա տարիքային պարբերացումից կարելի է ենթադրել, որ այսպես կոչված գեներատիվության կամ ստագնացիայի (լճացման) ճգնաժամը վերաբերում է հենց կյանքի կեսի շրջանին: Ըստ հեղինակի գեներատիվությունը «...նախ և առաջ կյանքը դասավորելու և աճող սերնդին դաստիարակելու ձգտումն է...» (167, էջ 374): Նման դիրքորոշումը ճգնաժամի դրական բևեռն է, իսկ այն դեպքերում, երբ ճգնաժամը բացասական հանգուցալուծում է ստանում, անձնավորության լճացում է տեղի ունենում. «...մարդը ռեգրես է ապրում դեպի կեղծ հարաբերությունների սևեռուն պահանջմունքը, ինչն ուղեկցվում է լճացման խոր զգացումով և անձնական կյանքի աղքատացմամբ: Այս դեպքում մարդիկ սկսում են երես տալ իրենց, ասես իրենք իրենց սեփական և միակ երեխան լինեն» (167. էջ 375):

Ամերիկացի գիտնականներ Լևինսոնը, Վեյլանտը և Գոուլդը այսպես են բնութագրում ճգնաժամը. «Պայթյուն կյանքի կեսին: Սա երկրորդ խոշոր անցումային շրջանն է: Ձեռք բերված հաջողություններն անքավարար են թվում, տագնապություն է ստեղծվում, թե կյանքն իզուր է անցնում» (46, էջ 136):

Ըստ Դ. Լևինսոնի ճգնաժամը տեղի է ունենում 38–43 տարեկանում: «Տղամարդը,— գրում է նա,— մտնելով կյանքի կեսի անցումային շրջանը, իրականացնում է ոչ միայն կյանքում առկա կործանման ներուժը, այլև դեստրուկտիվության սեփական կարողությունները: Նա բացահայտում է չարն իր ներսում և իր ուժը վնասելու, կործանելու, վիրավորելու իրեն և ուրիշներին. եթե նա անկեղծ է իր հետ, ապա ընդունում է, որ հաճախ անփութորեն կամ դիտավորյալ վիրավորում է ուրիշներին: Նա մեկ իրեն որպես զոհ է ընկալում, մեկ որպես սրիկա» (228, էջ 294): Ըստ հեղինակի այս ճգնաժամի ընթացքում իրատապ են հետևյալ հիմնախնդիրները. ա) վաղ հասունության շրջանի վերաիմաստավորումը, բ) միջին հասունության շրջանի ծրագրումը, գ) պայքարը չորս հակամետ զգացողությունների երիտասարդության–ծերության, ստեղծման–ոչնչացման, առնականության–իգականության, հարաբերությունների ստեղծման–մեկուսացման միջև: Այս հակամետ զգացողություններից առաջինն ի հայտ է գալիս ուժերի անկման, ծերության առաջին նշանների հետ միասին. մարդու մեջ ծնվում է «երիտասարդ եմ, թե՞ ծեր» երկվությունը: Երկրորդն ի հայտ է գալիս սեփական ես–ի մեջ կառուցողական և ավերիչ ուժերի զգացողության ակտուալացմամբ: Երիտասարդ հասակում, ըստ Լևինսոնի, առնական և իգական հոգեբանությունները ծայրահեղորեն հակադրվում են իրար, իսկ ճգնաժամի ընթացքում այդ հակադրությունը սկսում է կեղծ թվալ: Վերջին հակասությունն ի հայտ է գալիս շփումների, մտերմիկ հարաբերությունների ստեղծման և մեկուսանալու, ներհայելու, սեփական կյանքն իմաստավորելու ձգտումների միջև (ցիտ. ըստ 202, էջ 77–79): Դ. Լևինսոնը ներկայացնում է այս անցմանը բնորոշ մի շարք այլ բնութագրեր սեփական անցած ուղու վերագնահատումը, ապագայի ավելի իրատեսական ծրագրերի մշակումը, ընտանեկան հարաբերությունների վերաիմաստավորումը (շատերն այս տարիքում կամ ամուսնալուծվում են, կամ վերկառուցում ընտանեկան հարաբերությունները): Ճգնաժամի ընթացքում սթրեսների նկատմամբ դիմացկունությունն ընկնում է, սակայն բարձրանում է ստեղծագործական ներուժը և զգայունությունը հիմնախնդիրների նկատմամբ (228):

Գ. Շիհին այս ճգնաժամը տեղակայում է 35— 45 տարիքային շրջանում: Սա ճակատագրական ճգնաժամ է, լի է վտանգներով ու մեծ հնարավորություններով: Մարդը, ըստ հեղինակի, անկեղծանում է իր հետ,

վերագնահատում է նախկին նպատակները, ծրագրում կյանքի երկրորդ կեսը: Այնպիսի զգացողություն է առաջանում, թե ինքը միայնակ է այս աշխարհում և պետք է առանց թույլտվության, առանց մեկին հարցնելու որոշի իր հետագա ճակատագիրը. Տղամարդը ձգտում է վերջնականապես կայանալ, կինն այս տարիքն իր վերջին շանսերի շրջանն է համարում: Ըստ Շիհիի մարդիկ այս ճգնաժամի ընթացքում խիստ տագնապ են ապրում իրենց առողջության, երիտասարդության կորստի, դատարկ անցնող ժամանակի, բարոյական ես–ի կապակցությամբ, չափից դուրս զգացմունքային են դառնում (161, էջ 138–140):

Բ. Լիվեհուդը ճգնաժամը վերագրում է 5–րդ տասնամյակի սկզբներին: Ըստ հեղինակի եթե կանանց մոտ այս շրջանը բնութագրվում է ռեպրոդուկտիվ ֆունկցիայի անկմամբ, ապա տղամարդկանց մեջ սեռական պահանջմունքի ակտիվացում է նկատվում: Հոգեբանական տեսանկյունից «...այս շրջանը բնութագրվում է կասկածներով, կողմնորոշիչների բացակայությամբ, պատրանքային որոշումներ կայացնելու հակումով, կարող են ի հայտ գալ երջանկության զգացողության կարճ ակնթարթներ: Հոգևոր առումով, այս տարիները պայքար են դատարկության հետ...» (90, էջ 178):

Ժ. Մասենը և համահեղինակները ճգնաժամի հիմնական բնութագրերն են համարում սեքսուալության, ֆիզիկական ուժերի անկման հետ կապված ապրումները, երազանքների և իրականության տարբերության գիտակցումը, համոզվածությունը, որ այլևս երազանքներին հնարավոր չէ հասնել (98, էջ 182–183):

Կյանքի կեսի ճգնաժամի հետաքրքիր հետազոտություններ է իրականացրել ամերիկացի գիտնական է. Ժակը: Նա ուսումնասիրել է ստեղծագործող մարդկանց, մասնավորապես նկարիչների և դերասանների կենսագրությունները: Պ Մասենը և համահեղինակները հետևյալ կերպ են ամփոփում Ժակի հետազոտությունները. «...Համարյա բոլորի ստեղծագործության մեջ 35–ի շրջանում ողբերգական փոփոխություններ են տեղի ունենում: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ Գոգենը, իրենց ստեղծագործական ուղին սկսել են այս շրջանում: Ուրիշները, ընդհակառակը, 35–ին մոտ սպառել են իրենց ստեղծագործական ընդունակությունները կամ մոտիվացիան, շատերը մահացել են: 35–39 տարեկանում նկարիչների և դերասանների մահվան հաճախականությունն անբնական ձևով աճում է: Իսկ նրանք, ովքեր անցնում են ճակատագրական այս տասնամյակը, նկատելիորեն փոխում են իրենց ստեղծագործության ոճը» (98, էջ 184–185):

Կյանքի կեսի ճգնաժամի ախտանշանները են (ըստ Կ. Յունգի, Դ. Լևինսոնի, Գ. Վեյլանտի, Ռ. Գոուլդի, Գ. Շիհիի և այլոց) դեպրեսիա, ագրեսիվություն, անցած ուղու վերանայում, վերագնահատում, կյանքն իզուր անցնելու, երիտասարդությունը կորցնելու, սպառված լինելու, ժամանակի սղության, միայնակության, «վերջին շանսի», չգնահատված լինելու զգացողություններ, նոր հետաքրքրությունների, նպատակների, բնավորության գծերի ձևավորում, ինքնավստահության կտրուկ աճ, տագնապներ առողջության համար, ինքնադեստրուկտիվ վարքի դրսևորում, ինքնամոռաց նվիրում աշխատանքին, սեփական ես–ի ներսում ահռելի ուժի զգացողություն և տագնապ, որ այդ ուժը կարող է ոչ միայն ստեղծագործ, այլև ավերիչ բնույթ ստանալ:

1.3.8. ՈՒՇ ՏԱՐԻՔԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուշ տարիքի ճգնաժամը տարբեր հեղինակներ տարբեր տարիքների են վերագրում: Այսպես, Շ. Բյուլերն այս ճգնաժամը տեղակայում է 65–70 տարիքային շրջանում: Հեղինակը ճգնաժամի բնութագրերն է համարում ինքնաավարտվածության զգացողությունը, ինքնորոշման, նպատակներ դնելու գործընթացի բացակայությունը, դեպրեսիայի հաճախացումը, մահվան տագնապները, անցյալի հիշողություններին տրվելը, մենակության ձգտումը (93, էջ 167–170):

Ըստ Էրիքսոնի ճգնաժամն ի հայտ է գալիս 60 տարեկանի շրջանում և դրսևորվում որպես անձնավորության, էգոյի ամբողջականացում կամ հուսահատություն: Այս հակադիր նորագոյացությունների ձևավորումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես է մարդը գնահատում իր անցած ուղին. որպես եզակի և անկրկնելի՞, որը հենց այդպես էլ պիտի տեղի ունենար, թե՞ հակառակը անցած ուղին չի համարվում այն, ինչ պիտի լիներ, չի ընդունվում սեփական ինքնաիրացվածությունը (167, էջ 376–377). «Հուսահատությունը,— գրում է Էրիքսոնը,— արտացոլում է այն բանի գիտակցումը, որ նոր կյանք սկսելու, ամբողջականության հասնելու, նոր ուղիներ փորձելու համար քիչ, շատ քիչ ժամանակ է մնացել» (167, էջ 377):

Բ. Ս. Բրատուսը ճգնաժամը վերագրում է ուշ հասունության շրջանին 50–55 տարեկանին գտնելով, որ այն պայմանավորված է օրգանիզմում տեղի ունեցող բացասական տեղաշարժերով, ինչպես նաև զարգացման սոցիալական իրավիճակի փոփոխությամբ (37):

Ս. Ռեյչարդը, Ֆ. Լիվսոնը և Փ. Փեթերսոնը, հետազոտելով 84 մարդու, նույնպես գտնում են, որ ճգնաժամն ի հայտ է գալիս ուշ հասունության և ոչ թե ծերության շրջանում, այսինքն մոտ 55–60 տարեկանում, և պայմանավորված է տարիքային ստատուսի փոփոխությամբ, մասնավորապես՝ թոշակի անցնելով.

Բ. Լիվեհուդը, որպես ճգնաժամային տարիք, կարևորում է հատկապես 56 տարեկանը՝ նշելով, որ այս շրջանում նոր ամպրոպ է սկսվում: Ըստ հեղինակի այս ճգնաժամի ընթացքում մարդը նախապատրաստվում է հանդիպելու մահվանը, ամփոփում է իր կյանքը, նորից ներհայում է իրեն և իր արժեքային համակարգը. «...Որոշ մարդկանց մեջ զգացողություն է հայտնվում, թե նորից դժվարին ժամանակներ են գալիս: Մեկ անգամ էլ պետք է անցնել «մահանալու ու հարություն առնելու» գործընթացով: Բացահայտված արժեքները կասկածի տակ չեն առնվում, սակայն ակնհայտ է դառնում, որ մենք դրանք կարգին չենք յուրացրել» (90, էջ 190):

Հասունության շրջանի հետազոտողներից շատերը (Դ. Լևինսոն, Գ. Շիհի և ուրիշներ) ուշ շրջանի ճգնաժամերին չեն անդրադառնում, չնայած ընդունում են դրանց գոյությունը: Օրինակ Դ. Լևինսոնն առանձնացնում է 50 տարեկանի և 60–65 տարիքային շրջանների ճգնաժամերը:

Այս տարիքային ճգնաժամի մասին պատկերացումները կարող են հարստացնել նաև ծերացման սոցիոլոգիական և հոգեբանական որոշ տեսություններ (նման տարբերակումը, անշուշտ, որոշ չափով պայմանական է), այդ պատճառով էլ նպատակահարմար ենք համարում համառոտ անդրադառնալ նաև դրանց: Սոցիոլոգիական տեսություններից նշենք է. Քամինգի և Վ. Հենրիի, այսպես կոչված, մեկուսացման (disengagement) տեսությունը (201), ըստ որի հասարակությունը և տարիքով մարդիկ միտում ունեն իրարից մեկուսանալու, բաժանվելու. դա երկու կողմերի համար էլ ծեռնտու է և ուղղված է հասարակության մեջ հավասարակշռությունը պահպանելուն: Ըստ հեղինակների փոխադարձ այս

մեկուսացումը համընդհանուր բնույթ է կրում, օգտակար և անխուսափելի. այն նախապատրաստում է և հասարակությանը, և տարեցներին վերջնական բաժանմանը մահվանը, կանխում և նվազեցնում է վերջին հանդգամանքով պայմանավորված ցավոտ, դեստրուկտիվ երևույթները, որոնք կարող էին տեղի ունենալ անհատի և հասարակության մեջ: Հեղինակները նշում են, որ այս «...հեռացումը սկզբնական շրջանում կարող է ուղեկցվել սեփական ես–ի հետ կապված մտահոգություններով ..» (201, էջ 14): Ըստ էության այս տեսությունը կարելի է դիտել որպես ուշ տարիքի ճգնաժամը բացատրող մոտեցում, ըստ որի այն պայմանավորված է հասարակության և անհատի փոխադարձ օտարման գործընթացով:

Անձի և միջավայրի փոխհարմարման տեսության մեջ (229) ուշ տարիքի ալրոբլեմները պայմանավորվում են նրանով, որ մարդու ներուժը, կոմպետենցիան անկում են ապրում, ինչի հետևանքով շատերը դժվարանում են դիմակայել հասարակության ճնշմանը (այդ ճնշումն առկա է ցանկացած անհատի նկատմամբ, և անձի կարողունակությամբ է որոշվում դիմակայման մակարդակը), իսկ վերջինս ուշ տարիքում էլ ավելի ուժեղ է դառնում դժվարացնելով տարեց մարդկանց հարմարումը միջավայրին:

Ինչպես արդեն նշել ենք, տարիքային խնդիրների տեսության մեջ ճգնաժամերը բացատրվում են զարգացման խնդիրների լուծման առանձնահատկություններով Այս տեսության շրջանակներում տարբեր հեղինակներ ուշ տարիքի տարբեր խնդիրներ են առանձնացնում: Ըստ Ռ. Հավիգուրստի այս շրջանում մարդը բախվում է հետևյալ խնդիրներին՝ ա) ֆիզիկական ուժերի և առողջության անկման հետ հարմարումը, բ) թոշակի անցնելու և եկամուտների նվազման հետ հարմարվելը, գ) ամուսնու (կնոջ) կորստյան հետ հարմարվելը, դ) սեփական տարիքային խմբի հետ անկեղծ հարաբերություններ հաստատելը, ե) նոր սոցիալական դերերի հետ հարմարվելը, զ) բավարար ֆիզիկական գոյություն ապահովելը (218). Ըստ մեկ այլ հեղինակի այս տարիքի խնդիրներն են՝ ա) էներգիայի տեղափոխումը նոր բնույթի ակտիվությունների և այնպիսի դերերի վրա, ինչպիսիք են՝ ա) թոշակառուի, ամուրհի, պապիկի (տատիկի) դերերը, բ) տարիքի հետ ի հայտ եկող ֆիզիկական փոփոխություններին հարմարվելը, գ) սեփական կյանքի ուղու ընդունումը, դ) մահվան կոնցեպցիայի մշակումը (239):

Ուշ հասունության և ծերության ճգնաժամերի էմպիրիկական հատուկ հետազոտությունների մենք չենք հանդիպել, սակայն այս շրջաններին նվիրված այլ հետազոտություններում (ասենք ինքնասպանությունների, հոգեախտաբանությանը և այլն) ուրվագծվում են նաև ճգնաժամի բնութագրերը: Այսպես, Ջ. Բիշոֆը, վերլուծելով ինքնասպանությունների վիճակագրական տվյալները, նշում է, որ կանանց շրջանում ինքնասպանությունների քանակի աճ է նկատվում 55 տարեկանից հետո (285, էջ 228): Մի շարք հետազոտողներ նշում են, որ 60–ից հետո մահվան հիմնահարցը, մասնավորապես մահվան վախը հանդես է գալիս որպես այդ տարիքի հիմնական պրոբլեմ, որը հաճախ քողարկված բնույթ է կրում (191, 224 և ուրիշներ): Ռ. Բութլերը, վկայակոչելով Չիկագոյի համալսարանի մարդու զարգացման կոմիտեի հետազոտությունները, նշում է, որ ներհայեցողությունը տարիքով մարդկանց մեջ, մինչև 70 տարեկանը, նկատելիորեն աճում է, որից հետո սկսում է նվազել (192): Նույն հեղինակը, վկայակոչելով ԱՄՆ–ի Հոգեկան առողջության ազգային ինստիտուտի տվյալները, նշում է, որ առողջ տարեց մարդկանց 35%–ը բացահայտորեն մահվան վախ է ապրում, 15%–ը ժխտում, բացառում է սեփական մահվան հնարավորությունը (որպես պաշտպանական մեխանիզմ), իսկ մնացած 55%–ը իրատեսական վերաբերմունք ունի մահվան նկատմամբ (192, էջ 219):

Բ. Նյուգարթենը հետազոտության է ենթարկել միջին և ծեր հասակի մարդկանց վերաբերմունքն արտաքին աշխարհի նկատմամբ: Ըստ նրա միջին հասակի մարդիկ (մոտ 40 տարեկանի շրջանում) աշխարհն ընկալում են որպես ակտիվորեն գործելու, ռիսկի դիմելու միջավայր, նրանք իրենց միանգամայն ի գորու են համարում հաղթահարելու պրոբլեմները, մինչդեռ տարեց մարդիկ աշխարհն ընկալում են որպես վտանգավոր միջավայր, որի պարտադրած խնդիրներին իրենք ստիպված են դիմակայել (240): Բազմաթիվ հեղինակներ նշում են, որ մեծահասակների մեջ, հատկապես 55–65 տարիքային շրջանում աճում է դեպրեսիան: Այսպես, ըստ Գուրլանդի և համահեղինակների մեծահասակների մոտ 13 %–ը տառապում է դեպրեսիայով (211): Բլազերը և համահեղինակները պարզել են, որ մեծահասակների մոտ 8%–ը տառապում է ուժեղ կամ միջին դեպրեսիայով, մոտ 19%–ը ավելի թեթև, դիսֆորիկ ախտանշաններ է դրսևորում (186): Ըստ որոշ հեղինակների մեծահասակների մոտ 50%–ը այս կամ այն չափով տառապում է դեպրեսիայով (203): Որոշ հետազոտություններ վկայում են, որ մեծահասակներին բնորոշ է քնի ընդհանուր ժամանակի նվազումը (238, էջ 405): Բենգսթոնի և համահեղինակների վկայությամբ մեծահասակների մեջ ինքնագնահատականի անկում է նկատվում (178, էջ 573):

Այս ճգնաժամի հիմնական սինդրոմներն են (ըստ Շ. Բյուլերի և 55–65 տարիքային շրջանի էմպիրիկական հետազոտությունների) դեպրեսիա, մահվան տագնապներ, ինքնագնահատականի անկում:

1.4. ՁԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված հետազոտությունները, անշուշտ, հարստացնում են տարիքային ճգնաժամերի մասին պատկերացումները, սակայն կան նաև բազմաթիվ հարցեր, որոնք դեռևս էմպիրիկական լուսաբանման, ստուգման, ճշգրտման կարիք ունեն: Նախ, ինչպես տեսանք վերևում, հետազոտությունների արդյունքները հաճախ հակասական են: Այսպես, դեռահասության տարիքում ճգնաժամի ի հայտ գալու հաճախականությանը նվիրված հետազոտությունները միանգամայն հակադիր տվյալներ են ներկայացնում. ըստ որոշ հեղինակների (204)՝ ճգնաժամն այս տարիքին բնորոշ չէ, իսկ ըստ այլ հեղինակների (Ջ. Մասթերսոն, Ա. Ուոշբորն) դեռահասների միայն 17%–ը ճգնաժամային ախտանշաններ չի դրսևորում: Կարծում ենք նման հակասականությունը նախ և առաջ պայմանավորված է ճգնաժամերի տեսական անբավարար մշակվածությամբ, մասնավորապես տարիքային ճգնաժամերի որպես երևույթի հակասական ըմբռնմամբ: Այնուամենայնիվ, եթե փորձենք ամփոփել այդ հետազոտությունները, ապա կարելի է եզրակացնել, որ սուր ճգնաժամ են ապրում դեռահասների մոտ 20%–ը (199, 123, 234 և ուրիշներ), նս մոտ 20%–ն, ընդհանրապես, ախտանշաններ չի դրսևորում (234, 242), իսկ մնացածի մոտ թեթև դժվարություններ են ի հայտ գալիս: Ցավոք, այլ տարիքային ճգնաժամերին նվիրված նման հետազոտություններ չկան,

ինչի հետևանքով հնարավոր չէ վերոհիշյալ եզրակացությունը տարածել մյուս ճգնաժամների վրա:

Բավարար չափով հետազոտված չէ ճգնաժամային տարիքների սահմանների հարցը, որի հետևանքով տարբեր հեղինակներ միևնույն ճգնաժամի համար տարբեր տարիքներ են նշում, իսկ որոշ հեղինակներ ընդհանրապես հրաժարվում են ճգնաժամերի համար տարիքներ նշելուց (է. Էրիքսոն): Ասենք լավագույնս հետազոտված դեռահասության ճգնաժամը տարբեր հեղինակներ տեղակայում են տարբեր տարիքներում 10–12, 13–14, 15–16 և նույնիսկ 15–18 տարիքային շրջաններում: Թերևս, բացառություն է կազմում 7 տարեկանի ճգնաժամը (նույնիսկ երեք տարեկանի ճգնաժամի համար տարբեր հեղինակներ տարբեր տարիքներ են նշում, ոմանք ճգնաժամը հենց երեք տարեկանում են տեղակայում, մյուսները՝ 2.5–4, հոգեվերլուծաբանները հակված են ամբողջ նախադպրոցական տարիքը ճգնաժամային համարել), որի համար այլ տարիքներ կամ տարիքային շրջաններ չեն նշվում: Պետք է ասել, սակայն, որ նման մոտեցումն արհեստական է թվում, քանի որ ստացվում է, որ զարգացման անհատական տեմպեր գոյություն չունեն:

Կարծում ենք, որ ճգնաժամային տարիքների սահմանների որոշման դժվարությունները նույնպես մեծապես պայմանավորված են ճգնաժամերի տեսական իմաստավորվածության բացակայությամբ: Առանց հասկանալու, թե ինչ է կատարվում, զարգացման ինչ խնդիր է լուծվում ճգնաժամի ընթացքում, հնարավոր չէ հստակեցնել տեղի ունեցածի տարիքային սահմանները: Ինչ վերաբերում է ճգնաժամերի զուտ արտաքին դրսևորումների հիման վրա սահմաններ որոշող էմպիրիկական հետազոտություններին, ապա դրանք, ըստ մեզ, կույր կարելի է համարել, քանի որ միևնույն ախտանշանները կարող են ի հայտ գալ ոչ տարիքային գործոնների ազդեցությամբ և ցանկացած տարիքում:

Մինչև օրս ճշգրտված չեն ոչ առանձին ճգնաժամային տարիքների, ոչ էլ, ընդհանրապես, տարիքային ճգնաժամերի՝ որպես երևույթի բնորոշ, տարբերակիչ ախտանշանները: Այս հարցին նվիրված, մեզ հայտնի էմպիրիկական հետազոտությունները վերաբերում են միայն երեք տարեկանի ճգնաժամին (Վ. Գուսկովա): Պետք է ասել, սակայն, որ «տարիքային ճգնաժամ» հասկացության ճշգրտված չլինելը, ճգնաժամերի ընդհանուր կոնցեպցիայի բացակայությունը լուրջ խոչընդոտ են նման հետազոտություն իրականացնելու ճանապարհին: Օրինակ վերոնշյալ հետազոտության մեջ (52) որպես ճգնաժամային ախտանշաններ են դիտվում երևակայական օբյեկտի հետ խաղը կամ գործունեության արդյունքների կանխատեսումը, որոնք, ըստ մեզ, ոչ թե ճգնաժամային ախտանշաններ են, այլ ուղղակի տարիքային նորագոյացություններ:

Ճգնաժամերի ելքին նվիրված միայն մեկ հետազոտություն կարողացանք գտնել (227), ըստ որի՝ ստացվում է, որ դեռահասների մոտ 30%–ն է կարողանում առանց հետևանքների հաղթահարել ճգնաժամը: Այս տվյալները, փաստորեն, լիովին հակասում են դեռահասության ճգնաժամին նվիրված մյուս էմպիրիկական հետազոտությունների արդյունքներին: Պետք է ենթադրել, որ հեղինակը հետազոտության է ենթարկել միայն սուր ճգնաժամ ապրած դեռահասների, որոնք, ինչպես նշել ենք, այս տարիքի երեխաների միայն 20%–ն են կազմում:

Առավել քիչ են ուսումնասիրված հասուն տարիքի ճգնաժամերը: 70–ական թվականներին կատարված այդ հետազոտություններում (Դ. Լևինսոն, Գ. Շիհի, Ռ. Գոուլդ և ուրիշներ) ուղղակի նկարագրվում են (հաճախ գեղարվեստական ոճով) ճգնաժամերի դրսևորումները: Այս ճգնաժամերի տարբերակիչ ախտանշանները, ընթացքի առանձնահատկությունները, հնարավոր ելքերը, պատճառները էմպիրիկական հետազոտության չեն ենթարկվել: Ընդհանրապես, շատ քիչ են տարիքային ճգնաժամերի պատճառներին նվիրված հետազոտությունները: Այդ եզակի հետազոտություններից կարելի է նշել 7 տարեկանի ճգնաժամին նվիրված Մ. Ելագինայի և Ե. Սապոգովայի աշխատանքները, որոնցում ցույց է տրվում, որ այս տարիքի պրոբլեմները պայմանավորված են երեխաների դպրոցական կյանքին պատրաստ լինելու կամ չլինելու հանգամանքով: Նշված հետազոտությամբ, փաստորեն, փորձ է արվում հիմնավորել, որ 7 տարեկանի ճգնաժամը պայմանավորված է զուտ սոցիալական հանգամանքներով, սակայն այս դեպքում անհասկանալի է դառնում, թե ինչու են դպրոց հաճախելու, դպրոցական կյանքին պատրաստ լինելու հետ կապված երեխայի պրոբլեմները ներկայացվում որպես տարիքային ճգնաժամ. չէ՞ որ վերջինս, նախ և առաջ, բուն զարգացման օրինաչափություններով է պայմանավորված: Ստացվում է, որ

այն հասարակություններում, որտեղ դպրոցական ուսուցում չկա, չկա նաև այս տարիքի ճգնաժամը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ճգնաժամային շրջաններում մարդու մեջ տեղի ունեցող հոգեբանական փոփոխությունների հետազոտությունները: Պետք է ասել, սակայն, որ այս դեպքում էլ հաճախ հակասական տվյալներ են ստացվում. այսպես, ըստ որոշ հեղինակների դեռահասության շրջանում ես–կոնցեպցիայի մեջ «խզումներ», «բեկումներ» տեղի չեն ունենում (Ջ. Դյուզեկ, Ջ. Ֆլայերտի), իսկ այլ հետազոտություններ հակառակն են ապացուցում (Ի. Ա. Վերենիկինա): Թերևս, պետք է ապասել, որ տարբեր տեսական դիրքորոշումներով, մեթոդիկաներով տարբեր մշակույթներում կատարված հետազոտությունները միանգամայն տարբեր արդյունքներ կարող են տալ:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ճգնաժամային տարիքային շրջաններում ձևավորվող նորագոյացությունների հետազոտությունները: Դրանցից կարելի հիշատակել Տ. երմոլովայի և համահեղինակների 7 տարեկանի անձնային նորագոյացության «սոցիալական կոմպետենտության զգացողության» ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (63): Ցավոք, դեռևս անհասկանալի է մնում տարիքային ճգնաժամերի և այդ տարիքներում ձևավորվող նորագոյացությունների կապը, վերջիններիս դերը, նշանակությունը ճգնաժամերի ձևավորման գործում:

Ճգնաժամերի էմպիրիկական հետազոտությունների մեջ, թերևս, միակ միանշանակ արդյունքները ստացվել են դեռահասության ճգնաժամի էքսոհոգեբանական հետազոտություններից (այլ տարիքների ճգնաժամերի էքսոհոգեբանական հետազոտությունների մենք չենք հանդիպել), որոնք վկայում են, որ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների մեջ այս ճգնաժամը կամ ընդհանրապես բացակայում է, կամ մեղմ ու քողարկված ձևով է ընթանում (236, 249 և ուրիշներ):

ԳԼՈՒԽ 2
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՓՈՒԼԵՐԸ

2.1. «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Ճգնաժամ» բառը հայերենում կազմված է «ճիգն» և «ժամ» արմատներից, որտեղ «ճիգն» արմատը, ըստ Հ. Աճառյանի, ունի «նեղություն, վշտակրություն, ջանք» իմաստները (2, էջ 198): Այսինքն «ճգնաժամ» բառը հայերենում նշանակում է «նեղության կամ ջանքերի շրջան»: Եվրոպական լեզուներում տարածված «կրիզիս» բառը ծագում է հունարեն «krisis», այսինքն որոշում, շրջադարձային կետ, ելք բառերից: Չինարենում «ճգնաժամ» հասկացության հիերոգլիֆը նշանակում է վտանգ, վախեցնող իրադարձություն կամ հանգամանքներ, որոնց վրա մարդը կարող է ազդել: Առօրյա խոսքում ճգնաժամը «նեղության» իմաստով է օգտագործվում, իսկ գիտության մեջ այդ իմաստին ավելանում են անցումայնության, շրջադարձայնության իմաստները: Բացատրական բառարաններում ճգնաժամը սովորաբար բնութագրվում է որպես «խիստ, կտրուկ շրջադարձ, ծանր, անցումային վիճակ» (131, էջ 260):

Հոգեբանական գրականության մեջ, ինչպես իրավացիորեն նշում է Ի. Վ. Դուբրովինան, տերմինաբանական խառնաշփոթ է տիրում այս հասկացության շուրջ (60, էջ 31). հանդիպում են «հոգեբանական ճգնաժամ», «տարիքային կամ զարգացման ճգնաժամ», «տրավմատիկ ճգնաժամ», «նույնականության ճգնաժամ», «ներոտիկ ճգնաժամ», «էքզիստենցիալ ճգնաժամ», «հոգևոր ճգնաժամ» հասկացությունները: Վերջին տարիներին լույս տեսած որոշ աշխատություններում կարելի է հանդիպել նաև «դիսպոզիցիոն ճգնաժամ» (բառացի դասավորվածություն), «կյանքի սպասելի անցումներ» (Anticipated Life Transitions),

«հոգեախտաբանական ճգնաժամ», «հոգեբուժական ճգնաժամային իրավիճակ» հասկացությունների (243): Պետք է ասել, իհարկե, որ նշված հասկացություններից շատերը հստակ սահմանումներ չունեն, տարբերակված չեն նմանատիպ այլ հասկացություններից, օգտագործվում են որպես հոմանիշներ:

Հոգեբանական շատ բառարաններում «ճգնաժամ» եզրույթն ընդհանրապես բացակայում է. Ա. Վ. Պետրովսկու և Մ. Գ. Յարոշևսկու խմբագրած բառարանում տրվում է տարիքային ճգնաժամի հետևյալ բնութագիրը. «Ի տարբերություն ևնրոտիկ կամ տրավմատիկ բնույթի ճգնաժամերի, տարիքային ճգնաժամերը դասվում են այն գործընթացների շարքը, որոնք անհրաժեշտ են անձի նորմալ, առաջադիմող զարգացման համար (է. էրիքսոն)» (121, էջ 180): Այս սահմանումը հիմնվում է է. էրիքսոնի ճգնաժամերի տեսության վրա: Ինքը էրիքսոնը, հետևյալ կերպ է բացատրում ևնրոտիկ և տարիքային ճգնաժամերի տարբերությունը. «Զարգացմամբ պայմանավորված բոլոր այս նորմատիվ ճգնաժամերը տարբերվում են պարտադրված տրավմատիկ և ևնրոտիկ ճգնաժամերից նրանով, որ աճի յուրաքանչյուր գործընթացի հետ նոր էներգիա են բերում, իսկ հասարակությունը, կյանքի շրջանների իր գերիշխող կոնցեպցիային համապատասխան, առաջարկում է այդ էներգիան օգտագործելու նոր, յուրահատուկ հնարավորություններ» (209, էջ 162–163): Բերված մեջբերումներում, փաստորեն, տարիքային ճգնաժամերի երկու տարբերակիչ հատկանիշներ են ընդգծվում նորմատիվությունը և զարգացման համար դրական նշանակությունը: Պետք է ասել, սակայն, որ էրիքսոնը «ճգնաժամ» հասկացությունն օգտագործում է խիստ յուրահատուկ իմաստով: Ըստ նրա տարիքային յուրաքանչյուր փուլում ձևավորվում են որոշակի նորագոյացություններ (աշխարհի ևկատմամբ վստահություն, ինքնուրույնություն և այլն): Այդ նորագոյացությունների ձևավորման շրջանն էլ հենց նա անվանում է ճգնաժամային, այսինքն նույնացնում է զարգացման օրինաչափությունը և ճգնաժամը վերջինս ըմբռնելով որպես այդ օրինաչափության ի հայտ գալու շրջան: Ինչպես արդեն նշել ենք, տարիքային հոգեբանության մեջ ավելի ընդունված է նման շրջանների համար օգտագործել «սենզիտիվ շրջան» հասկացությունը (ասենք խոսքի ձևավորման սենզիտիվ շրջան):

Կարծում ենք թյուրիմացություններից խուսափելու համար անհրա-

ժեշտ է տարբերակում մտցնել «ճգնաժամային» և «սենզիտիվ» շրջանևեր հասկացությունների միջև: Սենզիտիվ շրջանները որոշակի հատկությունների, նորագոյացությունների ձևավորման տարիքային շրջաններն են. Այդ շրջաններում. «...Որոշ ներգործությունների ևկատմամբ երեխան դրսևորում է զերզգայունություն (ըստ Բ Գ. Անանևի). որի հետևանքով լավագույն ևերքին պայմաններ են ստեղծվում հիշողության, մտածողության և հոգեկան այլ ֆունկցիաների ու ընդունակությունների զարգացման համար» (12, էջ 182–183): Բնականաբար, այդ նորագոյացությունների ձևավորումը տեղի է ունենում դիալեկտիկայի օրինաչափություններով, ասենք տեղի է ունենում անցում քանակական փոփոխություններից որակականին: Նման անցումները կարող են ընթանալ սահուն ձևով կամ դժվարություններով, սթրեսներով (ասենք խոսքի ձևավորման սենզիտիվ շրջանում դժվարությունները կարող են նյարդային վիճակ ստեղծել երեխայի համար) և նույնիսկ վերաճել իսկական ճգնաժամի, սակայն այս կարգի ճգնաժամերը մասնավոր բնույթ են կրում և տարբերվում են համընդհանուր բնույթ կրող, անձնավորության խոր տեղաշարժերով ուղեկցվող զարգացման ճգնաժամերից, որոնք հայտնի են որպես 3 տարեկանի կամ դեռահասության ճգնաժամեր: Պետք է ասել, իհարկե, որ նորագոյացությունների ձևավորման հետ կապված դժվարությունները կարող են որոշակի դեր խաղալ զարգացման ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունների գործում: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, որոշ հեղինակներ զարգացման ճգնաժամերը կապում են այսպես կոչված տարիքային խնդիրների (հիշեցնենք, որ տարիքային խնդիրներ են դիտվում. օրինակ, քայլքի, խոսքի ձևավորումը, որոնք տարիքային նորագոյացություններ են և ունեն իրենց սենզիտիվ շրջանները) լուծման հետ կապված դժվարությունների հետ (217, 123 և ուրիշներ). Այս մոտեցման մեջ արդեն տարբերակվում են զարգացման օրինաչափությունը և ճգնաժամը, վերջինս դիտվում է որպես զարգացման դժվարությունների հետևանք և ոչ թե այդ օրինաչափության դրսևորման սենզիտիվ շրջան: Տարըմբռնումներից խուսափելու համար նման տարբերակումը, ըստ մեզ, անհրաժեշտ է: Զարգացման օրինաչափությունների ի հայտ գալը, նորագոյացությունների ձևավորումն ինքնին չի կարելի դիտել որպես ճգնաժամ, չնայած տարիքային փոփոխությունները կարող են այն աստիճան գլոբալ

լինել (ասենք տարիքային մի փուլից մյուսին անցումը կամ ևս–համակարգի վերակառուցումը) կամ/և դժվարություններով տեղի ունենալ, որ ճգնաժամային իրավիճակ ստեղծվի մարդու համար:

Ամերիկացի գիտնականներ Ա. Բուրգեսը և Բ. Բոլդուինը (189) փորձել են դասակարգել հոգեբանական ճգնաժամերը: Նրանք առանձնացնում են նաև զարգացման ճգնաժամը և տալիս հետևյալ բնութագիրը. «Հասունացման կամ զարգացման ճգնաժամերը ներառում են այն սթրեսները, որոնք ներքին բնույթ են կրում և սոցիալ–հոգեբանական գործոններով են պայմանավորված. Զարգացման այդ գործոններն ի հայտ են գալիս ամբողջ կյանքի ընթացքում և ներառում են կախյալությունը, ուժը, ինտիմությունը, սեռային նույնականությունը և հոգեդինամիկ կոնֆլիկտները: Մանկական վիրավորանքները, ինցեստը, ամուսնական դժվարությունները կամ միջանձնային պրոբլեմները նույնպես պետք է նկատի առնվեն» (189, էջ 673): Այստեղ նորամուծությունը, թերևս, այն է, որ հեղինակները ճգնաժամը կապում են ներքին սթրեսի հետ, որը, սակայն, պայմանավորված է նաև սոցիալ–հոգեբանական հանգամանքներով: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, հեղինակները նկատելիորեն ընդլայնում են այդ սոցիալ–հոգեբանական գործոնների շրջանակը դրանց մեջ ներառելով ինցեստի, միջանձնային հարաբերությունների, ամուսնության հետ կապված պրոբլեմները, որոնք սովորաբար դիտվում են որպես տրավմատիկ սթրեսներ:

Հոգեբանության մեջ, ինչպես նշեցինք, առանձնացվում է նաև «էքզիստենցիալ ճգնաժամ» հասկացությունը (148, 206 և ուրիշներ), որով մի դեպքում արտահայտվում է այն հոգեվիճակը, երբ կենսական դատարկության զգացումը լիովին կլանում է մարդուն և խոր տառապանքներ հարուցում (148), այլ դեպքերում նկատի են առնվում մարդու կյանքի բեկումնային, շրջադարձային պահերը (206): Պետք է ասել, իհարկե, որ որոշակի տարիքներում զարգացման ճգնաժամերին նույնպես բնորոշ է կյանքի անիմաստության զգացումը (46), բացի այդ, էքզիստենցիալ ճգնաժամերը հաճախ ի հայտ են գալիս հենց ճգնաժամային տարիքներում, հատկապես պատանեկության, 30 տարեկանի, կյանքի կեսի (40 տարեկանի շրջանում) շրջաններում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ կյանքի անիմաստության զգացումը նշված տարիքային ճգնաժամերի ախտանիշներից մեկն է: Անշուշտ, սեփական գոյության հարցի

առնչությամբ մարդու ճգնաժամը (էքզիստենցիալ ճգնաժամը) առանձին իրողություն է և կարող է ի հայտ գալ նաև այլ, ոչ տարիքային սթրեսոգեն իրադարձությունների ազդեցությամբ (ասենք մուտ հարազատի մահը կարող է մարդուն հասցնել էքզիստենցիալ ճգնաժամի):

Հոգեբանության մեջ «ճգնաժամ» հասկացությունը հաճախ կիրառվում է որպես հետտրավմատիկ սթրեսային հակազդման որոշակի փուլի անվանում (սթրես, կոնֆլիկտ, ճգնաժամ). «Դժբախտ պատահարները և անախորժությունները,— գրում է Լ. Հոֆը,— հանգեցնում են սթրեսների, որոնք ճգնաժամի վերածվելու հավանականություն են պարունակում: Կհանգեցնե՞ն արդյոք այդ դժբախտ պատահարները և անախորժությունները ճգնաժամի, կախված է սթրեսները հաղթահարելու մեր կարողությունից» (220, էջ 6): Հետտրավմատիկ ճգնաժամը տարիքային ճգնաժամերից տարբերակելը նույնպես որոշակի դժվարությունների հետ է կապված, քանի որ արտաքին հանգամանքները, սթրեսածին իրադարձությունները նպաստում են զարգացման ճգնաժամերի ի հայտ գալուն կամ սրում են դրանց ընթացքը (Ա. Ն. Լեոնտև, Դ. Բ. Էլկոնին և ուրիշներ):

«Նույնականության ճգնաժամ» հասկացությունը հոգեբանության մեջ ներմուծել է Է. Էրիքսոնը: Նրա տարիքային պարբերացման համակարգում նույնականության ճգնաժամը վերագրվում է դեռահասության և պատանեկության շրջաններին որպես այդ տարիքում ծնավորվող նույնականության զգացողության խախտում. ճգնաժամի բացասական ելքի ախտանշան: Մինչդեռ հոգեբուժական որոշ բառարաններում այս ճգնաժամը չի կապվում տարիքային գործոնների հետ, դիտվում է որպես ճգնաժամի յուրահատուկ տեսակ: Այսպես, Վ. Գինդիկինի հոգեբուժական բառարանում նույնականության ճգնաժամը բնութագրվում է հետևյալ կերպ. «Սեփական ես–ի որպես անձնավորության, զգացողության կորուստ, հասարակության կողմից վերագրված դերն ընդունելու կամ դերին հարմարվելու անընդունակություն» (49, էջ 76): Ըստ հեղինակի այս ճգնաժամը հոգեկան դեզադապտացիայի տեսակ է, որն առաջանում է ի պատասխան հասարակական կյանքի կտրուկ փոփոխությունների (49, էջ 76):

Կրոնական, միստիկական գրականության մեջ հաճախ է օգտագործվում «հոգևոր ճգնաժամ» հասկացությունը, որը հանդիպում է նաև հո-

գեբանական գրականության մեջ: Այսպես Ռ. Ասաջիոլին այս հասկացությունն օգտագործում է անձնավորության հոգևոր զարգացման դժվարությունները բնութագրելիս: Ըստ որում, «հոգևոր» հասկացությամբ նա նկատի ունի «...ոչ միայն այն ապրումները, որոնք ավանդաբար կրոնական են համարվում, այլև նրանք, որոնք առնչվում են ընկալմանն ու ճանաչողությանը, մարդու ողջ ակտիվությանն ու բոլոր այն ֆունկցիաներին, որոնք մեկ ընդհանուր բնութագիր ունեն, այն է այնպիսի արժեքների յուրացումը, որոնք ավելի բարձր են քան համընդհանուր ընդունման արժանացածները և բարոյական, գեղագիտական, հերոսական, հումանիստական և այլասիրական բնույթ ունեն» (25, էջ 511):

Ըստ Ջ. Պերրիի հոգևոր ճգնաժամը հոգևոր արթնացմանը, անձնավորության կերպարանափոխմանն ուղղված գործընթաց է, որը հաճախ ապրվում է որպես սեփական ես–ի մահ և աշխարհի կործանում: Հոգևոր ճգնաժամը, ըստ Պերրիի, ոգու որպես դինամիկ էներգիայի ագատագ-ման փորձն է մարմնական, հոգեբանական և սոցիալական սահմանա-փակումներից (109, էջ 495–498): Ըստ մեզ այս կարգի ճգնաժամերը կարելի է դիտել որպես անձնային զարգացման ճանապարհին ի հայտ եկող ճգնաժամեր. դրանք պայմանավորված են ոչ թե տարիքային օրի- նաչափություններով, այլ անձի անհատական զարգացմամբ, հոգևոր հասունացմամբ: Պետք է ասել, իհարկե, որ հոգևոր ճգնաժամերը հա-ճախ ի հայտ են գալիս հենց տարիքային ճգնաժամերի շրջաններում (հիմնականում հասուն տարիքում), սակայն նորմատիվ բնույթ չեն կրում. եզակի մարդկանց մեջ են ի հայտ գալիս: Ըստ երևույթին, տարի-քային ճգնաժամը հանդես է գալիս որպես հոգևոր արթնացումը խթա- նող հանգամանք:

Բ. Օկունը «դիսպոզիցիոն ճգնաժամ» հասկացությամբ նկատի ունի ինֆորմացիոն դեֆիցիտով պայմանավորված ճգնաժամային իրավիճակը, երբ մարդը չի կարողանում ընտրություն կատարել, որոշումներ կայացնել: Ըստ մեզ նման իրավիճակների համար ավելի նպատակահարմար է օգտագործել «ինֆորմացիոն սթրես կամ ճգնաժամ» հասկացությունը (ի դեպ, «ինֆորմացիոն սթրես» հասկացությունը կիրառվում է հոգեբանության մեջ) դրա մեջ ընդգրկելով նաև ինֆորմացիոն գերծանրաբեռնվածությամբ, հակասական ինֆորմացիայով (ասենք Գ. Բեյթսոնի կրկնակի ճնշումը double bind) պայմանավորված սթրեսոգեն իրավի-

ճակները: Կարծում ենք հաջողված չէ նաև Բ. Օկունի «կյանքի սպասելի անցումներ» հասկացությունը. որով հեղինակը նկատի ունի հասարակական կյանքի նորմատիվ իրադարձություններով պայմանավորված սթրեսոգեն իրավիճակները դպրոց ընդունվելը, ամուսնությունը, երեխայի ծնունդը և այլն: Կարծում ենք ավելի նպատակահարմար է նշված երևույթների համար կիրառել «անձնավորության սոցիալական զարգացմամբ պայմանավորված անցումներ. սթրեսներ կամ ճգնաժամներ» հասկացությունը: Ի դեպ, նման մոտեցման դեպքում կարելի է առանձնացնել նաև անձնավորության այլ ենթահամակարգերի զարգացման հետ կապված անցումային շրջաններ. որոնք կարող են սթրեսոգեն բնույթ ունենալ, ասենք անձնավորության բարոյական կամ հուզական զարգացմամբ պայմանավորված անցումները:

Ինչ վերաբերում է «ներոտիկ ճգնաժամ» կամ «հոգեախտաբանական ճգնաժամ», «հոգեբուժական ճգնաժամային իրավիճակ» հասկացություններին, ապա դրանք ոչ հոգեբուժական, ոչ հոգեբանական բառարաններում ներկայացված չեն. մասնագիտական բառապաշարում «ներոտիկ ճգնաժամ» հասկացությունը սովորաբար օգտագործվում է ներոտիկ ախտանշանների սրման իմաստով: Բ. Օկունը «հոգեախտաբանական ճգնաժամ» հասկացությամբ նկատի ունի այն ճգնաժամային իրավիճակը, որի մեջ հիվանդն իրեն գցում է հիվանդագին մտածելակերպի, հուզականության հետևանքով, իսկ հոգեբուժական ճգնաժամային իրավիճակը, ըստ հեղինակի, այն է, երբ հիվանդը հայտնվում է այնպիսի հոգեվիճակում, որ պատասխանատու չէ իր արարքների համար:

Այսպիսով, ինչպես երևում է հասկացությունների այս համառոտ վերլուծությունից, հոգեբանական տարբեր ճգնաժամերն իրարից հստակորեն տարբերակված չեն, ինչը լուրջ դժվարություններ է հարուցում թե այդ երևույթների հետազոտության հարցում և թե պրակտիկ աշխատանքում (ճգնաժամերի ախտորոշման, հոգեբանական օգնության կազմակերպման, դաստիարակության հարցերում).

Մեր մոտեցումն այս հարցում հետևյալն է. նախ, որպես գիտական հասկացություն «ճգնաժամը», կարծում ենք, ավելի ճիշտ է ներկայացնել որպես որևէ գործընթացի մեջ քանակական փոփոխություններից որակականին անցման այնպիսի շրջան, որը ցավագին, խիստ լարված,

հակամետ ուժերի պայքարով ընթացող բնույթ է կրում: Այլ կերպ ասած ճգնաժամերին կարելի է վերագրել երկու տարբերակիչ հատկություն՝ անցումայնությունը և յարված, ցավագին ընթացքը: Այս տեսանկյունից քանակական փոփոխություններից որակականին անցումն ինքնին ճգնաժամ չի կարող համարվել, քանի որ դա կարող է տեղի ունենալ սահուն ձևով, առանց կոնֆլիկտների: Մյուս կողմից, ցանկացած կոնֆլիկտ, պայքար նույնպես ճգնաժամ չի կարող համարվել, եթե այն գործընթացի մեջ որակական փոփոխությունների չի հանգեցնում: Հոգեբանության մեջ սովորաբար «հոգեբանական ճգնաժամ» հասկացությունն օգտագործվում է որպես հոգեբանական ճգնաժամային երևույթների դասն արտահայտող հասկացություն: Այդ ընդհանուր հասկացության համար Գ. Կապլանն առաջարկում է հետևյալ սահմանումը. «Հոգեբանական անհավասարակշռության վիճակ այն մարդու մեջ, ով բախվել է վտանգավոր իրավիճակի, որը նրա համար հրատապ հիմնախնդիր է հանդիսանում, և այդ հիմնախնդրից նա, որոշակի ժամանակամիջոցում, ոչ կարողանում է խուսափել և ոչ էլ լուծել այն՝ իր տիրապետած սովորական եղանակներով» (194, էջ 53): Կարծում ենք՝ այս սահմանման վերջին մասը միանգամայն ընդունելի է, սակայն առաջին հատվածը որոշ ճշգրտումների կարիք ունի: Նախ, ցանկացած սթրեսի առկայության պարագայում մարդու մեջ հոգեբանական անհավասարակշռության վիճակ է ստեղծվում, այսինքն «անհավասարակշռություն» հասկացությունը որպես ճգնաժամի բնութագիր, խիստ ընդհանուր և վերացական է, կոնկրետացման կարիք ունի: Մյուս կողմից, անձի համար հանգամանքների վտանգավորությունը չի կարող ճգնաժամերի ի հայտ գալու պայման համարվել (վտանգավոր իրավիճակում տարբեր մարդիկ միանգամայն տարբեր հակազդումներ կարող են տալ, ընդհուպ մինչև վտանգի անտեսումը): Բացի այդ, սահմանման մեջ չեն արտացոլվում ճգնաժամերին բնորոշ անցումայնության պահը, ցավագին, լարված, հուզականորեն հագեցած վիճակը: Այս տեսանկյունից, կարծում ենք, ավելի ընդգրկուն և ճգնաժամերի մասին ընդհանուր պատկերացումներին ավելի համապատասխան է հետևյալ սահմանումը. անձի համար խիստ հրատապ հոգեբանական (սոցիալ–հոգեբանական) հիմնախնդրի քիչ թե շատ տևական ժամանակահատվածում չլուծվելու հետևանքով առաջացած այնպիսի անցումային իրավիճակ, որի ընթաց-

քում անձը վերջին, հաճախ ոչ հարմարողական, ոչ ադեկվատ, յարված ու հուզականորեն հագեցած ջանքեր է թափում լուծելու հիմնախնդիրը: Անցումային իրավիճակ ասելով՝ նկատի ունենք այն, որ ճգնաժամի ընթացքում անցում է կատարվելու հիմնախնդրի լուծման նոր մակարդակի, սկզբունքի, որի արդյունքում գտնվելու է լուծում (դրական կամ բացասական հետևանքներով), որը որակական փոփոխություններ է մտցնելու անձնավորության այն ոլորտում, որտեղ ծագել է տվյալ հիմնախնդիրը (ասենք կոգնիտիվ կամ միջանձնային հարաբերությունների ոլորտները, ես–կոնցեպցիան և այլն). Ըստ որում, այդ լուծումը կարող է լինել և հարմարողական, և ոչ հարմարողական՝ ընդհուպ մինչև հիմնախնդրից հրաժարում կամ ինքնակործանում: Փորձենք այս ընդհանուր սահմանումը կոնկրետացնել տարիքային ճգնաժամերի վրա: Ըստ այդմ՝ տարիքային ճգնաժամը կբնութագրվի որպես զարգացման օրինաչափությունների ի հայտ գալու դժվարությունների (ներքին կամ արտաքին հանգամանքներով պայմանավորված) հետևանքով անձի համար խիստ հրատապ դարձած տարիքային հիմնախնդրի (հիմնախնդիրների) լուծման այնպիսի անցումային շրջան, որի ընթացքում մարդն իր վերջին, հաճախ յարված, բացասական ապրումներով, ներհոգեկան և միջանձնային կոնֆլիկտներով, ոչ ադեկվատ վարքով ուղեկցվող ջանքերն է թափում լուծելու իր առջև ծառացած հիմնախնդիրը (հիմնախնդիրները): Այս սահմանման մեջ մենք փորձել ենք առանձնացնել այն պահերը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես հետազոտական, այնպես էլ կիրառական (նկատի ունենք ճգնաժամի մեջ հայտնված մարդու հոգեբանական օգնությունը) աշխատանքները կազմակերպելիս: Այսպես, սահմանումից բխում է, որ տարիքային ճգնաժամերը պայմանավորված են օրինաչափորեն ի հայտ եկող զարգացման գործընթացներով (ճգնաժամերը հետազոտելիս պետք է պարզել զարգացման այն օրինաչափությունները, որոնք ի հայտ են գալիս տվյալ տարիքում), որոնք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով դժվարությամբ են տեղի ունենում (պետք է պարզել այն հանգամանքները, որոնք դժվարացնում են զարգացման օրինաչափությունների դրսևորումը): Մյուս կողմից, զարգացման դժվարությունները մարդու համար վերածվում են հիմնախնդրի, որոնց լուծման ուղիները նա չգիտի (պետք է պարզել, թե ինչպես է հիմնախնդիրն արտացոլվում անձի մեջ, և լուծման ինչ ուղիներ գոյություն

ունեն): Վերջապես, բուն ճգնաժամը բնութագրվում է որպես զարգացման հիմնախնդրի լուծման գործընթացի, տարիքային սթրեսի խորացման որոշակի աստիճան, անցումային իրավիճակ Այլ կերպ ասած ճգնաժամն այստեղ ներկայացված է որպես տարիքային սթրեսոգեն իրավիճակի զարգացման աստիճան, և այս տեսանկյունից ավելի ճիշտ է «սթրեսոգեն» և ոչ թե «ճգնաժամային» տարիք հասկացությունը, սակայն, ինչպես հայտնի է, գիտության մեջ հասկացությունների փոփոխությունը չի խրախուսվում, և մենք, օգտագործելով «ճգնաժամային տարիք» հասկացությունը, նկատի ունենք, որ այդ տարիքային շրջաններն ուղղակի սթրեսոգեն են, և միայն անբարենպաստ պայմաններն են, որ մարդուն հասցնում են ճգնաժամի մակարդակի:

Վերջում նշենք նաև, որ ներկայացված սամանման մեջ մենք հիմնվում ենք այսպես կոչված խնդրային մոտեցման վրա (26), ըստ որի յուրաքանչյուր իրավիճակ, գործընթաց դիտարկվում է խնդիրների և դրանց լուծման տեսանկյունից: Ըստ էության, ինչպես զարգացումը, այնպես էլ տարիքային ճգնաժամերը ոչ այլ ինչ են, քան ինչ–որ խնդիրների լուծմանն ուղղված գործընթացներ: Պետք է ասել, որ տարիքային հոգեբանության մեջ նման մոտեցումն այսօր լայնորեն կիրառվում է (218). զարգացումը դիտվում է որպես տարիքային խնդիրների լուծման գործընթաց, իսկ ճգնաժամերը բացատրվում են տարիքային խնդիրների լուծման ճանապարհին ի հայտ եկած խոչընդոտներով:

2.2. ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՄԱՐԴՈՒ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ճՇԳՐՏՈՒՄ

Այս հասկացությունների առումով ժամանակակից տարիքային հոգեբանության մեջ առկա տարընմբռնումները լուրջ դժվարություններ են հարուցում մի շարք հիմնախնդիրների հետազոտման հարցում: Մասնավորապես նկատի ունենք տարիքային պարբերացման և զարգացման ճգնաժամերի հիմնախնդիրները: Հաճախ տարիքային հոգեբանության մեջ քննվում է հոգեկան համակարգի կամ անձնավորության որևէ

ենթահամակարգի զարգացումը (այդ զարգացման փուլերը) և այն ներկայացվում է որպես ամբողջական հոգեկանի կամ անձի զարգացում (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև): Մյուս կողմից, «զարգացման ճգնաժամ» հասկացությունը վերացական է, քանի դեռ ճշտված չէ, թե ինչի, որ համակարգի զարգացման մասին է խոսքը:

Տարիքային հոգեբանության մեջ հաճախ նույնացվում են «հոգեկան զարգացում» և «անձնավորության զարգացում» հասկացությունները: Վերջիններիս տարբերակման հարցը, թերևս, առաջին անգամ բարձրացրել է Ա. Վ. Պետրովսկին (110): Նա իրավացիորեն գտնում է, որ այդ հասկացությունները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն դրանք իմաստով նույնական չեն: Հեղինակն առաջարկում է անհատի հոգեկան զարգացումը տարբերակել անձնավորության հոգեկան զարգացումից (111): Ա. Պետրովսկին անհրաժեշտ է համարում «...առանձնացնել անձնավորության որպես անհատի սոցիալական, համակարգային որակի և մարդկային հարաբերությունների համակարգի սուբյեկտի ձևավորման հատուկ գործընթացը» (110, էջ 40): Հեղինակն անձնավորության զարգացման գործընթացը հետևյալ կերպ է ներկայացնում. «Ամենաընդհանուր ձևով մարդու անձի ձևավորումը կարելի է պատկերացնել որպես նոր սոցիալական միջավայրի մեջ անձնավորության մուտքի և ինտեգրացման գործընթաց» (110, էջ 62): Ըստ էության, հեղինակը նկատի ունի անձնավորության սոցիալական կամ ավելի ճիշտ սոցիալ–հոգեբանական զարգացումը. Կարծում ենք, որ նման տարբերակման անհրաժեշտությունն իսկապես առկա է, քանի որ հոգեկան և սոցիալ–հոգեբանական ոլորտների զարգացումը չնայած փոխպայմանավորված են և միասնական, այնուամենայնիվ տարբեր գործընթացներ են: Այս դեպքում, իհարկե, հոգեկան զարգացման ոլորտը պետք է սահմանափակվի (սովորաբար անձնավորության սոցիալական զարգացումը ներկայացվում է որպես հոգեկան զարգացման մի ասպեկտ) և ընդգրկի միայն հոգեկան համակարգը (ասենք կոգնիտիվ, մոտիվացիոն, բարոյական և այլ ոլորտները): Միևնույն ժամանակ, մենք այն կարծիքին ենք, որ այդ ոլորտների տարբերակմանը, առանձնացմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև ինտեգրատիվ, համակարգային մոտեցում դրսևորել, որովհետև ամբողջի ցանկացած մասնատում զուտ գիտական վերացարկում է, որը, իհարկե, մի կողմից

թույլ է տալիս ավելի խորն ուսումնասիրել մասը, սակայն մյուս կողմից կորչում է, հաճախ աղավաղվում ամբողջի իրական պատկերը: Այնպես որ, կարծում ենք, անհրաժեշտություն կա ուսումնասիրության առարկա դարձնել նաև մարդու օնտոգենետիկ զարգացումն իր ամբողջության մեջ միավորելով ոչ միայն հոգեկան և սոցիալական, այլև կենսաբանական զարգացման փաստերը: Կարծում ենք, որ միայն նման մոտեցումը կապահովի մարդու զարգացման իրական պատկերի ստեղծումը, թույլ կտա թափանցել առանձին ենթահամակարգերի զարգացման գործընթացի էության մեջ, ավելի լավ հասկանալ մարդու զարգացման ընդհանուր գործընթացում դրանց տեղն ու դերը: Այսպիսի մոտեցման համար կարելի է օգտագործել «մարդու կամ անձի տարիքային զարգացում» հասկացությունը («տարիքային» արտահայտությունը, ըստ մեզ, անհրաժեշտ է, որպեսզի տարբերակվի անձի անհատական, սուբյեկտիվ զարգացումը նրա տարիքային, օբյեկտիվ զարգացումից: Անձի անհատական զարգացման համար կարելի է օգտագործել նաև «անձնային զարգացում» հասկացությունը: Այս դեպքում վերը ներկայացված հասկացության մեջ «տարիքային» արտահայտությունը կարելի է չօգտագործել. ներկա աշխատության մեջ մենք հենց այս մոտեցումն ենք կիրառել), իսկ հոգեկան, կենսաբանական և սոցիալական զարգացման գործընթացները հանդես կգան որպես մի ամբողջության առանձին կողմեր (շատ հեղինակներ հենց այս մոտեցումն են կիրառում տարիքները բնութագրելիս. օրինակ Բ. Գ. Անանևը): Նշենք նաև, որ ժամանակակից գիտության զարգացման մակարդակը (տարիքային հոգեբանություն, տարիքային ֆիզիոլոգիա և այլն) լիովին թույլ է տալիս համակարգային մոտեցում կիրառել տարիքային զարգացումը հետազոտելիս: Շատ հեղինակներ հենց համակարգային մոտեցման մեջ են տեսնում տարիքային պարբերացման հիմնախնդրի լուծումը: Մեր հետազոտության մեջ հենց այս մոտեցման տեսանկյունից ենք փորձել դիտարկել տարիքային երևույթները, կառուցել տարիքային պարբերացում, առանձնացնել տարիքային անցումները, վերլուծել անձնավորության զարգացման ճգնաժամերը:

2.3. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

Միևնույն տարիքային շրջաններում ճգնաժամերի պարբերաբար ի հայտ գալը հիմք է տալիս ենթադրելու դրանց կապը զարգացման ներքին օրինաչափությունների, մասնավորապես տարիքային փուլերի հերթափոխման, տարիքային փուլի ընթացքում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունների հետ: Ըստ էության, տարիքային ճգնաժամերի հիմնախնդիրն անհնար է քննել վերացարկվելով տարիքային պարբերացման պրոբլեմից: Ասենք տարիքային անցումներով պայմանավորված ճգնաժամերը հնարավոր չէ բացատրել առանց տարիքների բաժանման կոնկրետ, հստակ, հիմնավորված չափանիշներ ունենալու (մինչդեռ շատ հեղինակներ, քննելով տարիքային ճգնաժամերը, ամենևին անտեսում են տարիքային պարբերացման հիմնախնդիրը): Սակայն, ինչպես հայտնի է, այսօր դեռևս չկա համընդհանուր ընդունման արժանացած, հիմնավոր տարիքային շրջաբաժանում: Ավելին Լ. Ս. Վիգոտսկուց հետո տարիքային պարբերացման սկզբունքների, դրանց հիմնավորվածության, նկարագրական դասակարգումներից բացատրական դասակարգումներին անցման մեթոդոլոգիական հարցերը մի տեսակ անուշադրության են մատնված, էպիզոդիկ ձևով են քննվում, ինչի հետևանքով տարիքային պարբերացման հիմնախնդրի մեջ յուրահատուկ քաոս է տիրում: Այսպես որոշ գիտական աշխատություններում անձի առանձին ենթահամակարգի զարգացման հիման վրա կառուցված պարբերացումը ներկայացվում է որպես ամբողջական անձնավորության զարգացում, կամ դասագրքերում ներկայացվում են շրջաբաժանումներ, որոնցում տարիքային փուլերը տարբեր հիմքերով են առանձնացված, այսինքն խախտված են դասակարգման կանոնները (79): Այս տեսանկյունից կարելի է միանգամայն արդարացի համարել Դ. Ֆելդշթեյնի հետևյալ քննադատությունը. «Չնայած այն հանգամանքին, որ հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդրի վրա աշխատել են այնպիսի խոշոր հոգեբաններ և մանկավարժներ, ինչպիսիք են Բ. Գ. Անանևը, Պ. Պ. Բլոնսկին, Լ. Ս. Վիգոտսկին, Շ. Բյուլերը, Հ. Վալոնը, Ա. Գեզելը, Ռ. Զազոն, Ժ. Պիաժեն, Զ. Ֆրոյդը, է. Էրիքսոնը և շատ ուրիշներ, այնուամենայնիվ, երեխաների հոգեկան զարգացման հետազոտու-

թյունների կոնկրետ արդյունքները բավարար չափով չեն հաստատել օնտոգենեզի շրջանների այդ բոլոր դասակարգումները: Չի կարելի բավարար համարել նաև հոգեբանության և մանկավարժության մի շարք դասագրքերում ներկայացվող մանկան զարգացման շրջաբաժանումը, որտեղ առանձնացվում են օնտոգենեզի հետևյալ շրջանները. 1) մանկիկություն ծննդից մինչև մեկ տարեկան, 2) մինչնախադպրոցական մանկության շրջան 1–3 տարեկան, 3) նախադպրոցական շրջան 3–7 տարեկան, 4) կրտսեր դպրոցական տարիք 7–11, 12 տարեկան, 5) միջին դպրոցական տարիք (դեռահասություն) 13–15 տարեկան, 6) ավագ դպրոցական տարիք 15–18 տարեկան... Նախ, այս շրջաբաժանումը հիմնվում է տարբեր սկզբունքների վրա՝ տարիքի (մանկություն), գործունեության բնույթի (նախադպրոցական, դպրոցական), և երկրորդ, ինչպես իրավացիորեն նշում էին դեռևս Ա. Ա. Մարկոսյանը և Դ. Բ. Էլկոնինը, չի հիմնվում. «...գիտական հետազոտությունների արդյունքների վրա, այլ ուղղակի արտացոլում է առկա դաստիարակության և ուսուցման համակարգը, այսինքն արտաքին չափանիշներով է դետերմինավորված...» (146, էջ 128–129): Ավելացնենք նաև, որ դասագրքային պարբերացումների մեջ մշակված չեն տարիքային սահմանների որոշման հստակ և ընդհանուր չափանիշներ. ասենք նորածնության և մանկիկության սահմանը որոշվում է աշխուժացման համալիրի ի հայտ գալով, կրտսեր դպրոցական տարիքի սկիզբը՝ դպրոցական ուսուցմանն անցմամբ, իսկ դեռահասության սկիզբը սեռական հասունացման նշաններով, այսինքն վերցվում են տարբեր, ընդհանուր սկզբունքով չմիավորված չափանիշներ: Բնականաբար, նման պարբերացումներում չափազանց դժվար կամ նույնիսկ անհնար է քննել տարիքային անցումների հիմնախնդիրը. ասենք ինչպե՞ս կարելի է բացատրել և հիմնավորել անցումները 1 կամ 3 տարեկանում: Նույն ձևով էլ անհասկանալի է դեռահասության ճգնաժամի շրջանում անցման իմաստը. եթե անցում է կատարվում սեռական հասունացմանը, ապա ճգնաժամը պետք է տեղի ունենար 7, 8–9, 10 տարեկանում, երբ սկսում են ի հայտ գալ սեռական հասունացման առաջին նշանները: Իսկ եթե այս ճգնաժամը բնութագրվում է որպես անցում հասունությանը, ապա ակնհայտ է, որ դեռահասը, նույնիսկ պատանին հասուն մարդ չեն կարող համարվել:

Ավելի ուշ շրջանի ճգնաժամերն անցումայնությամբ բացատրելը

նույնպես լուրջ դժվարություններ է հարուցում. ասենք անհասկանալի է անցումների իմաստը 30 կամ 50, 60 տարիքային շրջաններում: Ինչ վերաբերում է հասուն տարիքի շրջաբաժանմանը, ապա այն, թերևս, ավելի վիճելի է, քան մանկության շրջանինը: Ընդհանրապես, «հասունություն» հասկացությունը կենցաղային է և վերացական, չկան չափանիշներ, որոնցով հասուն մարդը տարբերակվի ոչ հասունից (թերևս, հասունությունն ավելի շուտ անձնային, քան տարիքային բնութագիր է, և հոգեթերապիայի մեջ հիմնահարցը հենց այս տեսանկյունից է քննվում): Իսկ եթե հիմք է ընդունվում մարդու ապրած տարիների քանակը, ապա յուրաքանչյուր հաջորդ տարում մարդն ավելի հասուն է, քան նախորդում: Դասագրքերում ներկայացվող «վաղ», «միջին», «ուշ» հասունություն հասկացությունները խիստ հարաբերական են, պայմանական. հիմնվելով դրանց վրա հնարավոր չէ հասկանալ ոչ տարիքային նշված փուլերի իմաստը և ոչ էլ տարիքային մի փուլից մյուսին անցման և ճգնաժամերի էությունը:

Նույն ձևով էլ տարիքային անցումների, ճգնաժամերի պրոբլեմը հնարավոր չէ քննել հիմնվելով այն պարբերացումների վրա, որոնք արտացոլում են մարդու առանձին ենթահամակարգերի զարգացումը (Զ. Ֆրոյդ, Ժ. Պիաժե, Դ. Էլկոնին և ուրիշներ): Այդ դասակարգումներում որպես հիմք ընդունված ոչ մի բնութագիր, որքան էլ այն կարևոր լինի, չի կարող պայմանավորել մարդու ամբողջական զարգացումը, այդ զարգացման մեջ անցումներն ու ճգնաժամերը: Այդ պարբերացումներն արտացոլում են ընտրված ոլորտների զարգացումը, որոնք կարող են ունենալ իրենց անցումային շրջանները և ճգնաժամերը (ասենք ինտելեկտի զարգացման մի փուլից մյուսին անցման առանձնահատկությունները, դժվարությունները): Ավելին, ըստ մեզ մարդու ամբողջական զարգացումը, այդ զարգացման անցումային, ճգնաժամային շրջանները քննելիս չի կարելի հիմնվել միայն հոգեբանական ոլորտի վրա և անտեսել կենսաբանական ու սոցիալական ոլորտները, անհրաժեշտ է համակարգային մոտեցում դրսևորել, քանի որ տարիքային փուլերը պայմանավորված են զարգացման ընդհանուր ուղղության փոփոխությամբ, իսկ նման փոփոխությունը վերակառուցումներ է ենթադրում բոլոր ոլորտներում (կենսաբանական, հոգեկան և սոցիալական):

2.4. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Տարիքային պարբերացման սկզբունքների հիմնախնդիրը բազմակողմանի և խորը վերլուծության է ենթարկել Լ. Ս. Վիգոտսկին (43): Նա առանձնացնում է տարիքային պարբերացումների երեք սկզբունք: Առաջինը այլ համակարգերի զարգացման հիման վրա կառուցված դասակարգումներն են. դրանցից են, օրինակ, ռեկապիտուլյացիայի կոնցեպցիայի վրա հիմնվող պարբերացումը, ըստ որի օնտոգենեզը համառոտ կրկնում է մարդկության պատմական զարգացումը (Սթենլի Հոլ): Այս խմբին են պատկանում նաև կրթադաստիարակչական համակարգի հաջորդական էտապների վրա կառուցված դասակարգումները (նախադպրոցական, կրտսեր դպրոցական և այլն): Լ. Վիգոտսկին իրավացիորեն քննադատում է այս մոտեցումը գտնելով, որ այն անտեսում է բուն զարգացման գործընթացը: Ժամանակակից հոգեբանության մեջ մի շարք հեղինակներ պարբերացման այս սկզբունքը հիմնավորված են համարում (64, 110 և ուրիշներ): «Միայն այն պատճառով, որ հասարակությունը դպրոցներ է հիմնում,— գրում է Ա. Վ. Պետրովսկին,— ի հայտ է գալիս դպրոցական տարիքը որպես անձնավորության զարգացման փուլ» (110, էջ 53): Ըստ մեզ ավելի հիմնավորված կարելի է համարել հակառակ պնդումը, այսինքն այն, որ զարգացման տարիքային առանձնահատկություններն են որոշում դաստիարակության և ուսուցման էտապները: Այսպես հիմնվելով միջմշակութային հետազոտությունների վրա է. Էրիքսոնը գրում է. «Բոլոր մշակույթներում երեխաներն այդ շրջանում (կրտսեր դպրոցական տարիքում–Ս. Խ.) սիստեմատիկ կրթություն են ստանում, չնայած...միշտ չէ, որ այդ կրթությունը սովորական դպրոցական կրթության ձևով է իրականացվում» (167, էջ 363): Ըստ մեզ՝ ուսուցումն ու դաստիարակությունը միայն քանակապես կարող են ազդել զարգացման ընթացքի վրա, չեն կարող փոխել զարգացման ուղղությունը, որը տասնյակ հազարավոր տարիների ընթացքում է ձևավորվել:

Լ. Վիգոտսկին երկրորդ խմբի մեջ է դասում այն պարբերացումները, «...որոնք հիմնվում են երեխայի զարգացումն էտապների բաժանելու համար պայմանական չափանիշ հանդիսացող որևէ բնութագրի առանձնացման վրա» (43, էջ 244): Նման պարբերացումները բազմաթիվ են. այսպես, Զ. Ֆրոյդը պարբերացման համար հիմք է ընդունում սեռականության զարգացումը (149), Պ. Բլոնսկին ատամների զարգացման հիման վրա է դասակարգում տարիքները (28), Ժ. Պիաժեի շրջաբաժանումը հիմնված է ինտելեկտի զարգացման վրա (112), Դ. Բ. Էլկոնինը առաջատար գործունեությունների հերթափոխման հիման վրա է դասակարգում տարիքները (166):

Լ. Վիգոտսկին այս կարգի պարբերացումները նախ և առաջ քննադատում է դասակարգման հիմքերի սուբյեկտիվության պատճառով, ինչպես նաև այն բանի համար, որ «...զարգացման ընթացքում փոխվում է ընտրված բնութագրի արժեքը, նշանակությունը, բնորոշ և սիմպտոմատիկ լինելը, կարևորությունը» (43, էջ 245): Այս դասակարգումները, ըստ Վիգոտսկու, զուտ նկարագրական բնույթ ունեն և չեն բացահայտում տարիքի էությունը. Հարկ է նշել նաև, որ նման շրջաբաժանումներն արտացոլում են ընտրված ոլորտի և ոչ թե անձի զարգացումը (դրանով էլ պայմանավորված է այս կարգի պարբերացումների առատությունը. կարելի է վերցնել անձի ցանկացած ենթահամակարգ, հետազոտել զարգացումը և պարբերացում կառուցել). օրինակ Ֆրոյդի պարբերացումն արտացոլում է մարդու սեռային զարգացումը, իսկ Դ. Էլկոնինը ներկայացնում է գործունեության զարգացման փուլերը:

«Մանկան զարգացման շրջաբաժանումների երրորդ խումբը,— գրում է Լ. Վիգոտսկին,— կապված է զուտ սիմպտոմատիկ, նկարագրական սկզբունքից մանկան զարգացման էական առանձնահատկությունների առանձնացմանն անցնելու ձգտման հետ: Սակայն,— շարունակում է նա,— այդ փորձերում ավելի շուտ խնդիրը ճիշտ դրվում է, քան լուծվում» (43, էջ 246): Վիգոտսկին այս կարգի դասակարգումների թվին է դասում Գեզելի պարբերացումը, որը հիմնվում է զարգացման «ներքին ռիթմի ու տեմպի», «ընթացիկ ծավալի» փոփոխությունների վրա (43, էջ 247):

Ինքը Վիգոտսկին, տարիքի էությունն արտացոլող և պարբերացման համար հիմք հանդիսացող էական բնութագիր է համարում «բեկումներն ու շրջադարձերը», ինչպես նաև յուրաքանչյուր տարիքում ի հայտ եկող նորագոյացությունները. ըստ նրա. «Միայն բուն զարգացման ներքին փոփոխությունները, միայն այդ գործընթացի բեկումներն ու շրջադարձերը կարող են կայուն հիմք հանդիսանալ երեխայի անձնավորության տարիք կոչվող գլխավոր էպոխաների որոշման համար»| (43, էջ 247).

Վիգոտսկին առաջարկում է հետևյալ շրջաբաժանումը. ա) նորածնության ճգնաժամ 0–2 ամսական, բ) մանկիկություն 2 ամսականից մեկ տարեկան, գ) 1 տարեկանի ճգնաժամ, դ) վաղ մանկություն 1–3 տարեկան, ե) 3 տարեկանի ճգնաժամ, զ) նախադպրոցական տարիք 3–7 տարեկան, է) 7 տարեկանի ճգնաժամ, ը) դպրոցական տարիք 8–12 տարեկան, թ) 13 տարեկանի ճգնաժամ, ժ) պուբերտատ 14–17 տարեկան, ի) 17 տարեկանի ճգնաժամ:

Ժամանակակից հոգեբանության մեջ տարիքային ճգնաժամերի հիման վրա պարբերացում կատարելու փորձ է արել է. էրիքսոնը: Պետք է ասել, սակայն, որ այս կարգի պարբերացումներն էլ նկարագրական բնույթ են կրում, քանի որ հիմք են ընդունվում տարիքային երևույթները, դրսևորումները և ոչ թե դրանց ծագումնաբանական հիմքերը, պատճառները: Ա. Ա. Ռոզովան հետևյալ կերպ է տարբերակում նկարագրական դասակարգումները երևույթների էության, պատճառների հիման վրա կառուցված դասակարգումներից. «Առաջին էտապում դասակարգումն արտացոլում է առանձին դասերի մեջ ներառնվող...օբյեկտների բազմազան դրսևորումների գոյության փաստն արձանագրող գիտելիքը, երկրորդում՝ վեր է հանվում այդ ձևերի ձևավորման օրենքը, օրենք, որից անհրաժեշտաբար դուրս է բերվում հետազոտվող օբյեկտների տվյալ բազմազանությունը՝ այն պայմանավորող որոշ գործոններից» (124, էջ 52): Այսպիսով ցանկացած պարբերացում, որը հիմնվում է տարիքային փաստերի վրա, իր էությամբ նկարագրական է: Նկարագրական դասակարգումը բնորոշ է գիտության զարգացման սկզբնական էտապներին և ունի որոշակի թերություններ: Նախ նկարագրական դասակարգմամբ ուղղակի արձանագրվում են զարգացման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները, բայց չեն բացատրվում, թե ինչու են տեղի ունենում այդ փոփոխությունները, որն է դրանց իմաստը: Նկարագրական դասակարգումները նաև սուբյեկտիվ բնույթ են կրում, քանի որ պայմանավորված են այն հանգամանքով, թե որ բնութագրերն է հեղինակը տարիքի համար առավել տիպական համարում և պարբերացման համար հիմք ընդունում:

Ինչ վերաբերում է վերը ներկայացված առաջին խմբի տարիքային պարբերացումներին, ապա դրանք չեն կարող դիտվել որպես պատճառների, տարիքների էության վրա հիմնվող դասակարգումներ (ինքը Վիգոտսկին, դրանք որպես այդպիսիք չէր համարում), քանի որ կառուցված են անալոգիայի հիման վրա, այսինքն ենթադրվում է, որ եթե, ասենք, գոյություն ունեն դաստիարակության և ուսուցման աստիճաններ, ապա տարիքային շրջանները պետք է որ համապատասխանեն դրանց:

2.5. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՄԵՋ

Ժամանակակից զարգացման հոգեբանության և ֆիզիոլոգիայի մեջ կուտակված գիտելիքները, կարծում ենք, հնարավորություն են տալիս անցնել տարիքների էությունն արտացոլող դասակարգումների: Երևույթների էության վրա կառուցված դասակարգումներում «...փորձ է արվում բացատրել, հիմնավորել, ինչ–որ բանից օրինաչափորեն դուրս բերել հետազոտվող օբյեկտի ձևերի նման բազմազանությունը» (124, էջ 54): Այս տեսանկյունից անհրաժեշտ է բացահայտել տարիքային փուլի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների, ձևավորվող նորագոյացությունների նշանակությունը, իմաստը, դերը, այն, թե ինչի են հանգեցնում, ինչով են պայմանավորված տարիքային այդ տեղաշարժերը: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր տարիքում տեղի ունեցող յուրահատուկ փոփոխությունները պատահական բնույթ չեն կրում, անկախ չեն միմյանցից, ծագումնաբանական ընդհանուր հիմք ունեն, ուղղված են մի ինչ–որ ընդհանուր խնդրի լուծմանը, և հենց այդ խնդիրն էլ արտացոլում է տարիքային փուլի իմաստը, էությունը, ֆունկցիան: Այլ կերպ ասած տարիքային պարբերացման հարցը կարելի է քննել ֆունկցիոնալ մոտեցման տեսանկյունից և բացահայտել յուրաքանչյուր տարիքի ֆունկցիոնալ նշանակությունը այն վերջնական նպատակը, արդյունքները, որոնց հանգեցնում են տարիքային նորագոյացությունները, այն տարիքային հիմնախնդիրը, որի լուծմանն են ուղղված տվյալ տարիքի զարգացման հիմնական գործընթացները: Այս մոտեցման համաձայն տարիքային փուլը կարելի է որոշել՝ հիմք ընդունելով այն հիմնախնդիրը, որը լուծվում է տվյալ տարիքում ի հայտ եկող մարմնական, հոգեկան և սոցիալական նորագոյացությունների միջոցով: Ըստ որում, այս

դիրքերից նորագոյացությունների ընկալումը և վերլուծությունը հնարավորություն են տալիս բավական հստակ պատկերացում կազմել ինչպես տվյալ տարիքի հիմքում ընկած հիմնախնդրի (հետևաբար նաև տարիքի ֆունկցիոնալ նշանակության), այնպես էլ դրա ակտուալացման և լուծման, այսինքն տարիքային փուլի տևողության մասին.

Նախքան տարիքային հիմնախնդիրներին և դրանց հիման վրա կառուցված պարբերացմանն անցնելը, ներկայացնենք «տարիքային հիմնախնդիր» հասկացության մեր ըմբռնումը և տարբերությունը զարգացման հոգեբանության մեջ լայնորեն կիրառվող «զարգացման խնդիրներ» հասկացությունից (218): Տարիքային խնդիրների կոնցեպցիան, ինչպես արդեն նշել ենք, մշակել է Ռ. Հավիգուրսթը: Հիշեցնենք, որ ըստ հեղինակի զարգացման խնդիրները լիարժեք ձևով զարգանալու և հասարակության մեջ գործելու համար անհրաժեշտ պահանջներ են, որոնք յուրաքանչյուր տարիքային փուլում դրվում են մարդու առաջ իր կամ հասարակության կողմից: Հեղինակը տարիքային խնդիրների շարքին է դասում քայլքի, խոսքի կամ, ասենք, սեռադերային վարքի յուրացումը, ամուսնու ընտրությունը, երեխաների դաստիարակությունը և այլն: Ըստ որոշ հեղինակների. «Այս կոնցեպցիան վերացնում է փուլերի և աստիճանների մասին ուսմունքի անհրաժեշտությունը» (123, էջ 147):

Մեր մոտեցումը միանգամայնայլ է. «տարիքային հիմնախնդիր» կամ «տարիքային ելակետային հիմնախնդիր» ասելով մենք նկատի ունենք կենսասոցիոհոգեբանական (նկատի ունենք այն, որ հիմնախնդիրն ակտուալանում և լուծվում է կենսաբանական, սոցիալական և հոգեբանական մակարդակներում) մի արդյունք, նպատակ (որը կարող է արտացոլվել, օրինակ, հասարակության կրթադաստիարակչական համակարգում կամ անձի մոտիվացիոն ոլորտում), որին միտված է, որին հանգեցնելու է զարգացման գործընթացը: Ըստ որում, «նպատակ» հասկացությունը մենք պայմանական ենք օգտագործում, նկատի չունենք գիտակցական պահը (չնայած անձը կարող է գիտակցել տարիքային հիմնախնդիրը և նպատակաուղղված ձևով լուծել այն): Այս հասկացությամբ մենք ուզում ենք ընդգծել այն, որ զարգացման գործընթացն ուղղված է որոշակի արդյունքի: Այդ արդյունքը կենսաբանորեն ծրագրված է (ժառանգական հիմքեր ունի), արտացոլված է հասարակության տարիքային դիրքորոշումներում և անձի հոգեբանական ոլորտում: Տարիքային նորագոյացու-

թյուններն այդ արդյունքին, նպատակին հասնելու քայլեր են և հաջորդական, փոխպայմանավորված բնույթ ունեն (դրանց հայտնվելը և հաջորդականությունը պատահական չէ). Այս մոտեցման տեսանկյունից խոսքի կամ սեռադերային վարքի յուրացումը քայլեր են տվյալ տարիքային փուլի հիմնախնդրի լուծման ճանապարհին:

Այժմ փորձենք ներկայացնել ելակետային տարիքային հիմնախնդիրների վրա կառուցված մեր պարբերացման ընդհանուր տեսական դրույթներն ու կոնկրետ տարիքների վերլուծությունը:

Նախ, զարգացումը, ինչպես հայտնի է, բազմաբնույթ և հետերոխրոն գործընթաց է, ինչի հետևանքով կարևորվում է զարգացման հիմնական ուղղության և դրա ճյուղավորումների տարբերակման հարցը: Զարգացման հիմնական ուղղությունը կամ մայրուղին (66) արտացոլում է ամբողջ համակարգի զարգացման միտումը, և այդ միտումն ի հայտ է գալիս համակարգի բոլոր հիմնական ենթահամակարգերում, մակարդակներում: Մարդու զարգացման մեջ հիմնական ուղղության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ կենսաբանական, հոգեկան և սոցիալական մակարդակներում տեղի են ունենում նույնատիպ փոփոխություններ (ասենք դեռահասության շրջանում կենսաբանական մակարդակում տեղի է ունենում սեռական հասունացումը, հոգեբանական մակարդակում ակտուալանում է սեռական պահանջմունքը, զգացմունքներ են արթնանում հակառակ սեռի նկատմամբ, ձևավորվում է սեռային ինքնագիտակցությունը, սոցիալական մակարդակում յուրացվում են սեռադերային վարքի նորմերը և այլն), ի հայտ են գալիս նույն բնույթի նորագոյացություններ (այս հանգամանքը սովորաբար հաշվի չի առնվում տարիքային պարբերացումներում). Ըստ այդմ էլ տարիքային հիմնախնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված տարիքային ցիկլերն առանձնացնելիս մենք հաշվի ենք առել ինչպես հոգեկան, այնպես էլ կենսաբանական և սոցիալական փոփոխությունների առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ցիկլում զարգացումը, ընթանալով մի հիմնական ուղղությամբ, ի հայտ է բերում նորագոյացությունների որոշակի համալիր, որի մեջ յուրաքանչյուր նորագոյացություն կապված է մյուսի հետ որպես նույն հիմնախնդրի լուծմանն ուղղված քայլ: Զարգացման ուղղության փոփոխությունը, տարիքային նոր հիմնախնդրի ակտուալացումն իր հետ բերում է նոր տիպի, նոր բնույթի կամ բովանդակության նորա-

գոյացություններ, և հենց նորագոյացությունների բնույթի փոփոխությունն է այն կարևորագույն ցուցիչը, որով որոշվում է զարգացման ուղղության փոփոխությունը. տարիքային նոր հիմնախնդրի և ցիկլի ի հայտ գալը. Հենց այս հանգամանքից ելնելով էլ որոշել ենք տարիքային ցիկլի տևողությունը. սկիզբը որոշել ենք տարիքային հիմնախնդրի լուծմանն ուղղված առաջին նորագոյացությունների ի հայտ գալու հիման վրա (սովորաբար դրանք կենսաբանական բնույթի նորագոյացություններ են), իսկ ավարտը նկատի ունենալով ինչպես տարիքային հիմնախնդրի լուծմանն ուղղված վերջին նորագոյացությունների, այնպես էլ նոր բնույթի նորագոյացությունների ի հայտ գալը: Նշենք նաև, որ մենք օգտագործում ենք «տարիքային ցիկլ» հասկացությունը, քանի որ առանձնացված շրջաններն արտացոլում են տարիքային հիմնախնդիրների լուծման գործընթացն ամբողջությամբ որպես մեկ միավոր, որի մեջ կարելի է առանձնացնել փուլեր և ենթափուլեր, որոնք արտացոլում են հիմնախնդրի լուծման էտապները (օրինակ դեռահասության շրջանում կենսաբանական սեռական հասունացումը տարիքային ցիկլի էտապներից մեկն է):

Ահա այս պատկերացումների հիման վրա էլ կառուցել ենք մեր տարիքային պարբերացումը: Փորձենք ներկայացնել այն:

Մարդու կյանքի հիմնական շրջաններում (մանկություն, դեռահասություն, հասունություն և ծերություն) ի հայտ եկող նորագոյացությունների համակարգերի վերլուծությունը մեզ հանգեցրեց չորս ելակետային տարիքային հիմնախնդիրների և դրանց լուծմանն ուղղված չորս տարիքային ցիկլերի առանձնացմանը՝

Առաջին ցիկլն ընդգրկում է էմբրիոգենեզը և մանկության շրջանը (մինչև 7, 8 տարեկանը): Այդ շրջաններում ի հայտ եկող նորագոյացությունների վերլուծությունը մեզ հանգեցրել է այն եզրակացության, որ զարգացման առաջին հիմնախնդիրը տեսակային հատկությունների ձևավորումն է, և հենց այդ հիմնախնդրի լուծմանն է ուղղված տարիքային առաջին ցիկլը: Ըստ որում, կենսաբանական հատկությունները ձևավորվում են հիմնականում էմբրիոգենեզի ընթացքում, որոշակի օրինաչափություններով. «էմբրիոգենեզի ընթացքում,— գրում է Ի. Ա. Արշավսկին,— սաղմն իր զարգացման մեջ սկզբում արտացոլում է այն գծերը, որոնք բնորոշ են տիպին ընդհանրապես, ապա դասի, կարգի

գծերը և այլն, այսինքն ավելի ընդհանուրից ձևավորվում է պակաս ընդհանուրը ...մինչև, վերջապես, ձևավորվում է այն ամենաբնորոշը, որը հատուկ է համապատասխան տեսակի ներկայացուցիչներին» (22, էջ 45): Հոգեկան, վարքային տեսակային հատկությունները ձևավորվում են հիմնականում հետծննդյան շրջանում: Նախ, կյանքի առաջին ամսվա ընթացքում երեխան հատուկ զգայունություն է դրսևորում մարդկային դեմքերի և ձայների նկատմամբ և արդեն առաջին ամսվա վերջում սկսում է բուռն ձևով հակազդել իր տեսադաշտում հայտնված մարդկանց ժպտում է, ձայներ արձակում, թափահարում ձեռքերը (աշխուժացման համալիր): Այս երևույթները, ըստ էության, չեն կարող այլ բան նշանակել, քան այն, որ երեխան սկսում է ճանաչել իր տեսակը, ընդունել այն, թերևս նաև դասել իրեն այդ տեսակի մեջ (հնարավոր է՝ իմփրինթինգի երևույթը նույնպես տեսակի ճանաչմանն ուղղված յուրահատուկ բնազդային մեխանիզմ է): Չորրորդ ամսից սկսած երեխայի մեջ սկսում է ձևավորվել տեսակային կարևորագույն հատկություններից մեկը խոսքը. որի հիման վրա հետագայում ձևավորվում են տեսակային այլ կարևոր հատկություններ գիտակցությունը, խոսքային մտածողությունը, երեխան հնարավորություն է ստանում յուրացնել մարդկության հասարակական–պատմական փորձը: 1–1,5 տարեկանում երեխան սկսում է տիրապետել մեկ այլ կարևոր հատկության ուղղահայաց քայլվածքին, մանավանդ այս շրջանից սկսած երեխան սկսում է յուրացնել մարդկային վարքի ձևերը: Մոտավորապես 2,5–3 տարեկանում երեխայի մեջ ձևավորվում է ինքնագիտակցությունը, որն այս տարիքում, ինչպես ցույց տվեցին մեր հետազոտությունները, տեսակային բնույթ է կրում (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև):

Այն, որ կյանքի առաջին ցիկլի ֆունկցիոնալ նշանակությունը տեսակային հատկությունների ձևավորումն է, հաստատվում է նաև այլ. կողմնակի փաստերով (ուղղակի փաստերը նրանք են, որ այս շրջանում ձևավորվում են հենց տեսակային հատկությունները): Ասենք հայտնի է, որ եթե մինչև 7–8 տարեկան հասակը երեխան մարդկային հասարակության մեջ չի մեծանում, կորցնում է իր տեսակային հատկությունները յուրացնելով այն կենդանու վարքի ձևերը, որի մոտ մեծացել է (ի դեպ, կենդանիների մոտ էլ նման երևույթների կարելի է հանդիպել. ասենք հայտնի է, որ որոշ տեսակների կենդանիների ծագերը, եթե այլ տեսակի

կենդանիների կամ մարդու մոտ են մեծանում, հետագայում չեն ընդունվում իրենց տեսակի կողմից կամ, ինչպես գիտենք, կենդանիներին հիմնականում փոքր հասակում է հնարավոր վարժեցնել, դրանով իսկ փոխել նրանց տեսակային վարքի որոշ ձևեր):

Մանկության շրջանի դաստիարակչական համակարգը, ինչպես գիտենք, հիմնականում ուղղված է տեսակային հատկությունների (խոսքի, քայլքի) և վարքի ձևերի (ինչպես հագնվել, ուտել և այլն) ուսուցմանը, ինչը վկայում է, որ հասարակական գիտակցության մեջ տարիքային այս շրջանն ընկալվում է որպես տեսակային հատկությունների ձևավորման շրջան: Ի դեպ, մանկության շրջանում կենդանիների «դաստիարակչական» համակարգն էլ նույն ուղղվածությունն ունի: Օրինակ ինչպես ցույց են տալիս թռչունների ծնողական վարքի հետազոտությունները, կենդանիների տեսակային վարքի շատ ձևեր «ուսուցանվում» են ծնողների կողմից ծագերի զարգացման վաղ շրջանում (94, էջ 110–125):

Երեխայի մեջ տեսակային հիմնական հատկությունների ձևավորման գործընթացն ավարտվում է մոտավորապես 7–8 տարեկանում: Մոտ 6 տարեկանում երեխան յուրացնում է բարոյականության հիմնական սկզբունքները (104, 150): Յոթ տարեկանից ձևավորվում է կոնկրետ օպերացիոնալ մտածողությունը: Իհարկե, ըստ Ժ. Պիաժեի, մտածողության զարգացումն ավարտվում է ձևական, տրամաբանական մտածողության ձևավորմամբ, որը սկիզբ է առնում վաղ դեռահասության տարիքից (հետևաբար հենց այդ շրջանը կարելի է համարել տարիքային առաջին ցիկլի ավարտը, եթե նկատի ունենանք, որ ձևական տրամաբանական մտածողությունը նույնպես տեսակային հատկություն է), սակայն, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, ձևական տրամաբանական մտածողությունն ուսուցման արդյունք է, և նույնիսկ կրթություն չունեցող հասուն մարդիկ կարող են մնալ կոնկրետ մտածողության մակարդակի վրա (87): Մյուս կողմից, ռուս հոգեբանների հետազոտությունները (53 և ուրիշներ) վկայում են, որ ձևական տրամաբանական կամ տեսական մտածողությունը կարելի է ձևավորել արդեն 6–7 տարեկանում փոխելով ուսուցման բովանդակությունը և մեթոդները: Հաշվի առնելով նշված հետազոտությունները, ինչպես նաև այն, որ տարիքային երկրորդ ցիկլի առաջին նորագոյացությունները սեռական հասունացման

նշանները, սկսում են ի հայտ գալ հենց 7–9 տարեկանում, կարծում ենք, ավելի ճիշտ է հենց այդ շրջանը դիտել որպես զարգացման առաջին ցիկլի վերջը և անցումը երկրորդ ցիկլին:

Տարիքային հաջորդ հիմնախնդիրը և դրա լուծմանն ուղղված զարգացման ցիկլը (8, 10–18, 20 տարեկանը) կարելի է համարել սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորումը: Այս հասկացությամբ նկատի ունենք այն, որ մարդը կենսաբանական, հոգեկան և սոցիալական առումներով ձևավորվում և կայանում է որպես տվյալ սեռը կրող:

Սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման գործընթացի սկիզբը կարելի է համարել 8–9 տարիքային շրջանը: Այս ցիկլը նույնպես սկսում է կենսաբանական տեղաշարժերով, որոնց առաջին դրսևորումներից են հորմոնալ համակարգերի, մասնավորապես սեռական հորմոնների ակտիվության կտրուկ աճը, որը սկիզբ է առնում մոտ 8 տարեկանից (123 և ուրիշներ): Այս տեղաշարժերն ուղեկցվում են ֆիզիկական աճի և սեռական հասունացման երևույթներով, սկսում են ի հայտ գալ երկրորդային սեռային հատկությունները: Կենսաբանական նորագոյացություններին հաջորդում են (հաճախ զուգահեռաբար են ձևավորվում) հոգեբանական նորագոյացությունները սեռական պահանջմունքը, սեռային ինքնահաստատման ձգտումը, փոխվում է դեռահասների հետաքրքրությունների շրջանակը նրանց սկսում են հետաքրքրել սեռի, սեռային հարաբերությունների, սեռական կյանքի հետ կապված հարցերը:

Իհարկե, ըստ ժամանակակից պատկերացումների, սեռի մասին նախնական ընդհանրացումները, սեռերը տարբերակելը, նախնական սեռային ինքնանույնացումը, սեռադերային դիրքորոշումների ու վարքի ձևավորումը տեղի է ունենում արդեն վաղ մանկության շրջանում (104, 75, 137): Սակայն դա քանակական զարգացում է և հիմնականում պայմանավորված է ուսուցմամբ ու դաստիարակությամբ: «Մեծերը,— գրում է Վ. Ս. Մուխինան,— գիտակցաբար կամ անգիտակցաբար սկսում են ընդունված ստերեոտիպերին համապատասխան սովորեցնել երեխային նրա սեռային դերերը կողմնորոշելով նրան, թե ինչ է նշանակում լինել տղա կամ աղջիկ» (103, էջ 163).

Երեխայի սեռային ակտիվությունը մանկության շրջանում գիտակցված, նպատակաուղղված գործունեություն չէ, երեխան հատուկ ջանքեր

չի թափուն կայանալու որպես համապատասխան սեռի ներկայացուցիչ, իսկ տվյալ հիմնախնդիրը նրա համար հրատապ չէ: Ահա թե ինչպես է այս պահը նկարագրում Լ. Վիգոտսկին. «Սկզբում վարքի ցանկացած բարձրագույն ձև երեխայի կողմից յուրացվում է բացառապես արտաքին կողմից: Օբյեկտիվ տեսանկյունից վարքի այդ ձևն արդեն պարունակում է իր մեջ բարձրագույն ֆունկցիայի բոլոր տարրերը, սակայն սուբյեկտիվորեն, քանի դեռ չի գիտակցվել, երեխայի համար այն հանդես է գալիս որպես վարքի բնական եղանակ: ... Ի վերջո, երկարատև զարգացման գործընթացում, երեխան սկսում է գիտակցել այդ ֆունկցիայի կառուցվածքը, սկսում է կառավարել և ղեկավարել իր ներքին գործառնությունները» (43, էջ 226):

Դեռահասության շրջանում, ինչպես հայտնի է, ինքնագիտակցության «արթնացում» է տեղի ունենում: Ինչո՞ւ պիտի մեկ անգամ «արթնացած» ինքնագիտակցությունը (երեք տարեկանում) նորից «արթնանա». Ըստ մեզ դեռահասության շրջանում տեսակային դիֆուզ ինքնագիտակցության մեջ տարբերակվում է սեռային կողմը դեռահասը սկսում է ընկալել իրեն որպես կին (տղամարդ), այսինքն «արթնանում» է սեռային ինքնագիտակցությունը: Եթե նախորդ տարիքային փուլում երեխան ձգտում էր մեծ դառնալ, և «մեծ» հասկացությունը նրա համար նշանակում էր ուղղակի լիարժեք մարդ, ապա այժմ, ինչպես իրավացիորեն նշում է Ի. Կոնը. «Մեծ դառնալը նշանակում է տղամարդ կամ կին դառնալ...» (75, էջ 219): Իհարկե, մինչև դեռահասության շրջանը երեխայի մեջ առկա են սեռային ինքնագիտակցության առաջնային կողմեր, սակայն դրանք անկայուն են (այդ են վկայում սեռի շրջելիության պատկերացումները երեխայի մեջ), հիմնվում են արտաքին, ձևական հատկությունների վրա և հանդես են գալիս զուտ որպես գիտելիք, այսինքն երեխայի մեջ առկա է սեռային ինքնագիտակցության միայն կոգնիտիվ ասպեկտը (ըստ Մ. Լիսինայի տերմինաբանության). նրան իր սեռի մասին անընդհատ ասում են, վերաբերվում են որպես տվյալ սեռը կրող, սովորեցնում են սեռադերային վարքի նորմերը. սակայն երեխայի մեջ բացակայում է սեռային ինքնագիտակցության աֆեկտիվ կողմը (92): Մ. Լիսինան ինքնագիտակցության կամ ես–կերպարի այս երկու կողմերը բնութագրող վերոնշյալ հասկացությունները հետևյալ կերպ է մեկնաբանում. «Կերպարի (խոսքը սեփական ես–ի կերպարի մասին է–Ս. Խ.)

աֆեկտիվ բաղկացուցչի մեջ ընդգծված է մարդու վերաբերմունքն իր նկատմամբ, իսկ կոգնիտիվ բաղադրիչում սեփական ես–ի մասին պատկերացումներն ու գիտելիքներն են» (92, էջ 216): Ըստ մեզ, ինքնագիտակցության աֆեկտիվ բաղադրիչի մեջ պետք է մտցնել նաև ես–ի զգացողությունը. զգացական ընդհանրացումը (բազմաթիվ զգացողությունների ընդհանրացումը) և, խոսելով այն մասին, որ երեխայի մեջ դեռևս ձևավորված չէ սեռային ինքնագիտակցության աֆեկտիվ բաղադրիչը, նկատի ունենք հենց սեռային ինքնազգացումը սեփական ես–ի որպես տղամարդու կամ կնոջ զգացողությունը: Վերջինս ձևավորվում է կենսաբանական, հոգեկան, սոցիալական սեռային նորագոյացությունների ազդեցությամբ (այնպես, ինչպես մարդը երիտասարդ հասակում չնայած գիտի, որ ինքը մահկանացու է, բայց այնուամենայնիվ, չի զգում դա նրա ինքնագիտակցության մեջ չկա մահկանացուի ինքնագիտակցության աֆեկտիվ կողմը, վերջինս հայտնվում է ավելի ուշ, երբ կուտակվում են նման ընդհանրացման համար անհրաժեշտ կենսաբանական, հոգեկան և սոցիալական նորագոյացությունները ծերության նշանները):

Այս տեսանկյունից լիովին կարելի է համաձայնել հոգեվերլուծության մեջ ընդունված այն տեսակետի հետ, որ երեխան մինչև դեռահասություն բիսեքսուալ էակ է, և չնայած նա գիտի իր սեռային պատկանելությունը, դրսևորում է իր սեռին բնորոշ վարքի ձևեր, ձևավորված է այսպես կոչված սեռային նույնականության միջուկը (137, էջ 337), բայց, այնուամենայնիվ, վերջնական և ամբողջական սեռային ինքնագիտակցության ձևավորումը և բիսեքսուալության հաղթահարումը տեղի են ունենում դեռահասության շրջանում:

Սեռային ինքնագիտակցության ձևավորումը միևնույն ժամանակ նշանակում է, որ զարգացումն ինտերհոգեկան փուլից թևակոխել է ինտրահոգեկան փուլ. եթե մինչև 11, 12–14, 15 տարեկանը երեխայի սեռադերային վարքը ձևավորվում էր ինքնաբուխ ձևով, ինտերհոգեկան մակարդակում երեխան հատուկ, նպատակաուղղված գործունեություն չէր ծավալում կայանալու, ինքնահաստատվելու իր սեռի մեջ, յուրացնելու սեռադերային վարքի նորմերը (ավելի շատ դա արվում էր մեծերի ցուցումով), ապա այժմ պատկերը լիովին փոխվում է՝ դեռահասի համար այդ խնդիրները հրատապ են դառնում, նա հատուկ, նպատակաուղղ-

ված ակտիվություն է ծավալում լուծելու դրանք: Ինչպես և նախորդ շրջանում, այս փուլում նույնպես երեխան սկսում է ակտիվորեն նմանակել մեծերի վարքը, սակայն եթե նախադպրոցական տարիքում մեծերի վարքը նմանակվում էր ընդհանրապես բոլոր կողմերով, ապա այժմ շեշտը դրվում է կանացիության և առնականության կողմերի վրա (ասենք տղաները սկսում են ծխել, խմիչք օգտագործել, աղջիկները շպարվել): Նախորդ շրջանի համեմատությամբ գիտակցականության, ինտելեկտի զարգացման ավելի բարձր մակարդակը դեռահասներին հնարավորություն է տալիս ոչ միայն նմանակել, այլև սովորել սեռադերային վարքի ձևերն ու նորմերը ակտիվորեն հետաքրքրվելով, վերլուծելով դրանք, համապատասխան գրականությունից օգտվելով: Գիտակցականության բարձր մակարդակի շնորհիվ է նաև, որ դեռահասի սեռի հետ կապված ինֆորմացիայի յուրացումը, սեռային ինքնահաստատման գործընթացը ոչ թե խաղի, այլ փորձարարության միջոցով է տեղի ունենում. դեռահասը ոչ թե խաղում, այլ փորձարկում է սեռադերային վարքը (հետազոտությունները վկայում են, որ փորձարարության պիկը վերաբերում է 12–15 տարեկան հասակին):

Հասարակության մեջ նույնպես տարիքային այս փուլն ընկալվում է որպես սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման շրջան: Այսպես, սեռական հասունացմանը զուգահեռ աստիճանաբար փոխվում է երեխայի դաստիարակությունը, այն սկսում է ավելի ու ավելի սեռային ուղղվածություն ստանալ: Ըստ որում, զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ժողովուրդների մեջ այդ փոփոխությունն ավելի ընդգծված ու կտրուկ բնույթ է կրում. որոշակի տարիքում դեռահասներն ուղղակի ձեռնադրվում են որպես տղամարդ կամ կին, որից հետո կտրուկ փոխվում է նրանց դաստիարակության ուղղությունը: Այս հանգամանքն օգնում է կարճ ժամանակահատվածի ընթացքում երեխայի մեջ հստակ պատկերացումներ ձևավորել նրա սեռային պատկանելության, սեռադերային վարքի նորմերի վերաբերյալ, ինչը թերևս մեծ դեր է խաղում այդ հասարակություններում դեռահասության անցգնաժամային ընթացքի, աղեկվատ սեռադերային վարքի ձևավորման գործում (տրանսսեքսուալիզմն այդ հասարակություններում խիստ հազվադեպ երևույթ է): Այս դեպքում երեխան հստակ կոնցեպցիաներ է ստանում սեփական ես–ի որպես սեռային ակտիվության սուբյեկտի մասին, ուրվագծվում են

այդ ակտիվության ձևերը, սեռային հարաբերությունների նորմերը, ինչը նկատելիորեն հեշտացնում է սեռային ինքնագիտակցության ձևավորումը, սեռադերային վարքի յուրացման գործընթացը:

Սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորումը, սեռական հասունացումը, հետևաբար նաև զարգացման երկրորդ ցիկլն ավարտվում է 18–20 տարեկանում: Պատանիները կենսաբանական, հոգեբանական և սոցիալական առումներով սեռահասուն են դառնում (72 և ուրիշներ), ինչն էլ վկայում է, որ զարգացումը նորից փոխում է իր ուղղությունը:

Զարգացման երրորդ ուղղությունն արտաքին կենսաբանական նորագոյացությունների ի հայտ գալով չի սկսում (կենսաբանական համակարգերն ուղղակի շարունակում են զարգանալ), չնայած, որոշ վերապահությամբ, որպես այս տարիքային ցիկլի նորագոյացություններ կարելի է դիտել հղիությունը, երեխայի ծնունդը: Ըստ որում, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, այդ ընթացքում հումորալ, կենսաբանական տեղաշարժեր են տեղի ունենում ոչ միայն մայրերի, այլև հայրերի մեջ. «Երեխա սպասելն արտացոլվում է նաև ապագա հայրերի հորմոնալ մակարդակի վրա: Նրանց մեջ էական փոփոխություն է նկատվում տեստոստերոնի և նույնիսկ պրոլակտինի մակարդակներում. վերջինս պայմանավորում է մայրական բնազդը, կաթնագեղձերի զարգացումը և նորմայում տղամարդկանց մեջ աննշան քանակով է հանդես գալիս» (65, էջ 101): Թերևս, որպես կենսաբանական նորագոյացություն կարող է դիտվել նաև ծնողական բնազդը, պահանջմունքը, որը, անշուշտ, ունի իր ներքին, կենսաբանական մեխանիզմները:

Պետք է ասել, իհարկե, որ զուտ կենսաբանական տեսանկյունից հնարավոր է, որ զարգացման երկրորդ և երրորդ ցիկլերը (ուղղությունները) իրականում մեկ գիծ են ներկայացնում և մեկ ժառանգական ծրագրով են ընթանում, սակայն մարդկային հասարակության մեջ այս երկու ցիկլերն իրենց հոգեբանական և սոցիալական նորագոյացությունների համալիրներով որակապես տարբերվում են, նույնիսկ կենդանիների մեջ այս ցիկլերը երկու տարբեր բնազդային–վարքային մեխանիզմների վրա են հիմնվում: Ինչևէ, կարծում ենք, որ փաստերն ավելի շուտ խոսում են այն մասին, որ 20 տարեկանից հետո զարգացումը փոխում է իր ուղղությունը, և մենք գործ ունենք միանգամայն նոր տարիքային ցիկլի հետ: Ինչ վերաբերում է զարգացման երրորդ ցիկլի հո-

գեբանական և սոցիալական նորագոյացություններին, ապա դրանք կապված են ընտանիք կազմելու, ամուսնական, ծնողական դերերի յուրացման, աշխատանքային կարիերայի հետ, այդ պատճառով էլ այս տարիքային ցիկլը կարելի է դիտել որպես հասարակական ակտիվության սուբյեկտի ձևավորման շրջան: Ռուս գիտնականներ Վ. Սորգունը և Ն. Տկաչևան այս շրջանը պատկերավոր ձևով բնութագրում են որպես քոչվորությունից նստակյաց կյանքի անցնելու շրջան (102):

Եթե դեռահասության շրջանում սեռական պահանջմունքը, զգացմունքները, սեռային ինքնահաստատման մղումը սկսում են ակտուալանալ և խթանել զարգացման գործընթացը, ապա այս շրջանում, ըստ մեզ, որպես զարգացման դրդող ուժ է հանդես գալիս ծնողական պահանջմունքը (կամ բնազդը): Վերջինիս հոգեբանական ասպեկտները դեռևս լավ չեն ուսումնասիրված, նույնիսկ հասկացություններ հարցում տարակարծություններ կան, այդ պատճառով էլ նպատակահարմար ենք համարում համառոտակի անդրադառնալ նշված հարցերին: Այսպես, որոշ հեղինակներ օգտագործում են, օրինակ, «տեսակի պահպանման պահանջմունք» հասկացությունը և դիտում այն որպես սեռական պահանջմունքի բաղադրիչ (107, էջ 101): Ուրիշները ոչ միայն իրարից տարբեր, այլև իրար նկատմամբ հակադիր են համարում սեռական սերը և ծնողական պահանջմունքը «...սեռական սերը և սերնդի շարունակությունը,— գրում է Վ. Սոլովյովը,— իրար նկատմամբ հակադիր հարաբերության մեջ են ...որքան ուժեղ է մեկը, նույնքան թույլ է մյուսը...դրանցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն նշանակությունը և ...մեկի իմաստը չի կարող հանգեցվել մյուսի համար միջոց լինելուն» (133, էջ 493–494): Հետաքրքրական է, որ կենսաբանական մակարդակում, հղիացման հետևանքով տեղի ունեցող հումորալ փոփոխություններն անտագոնիստ են սեռական հումորալ համակարգին. «Այն պահին, երբ ձևավորված սաղմը բլաստոցիտի փուլում, էնդոմետրիայում իմպլանտացիայի է ենթարկվում,— գրում է Ի. Արշավսկին,— սեռական դոմինանտին փոխարինում է հաջորդ ֆազան, որը կարգավորվում է գեստացիոն դոմինանտով (կամ հղիության դոմինանտով), որն անտագոնիստ է սեռական դոմինանտին» (22, էջ 65).

Մեր կարծիքով, սեռական բնազդը (կամ պահանջմունքը, մղումը) չի կարող ոչ նույնացվել ծնողական կամ տեսակի պահպանման բնազդի

հետ, և ոչ էլ երկրորդը կարող է դիտվել որպես առաջինի բաղադրիչ. դրանք երկու տարբեր մոտիվացիոն հիմքեր (պահանջմունքներ, մղումներ, զգացմունքներ և այլն), տարբեր կենսաբանական մեխանիզմներ և վարքային դրսևորումներ ունեցող, նաև տարիքային տարբեր փուլերում ի հայտ եկող իրողություններ են. Միևնույն ժամանակ, ինչպես կենսաբանական կամ հոգեկան տարբեր համակարգերն են փոխպայմանավորված, փոխադարձորեն կապված միմյանց հետ, այնպես էլ այդ երկու համակարգերը փոխպայմանավորված են, դրանք մեկը մյուսին հաջորդող գենետիկական ծրագրեր են: Այլ կերպ ասած դրանք մի շղթայի երկու տարբեր օղակներ են, զարգացման հաջորդական քայլեր, որտեղ առանց նախորդ քայլի հաջորդը չի կարող կատարվել.

Ժամանակակից գիտության մեջ կենդանիների մի շարք տեսակների ծնողական բնազդի դրսևորումները համեմատաբար լավ են ուսումնասիրված: Կենսաբան Բ. Մանթեյֆելը, ամփոփելով այդ կարգի մի շարք հետազոտություններ, տալիս է կենդանիների ծնողական վարքի հետևյալ ընդհանրացված բնութագիրը. «Թռչունների (Aves) և կաթնասունների (Mammalia) դասերում նկատելի է վարքի կտրուկ, թռիչքածև փոփոխություն, որն ուղղված է նոր ծնված սերնդի խնամքին: Այդ դասերի գրեթե բոլոր տեսակներին բնորոշ է իրենց ծագերի խնամքը, դրանով պայմանավորված, ընտանեկան խմբերի ձևավորումը և ... իրենց ծնողների հետ ծագերի բավական երկար ապրելը (տարբեր խմբերում տարբեր տևողությամբ).

Այդ կենդանիների ծնողական վարքը բաղկացած է հետևյալ գործընթացներից. ա) բուն կամ որջ կառուցելու համար տեղի որոնումը, բ) ձվադրման և նորածին ծագերի համար բնի կառուցումը, գ) թռչունների թուխս նստելը, դ) նորածին ծագերի կերակրելը և խնամելը, ե) ընտանեկան խմբերում ծագերի կերակրումը և ուսուցումը, զ) տարբեր թշնամիներից ծագերի պաշտպանությունը» (94, էջ 49): Ըստ որում, որոշ հետազոտություններ վկայում են, որ ծնողական (մայրական) բնազդն ինտենսիվությամբ ամենահզորն է, երկրորդ տեղում ծարավն է, երրորդում սովը, չորրորդ տեղում սեռական բնազդը և վերջում «կողմնորոշման ռեֆլեքսը» (80, էջ 99)

Մարդու մեջ ծնողական բնազդի դրսևորումը, ծնողական պահանջմունքը, զգացմունքները, դրանց տարիքային բնութագրերը, ծնողական

վարքի առանձնահատկությունները չափազանց թույլ են ուսումնասիրված: Մասնավորապես տարիքային հոգեբանության մեջ այս հարցերը հաճախ հանիրավի արհամարհվում են, և չնայած դրանք առավելապես հոգեբանական հիմնախնդիրներ են, այնուամենայնիվ ուսումնասիրվում են հիմնականում այլ գիտությունների կողմից (կենսաբանություն, սոցիոլոգիա, դեմոգրաֆիա և այլն), որի հետևանքով էլ այդ երևույթների հոգեբանական կողմը բավարար չափով չի լուսաբանվում:

Նշված հիմնախնդիրներին հաճախ են անդրադառնում դեմոգրաֆները: Այսպես, քննելով «երեխա ունենալու պահանջմունքի» (ըստ մեզ «ծնողական պահանջմունք» և «երեխա ունենալու պահանջմունք» հասկացությունները նույնական չեն և իրար հետ կապված են ամբողջի և մասի հարաբերությամբ, այսինքն ծնողական պահանջմունքն ավելի լայն է և կարող է դրսևորվել երեխաներ ունենալու, երեխաների մասին հոգ տանելու և այլ պահանջմունքների կամ ցանկությունների ձևով) հարցը նրանք հիմնականում հետևյալ տեսակետներն են արտահայտում. ոմանք այն կարծիքին են, որ նման պահանջմունք մարդու մեջ ընդհանրապես չկա, այն մեկ այլ ֆունդամենտալ պահանջմունքի բավարարման միջոց է: Օրինակ ռուս գիտնական Լ. Դարսկին այդ կապակցությամբ գրում է. «Երեխաները պետք են, որպեսզի բավարարվի մի չափազանց կարևոր պահանջմունք ալտրուիստական հոգատարության, խնամքի օբյեկտ ունենալու պահանջմունքը, սիրո և հոգատարության համար սեփական անձի պիտանի, օգտակար լինելու զգացողության պահանջմունքը» (54, էջ 123): Նման տեսակետը, անշուշտ, հակասում է ժամանակակից գիտության մեջ առկա փաստերին ու պատկերացումներին և, բնականաբար, չի ընդունվում մասնագետների մեծամասնության կողմից (տես, օրինակ 34): Դեմոգրաֆներից շատերը, իհարկե, ընդունում են այդ պահանջմունքի գոյությունը (41, 62): Այսպես, ըստ Վ. Բոյկոյի՝ «. մարդկային հասարակության մեջ ապրող անհատը ցանկացած պատմական հանգամանքներում ռեպրոդուկտիվ վարքի դրդապատճառներ ունի, դրանք միշտ բավականաչափ ուժեղ են, որպեսզի ապահովեն ծնելիության «նորմատիվը»...» (34, էջ 36)· Ինչ վերաբերում է երեխաներ ունենալու պահանջմունքի ծագման հարցին, ապա ոմանք այն կարծիքին են, որ այն էկզոգեն բնույթ ունի: Այսպես, ըստ Բոյկոյի. «Այդ դրդապատճառը (երեխաներ ունենալու–Ս. Խ.) արտաքին

խթանող նախադրյալների վերածումն է ընտանիքում երեխաներ ունենալու գիտակցականն (այս կամ այն չափով) փաստարկների. կարծիքների, արդարացումների, պատճառաբանությունների. դրանք իրենց մեջ հոգեկան էներգիա են կրում և դրդում են երեխաներ ունենալու պահանջմունքի ի հայտ գալը» (34, էջ 42): Օրինակ բերվում են այսպիսի փաստարկներ. «Երեխաներն Աստծուց են» կամ «Բոլորն են երեխաներ ունենում»: Ըստ Բոյկոյի «Նման սոցիոգեն դրդապատճառները համեմատաբար հեշտությամբ, առանց հատուկ քննարկումների են թափանցում գիտակցություն: Երեխաներ ունենալու երևույթի նորմատիվ լինելը համարյա ներշնչվում է կրոնական դոգմաների, ընտանիքի ավանդույթների միջոցով: Այդ մոտիվները գիտակցություն են մտնում ինտերիորիզացիայի ճանապարհով...» (34, էջ 42): Տեսակետներ են արտահայտվում նաև, թե ծնողական պահանջմունքը ծագել է սոցիալ–տնտեսական շահավետության հիման վրա (54): Ոմանք ծնողական պահանջմունքը դիտում են որպես անձնային հատկություն. «Երեխաներ ունենալու պահանջմունքը սոցիալիզացված անհատի սոցիալ–հոգեբանական հատկություն է, որը դրսևորվում է այն բանում, որ առանց երեխաների կամ նրանց որոշակի քանակի առկայության մարդը, որպես անձնավորություն, դժվարություններ է ունենում» (20, էջ 112):

Այսօր լայնորեն տարածված է այն տեսակետը, թե ծնողական պահանջմունքը, վարքը էնդոգեն են, բնազդային հիմքեր ունեն, ժառանգականորեն ծրագրավորված են: Այսպես, ըստ Վ. Ի. Կոզլովի մարդու ծնողական վարքը բնազդային մեխանիզմներով է տեղի ունենում և հիմնվում է մի շարք յուրահատուկ զգացմունքների վրա (հաճույք երեխաների հետ շփվելուց, նրանց խնամելուց և այլն), ըստ որում, դրանք այնքան հստակ չեն, որքան սեռական բնազդի հետ կապված ապրումները (71, էջ 71): Ջ. Բարդվիքը նշում է, որ գոյություն ունի հատուկ ժառանգական, բնազդային հակազդումների համալիր, որը «նախատեսված է» երեխայից ստացած ազդանշաններին պատասխանելու համար (176):

Ռուս գիտնական Ի. Կոնը ավելի հակված է բիոսոցիալական տեսակետին, ըստ նրա. «Սերնդի նկատմամբ ծնողական հոգատարությունը, անկասկած, ունի իր ֆիլոգենետիկական հիմքերը: Ծնողական խնամքի նմուշը, ընդհանուր «պատերնը», ինչպես և ցանկացած այլ կենսաբանական հատկություն, ժառանգականորեն ծրագրավորված է...» (78, էջ

212)։ Միևնույն ժամանակ նա նշում է. «... Որքան էլ ծնողական վարքի ֆիլոգենետիկական նախադրյալներն էական են, այնուամենայնիվ կենսաբանությունը չի բացատրում մարդու ծնողական վարքի յուրահատկությունը, նրա մոտիվացիան և ինստիտուցիոնալիզացիան» (78, էջ 214)։ Ըստ հեղինակի առանց հաշվի առնելու մարդու ծնողական վարքի մշակութային–խորհրդանշային կողմը, հնարավոր չէ բացատրել այն (78, էջ 215)։

Նշված հարցերի կապակցությամբ հետաքրքիր տեսակետ է արտահայտում նաև ռուս գիտնական Յու. Նովոժենովը։ Ըստ նրա. «Մարդու զարգացման մեջ ռեպրոդուկտիվ դիրքորոշումը նույնպես հնագույններից է, սակայն դրա գիտակցումը տեղի է ունեցել, երբ բացահայտվել է սեռական ակտի և երեխա ունենալու միջև եղած կապը։ Մշակույթի զարգացման հետ այն ենթագիտակցությունից տեղափոխվում է գիտակցություն և, մասնավոր սեփականության, սոցիալական հիերարխիայի, դինաստիական ժառանգորդության և ընտանիքի ինստիտուտի ի հայտ գալով, սկսում է գերակայել» (106, էջ 25)։

Որոշ դեմոգրաֆներ փորձում են վերլուծել երեխաներ ունենալու պահանջմունքի բաղկացուցիչ տարրերը, օրինակ Վ. Ելիզարովն այդ պահանջմունքի կառուցվածքում առանձնացնում է ծնողական պահանջմունքը, որոշակի սեռի երեխայի պահանջմունքը, երեխայի հետ շփվելու պահանջմունքը և այլն (62, էջ 97)։

Ծնողական վարքի հիմնախնդիրների մեջ մեծ տեղ է հատկացվում ծնողական դիրքորոշմանը։ Վ. Բոյկոն ծնողական դիրքորոշումը բնութագրում է որպես «...անձնավորության վարքային ակտերի, դատողությունների, գնահատականների և մոտեցումների համալիր, որն արտահայտում է նրա փաստական (վարքային), հուզական և գիտակցական վերաբերմունքը երեխաներ ունենալու հարցում և միջնորդավորում համապատասխան որոշումների կայացումը հաշվի առնելով հասարակական նորմատիվները, ավանդույթները, հետաքրքրությունները և, հատկապես, սեփական պահանջմունքները և հնարավորությունները» (34. էջ 164)։ Վ. Սավինովը քննադատում է այս սահմանումը գտնելով, որ դիրքորոշումը չի կարող վարքային ակտերի համալիր լինել։ Ըստ Սավինովի ծնողական դիրքորոշումն իրենից ներկայացնում է. «. անձնավորության սոցիալ–հոգեբանական հոգեվիճակի որոշակի ուղղվածություն, որը նախորդում է անհրաժեշտ սոցիալական վարքին և բնութագրվում երեխաների ծննդյան նկատմամբ վերաբերմունքով» (128, էջ 72)։ Մոտ տեսակետ է արտահայտում Ա. Անտոնովը. ըստ նրա, «ծնողական դիրքորոշումը երեխայի ծննդյան հետ կապված բոլոր հարցերում այս կամ այն կերպ վարվելու անձնավորության հակվածությունն է» (21, էջ 15)։

Ծնողական վարքի հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում դրդապատճառների հիմնախնդրին, այս ուղղությամբ կատարվել են նաև էմպիրիկական հետազոտություններ (հիմնականում հետազոտվել են երեխաներ ունենալու հարցում մարդկանց տեսակետները, որոնք, բնականաբար, արտացոլում են միայն գիտակցական դրդապատճառները)։ Օրինակ Միչիգանի համալսարանի սոցիալական հետազոտությունների ինստիտուտի հարցումների արդյունքում առանձնացվել են հետևյալ դրդապատճառները. ա) երեխաները նպաստում են ընտանիքի կայունացմանը, բ) երեխաները հաճույք, ուրախություն են պատճառում, նորություն են մտցնում ընտանիքում, գ) երեխաները կյանքի իմաստն են, նրանց միջոցով մարդը շարունակում է իրեն, դ) ծնող դառնալը բարձրացնում է մարդու պատասխանատվությունը, դարձնում նրան հասուն, ե) մեծանալով երեխաներն ավելի շատ բաների կարող են հասնել, քան ծնողները, զ) երեխաներ ունենալը մարդու բարոյական և կրոնական պարտականությունն է, է) տնտեսական առումով ձեռնտու են, ը) երեխաները բարձրացնում են ծնողների հեղինակությունը (ցիտ. ըստ՝ 34, էջ 185)։

Մենք փորձեցինք համառոտ ներկայացնել մարդու ծնողական պահանջմունքի, վարքի վերաբերյալ տեսական պատկերացումները Կարծում ենք սխալված չենք լինի, եթե ասենք, որ հիմնախնդիրը դեռևս հեռու է բավարար չափով հետազոտված լինելուց, ավելին, շատ դեպքերում այն դեռևս գտնվում է հասկացությունների ճշգրտման փուլում։ Նշված հարցերը. իհարկե. անմիջականորեն չեն մտնում մեր հետազոտական ծրագրերի մեջ, մեզ հետաքրքրում են այդ երևույթների տարիքային ասպեկտները, սակայն այնուամենայնիվ նպատակահարմար ենք համարում որոշ հարցերի կապակցությամբ ներկայացնել մեր տեսակետը։ Նախ անդրադառնանք ծնողական վարքի էնդոգեն կամ սոցիալական ծագման հարցին։ Կարծում ենք չի կարելի համաձայնել այն տեսակե-

տին, թե մարդու ծնողական վարքը զուտ սոցիալական ծագում ունի: Իհարկե, մարդկային վարքի ձևերը սոցիալական բնույթ ունեն, գիտակցված ձևով են ընթանում, միևնույն հիմնախնդրի լուծման համար մարդը տարբեր եղանակներ է կիրառում, ընտրություն է կատարում, այսինքն մարդկային վարքը չի կարող դիտվել որպես բնազդային, սակայն, այնուամենայնիվ, վարքի ներքին դրդող ուժերը. «...որոնք ցանկացած վարքային ակտի առաջին խթանն են հանդիսանում» (145, էջ 43), շատ հաճախ ժառանգական մեխանիզմներով են պայմանավորված: Թերևս, մարդը զգայուն է նաև որոշակի ժառանգական մեխանիզմներ ունեցող ազդակների նկատմամբ, որոնք արթնացնում են ներքին խթանող ուժերը՝ ծնողական պահանջմունքը, զգացմունքները, հուզական ապրումները: Վերևում արդեն նշեցինք, որ կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ ծնողական վարքի դեպքում որպես նման արտաքին խթան են հանդիսանում երեխայից եկող ազդանշանները: Առօրյա կյանքից էլ հայտնի է, թե ինչպիսի ուրախություն է առաջ բերում մեծերի մեջ երեխայի արտաքին տեսքը, խոսքը, շարժուձևը, ումանց համար նույն հոտը: Ըստ երևույթին, նույն մեխանիզմն է գործում նաև այն դեպքերում, երբ մարդիկ հատուկ զգայունություն են դրսևորում զանազան փոքր, փափուկ առարկաների, խաղալիքների, կենդանիների (հատկապես ձագերի) նկատմամբ: Ինչ վերաբերում է ծնողական վարքի ներքին դրդող ուժերին, մասնավորապես ծնողական պահանջմունքին, ապա այն, նախ և առաջ, բնութագրվում է երեխաների հետ շփվելու, նրանց սիրելու (համբուրելու, գուրգուրելու, նրանց հետ խաղալու) ցանկությամբ, որի բավարարումից մարդը յուրահատուկ հաճույք, բավարարվածության զգացում է ունենում: Սինհնույն ժամանակ այդ պահանջմունքը դրսևորվում է որպես փոքրի մասին հոգ տանելու, խնամելու, օգնելու, սովորեցնելու, դաստիարակելու ձգտում և նույնպես հաճույք, բավարարվածություն է բերում մարդուն (հիշենք, թե ծնողն ինչպես է ուրախանում, երբ երեխան իր օգնությամբ առաջին քայլերն է անում, բառեր արտասանում): Ինչպես արդեն նշել ենք, որոշ գիտնականներ այն կարծիքին են, թե ծնողական պահանջմունք ընդհանրապես գոյություն չունի, այն ավելի ընդհանուր ալտրուիստական պահանջմունքի դրսևորումն է: Մեր կարծիքով, ճիշտ հակառակ պնդումն ավելի հիմնավոր է. հենց ծնողական պահանջմունքն է, որ տարածվում է (փոխանցման մեխանիզմով) այլ օբյեկտների, մարդկանց վրա և դրսևորվում որպես ալտրուիստական վարք: Այս կապակցությամբ հետաքրքիր տեսակետ է ներկայացնում Վ. Չալիձեն. ըստ նրա այն կենդանիները, որոնք հոգ են տանում իրենց սերնդի համար, ունեն ալտրուիզմի համար պատասխանատու գեներ, սակայն այդ գեներով նախ և առաջ ծնողական վարքն է պայմանավորված (197): Ալտրուիստական վարքն իր ամենավառ արտահայտությունն է գտնում երեխաների, մասնավորապես սեփական երեխաների առնչությամբ: Ալտրուիզմն ուղղվում է հիմնականում թույլ, օգնության կարիք ունեցող օբյեկտներին (մարդկանց, կենդանիներին), և, թերևս, այդ խթանիչները կարևոր դեր են խաղում թե ծնողական և թե ընդհանրապես ալտրուիստական վարքի դրսևորման գործընթացում (իհարկե, ինչպես կենդանական աշխարհում, այնպես էլ մարդկային հասարակության մեջ առկա է այսպես կոչված փոխօգնության վարքը «դու ինձ, ես՝ քեզ» սկզբունքով, որը, ըստ մեզ, չի կարող դիտվել որպես ալտրուիստական, քանի որ հիմնվում է փոխադարձ շահի վրա). այլ կերպ ասած ալտրուիզմն ընտրողաբար է հանդես գալիս և ընտրության հիմքում, ըստ մեզ, ծնողական վարքը խթանող ազդանշաններն են հանդես գալիս: Ի դեպ, կարծում ենք, որ ծնողական պահանջմունքի, վարքի տրանսֆորմացիան կարելի է նկատել մարդկային մի շարք այլ ակտիվությունների մեջ, օրինակ ասենք իշխանության ձգտման, մարդկային խմբերի ղեկավարմանն ուղղված գործունեությունների մեջ (հաճախ ղեկավար–ստորադաս հարաբերությունները ծնող–երեխա հարաբերություններն են հիշեցնում կամ ասենք երկրի ղեկավարն ընկալվում է որպես ժողովրդի հայր. հիշենք ժողովուրդների հայր Ստալինին կամ քուրքերի հայր Աթաթուրքին, ռուսների թագավոր–հայրիկին):

Այժմ անդրադառնանք «ծնողական դիրքորոշում» հասկացությանը: Ծնողական դիրքորոշումը, ինչպես արդեն նշել ենք, ոմանք բնութագրում են որպես «վարքային ակտերի», «դատողությունների», «գնահատականների» համալիր կամ ներկայացնում որպես մարդու վերաբերմունք երեխաներ ունենալու նկատմամբ. Կարծում ենք այստեղ շփոթվում են պատճառը և հետևանքը: Ընդհանրապես, դիրքորոշումը բնութագրվում է որպես այս կամ այն օբյեկտներն ընկալելու և գործելու առնչությամբ սուբյեկտի պատրաստականությունը, նախատրամադրվածությունը (122, էջ 419) կամ հակվածությունը (21): Նման նախատրա-

մադրվածությունը ծնավորվում է ֆիզիկական և հոգեկան հասունության, կյանքի փորձի, կոնկրետ իրավիճակի, երևույթի վերաբերյալ մարդու գիտելիքների և գնահատականների ամբողջության, վերաբերմունքի հիման վրա, այսինքն՝ դիրքորոշումն այդ ամենի հետևանքով ծնավորված սուբյեկտի պատրաստականության վիճակն է: Վերաբերմունքը նույնպես չի կարելի նույնացնել դիրքորոշման հետ (հաճախ գրականության մեջ այս հասկացություններն օգտագործվում են որպես հոմանիշներ). Դրանք, իհարկե, միասնական ծնով են ի հայտ գալիս, սակայն տարբեր իրողություններ են, այդ տարբերությունը նկատելի է, օրինակ, այն դեպքերում, երբ մարդու վերաբերմունքն այս կամ այն երևույթի նկատմամբ չի համապատասխանում նրա գործելու պատրաստականությանը, նախատրամադրվածությանը. օրինակ մեկը կարող է դրական վերաբերմունք ունենալ երեխաներ ունենալու կապակցությամբ, սակայն այդ քայլին դիմելու պատրաստականություն չունենալ:

Ինչ վերաբերում է ծնողական պահանջմունքի ակտուալացման, ծնողական դիրքորոշման (ծնող դառնալու պատրաստականության վիճակի) ծնավորման տարիքային ասպեկտներին, ապա մեր մշակույթում դա տեղի է ունենում սկսած 23, 24 տարեկանից (եթե, իհարկե, մինչ այդ պատահաբար ամուսնացած չեն լինում) և իր գագաթնակետին է հասնում 26–30 տարեկանում: Այս տվյալները հաստատվում են բազմաթիվ հեղինակների հետազոտություններով. Այսպես, ըստ Լ. Չուլկոյի «կանանց ամուսնությունների մեծ տեմպերով աճ է նկատվում 20–24 տարեկանից հետո» (158, էջ 49): Ըստ Ա Վոլկովի «ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց ամուսնությունների հաճախականությունը սկզբում, տարիքի հետ, կտրուկ աճում է, ապա, հասնելով առավելագույնի 25–35 տարեկանում սկսում է դանդաղ նվազել...» (42, էջ 102): Հետաքրքրական է, որ տարբեր ժամանակաշրջաններում զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող ժողովուրդների մեջ, տարբեր մշակույթներում հենց 25–ի շրջանն է համարվել լավագույնն ամուսնության համար (115, 151, 158): Այսպես, Եվրոպայում, 17–18–րդ դարերում ամուսնության միջին տարիքը (թե՛ տղամարդկանց, թե կանանց) 25–ի շրջանն է եղել (151, էջ 31): Նույնիսկ Պլատոնի օրենքներում կարելի է հանդիպել դրույթի, որ տղամարդը պետք է ամուսնանա 25–ի շրջանում, 35–ից ոչ ուշ: Տարիքային–էթնոգրաֆիական հետազոտությունները վկայում են,

որ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող, տարիքային չերտավորման վրա կառուցված հասարակություններում ամուսնության և երեխաներ ունենալու համար սահմանվում է մոտ 24–25 տարիքային շրջանը: Այսպես, Եթովպիայի Գալա ցեղի տարիքային համակարգում 16–24 տարեկաններին թույլատրվում է ամուսնանալ, սակայն արգելվում է երեխաներ ունենալ, իսկ Տանզանիայում բնակվող Նյուկյուս ժողովրդի մեջ ամուսնությունները սկսում են 25 տարեկանից (35, էջ 54–56):

Ամուսնության տարիքը, իհարկե, պայմանավորված է անհատական, սեռային, մշակութային, ազգային, սոցիալական, տնտեսական, պատմական բազմաբնույթ գործոններով, սակայն ներկայացված տվյալներն այնուամենայնիվ վկայում են, որ ամուսնության համար կրիտիկական է հենց 25 տարեկանի շրջանը: Նման սենզիտիվությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հանգամանքներով: Ներքին հանգամանքներից կարելի է նշել ֆիզիկական և հոգեկան զարգացման, հասունացման այնպիսի մակարդակը, որը երիտասարդի մեջ ընտանիք կազմելուն, ծնող դառնալուն պատրաստ լինելու զգացողություն է առաջ բերում: Դրա հետ սերտորեն կապված է ծնողական պահանջմունքի զարգացումը, ակտուալացումը, ուժգնացումը. Ըստ որում, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները (դրանք մենք կներկայացնենք ավելի ուշ), մինչև 24, 25 տարեկանը երեխա ունենալու ցանկությունը և պատրաստակամությունը հազվադեպ երևույթներ են այդ ցանկությունը սկսում է ի հայտ գալ 24, 25 տարեկանից և իր գագաթին է հասնում 27–30 տարեկանում: Հենց այս շրջանում էլ շատ երիտասարդների մեջ սկսում է ի հայտ գալ սոցիալական դիրքի փոփոխության, ընտանիքավոր մարդու կարգավիճակին անցնելու ցանկություն, ամուսնանալու ժամանակը լինելու զգացողություն: Արտաքին հանգամանքներից կարելի է նշել ամուսնության տարիքի վերաբերյալ հասարակական կարծիքը և դիրքորոշումները. մոտավորապես 25–ի շրջանում ամուսնությունները խրախուսվում են, այդ տարիքից սկսած հասարակությունը երիտասարդների առջև ամուսնանալու հարց է դնում: Մեծ դեր է խաղում նաև հասակակիցների ամուսնանալու հանգամանքը և այլն:

Այժմ անդրադառնանք տարիքային այս շրջանի մյուս կարևոր բնութագրին՝ աշխատանքային գործունեության (հոգեբանության մեջ ըն-

դունված է, որ աշխատանքային գործունեությունը հենց այս տարիքում է առաջատար դառնում 102): Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները (113), մասնագիտական որոնումները, ընտրված մասնագիտության առնչությամբ կասկածները շարունակվում են մինչև 25–30 տարեկանը, որից հետո կայունացում է տեղի ունենում: Ըստ որոշ հեղինակների 30–ից հետո «ընտանեկան երջանկությունը հաճախ կորցնում է իր հմայքը, և բոլոր ուժերը, ասես, փոխհատուցման նպատակով, ներդրվում են աշխատանքի մեջ: Մարդը ձգտում է բարձունքների հասնել իր մասնագիտության մեջ և այդ տարիներին համառորեն ու արդյունավետ աշխատում է, սակայն ինչի էլ հասնում է, նրան անբավարար է թվում» (46, էջ 135):

Աշխատանքային գործունեության հիմքում ընկած պահանջմունքների, դրդապատճառների, դիրքորոշումների հիմնահարցերը հիմնականում հետազոտության են ենթարկվում աշխատանքի հոգեբանության շրջանակներում (ըստ որում, այդ հետազոտությունները սկիզբ են առել դեռևս դարասկզբին 156, էջ 90): Փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել այդ հետազոտությունները. նախ անդրադառնանք աշխատանքային պահանջմունքի հիմնահարցին: Այս առնչությամբ առաջ են քաշվել մի շարք տեսակետներ: Ոմանք աշխատանքային պահանջմունքը դիտում են որպես ինքնուրույն իրողություն, որի յուրահատկությունը նրա սինթետիկ բնույթն է: Այսպես՝ Վ. Դ. Շադրիկովն առանձնացնում է նյութական, հոգևոր և սոցիալական պահանջմունքների տեսակները՝ միևնույն ժամանակ նշելով, որ «Նշվածների հետ միասին գոյություն ունեն պահանջմունքներ, որոնք սինթետիկ բնույթ ունեն և իրենց մեջ ընդգրկում են հոգևոր, նյութական և սոցիալական պահանջմունքների տարրեր: Առաջին հերթին դրանց թվին կարելի է դասել աշխատանքային պահանջմունքը» (159, էջ 184):

Այլ հեղինակներ, օրինակ՝ հումանիստական հոգեբանության ներկայացուցիչները, աշխատանքային գործունեությունը բխեցնում են մարդու էությունից, որի կարևոր բնութագրերից են, ըստ նրանց, ստեղծելու, ակտիվորեն գործելու, նորանոր խնդիրներ իր առջև դնելու և հաղթահարելու, պայքարելու ձգտումները (156, էջ 42–45): Հետաքրքրական տեսակետ է արտահայտում նաև Կ. Պլատոնովը: Ըստ նրա «հանգստի պահանջմունքը լրացվում է պարբերաբար ի հայտ եկող շարժման պահանջմունքով, որը շուտով դառնում է խաղալու և, վերջապես, աշխատելու պահանջմունք» (116, էջ 75): Ըստ Դ. Չարկվիանիի «...երբ խոսքը վերաբերում է մարդու աշխատանքային ակտիվության ոլորտի պահանջմունքների հիմնախնդրին, ապա սկզբունքային է հանդիսանում այն դրույթը, որ աշխատողը աշխատանքային ակտիվության միջոցով բավարարում է տարբեր տեսակի պահանջմունքներ» (154, էջ 9): Այդ պահանջմունքների շարքը կարելի է սկսել նյութականից և վերջացնել բարձրագույն հոգևոր պահանջմունքներով, ինչպիսիք են ինքնառեալիզացիան, ինքնաակտուալացումը, ստեղծագործելու պահանջմունքը և այլն: Կենցաղային գիտակցության մեջ, ինչպես նաև մի շարք գիտական աշխատություններում, լայնորեն տարածված է աշխատանքի միջոցով նյութական պահանջմունքների բավարարման գաղափարը: Իհարկե, կասկած չի հարուցում այն, որ աշխատանքի արդյունքների, վարձատրության միջոցով մարդը բավարարում է բազմաթիվ նյութական պահանջմունքներ, սակայն բանն այն է, որ եթե նույնիսկ մարդու նյութական պահանջմունքները լիարժեքորեն բավարարված են լինում, կամ էլ մարդն իր աշխատանքի դիմաց չի վարձատրվում կամ էլ այնքան չնչին վարձատրություն է ստանում, որ ի վիճակի չի դրանով պահել իր գոյությունը, այնուամենայնիվ շարունակում է աշխատել: Թերևս, դա է պատճառը, որ շատ հեղինակներ մարդու աշխատանքային գործունեության հիմքում դնում են սոցիալական և հոգևոր պահանջմունքները: Օրինակ ըստ է. Մեյսի աշխատանքի հիմքում ընկած է իր նմանների հետ մարդու կոոպերացիայի պահանջմունքը (ցիտ. ըստ՝ 156, էջ 32): Լայն տարածում ունի այն տեսակետը, որ աշխատանքի միջոցով բավարարվում են ինքնառեալիզացիայի, ինքնաակտուալիզացիայի պահանջմունքները: Դեռևս Վ. Լենինն է նշել, որ «այդ հասկացությունը (= մարդ) ինքն իրեն ռեալիզացնելու ձգտումն է, օբյեկտիվ աշխարհում իրեն հենց իրենով օբյեկտիվություն տալը և իրականացնելը (կատարելը)» (86, էջ 194): Արևմուտքում աշխատանքային պահանջմունքը վերլուծելիս հաճախ հիմք է ընդունվում Ա. Մասլոուի մարդու մոտիվացիոն համակարգի տեսությունը, և ըստ այդմ աշխատանքի ձգտումը բացատրվում է ինքնաակտուալիզացիայի պահանջմունքով: Ըստ որում, փորձեր են արվում նաև էմպիրիկական ճանապարհով հիմնավորել այս տեսակետը: Այսպես, Ֆ. Հերցբերգը, հետազոտության ենթարկելով աշխատանքից

դուված է, որ աշխատանքային գործունեությունը հենց այս տարիքում է առաջատար դառնում՝ 102). Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները (113), մասնագիտական որոնումները, ընտրված մասնագիտության առնչությամբ կասկածները շարունակվում են մինչև 25–30 տարեկանը, որից հետո կայունացում է տեղի ունենում: Ըստ որոշ հեղինակների 30–ից հետո «ընտանեկան երջանկությունը հաճախ կորցնում է իր հմայքը, և բոլոր ուժերը, ասես, փոխհատուցման նպատակով, ներդրվում են աշխատանքի մեջ: Մարդը ձգտում է բարձունքների հասնել իր մասնագիտության մեջ և այդ տարիներին համառորեն ու արդյունավետ աշխատում է, սակայն ինչի էլ հասնում է, նրան անբավարար է թվում» (46, էջ 135):

Աշխատանքային գործունեության հիմքում ընկած պահանջմունքների, դրդապատճառների, դիրքորոշումների հիմնահարցերը հիմնականում հետազոտության են ենթարկվում աշխատանքի հոգեբանության շրջանակներում (ըստ որում, այդ հետազոտությունները սկիզբ են առել դեռևս դարասկզբին՝ 156, էջ 90)՝ Փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել այդ հետազոտությունները. նախ անդրադառնանք աշխատանքային պահանջմունքի հիմնահարցին: Այս առնչությամբ առաջ են քաշվել մի շարք տեսակետներ: Ոմանք աշխատանքային պահանջմունքը դիտում են որպես ինքնուրույն իրողություն, որի յուրահատկությունը նրա սինթետիկ բնույթն է: Այսպես Վ. Դ. Շադրիկովն առանձնացնում է նյութական, հոգևոր և սոցիալական պահանջմունքների տեսակները՝ միևնույն ժամանակ նշելով, որ «Նշվածների հետ միասին գոյություն ունեն պահանջմունքներ, որոնք սինթետիկ բնույթ ունեն և իրենց մեջ ընդգրկում են հոգևոր, նյութական և սոցիալական պահանջմունքների տարրեր: Առաջին հերթին դրանց թվին կարելի է դասել աշխատանքային պահանջմունքը» (159, էջ 184):

Այլ հեղինակներ, օրինակ՝ հումանիստական հոգեբանության ներկայացուցիչները, աշխատանքային գործունեությունը բխեցնում են մարդու էությունից, որի կարևոր բնութագրերից են, ըստ նրանց, ստեղծելու, ակտիվորեն գործելու, նորանոր խնդիրներ իր առջև դնելու և հաղթահարելու, պայքարելու ձգտումները (156, էջ 42–45): Հետաքրքրական տեսակետ է արտահայտում նաև Կ. Պլատոնովը: Ըստ նրա «հանգստի պահանջմունքը լրացվում է պարբերաբար ի հայտ եկող շարժման պահանջմունքով, որը շուտով դառնում է խաղալու և, վերջապես, աշխատելու պահանջմունք» (116, էջ 75): Ըստ Դ. Չարկվիանիի «...երբ խոսքը վերաբերում է մարդու աշխատանքային ակտիվության ոլորտի պահանջմունքների հիմնախնդրին, ապա սկզբունքային է հանդիսանում այն դրույթը, որ աշխատողը աշխատանքային ակտիվության միջոցով բավարարում է տարբեր տեսակի պահանջմունքներ» (154, էջ 9): Այդ պահանջմունքների շարքը կարելի է սկսել նյութականից և վերջացնել բարձրագույն հոգևոր պահանջմունքներով, ինչպիսիք են ինքնառեալիզացիան, ինքնաակտուալացումը, ստեղծագործելու պահանջմունքը և այլն: Կենցաղային գիտակցության մեջ, ինչպես նաև մի շարք գիտական աշխատություններում, լայնորեն տարածված է աշխատանքի միջոցով նյութական պահանջմունքների բավարարման գաղափարը. Իհարկե, կասկած չի հարուցում այն, որ աշխատանքի արդյունքների, վարձատրության միջոցով մարդը բավարարում է բազմաթիվ նյութական պահանջմունքներ, սակայն բանն այն է, որ եթե նույնիսկ մարդու նյութական պահանջմունքները լիարժեքորեն բավարարված են լինում, կամ էլ մարդն իր աշխատանքի դիմաց չի վարձատրվում կամ էլ այնքան չնչին վարձատրություն է ստանում, որ ի վիճակի չի դրանով պահել իր գոյությունը, այնուամենայնիվ շարունակում է աշխատել: Թերևս, դա է պատճառը, որ շատ հեղինակներ մարդու աշխատանքային գործունեության հիմքում դնում են սոցիալական և հոգևոր պահանջմունքները՝ Օրինակ ըստ է. Մեյսի աշխատանքի հիմքում ընկած է իր նմանների հետ մարդու կոոպերացիայի պահանջմունքը (ցիտ. ըստ 156, էջ 32): Լայն տարածում ունի այն տեսակետը, որ աշխատանքի միջոցով բավարարվում են ինքնառեալիզացիայի, ինքնաակտուալիզացիայի պահանջմունքները: Դեռևս Վ. Լենինն է նշել, որ «այդ հասկացությունը (= մարդ) ինքն իրեն ռեալիզացնելու ձգտումն է, օբյեկտիվ աշխարհում իրեն հենց իրենով օբյեկտիվություն տալը և իրականացնելը (կատարելը)» (86, էջ 194): Արևմուտքում աշխատանքային պահանջմունքը վերլուծելիս հաճախ հիմք է ընդունվում Ա. Մասլոուի մարդու մոտիվացիոն համակարգի տեսությունը, և ըստ այդմ աշխատանքի ձգտումը բացատրվում է ինքնաակտուալիզացիայի պահանջմունքով: Ըստ որում, փորձեր են արվում նաև էմպիրիկական ճանապարհով հիմնավորել այս տեսակետը: Այսպես, Ֆ. Հերցբերգը, հետազոտության ենթարկելով աշխատանքից

տարբեր մասնագետների բավարարված կամ չբավարարված լինելու հանգամանքը, բացահայտել է, որ մարդն աշխատանքից բավարարված է զգում այն դեպքում, երբ հասնում է իր նպատակներին, ճանաչման է արժանանում, մասնագիտական աճի հնարավորություն է ունենում, իսկ լավ աշխատանքային պայմանները, ադեկվատ աշխատավարձը և նորմալ աշխատանքային պայմաններն ուղղակի հանում են աշխատանքից չբավարարված լինելու զգացումը, բայց իսկական բավարարվածություն չեն բերում (ցիտ. ըստ 156, էջ 59–60). Այս տվյալներից ելնելով (դրանք հաստատվել են նաև այլ հեղինակների հետազոտություններով)՝ հեղինակն աշխատանքի գլխավոր դրդապատճառն է համարում ինքնառեալիզացիայի, ինքնաակտուալիզացիայի պահանջմունքը: Էքզիստենցիալ հոգեբանության մեջ նշված պահանջմունքների հետ միասին կարևորվում է նաև կյանքի իմաստավորման պահանջմունքը, որի բավարարման կարևորագույն միջոցներից է համարվում սիրած աշխատանք ունենալը (Վ. Ֆրանկլ):

Կարծում ենք հետաքրքիր մոտեցում է դրսևորում նաև է. էրիքսոնը. հասունության շրջանի ճգնաժամերից մեկը նա կապում է գեներատիվության կամ ստագնացիայի ծնավորման հետ: Ըստ որում, «գեներատիվություն» հասկացությամբ նա միավորում է ինչպես ծնողական պահանջմունքը, այնպես էլ կյանքը դասավորելու ձգտումը. «...Գեներատիվությունը նախ և առաջ կյանքը դասավորելու շահագրգռվածությունն է և նոր սերնդի համար հոգ տանելը» (167, էջ 374): Այդ ճգնաժամի էրիքսոնի ներկայացրած բնութագրերը վկայում են, որ հեղինակը, «կյանքը դասավորել» ասելով, նախ և առաջ նկատի ունի աշխատանքային ակտիվությունը, այսինքն հեղինակը մարդու կենսաբանական (սերնդի շարունակությունը), նյութական և հոգևոր ստեղծագործության ձգտումները միավորում է «գեներատիվություն» հասկացության մեջ: Ի վերջո, թե ինքնառեալիզացիան, ինքնաակտուալացումը, թե նյութական բարիքներ ստեղծելուն ուղղված ակտիվությունը և, ընդհանրապես, աշխատանքն ինքնին ստեղծման գործընթացներ են: Մինչև հասունության շրջանը անձնավորությունը կարծես ստեղծվում է, ձնավորվում, ապա ինքն է սկսում ստեղծել ընտանիք, երեխաներ, նյութական և հոգևոր բարիքներ: Այս տեսանկյունից, ստեղծելը կարող է դիտվել որպես ֆունդամենտալ պահանջմունք, որը բավարարվում է մի կողմից ընտանեկան,

մյուս կողմից աշխատանքային ակտիվությամբ (այս տեսանկյունից «գեներատիվություն» հասկացությունը բավական խորությամբ արտացոլում է տարիքային այս ցիկլի էությունը): Հետաքրքրական է, որ անցյալի որոշ հոգեբաններ ստեղծումը դիտել են որպես մարդկային բնազդ: Այսպես, ըստ Լ. Ջեմսոնի. «Ներառնված լինելով սովորույթների համակարգում ստեղծագործելու բնազդը խթան է հանդիսանում ինչ–որ օգտակար կամ գեղեցիկ բան ստեղծելու համար» (55, էջ 170):

Այսպիսով տարբեր հեղինակներ աշխատանքային գործունեության հիմքում տարբեր պահանջմունքներ են առանձնացնում, և դա հասկանալի է, քանի որ տարբեր մարդիկ աշխատանքով, իսկապես, տարբեր պահանջմունքներ են բավարարում (մեկը զուտ նյութական դրդապատճառներով է աշխատում, երկրորդն իր էսթետիկական պահանջմունքներն է բավարարում աշխատանքով, երրորդը փառքի է ձգտում և այլն): Եթե աշխատանքային գործունեությանը զուտ մեխանիկական–էներգետիկ տեսանկյունից ենք մոտենում, ստացվում է, որ մարդն ուղղակի գործելու, էներգիա ծախսելու համար է աշխատում (Կ. Պլատոնով): Իսկ եթե արդյունքի տեսանկյունից ենք քննում հարցը, ապա հաշվի առնելով այն, որ աշխատանքի միջոցով ստեղծվում են նյութական և հոգևոր բարիքներ, ստեղծումն է հանդես գալիս որպես այն հիմնական մղումը, որը դրդում է մարդուն աշխատել Ըստ որում, ինքնառեալիզացիայի կամ ինքնաակտուալիզացիայի ձգտումը կարելի է ածանցյալ համարել ստեղծման պահանջմունքից, քանի որ անհիմաստ է ինքնանպատակ ինքնառեալիզացիան կամ ինքնաակտուալացումը: Այս տեսանկյունից լիովին կարելի է համաձայնել Վ. Ֆրանկլի այն մտքի հետ, որ «Այնպես ինչպես երջանկությունը, ինքնաակտուալիզացիան միայն իմաստի իրականացման արդյունք, հետևանք կարող է լինել: Միայն այնքանով է մարդն իրականացնում ինքն իրեն, որքանով նրան հաջողվում է իրականացնել այն իմաստը, որ գտնում է արտաքին աշխարհում» (148, էջ 58–59): Ըստ մեզ ստեղծումը նույնպես ինքնանպատակ չի կարող լինել: Մարդը ստեղծում է նյութական և հոգևոր բարիքներ, որպեսզի բավարարի իր նյութական և հոգևոր պահանջմունքները այնպես ինչպես ինքնառեալիզացիան ստեղծման գործընթացի կողմնակի արդյունք է, նույն ձևով էլ ստեղծումը միջոց է ինչ–որ պահանջմունքներ բավարարելու համար:

Այս փաստերից մենք տեսնում ենք մարդու պահանջմունքները ոչ միայն զուտ անհատական, ես ի դիրքերից, այլև մարդ–հասարակություն հարաբերության տեսանկյունից վերլուծելու մեջ: Մարդու գոյատևման պայմանը հասարակության գոյատևումն է և հակառակը. և մարդու վարքի բազմաթիվ ձևերն ու դրսևոր պահանջմունքներն ուղղված են ոչ միայն սեփական գոյատևմանն ու զարգացմանը (կենսաբանական առումով տեսակի պահպանմանը): Այստեղ, ըստ էության, գործում է մի յուրահատուկ սկզբունք, այն է «հանուն ինձ ուրիշի համար», այսինքն շատ դեպքերում սեփական պահանջմունքի բավարարմանն ուղղված մարդու ակտիվությունը, որի արդյունքում նա բարեհարմարություն, բավարարվածություն, հաճույք է զգում, իրականում ուղղված է ուրիշի պահանջմունքի բավարարմանը, և այդ ուրիշի պահանջմունքի բավարարվածության հետևանքով է բավարարվում մարդու պահանջմունքը: Այլ կերպ ասած մարդու պահանջմունքների համակարգում առկա է մարդ–մարդիկ դիալեկտիկական միասնությունը, որը չի կարելի անտեսել մարդու պահանջմունքների հիմնախնդիրը վերլուծելիս: Այս տեսանկյունից մարդու պահանջմունքները կարելի է դասակարգել ըստ այն բանի, թե դրանք ուղղված են առավելապես սեփական ես–ի՞, թե՞ այլ մարդկանց հիմնախնդիրների լուծելուն. այսինքն մարդն առավելապես վերցնո՞ւմ է կյանքից, մարդկանցից, թե՞ տալիս: Սեփական ես–ի հիմնախնդիրների լուծմանն ուղղված պահանջմունքների շարքին կարելի է դասել, օրինակ, օրգանիզմի հոմեոստազիսի պահպանմանն ուղղված պահանջմունքները (սննդի պահանջմունքը, ծարավը և այլն): Կարելի է առանձնացնել պահանջմունքներ, որոնք հավասարապես լուծում են սեփական ես–ի և ուրիշների հիմնախնդիրները, օրինակ շփման պահանջմունքը: Եվ վերջապես կան պահանջմունքներ, որոնք առավելապես ուղղված են ուրիշի հիմնախնդիրների լուծմանը, դրանցից են ծնողական պահանջմունքը, աշխատանքը: Աշխատանքի մեջ «ուրիշի համար հանուն ինձ» սկզբունքն առավել ցայտուն է դրսևորվում: Դա նախ և առաջ պայմանավորված է աշխատանքի սոցիալական բնույթով, այսինքն այն բանով, որ աշխատանքով մարդը ոչ թե անմիջականորեն բավարարում է իր պահանջմունքները, այլ ստեղծում է բարիքներ (կամ իրականացնում ծառայություններ), որոնց կարիքն ունեն ուրիշները.

հասարակությունը (այն դեպքերում, երբ մարդն անմիջականորեն իր պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեություն է իրականացնում, ասենք իր համար սնունդ է պատրաստում, ապա սույնիսկ կենցաղային գիտակցության մեջ դա չի դիտվում որպես աշխատանք): Այլ կերպ ասած աշխատանքի գլխավոր նպատակն է ստեղծել ինչ–որ բան կամ մատուցել ինչ–որ ծառայություն, որը պետք է ուրիշին այլ մարդկանց, հասարակությանը. Այդ գործունեությունը գնահատվում, վարձատրվում է ուրիշի կողմից, և այդ վարձատրության միջոցով էլ մարդը բավարարում է իր անհատական պահանջմունքները: Թերևս, հենց սրա հանգամանքի հիման վրա էլ Բ. Անանևը բնութագրում է անձնավորությանը որպես «... հասարակության, այլ մարդկանց համար նյութական և հոգևոր բարիքներ արտադրող» (18. էջ 175): Միևնույն ժամանակ, նա գտնում է, որ «... աշխատանքային գործունեության վերջն անխուսափելիորեն դառնում է նաև մարդու կյանքի վերջը որպես մարդու և աշխարհի միջև քաքնված կամ բացահայտ կոնֆլիկտի ողբերգական հանգուցալուծում» (18. էջ 176).

Աշխատանքի պահանջմունքի էությունն ավելի հստակ է ուրվագծվում, երբ աշխատանքային գործունեությունը վերլուծում ենք անձնավորության պահանջմունքների դինամիկայի ն. դրա հետ սերտորեն կապված, մարդու անձնային զարգացման տեսանկյուններից (մենք տարբերակում ենք մարդու անձնային զարգացումը տարրքային զարգացումից. վերջինս ժառանգական մեխանիզմներով և հասարակության կողմից ուրվագծված մարդու զարգացման մոդելով տերի ունեցող. օրինաչափորեն ընթացող բնական զարդացումն է, իսկ առաջինը ինքնագիտակցության, աշխարհի մասին կոնցեպցիայի, անձնային հատկությունների և պահանջմունքների զարգացումը, հաստատացումն է, մարդու իմաստնացումը): Նման վերլուծության համար կարելի է հիմք ընդունել Ա. Մասլոուի պահանջմունքների հիերարխիայի և դինամիկայի կոնցեպցիան (որոշ վերապահումներով ու մոդիֆիկացիաներով): Հիշեցնենք, որ Մասլոուն պահանջմունքները դասակարգում է հետևյալ հիերարխիայով ա) ֆիզիոլոգիական պահանջմունքներ, բ) ինքնապահպանության պահանջմունքներ գ) սիրո և ընկերության պահանջմունքներ, դ) հարգելու, ընդունվելու պահանջմունքներ ե) ինքնաակտուալացում: Իհարկե, կարելի է վիճելի համարել թե, որոշ հարցերի մեջ ներառ-

ված պահանջմունքները և քև հիերարխիայի մեջ իմքերի հաջորդականությունը, սակայն անվիճելի են պահանջմունքների դինամիկային վերաբերող դրույթները. օրինակ այն, որ ստորին մակարդակի պահանջմունքների բավարարումից հետո մարդն անցնում է ավելի բարձր կարգի պահանջմունքների բավարարմանը: Ըստ Մասլոուի «եթե հացը չի բավականացնում, մարդը կարող է միևնույն հացի համար ապրել: Բայց ի՞նչ է տեղի ունենում մարդու ցանկությունների հետ, երբ բավականաչափ հաց կա, երբ ստամոքսը միշտ կուշտ է: Սկսվում են հայտ են գալիս և սկսում են գերակայել այլ, ավելի բարձրակարգ պահանջմունքներ: Երբ դրանք էլ են բավարարվում, հայտ են գալիս նոր, ավելի բարձրակարգ պահանջմունքներ և այդպես շարունակ» (232, էջ 38):

Աշխատանքային գործունեությամբ մարդը Մասլոուի նշած գրեթե բոլոր պահանջմունքները բավարարում է, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ աշխատանքը մարդու համար վեր է ածվում պահանջմունքի: Օրինակ այն դեպքերում, երբ մարդը ստեղծված հանգամանքների կամ իր անձնային զարգացման մակարդակի հետևանքով աշխատում է զուտ իր հանապազօրյա հացի համար, ապա աշխատանքն այս դեպքում հանդես չի գալիս որպես պահանջմունք. մարդը կդադարեցնի նման աշխատանքը, եթե ստանա այդ հանապազօրյա հացը. Աշխատանքը պահանջմունքի է վերածվում այն դեպքում, երբ մարդը հաճույք է ստանում բուն աշխատանքային գործընթացից և դրա արդյունքներից: Այս դեպքում մարդու պահանջմունքը, նպատակը և միջոցները համընկնում են. այսինքն մարդը չի անում ինչ-որ բան, որը բացարձակապես կապ չունի իր պահանջմունքների հետ (այսինքն չի աշխատում, որպեսզի զուտ իր նյութական պահանջմունքները բավարարի կամ ազատ ժամանակը լցնի. մենակությունը հաղթահարի և այլն), այլ անում է այն, ինչն ուղղակիորեն բավարարում է իր պահանջմունքը: Եվ քանի որ աշխատանքի նպատակը, արդյունքները ուղղված են դեպի դուրս, ուրիշները, ապա ակնհայտ է դառնում, որ այս դեպքում մարդու պահանջմունքը բավարարվում է այնքանով, որքանով բավարարվում են ուրիշների, հասարակության պահանջմունքները: Այս դեպքում մարդն ընդունում, գիտակցում է իր արածի նշանակալիությունը, արժեքը հետևաբար նաև իր նշանակալիությունը, պիտանի լինելը հասարակությանը: Այդպիսին է, օրինակ, հանուն գիտության արվեստի, ազգի, մարդկանց բարօրու-

թյան և նման դիրքորոշումներով կատարվող աշխատանքը: Այստեղ երբ ուսուցիչը պահանջ ունի ուսուցանելու, դաստիարակելու աճող սերնդին (ըստ էրիքսոնի գեներատիվությունը) հաճույք է ստանում այդ գործընթացից և դրա արդյունքներից: Նման աշխատանքի վարձը կարող է լինել փառքը, ուրիշների երախտագիտությունը. այն կարող է նույնիսկ չվարձատրվել, սակայն մարդը կշարունակի աշխատել:

Բնականաբար, աշխատանքի որպես պահանջմունքի ի հայտ գալը պայմանավորված է քե մարդու տարիքային հասունացմամբ, քե անձնային զարգացման մակարդակով և քե ավելի ստորին կարգի պահանջմունքների բավարարվածությամբ (Ա. Մասլոու): Ըստ դրում, եթե փորձենք աշխատանքի պահանջմունքը տեղակայել Մասլոուի պահանջմունքների հիերարխիայի մեջ, ապա մի կողմից այն կարող է մտցվել չորրորդ (մարդկանց կողմից ընդունվելը). մյուս կողմից հինգերորդ (ինքնաակտուալիզացիայի) կետերի մեջ: Ընդհատապես, այդ երկու կետերի միջև փոխպայմանավորվածություն և դիալեկտիկական միասնություն կա. Վ. Ֆրանկլն ինքնանպատակ ինքնաակտուալացումը անիմաստ է համարում և գտնում, որ կյանքն իմաստ է ստանում երբ մարդն ինքնատրանսցենդենտանում է (ինքն իրենից դուրս է գալիս, հաղթահարում է եսակենտրոնությունը). իր կյանքի իմաստը փնտրում է արտաքին աշխարհում, այլ մարդկանց մեջ: Ինքնաակտուալացումը ինքնանպատակ (հետևաբար նաև անիմաստ) չի կարող լինել, քանի որ մարդն ինքնաակտուալանում է ինչ-որ բան անելու համար, իսկ այդ «ինչ-որ բանը» միշտ ուղղված է դեպի ուրիշը: Իր արածի հիման վրա մարդն այդ «ուրիշի» կողմից գնահատվում է, ընդունվում: Այլ կերպ ասած մարդն ինքնաակտուալանում է ուրիշի համար և որպես վարձատրություն ընդունվում է մարդկանց կողմից, հարգանքի արժանանում: Այլ հարց է, թե սեփական ակտիվությունը մարդն ինչպես է բացատրում, որքանով է գիտակցում իր դրդապատճառները. Մեկը փորձում է ինքնաակտուալանալ ասենք, զարգացնելով իր մասնագիտական հմտությունները, և բացատրում է դա նրանով, որ մարդը պետք է լավ կատարի իր գործը, մյուսը որ ուրիշների կողմից գնահատվի, երրորդը որ օգնի մարդկանց: Սակայն բոլոր դեպքերում սկզբնական շարժումը նույնն է. այն է «ձևավորվիր և իրացրու քո ներուժը ուրիշի համար ինչ-որ բան անելով, և դրա համար ուրիշի կողմից հոգեպես և նյութապես կվարձատրվես»: Այս տեսանկյու-

նից, աշխատանքային պահանջմունքը կարելի է դիտել որպես ուրիշի համար ինչ–որ բան անելու, ստեղծելու պահանջ, որի բավարարումն ուղեկցվում է սեփական ես–ից գոհ լինելով, ինքնահարգանքի, ինքնաընդունման զգացումներով, որոնք ոչ այլ ինչ են, քան իրական, կոնկրետ կամ վերացական ուրիշի (սեփական ընտանիք, երեխաներ, հարազատներ, մարդկություն, գիտություն, ժողովուրդ և այլն) բարեհարմար վիճակի, գոհ լինելու, ընդունման, հարգանքի ինտերիորիզացիա:

Այժմ անդրադառնանք աշխատանքի պահանջմունքի ակտուալացման տարիքային ասպեկտներին: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ աշխատանքի պահանջմունքի առաջին լուրջ դրսևորումները վերաբերում են վաղ պատանեկան տարիքին, երբ պատանին փորձում է կողմնորոշվել մասնագիտությունների մեջ, պարզել, թե որն է իրենը, շատերն այս տարիքում ուզում են աշխատել ուղղակի ինքնուրույնության որոշակի մակարդակի հասնելու նպատակով (թերևս, այս պահանջմունքը ծնողական պահանջմունքից մի քիչ ավելի վաղ է սկսում ակտուալանալ սոցիալ–մշակութային հանգամանքների շնորհիվ. ի դեպ, մեր մշակույթում տղաների մեջ այս պահանջմունքը թե ավելի վաղ և թե ավելի ուժգին է սկսում արտահայտվել, քան աղջիկների մեջ. վերջիններիս մեջ ընտանիք կազմելու, ծնող դառնալու պահանջմունքն է ավելի վաղ ի հայտ գալիս: Միևնույն ժամանակ, պետք է ասել, որ վերջին տասնամյակների ընթացքում մեր մշակույթում աշխատանքային կարիերայի առումով աղջիկների դիրքորոշումների մեջ էական փոփոխություններ են նկատվում): Երիտասարդ տարիքում (20–ից հետո) աշխատանքի պահանջմունքը դրսևորվում է որպես ընտրված աշխատանքային ոլորտում կայանալու ձգտում, իսկ արդեն 25–ից հետո սոցիալական ինքնահաստատման մղում:

Այժմ փորձենք համեմատել աշխատանքային և ծնողական պահանջմունքները: Դրանք մի շարք ընդհանրություններ ունեն և թերևս նաև ծագումնաբանորեն են կապված (օրինակ կենդանական աշխարհում այն վարքը, որն ինչ–որ ծնով կարող է հիշեցնել մարդու աշխատանքային գործունեությունը բնի կառուցումը, որսը ընտանիքը կերակրելու համար և այլն, սկսում է ի հայտ գալ, երբ կենդանին պատրաստվում է ծնող դառնալ կամ ծնող է դառնում): Նախ, այս պահանջմունքները սկսում են ակտուալանալ մոտավորապես այն տարիքային շրջանում (20 տարեկանի շրջանում), երբ մարդը ձգտում է դուրս գալ խնամվողի վիճակից, սկզբում ինքնուրույն դառնալ (ինչպես հայտնի է, ինքնուրույնության ձգտումը պատանեկան տարիքի հիմնական պահանջմունքներից է), իսկ ավելի ուշ դառնալ խնամող (թերևս, պատանեկան տարիքի անցումայնության կարևոր պահերից մեկը ինքնուրույնության ձգտումը, միջանկյալ վիճակ է խնամվողից խնամողի, այսինքն հասուն մարդու, ծնողի ստատուսին անցնելու գործընթացում. ինքնուրույնությունը ոչ այլ ինչ է, քան այն, որ մարդն ինքն իր խնամողն է դառնում): Այս երկու պահանջմունքներն էլ ուղղված են դեպի ուրիշը և լայն առումով ապահովում են տեսակի պահպանումը: Դրանց հիմքում ընկած է փոխօգնության մեխանիզմը, որը կենսաբանության մեջ դիտվում է որպես տեսակի պահպանման կարևորագույն գործոն (138, էջ 66–68): Ըստ էության, փոխօգնության հիմքի վրա է ձևավորվում կենդանիների հոտը, հասարակությունը, հասարակական բնույթի ակտիվությունները (ընտանեկան, աշխատանքային): Որոշ կենսաբաններ փոխօգնությունը բխեցնում են ծնողական բնազդից, զգացմունքներից (138, էջ 67): Ենթադրվում է, որ վերջիններս տարածվում, փոխանցվում, տրանսֆորմացվում են հասարակական այլ հարաբերությունների վրա (138, էջ 130): Այս տեսանկյունից աշխատանքի պահանջմունքն էլ կարելի է բխեցնել ծնողական պահանջմունքից, մանավանդ, որ շատ դեպքերում աշխատանքային ակտիվությունն իսկապես ծնողական մոտիվներով կարելի է բացատրել: Ասենք սովորաբար աշխատանքը դիտվում է որպես ընտանիքը պահելու միջոց: Սակայն, նույնիսկ եթե աշխատանքը ծնողությանն հիմքի վրա է ձևավորվել, այնուամենայնիվ այն միանգամայն այլ բնույթի ակտիվություն է, և ծնողական ու աշխատանքային պահանջմունքները միանգամայն տարբեր իրողություններ են: Հնարավոր է, որ դրանց երկուսի ընդհանուր ծագումնաբանական հիմքը տեսակի պահպանումն է: Այսպես, ըստ Ն. Տիխի «...մայրական բնազդի դրսևորումների ողջ ամբողջությունը պայմանավորված է ոչ թե անհատի էգի շահերով, այլ տեսակի, որին նա պատկանում է» (138, էջ 105): Ասվածը, կարծում ենք, առավել ևս կվերաբերի աշխատանքային գործունեությանը (իհարկե, ծնողը կամ աշխատանքի սուբյեկտը հազվադեպ են իրենց ակտիվությունը բացատրում տեսակի պահպանման դրդապատճառներով, ասենք հազվադեպ է ծնողը շատ երեխաներ ունենալը բացատրում ազգի մեծացմամբ կամ

աշխատողն իր աշխատանքը բացատրում ազգի կամ մարդկության զարգացմամբ):

Մենք փորձեցինք ուրվագծել զարգացման երրորդ ցիկլին դրդող պահանջմունքների վերաբերյալ առկա պատկերացումները. ինչպես նաև դրանց էության, փոխհարաբերության տարիքային դրսևորումների վերաբերյալ մեր տեսակետը (նման ծավալուն անդրադարձը մենք հիմնավորված ենք համարում, որովհետև ինչպես վերոնշյալ հարցերը, այնպես էլ այս տարիքային ցիկլն ամբողջությամբ հոգեբանության մեջ բավական աղոտ են հետազոտված): Ըստ մեզ նշված պահանջմունքները որոշիչ դեր են խաղում այս շրջանում անձնավորության զարգացման, տարիքային նորագոյացությունների ծնավորման գործընթացում: Օրինակ այս տարիքում տեղի ունեցող տարիքային–հոգեբանական մի շարք փոփոխությունների շնորհիվ անձնավորությունը կարծես պատրաստ է դառնում նոր ի հայտ եկած պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեության ծնողական և աշխատանքային ֆունկցիաների իրականացման համար: Այսպես այս շրջանում մարդը սկսում է պատասխանատվություն զգալ ուրիշների համար, հաղթահարվում է եսակենտրոնությունը (113, էջ 6): Միևնույն ժամանակ, տեղի է ունենում արժեքների վերակառուցում, վերաիմաստավորվում է սեփական կյանքը, հարաբերությունները մարդկանց հետ, մարդն ավելի իրատես և նպատակաուղղված է դառնում: Այս տարիքային ցիկլի ընթացքում մոտ 30 տարեկանի շրջանում, ինքնագիտակցության նոր վերակառուցում է տեղի ունենում. մարդն սկսում է գիտակցել իրեն որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ: Ըստ Ն. Տկաչևայի և Վ. Մորգունի «...վերջնականորեն գիտակցվում է սեփական ես–ը որպես հասուն մարդ՝ իր բոլոր պարտականություններով և իրավունքներով...» (102, էջ 59):

Ինքնագիտակցության վերակառուցումից հետո մինչև այս ցիկլի վերջը (35–40 տարեկանը) կարելի է դիտել որպես յուրահատուկ փորձարարական շրջան, որի ընթացքում մարդը յուրացնում է նոր սոցիալական դերերը (ամուսնական, ծնողական, աշխատանքային), մարդկանց հետ հասուն հարաբերությունների սկզբունքները, աշխատանքային կարողություններն ու հմտությունները:

Տարիքային վերջին հիմնախնդիրը և համապատասխանաբար կյանքի վերջին ցիկլը (35, 40–ից մինչև կյանքի վերջը), ըստ մեզ, կարելի է

բնութագրել որպես ինքնահիրացում կամ ինքնասպառում: Փորձենք կոնկրետացնել ասվածը: Կյանքի երրորդ ցիկլի ընթացքում մարդը ծնավորվում է որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ կայանում է որպես ամուսին, ընտանիքի հայր կամ մայր, մասնագետ, հասարակության մեջ որոշակի դիրք է գրավում: Ըստ էության, կյանքի առաջին և երկրորդ ցիկլերը կարելի և դիտել որպես սոցիալական ակտիվության սուբյեկտի ծնավորումը նախապատրաստող շրջաններ: Այս տեսանկյունից լիովին կարելի է համաձայնել Բ. Գ. Անանևի հետ, որը աշխատանքի համեմատությամբ երկրորդային բնույթի գործունեություններ է համարում խաղը և ուսումը (18, էջ 187) դրանք դիտելով որպես նախապատրաստում աշխատանքային գործունեությանը (18, էջ 177): Նույն տրամաբանությամբ, սեռային ակտիվության սուբյեկտի ծնավորումը (ըստ մեր պարբերացման կյանքի երկրորդ ցիկլի հիմնախնդիրը) կարելի է դիտել որպես սերունդ տալու, սերունդը պահպանելու, զարգացնելու, այսինքն ծնողական ֆունկցիաների իրականացման նախապատրաստում:

Այսպիսով կյանքի ամբողջ առաջին կեսը և մասնավորապես զարգացման երրորդ ցիկլը հանգեցնում է հասարակության լիարժեք անդամի, այն է ընտանեկան և աշխատանքային ֆունկցիաներն իրականացնող սուբյեկտի ծնավորմանը: Միևնույն ժամանակ, ինչպես նշեցինք, կյանքի կեսից, այսինքն մոտ 35–40 տարիքային շրջանից, սկսում է ակտուալանալ զարգացման նոր հիմնախնդիր, նոր ծրագիր ինքնահիրացումը, ինքնասպառումը. ծնավորված սոցիալական ակտիվության սուբյեկտը պետք է իրականացնի այդ ակտիվությունը, իրացնի, իրականություն դարձնի այն, ինչ կուտակել է կյանքի առաջին կեսի ընթացքում, և դրանով իսկ սպառի իրեն: Թերևս, զարգացման այս ծրագրի հիմքում ընկած է, այսպես կոչված, մահվան կամ. ըստ մեզ, ինքնահիրացման, ինքնասպառման բնազդը. մղումը, պահանջմունքը (ինչպես, ասենք, դեռահասության շրջանի զարգացման կենսահոգեկան ծրագրի հիմքում սեռական մղումն է): Նախքան ասվածը մեկնաբանելը. փորձենք քննել «մահվան մղում կամ բնազդ» հասկացությունը: Կենդանի էակի մեջ նման ձգտման գոյության գաղափարը ծնավորվել է հնագույն ժամանակներում (օրինակ հույն փիլիսոփա էմպեդոկլեսը մարդու մեջ երկու սկիզբ էր առանձնացնում «ֆիլիան»՝ սերը, և «նեյկոսը» մահը, կործանումը, թշնամանքը), այն հստակորեն ուրվագծվում է Շոպենհաուերի

փիլիսոփայության մեջ և վերջապես Զ. Ֆրոյդի տեսության մեջ հանդես է գալիս որպես լիբիդոյի սեռական մղման հակադիր մղումը թանաթոսը: Մահվան մղումը, ըստ Ֆրոյդի, դրսևորվում է ագրեսիայի, ինքնասպանությունների, սադիզմի, մազոխիզմի ձևով, ի հայտ է գալիս հանգիստը պահպանելու, լարվածությունը թուլացնելու, փոքրանալու. հաճույքի ձգտումների մեջ: Պետք է ասել, որ մահվան մղման գոյության հարցը, սկսած Ֆրոյդի ժամանակներից մինչև օրս, տարակարծությունների տեղիք է տալիս. նույնիսկ հոգեվերլուծության ներկայացուցիչներից շատերը չեն ընդունում այդ գաղափարը: Այսպես ըստ Ք. Թոմփսոնի դեստրուկտիվ վարքը ոչ թե մահվան մղման արտահայտություն է, այլ ֆրուստրացիային հակազդելու ձև (251): Նշանավոր էթոլոգ Կ. Լորենցը մահվան մղման կապակցությամբ հետևյալն է գրում. «Վարքաբանի տեսանկյունից կենսաբանության համար Օտար այս վարկածը ոչ միայն պիտանի չէ, այլև սուտ է: Ագրեսիան, որի դրսևորումները հաճախ կապվում են մահվան ցանկության հետ, նույնպիսի բնազդ է ինչպես մյուսները և բնական պայմաններում, ինչպես և մյուս բնազդները, ապահովում է անհատի և տեսակի գոյատևումը» (230, էջ X):

Նման տարակարծությունները, մեր կարծիքով, պայմանավորված են ոչ միայն հիմնախնդրի բարդությամբ, այլև «կյանք» և «մահ» հասկացությունների չճշգրտված, վերացական լինելով. Թերևս հենց այս հանգամանքն է որոշ հեղինակների ստիպում եզրակացնել, որ «... կենսաբանության տեսանկյունից անիմաստ է նույնիսկ փորձել որևէ մակարդակում կյանքի և մահվան միջև տարբերակում մտցնել» (144, էջ 140):

Մահվան առավել տարածված, միևնույն ժամանակ նաև հստակ սահմանումներից կարելի է համարել հետևյալը. «Մահը ֆունկցիաների անվերադարձ դադարումն է, ինչն անհնարին է դարձնում օրգանիզմի, որպես ամբողջական համակարգի, գոյատևումը» (40, էջ 34): Նույն տրամաբանությամբ, համակարգը կենդանի կարելի է համարել, եթե այն ի վիճակի է և իրականացնում է իր ֆունկցիաները: Այս մոտեցման մեջ, սակայն, մահը (հետևաբար նաև կյանքը) դիտարկվում է որպես վիճակ և ոչ գործընթաց: Մինչդեռ ակնհայտ է, որ համակարգի ֆունկցիաների բնականոն դադարումը հանկարծակի, մի վիճակից մյուսին անցում չէ, այլ տևական, օրինաչափորեն տեղի ունեցող գործընթաց է: «Մահը,— գրում է գերմանացի բժիշկ Ֆ. Խուզեմանը,— ոչ թե իրադարձություն է,

որը տեղի է ունենում օրգանիզմի հետ կյանքի վերջում, այլ գործընթաց է, որ սկիզբ է առնում վաղ մանկությունից կենտրոնական նյարդային համակարգում...» (153, էջ 94):

Գործընթացային մոտեցման տեսանկյունից մահը կարելի է բնութագրել ոչ թե որպես համակարգի ֆունկցիաների դադարեցում, այլ համակարգի ֆունկցիոնալ սպառման գործընթաց (ըստ որում, համակարգի ենթահամակարգերի ֆունկցիոնալ սպառումը հետերոխրոն բնույթ է կրում, այսինքն տարբեր ենթահամակարգեր սպառվում են կյանքի տարբեր փուլերի ընթացքում, իսկ որոշ ենթահամակարգեր իրենց ֆունկցիաները շարունակում են կլինիկական մահից հետո, թերևս, կան նաև կառույցներ, որոնք պոտենցիալ ֆունկցիոնալ վիճակում կարող են պահպանվել հազարամյակներ, օրինակ՝ ԴՆԹ–ն): Ըստ մեզ այդ գործընթացը չի կարելի դիտել որպես ինքնաոչնչացման հատուկ բնազդ կոնկրետ վարքային դրսևորումներով, ասենք ագրեսիայով (աուտոագրեսիայով): Այդ գործընթացը ոչ թե առանձին վարքի, այլ օնտոգենեզի որոշակի փուլի ժառանգական ծրագիր է, որը գործառում է ամբողջական ձևով կենսաբանական, հոգեկան, վարքային, սոցիալական մակարդակներում և իրականանում է տասնամյակների ընթացքում: Նման գործընթացը, բնականաբար, իր մեջ կներառի ոչ թե որևէ մեկ պահանջմունք (կամ մղում), այլ պահանջմունքների համակարգ, մոտիվացիոն համալիր, որը կխթանի մարդուն տարբեր մակարդակներում և ուղղություններով գործառելու (օրինակ սեռային ակտիվության սուբյեկտի կայացման տարիքային ցիկլում միայն սեռական պահանջմունքը չէ, որ խթանում է զարգացման գործընթացը, վերջինիս հետ միասին գործառում են մի շարք այլ պահանջմունքներ ինքնահաստատման, ինքնուրույնության, ինտիմ շփման և այլն):

Կյանքի չորրորդ փուլի օնտոգենետիկ ծրագիրը խթանող պահանջմունքների համալիրին, ըստ մեզ, կարելի է տալ «ինքնահիրացում», «ինքնառեալիզացիա» կամ «ինքնասպառում» ընդհանուր անվանումը: Այս հասկացություններից հոգեբանության մեջ ընդունված է «ինքնառեալիզացիա» հասկացությունը, որը փաստորեն նույնն է, ինչ «ինքնահիրացումը», և գրեթե նույնն է, ինչ Շ. Բյուլերի առաջարկած «ինքնահիրականացում» հասկացությունը, այնպես որ նշված հասկացությունները կարելի է դիտել որպես հոմանիշներ: Գրականության մեջ չի նշվում,

որ ինքնառեալիզացիան պահանջմունքների համակարգի ընդհանուր անվանում է. սակայն, նախ հնարավոր չէ մարդու մեջ առանձնացնել ինքն իրեն իրացնելու, ռեալիզացնելու, սպառելու հատուկ, գիտակցված ձգտում, այն ենթադրվում է մի շարք կոնկրետ ձգտումների, ասենք հոգևոր և նյութական բարիքներ ստեղծելու պահանջմունքի մեջ: Բացի այդ, տարբեր հեղինակների կողմից այս ձգտման նկարագրությունը վկայում է, որ խոսքը ոչ թե մի առանձին պահանջմունքի, այլ ընդհանրապես արժեքների և նպատակների իրականացման ձգտման մասին է: Այսպես, ըստ Շ. Բյուլերի ինքնաիրականացումը բնածին մղում է՝ և մարդու զարգացման շարժիչ ուժը է հանդիսանում (189): Այն դրսևորվում է որպես նպատակներին հասնելու ձգտում: Կ. Գ. Յունգը ինքնաիրականացումը զարգացման ընդհանուր միտում է համարում: Ըստ նրա «հոգեբանական, ինչպես և կենսաբանական զարգացման նպատակը ինքնաիրականացումն է կամ ինդիվիդուացիան» (171, էջ 57): Այլ հեղինակներ ինքնառեալիզացիան բնութագրում են որպես մարդու էությունը կազմող ուժերի իրացման ձգտում (70), որպես կյանքի իմաստի իրականացման պահանջ (Վ. Ֆրանկլ): Ըստ մեզ ինքնաիրացումը զարգացման միտում է, որի իմաստը մարդու ներքին պոտենցիալի սպառումն է, սեփական անձի միսիայի իրականացումը որպես մարդ, սեռային և սոցիալական ակտիվության սուբյեկտ: Ըստ որում, կարծում ենք, չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, որ ինքնաիրացումը մարդու ողջ օնտոգենեզի ընթացքում հանդես է գալիս որպես զարգացման հիմնական շարժիչ ուժ (ի դեպ, Կ. Յունգը ինդիվիդուացիայի գործընթացը վերագրում է կյանքի երկրորդ կեսին): Մարդը կարող է իրացնել իրեն միայն այն ժամանակ, երբ արդեն կայացել է, ձևավորվել (օրինակ եթե մարդը սեռահասուն չէ, չի կայացել որպես սեռային ակտիվության սուբյեկտ, չի կարող որպես այդպիսին իրականացնել, իրացնել իրեն):

Ինքնաիրացման միտումը մարդու մեջ իր կոնկրետ արտահայտությունն է ստանում հիմնականում երեք ոլորտներում. ինքնաիրացում որպես սեռային, ծնողական և աշխատանքային ակտիվության սուբյեկտ: Ըստ որում, այդ ոլորտներում մարդու ակտիվությունը կյանքի այս ցիկլում կարելի է բնութագրել որպես կոնսումատորային, այսինքն ավարտին, վերջնական նպատակին ձգտող: Կոնսումատորային ակտիվությունը սկիզբ է առնում այն ժամանակ, երբ սուբյեկտը հասնում է

պահանջմունքի օբյեկտին կամ նպատակին (մինչ այդ տեղի է ունենում, այսպես կոչված, ապետիտիվ ակտիվությունը. այսինքն պահանջմունքի օբյեկտին հասնելու ուղիների փնտրտուքը) և ձեռնամուխ է լինում ավարտին հասցնել պահանջմունքի բավարարմանն ուղղված գործունեությունը: Կ. Լորենցը, ինչպես հայտնի է, առանձնացնում է այդ գործընթացի հետևյալ փուլերը. ա) տվյալ գործողության համար անհրաժեշտ սպեցիֆիկ էներգիայի կուտակում, ինչը առաջ է բերում ապետիտիվ ակտիվություն, բ) ապետիտիվ վարք, ինչը հանգեցնում է խթանող իրավիճակին, որն աշխատեցնում է մարդու բնածին դրդող մեխանիզմները, գ) դրդող մեխանիզմի գործառումը և կոնսումատորային ակտիվության միջոցով էնդոգեն էներգիայի լիցքաթափումը: Կոնսումատորային ակտիվությունն ավարտվում է պահանջմունքի դեզակտուալացմամբ և ապրվում որպես հագեցում, հանգստացում և այլն:

Եթե վերցնենք ոչ թե առանձին վարքը, այլ մարդու զարգացման գործընթացն ամբողջությամբ և որպես այդ գործընթացի նպատակներ դիտենք մի կողմից տեսակային, սեռային և սոցիալական ակտիվության սուբյեկտների ձևավորումը (կայանալը որպես մարդ, տղամարդ/կին, ամուսին, ծնող, աշխատանքային ակտիվության սուբյեկտ), մյուս կողմից որպես այդպիսին սուբյեկտի ինքնաիրացումը, ինքնասպառումը, ապա կյանքի առաջին երեք շրջանները կարելի է դիտել որպես ապետիտիվ, իսկ վերջինը որպես կոնսումատորային ակտիվության շրջաններ: Ապետիտիվ և կոնսումատորային ակտիվությունները տարածելով զարգացման ամբողջական գործընթացի վրա պետք է նկատի ունենալ, որ այս դեպքում խոսքը ոչ թե տվյալ ակտիվության սուբյեկտի առանձին բնութագրերին, ասենք պահանջմունքներին է վերաբերում, այլ զարգացող սուբյեկտին ամբողջությամբ, այսինքն իրացվում, սպառվում է մարդը որպես սեռային, ծնողական, աշխատանքային ակտիվության սուբյեկտ: Այս դեպքում մարդը ձգտում է լրիվ իրացնել իրեն, հասնել իր վերջնական նպատակներին, ավարտել իր միսիան որպես սեռային և սոցիալական ակտիվության սուբյեկտ, իսկ որպես այդպիսին սպառվելիս ոչ միայն դեզակտուալանում, իջնում է նշված ոլորտներում մարդու մոտիվացիան, այլև փոփոխվում, անկում են ապրում սուբյեկտի այդ ոլորտների մյուս ենթակառույցները, ասենք դիրքորոշումները, արժեքները, հմտությունները, անձնային հատկությունները:

Ցանկացած ակտիվության մեջ, բացի ապետիտիվ և կոնսումատորային միտումներից, կարելի է առանձնացնել նաև երրորդը պասիվացման միտումը, այն զգացումները, որոնք դրդում են դադարեցնել ակտիվությունը. ասենք սննդի կամ հեղուկի ընդունման վարքի մեջ դա կշտանալու կամ հագեցման զգացողությունն է: Ընդհանրապես, յուրաքանչյուր պահանջմունքի բավարարման գործընթացում կարելի է առանձնացնել երկու հակադիր դրդող ուժեր մեկն ուղղված ակտիվություն իրականացնելուն, մյուսը ակտիվությունը դադարեցնելուն: Ինքնաիրացման գործընթացում ակտիվացման բնեռում հանդես են գալիս այնպիսի ձգտումներ, ինչպիսիք են հիմնական աշխատանքային նպատակներին հասնելը, «երեխաներին ոտքի կանգնեցնելը» և այլն, իսկ պասիվացման բնեռում ի հայտ են գալիս ավարտվածության զգացողությունը, պայքարից, լարումից հեռանալու ձգտումը. սեռական պահանջմունքն այլևս իրեն զգացնել չի տալիս, որպես ծնող մարդն իրեն սպառված է համարում. մարում է ձգտումն ինչ–որ մեկին խնամելու. աշխատանքի հետ կապված հարցերը սկսում են չհետաքրքրել: Ըստ բազմաթիվ հեղինակների նման վիճակում ի հայտ են գալիս կյանքի անիմաստության զգացում, անտարբերություն ամեն ինչի նկատմամբ, դեպրեսիա: Անմիջապես կլինիկական մահվանը նախորդող շրջանում, երբ մարդն ընդունում է իր մահանալու հանգամանքը, ի հայտ է գալիս յուրահատուկ անջատվածության, ամեն ինչից կտրված լինելու, հանգստի, խաղաղվածության խիստ հաճելի մի վիճակ (144, էջ 440):

Այս տարիքային ցիկլը բնութագրելիս տարիքային հոգեբանության և ֆիզիոլոգիայի մեջ, սովորաբար, օգտագործվում են «ծերացում» կամ «ինվոլյուցիա» հասկացությունները: Ըստ մեզ դրանք այնքան էլ ճիշտ չեն արտահայտում այդ տարիքի էությունը. մարդը չի ծնավորվում, հասունանում, որ անկում ապրի, ծերանա, այն, ինչ ծնավորվել է, պետք է իրականացնի. իրացնի, սպառի իր ֆունկցիաները, իսկ ինվոլյուցիոն երևույթները սպառվածության, իրացվածության արդյունք կարող են դիտվել. Ռուս կենսաբան Վ. Դիլմանն այդ կապակցությամբ գրում է. «Համարվում է, որ օրգանիզմի կենսունակության անկման և հիվանդությունների նկատմամբ հակվածության աճի հիմքում ընկած է ֆունկցիոնալ ռեզերվների նվազումը, ինչն էլ, վերջին հաշվով, մեծացնում է մահվան հավանականությունը» (57, էջ 323): Այդ կապակցությամբ կան մի

շարք հետաքրքիր հետազոտություններ, որոնցում ցույց է տրվում, որ օրգանիզմը կարող է ծերանալ կամ երիտասարդանալ, եթե կենդանի էակը (տվյալ դեպքում մեղուները) հայտնվի այնպիսի պայմաններում, որ ստիպված լինի իր տարիքին չհամապատասխանող ֆունկցիաներ իրականացնել (ծերը երիտասարդի, երիտասարդը ծերի ֆունկցիաներ): Այսպես, երբ մեղվաընտանիքից հեռացնում են երիտասարդ մեղուներին. ծերերն իրենց վրա են վերցնում նրանց ֆունկցիաները, ինչի հետևանքով նրանց օրգանիզմը սկսում է արագորեն երիտասարդանալ: Ըստ որում, սկսում են վերականգնվել արդեն ատրոֆիայի ենթարկված օրգանները: Հակառակ երևույթն է տեղի ունենում, երբ մեղվաընտանիքից հեռացվում են ծեր մեղուները. այս դեպքում երիտասարդները, իրենց վրա վերցնելով ծերերի ֆունկցիաները, սկսում են արագորեն ծերանալ (162, էջ 4): Տարիքային հոգեբանության մեջ նշված իրողությունն իր արտացոլումն է գտել ծերության, այսպես կոչված, ակտիվության և շարունակականության տեսությունների մեջ: Ըստ ակտիվության տեսության բարեհաջող ծերացումը պայմանավորված է սոցիալական դերերի և հարաբերությունների պահպանմամբ (218): Ըստ որում, կյանքից լիարժեքորեն բավարարված լինելու համար ծերերի հոգեբանական և սոցիալական ակտիվությունները ոչ թե ձնական, այլ իմաստավորված բնույթ պետք է կրեն (226): Շարունակականության տեսությունը (175) բարեհաջող ծերությունը պայմանավորում է մարդու սովորույթների, նախապատվությունների, կյանքի ոճի, հարաբերությունների շարունակականությամբ, այսինքն երբ միջին տարիքից դրանք տեղափոխվում են ծերության շրջան:

Այսպիսով ցանկացած կենդանի էակի, այդ թվում նաև մարդու օնտոգենեզում կարելի է առանձնացնել երկու շրջան առաջինում համակարգն առավելապես ձնավորման, զարգացման գործընթացում է, իսկ երկրորդում ձնավորումը, զարգացումը հիմնականում ավարտված է լինում, և համակարգի կենսագործունեության մեջ սկսում են գերակշռել ինքնաիրացման և դրա շնորհիվ ինքնասպառման, հետևաբար նաև ծերացման և մահվան գործընթացները: Այս երկու ցիկլերը ավելի հստակ են ուրվագծվում որոշ կենդանիների օնտոգենեզում: Որպես օրինակ ներկայացնենք սապատածկան օնտոգենեզը (ըստ 56) սապատածուկը մոտ 4–5 տարի աճում, զարգանում է օվկիանոսում. հասնելով

սերնդատվության տարիքին նա բնազդային մեխանիզմներով լքում է օվկիանոսը և հաճախ, հազարավոր կիլոմետրեր կտրելով, հասնում է այն գետաբերանին, որտեղ պիտի ծվադրի: Այդ ճամփորդության շրջանում «. .մեկ–երկու ամսվա ընթացքում ծուկը ծերանում է ...ի հայտ են գալիս նշաններ, որոնք բնորոշ են շաքարային դիաբետին և սթերոսկլերոզին . վերջապես էգ սպատածկները ծվադրում են, ործ սպատածկների կողմից այդ ծվերը բեղմնավորվում են: Մեկ–երկու շաբաթից ծուկ ծնողները սատկում են: Սահվան պատճառ են հանդիսանում սրտի, ուղեղի, թոքերի, երիկամների բազմաթիվ կաթվածները: Եվ դա հասկանալի է...ծվադրման շրջանում սպատածկան արյան մեջ խոլեստերինի քանակն ավելանում է մոտ 10 անգամ: Ո՞րն է սպատի տալողության և լյարդի մեջ ճարպի կուտակման իմաստը, եթե սպատածուկը ծվադրումից հետո, կարճ ժամանակահատվածի ընթացքում պիտի սատկի. իմաստն այն է, որ ճարպից ծնավորվում է խոլեստերին, իսկ յուրաքանչյուր սեռական բջիջ մեծ քանակությամբ խոլեստերին է պարունակում: Խոլեստերինը նյութ է հանդիսանում բջիջները պատող շերտի համար... Սինհույն ժամանակ արյան մեջ խոլեստերինի քանակի ավելացումը սպատածկան մեջ առաջ է բերում անոթների վնասում, ինչն էլ օրգանիզմը մահվան է հանգեցնում» (56, էջ 42–49): Ըստ Դիլմանի մոտավորապես նույն սկզբունքներով է տեղի ունենում նաև մարդու զարգացումն ու անկումը: Հետաքրքրական է, որ անկման գործընթացը սկիզբ է առնում հենց այն ժամանակ, երբ մարդն իր զարգացման մեջ հասնում է առավելագույն ցուցանիշների. «Ծերացման գործընթացում գլխավոր հոմեոստատների հզորության մեծացումը նշանակում է, որ ծերացումը և դրա հետ կապված հիվանդությունները ծնավորվում են ոչ թե էներգետիկ գործընթացները, ադապտացիան և բազմացումը կարգավորող համակարգերի անկման, մաշման, այլ հակառակը հզորացման, գործունեության գերլարման հաշվին: Այս չափազանց կարևոր դրույթն առաջին հայացքից ուղղակի անհավանական է թվում, չէ՞ որ բոլորս գիտենք, որ աշխատունակությունը, ուժը, ռեպրոդուկտիվ ներուժը, օրգանիզմի դիմացկունությունը տարիքի հետ իջնում են: Բայց այդ ամենը ծերացման հետևանք է, իսկ մենք հիմա խոսում ենք դրա ծնավորման մասին: Կյանքը ծերացման գործընթացում ինքնահայուծման ճնով է տեղի ունենում» (56, էջ 52): Օրինակ հայտնի է, որ գոնադոտրոպինների արտադ-

րությունը կնոջ օրգանիզմում 25 տարեկանից հետո գնալով ավելի ու ավելի է աճում. «Այլ կերպ ասած, ռեպրոդուկտիվ համակարգը հասունացումից հետո էլ շարունակում է մեծացնել իր հզորությունը: Այդ գերզարգացումը, ի վերջո, հանգեցնում է ծվարանների կողմից փոխհատուցողական հակազդման, այսինքն.. դրանք այլևս ի վիճակի չեն լինում գոնադոտրոպինների աճի հետ զուգահեռ անընդհատ ավելացնել սեռական հորմոնների արտադրության քանակը, այսինքն հասնում են զարգացման իրենց սահմանին» (52, էջ 65). Հենց այդ պահից էլ սկիզբ է առնում ինքնասպառման գործընթացը (այն, ինչ չի զարգանում, սկսում է սպառել ինքն իրեն):

Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ զարգացման գագաթին հասնելուց հետո անմիջապես սկիզբ է առնում անկման ժառանգական ծրագիրը: Սակայն, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ զարգացման առավելագույն ցուցանիշներին համապատասխանում է մարդու սոցիալական ակտիվության ամենաբուռն շրջանը, երբ մարդն իրականացնում է իր կյանքի գլխավոր նպատակները, ապա հասկանալի կդառնան թե գերզարգացման և թե անկման իմաստները: Իզուր չէ, որ կյանքի այս շրջանը ժողովրդական պատկերացումներում համեմատվում է աշնան, բերքահավաքի հետ, իսկ է. էրիքսոնն այս շրջանի էությունը գեներատիվության մեջ է տեսնում: Շատ հեղինակներ այս տարիքը մարդու կյանքի ամենալարված, հագեցած և պատասխանատու շրջանն են համարում (46, 247 և ուրիշներ):

Այժմ անդրադառնանք այս տարիքային ցիկլի նորագոյացություններին խնդրին. Ինչպես և նախորդ շրջանները, այս ցիկլը նույնպես սկսում է կենսաբանական փոփոխություններով: Աստիճանաբար սկսում է սպառվել մարդու կենսաբանական ներուժը, որն իր արտահայտությունն է գտնում ծերացման նշաններում (սրանք կարելի է դիտել որպես այս ցիկլի կենսաբանական նորագոյացություններ): «Հանրահայտ է,— գրում է Ա. Կոգանը համահեղինակների հետ,— որ մարդու կյանքում ծերացման շրջանը սկիզբ է առնում սեռական ակտիվության ծաղկման շրջանից հետո: Հենց 40–50 տարեկանից հետո են մարդու արտաքինում և վարքի մեջ սկսում ի հայտ գալ մոտեցող ծերության աստիճանաբար աճող նշանները: Հերոնտոլոգիայում կատարված բոլոր հետազոտությունները ներկայացնում են իրար հետ համապատասխանող ար-

դյունքներ, որ հենց այս տարիքից սկսած օրգանիզմում սկսում են զարգանալ դեստրուկտիվ փոփոխություններ ֆիզիկաքիմիական, բջջային հյուսվածքային մակարդակներում, անկում է ապրում վեգետատիվ ֆունկցիաների արդյունավետությունը, նվազում են մարդու ֆիզիկական ուժը և մտավոր ընդունակությունները» (74, էջ 67)· Աստիճանաբար սկսում է սպառվել սեռական ներուժը, ինչի հետ մեկտեղ նաև մարդը որպես սեռային ակտիվության սուբյեկտ: Ըստ որում, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները « ..Միջին տարիքից սեռային դերերը գնալով ավելի ու ավելի անէական են դառնում և մարդկանց մեջ սկսում են հայտնվել այնպիսի հատկություններ, որոնք ավանդաբար վերագրվում են հակառակ սեռին» (174, էջ 459): Աստիճանաբար մարդը սպառվում է նաև որպես ծնողական ակտիվության սուբյեկտ: Կենսաբանական մակարդակում դա դրսևորվում է կլիմակտերիկ երևույթներով (ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մեջ), իսկ սոցիալ–հոգեբանական մակարդակում այն բանով, որ երեխաները մեծանում են, խնամքի կարիք այլևս չեն զգում, մյուս կողմից մեծերը, աստիճանաբար կորցնելով ֆիզիկական, հոգեկան ներուժը, սոցիալական դիրքը, իրենք են խնամքի կարիք զգում: Ինքնասպառման գործընթացի վրա մեծ ազդեցություն է թողնում թոշակի անցնելը: Ուկրաինացի գիտնական Ե. Գոլովախայի հետազոտությունները ցույց են տվել, որ թոշակի անցնելուց հետո. «Շատերի մեջ մարում են ոչ միայն կյանքի մոտակա շրջանի ծրագրերը, այլև ընդհանուր կենսական նպատակները: Մեծ թվով մարդիկ կյանքի հիմնական նպատակն են համարում այն, որ իրենք ուղղակի ուզում են «հանգիստ ապրել իրենց մնացած տարիները» կամ նույնիսկ «հանգիստ մեռնել» (50, էջ 240): Նման վիճակը, իհարկե, ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մարդը գնահատում, վերաբերվում է իրեն որպես սպառված, ինչի արդյունքում «...որոշ «սկսնակ» թոշակառուներ 60–65 տարեկանում արդեն գառամյալ են թվում, տառապում են կենսական դատարկությունից և սոցիալական անլիարժեքությունից. Այդ տարիքից նրանց համար սկսում է անծնավորության մահացման ողբերգական շրջանը. Նման դեպերսոնալիզացիան հանգեցնում է նյարդային և սրտանոթային ֆունկցիոնալ հիվանդությունների.. » (50, էջ 72):

Ծերության շրջանում ի հայտ եկող վերոնշյալ փոփոխությունները, բնականաբար, չէին կարող մարդու ինքնագիտակցության մեջ նոր վե-

րակառուցում առաջ չբերել: Նման վերակառուցումը, ըստ մեզ, մեր մշակույթում տեղի է ունենում 60 տարեկանի շրջանում (55–65 տարիքային շրջանում). մարդն սկսում է գիտակցել իրեն որպես մահկանացու կենսաբանական, հոգեկան, սոցիալական առումներով սպառմանը ենթակա լակ (այս տարիքային շրջանում ինքնագիտակցության վերակառուցման խնդրին մանրամասնորեն կանդրադառնանք ավելի ուշ): Գիտակցելով սեփական ես–ը որպես մահկանացու մարդը պետք է մշակի նաև ինքնասպառման կոնցեպցիան, այն, թե ինքը ինչպե՞ս պետք է սպառի իրեն. ո՞րն է սեփական կյանքի իմաստն այս տեսանկյունից, տարիքային այս վերջին շրջանում: Հենց այս, ինչպես նաև սեփական ես–ի որպես մահկանացուի կոնցեպցիաներն էլ որոշում են, թե ինչպես մարդը կսպառի իրեն, կանցկացնի իր ծերությունը. ըստ որում, այդ կոնցեպցիաների ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում տվյալ հասարակության, միջավայրի մեջ ընդունված ծերության կոնցեպցիան: Այս կապակցությամբ Դ. Չոպրան գրում է. «Այն, թե ինչպես Նք դուք ծեզ ընկալում, իսկույն արտացոլվում է մարմնում առաջ բերելով բազմաթիվ փոփոխություններ: Օրինակ, Ամերիկայում և Անգլիայում թոշակի տարիքը 65–ն է: Մինչև 65–ամյակի օրը աշխատավորն աշխատում է հօգուտ հասարակության, իսկ հաջորդ օրը նա հասարակության խնամքին է հանձնվում Ինքնաընկալման մեջ տեղի ունեցած այդ տեղաշարժի բժշկական հետևանքներն ուղղակի ադեստալի են Թոշակի անցնելու հենց առաջին տարիներին կտրուկ աճում են ինֆարկտի և քաղցկեղի դեպքերը, և մարդիկ, ովքեր առողջ էին մինչև թոշակի անցնելը, անժամանակ մահանում են: Թոշակի անցնելուց հետո վաղաժամ մահը (այդպես են անվանում այդ սինդրոմը) պայմանավորված է նրանով, որ մարդը գտնում է, թե վերջացել են այն օրերը, երբ ինքը պիտանի էր: Սա ընդամենը պատկերացում է, բայց նրանց համար, ով դրանում համոզված է, այդ պատկերացումը վերածվում է հիվանդության և մահվան· Համեմատության համար ասենք, որ այն հասարակություններում, որոնցում ծեր տարիքը աշխատանքի համար խոչընդոտ չի համարվում, ծերունիները լիուլին կայտառ են մնում...» (157, էջ 17–18):

Ուշ տարիքում, մասնավորապես 60–65 տարեկանից հետո մարդու կենսագործունեությունը հիմնականում երկու ուղղությամբ է ընթանում. մի դեպքում մարդն իրեն սպառված է համարում և դիմում ոչ ադապտիվ

պաշտպանական քայլերի. սկսում է ապրել անցյալով, խիստ կենտրոնանում է սեփական ես–ի, առողջության վրա, ի հայտ են գալիս տագնապով, դեպրեսիայով ուղեկցվող ներոտիկ բնույթի խանգարումներ: Ըստ Ա. Քաթի «ծերացող ես–ի նկատմամբ հիասթափություն է առաջանում և իդեալական ես–ը, իրականությունից և գերես–ի ճնշումներից փախուստ տալու նպատակով, սկսում է վերածնվելու միջոցներ... կամ երիտասարդության էլիքսիր փնտրել (հաճախ ալկոհոլն է որպես այդպիսին հանդես գալիս)» (196, էջ 47).

Ծերացման մյուս ուղին կարելի է բնութագրել որպես ակտիվ ինքնասպառում. մարդը համարյա մինչև կյանքի վերջը կենտրոնացած է լինում իր առօրյա խնդիրների վրա, նոր նպատակներ է դնում և իրականացնում: Ժամանակակից հերոնտոլոգիան, հերոնտոհոգեբանությունը ինտենսիվ հետազոտություններ են իրականացնում պարզելու ծերացման վերոնշյալ մոդելների պատճառները: Վերջիններս հիմնականում հոգեբանական բնույթի են (Դ. Չոպրա), հետևաբար նաև հոգեբանական ազդեցությանը ենթակա. իսկ այս հանգամանքը հրատապ է դարձնում ծերության շրջանի հոգեթերապևտիկ աշխատանքների տեսագործնական համակարգի մշակման հարցը. Ցավոք, ժամանակակից պատկերացումներում ակտիվ ծերության և երկարակեցության մեխանիզմներն առավելապես կենսաբանական դիրքերից են ընկալվում հաճախ հանիրավի անտեսելով հոգեբանական գործոնը.

Այսպիսով մենք փորձեցինք դասակարգել տարիքներն ըստ այն հիմնախնդիրների, որոնք լուծվում են տարիքային ցիկլի ընթացքում ի հայտ եկող նորագոյացությունների միջոցով: Նման մոտեցումը, ինչպես նշեցինք, կարելի է բնութագրել որպես ֆունկցիոնալ, քանի որ տարիքային նորագոյացություններն ու ամբողջական ցիկլերը դիտարկվում են իրենց ֆունկցիոնալ նշանակության տեսանկյունից: Ֆունկցիոնալ մոտեցումը ենթադրում «...հետազոտության ենթակա... տարրերի առանձնացումը և որոշակի կապերի մեջ դրանց տեղի և նշանակության (ֆունկցիայի) որոշումը...» (147, էջ 380)· Տարիքային պարբերացման հարցում նման մոտեցումը, ըստ մեզ, ունի մի շարք առավելություններ. նախ այն հնարավորություն է տալիս որոշակի տեսանկյունից (ֆունկցիոնալ նշանակության) բացատրել տարիքները. այսինքն այն բացատրող դասակարգում է (124). հիմնվում է հենց տարիքային երևույթների

վրա (ոչ թե այլ համակարգերի զարգացման իրողությունների վրա), դասակարգման համար հիմք է ընդունվում և կարևորվում է ոչ թե մարդու մի ինչ–որ առանձին ենթահամակարգ. ոլորտ. այլ համակարգն ամբողջությամբ (դրանով իսկ հաղթահարվում է սուբյեկտիվիզմը), նկատի են առնվում ոչ միայն զարգացման զուտ հոգեբանական, այլև կենսաբանական և սոցիալական իրողությունները. այսինքն համակարգային մոտեցում է դրսևորվում: Այս պարբերացման մեջ տարիքային նորագոյացությունները դիտարկվում են ոչ թե միմյանցից անկախ, այլ միասնության մեջ որպես զարգացման ընդհանուր տրամաբանական շղթայի մաս, տարիքային հիմնախնդրի լուծման քայլ: Նշենք նաև, որ այս պարբերացումը չի հակասում և հակադրվում առկա պարբերացումներին: Եվ, վերջապես, նման մոտեցումը հնարավորություն է տալիս նոր տեսանկյունից դիտարկել տարիքային մի շարք երևույթներ (տարիքային նորագոյացությունները, անցումային տարիքները և անձնավորության զարգացման ճգնաժամերը), հոգեախտաբանական մի շարք իրողությունների տարիքային–հոգեբանական ասպեկտները. օրինակ մեր կողմից արդեն փորձ է արվել բացատրել մանկական աուտիզմի որոշ հատկանիշներ տարիքային–հոգեբանական տեսանկյունից (10):

2.6. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տարիքային հոգեբանության մեջ, սովորաբար, տարիքային բոլոր ճգնաժամերը դիտվում են որպես մեկ ընդհանուր ծագումով, պատճառներով, մեխանիզմներով տեղի ունեցող, նույն բնույթի իրողություններ: Փաստորեն, ենթադրվում է, որ օնտոգենեզը իր մեջ պարունակում է միայն նույն տիպի նորմատիվ սթրեսոգեն իրավիճակ· Մինչդեռ պարզ տրամաբանությունն արդեն իսկ հուշում է, որ այնպես, ինչպես կյանքում մարդը բախվում է տարաբնույթ սթրեսների, այնպես էլ օնտոգենեզում առկա են տարաբնույթ նորմատիվ գործընթացներ, որոնք սթրեսոգեն են մարդու համար: Բացի այդ, ժամանակակից գիտության մեջ առանձնացված տարբեր տարիքների ճգնաժամերի դրսևորումների ամենամակերեսային համեմատությունն իսկ ակնհայտ է դարձնում, որ որոշ շր-

ջանների ճգնաժամեր բազմաթիվ ընդհանուր կողմեր ունեն և էապես տարբերվում են այլ տարիքների ճգնաժամերից. այսպես, տարիքային հոգեբանությանը վաղուց ի վեր հայտնի էր, որ 3 տարեկանի և դեռահասության շրջանների ամենաէական բնութագիրը ես–համակարգում տեղի ունեցող խմորումներն են, հետևաբար պետք էր ենթադրել, որ դրանք նույն բնույթի, նույն պատճառներն ունեցող երևույթներ են: Միևնույն ժամանակ, այս ախտանշաններին մենք չենք հանդիպում տարիքային հոգեբանության մեջ առանձնացված մի շարք այլ ճգնաժամերի պարագայում (ասենք նորածնության կամ յոթ տարեկանի ճգնաժամերի դեպքում): Հետևությունը մեկն է. դրանք տարբեր բնույթի ճգնաժամեր են: Այս տարբերություններն էլ գիտության մեջ ծնում են տարբեր տեսություններ, որոնցից մի քանիսը բացատրում են մի տիպի, մյուսները՝ այլ բնույթի ճգնաժամեր: Ասենք, ըստ Փ. Բլոսի տեսության կա երկու ճգնաժամային շրջան՝ 3 տարեկանում և դեռահասության շրջանում, և այդ ճգնաժամերի հիմքում ընկած է ինդիվիդուացիայի գործընթացը: Հեղինակը գիտության մեջ առանձնացված մյուս ճգնաժամերին չի անդրադառնում կամ ուղղակի չի ընդունում դրանք, քանի որ դրանցում այս ճգնաժամերի հետ նա ընդհանրություններ չի տեսնում: Տվյալ դեպքում մյուս ճգնաժամերն անտեսվել են, սակայն ավելի հաճախ փորձ է արվում մի տեսակի ճգնաժամի առնչությամբ մշակված տեսությունը տարածել այլ տիպի ճգնաժամերի վրա, ըստ որում, հաշվի չի առնվում, որ այդ ճգնաժամերն ախտանշաններով էապես տարբերվում են: Արդյունքում ստացվում են արհեստական, հակասություններով լի տեսություններ, որոնք երևույթների էության մեջ կողմնորոշելու փոխարեն ավելի շուտ ապակողմնորոշում են:

Ժամանակակից հոգեբանության մեջ տարիքային ճգնաժամերի դասակարգման հիմնախնդիրը չի բարձրացվել, տարբերակված չեն օնտոգենետիկ սթրեսոգեն իրավիճակները (այնպես, ինչպես տարբերակվում են մենակության, հետտրավմատիկ, ընտանեկան և այլ կարգի սթրեսները): Միևչդեռ ակնհայտ է, որ զարգացումը բարդ, հակասական գործընթաց է և իր մեջ պարունակում է տարաբնույթ նորմատիվ դժվարություններ, որոնք կարող են ճգնաժամերի հանգեցնել մարդուն: Ասենք՝ սթրեսոգեն կարող են լինել տարբեր նորագոյացությունների ի հայտ գալը (ասենք՝ քայլքի կամ խոսքի ձևավորումը, կենսաբանական տեղաշարժերը), տարիքային խնդիրների լուծումը (Ռ. Հավիգուրսթ), զարգացման սոցիալական իրավիճակների փոփոխությունը կամ անձնավորության մուտքը նոր հարաբերություններ (Վ. Սլոբոդչիկով, Գ. Ցուկերման): Տարիքային սթրեսների առանձին խմբեր են տարիքային մի փուլից մյուսին անցման շրջանները կամ, ասենք, ինքնագիտակցության տարիքային վերակառուցումների շրջանները: Նման տարբերակումներն ու դասակարգումն անհրաժեշտ են ոչ միայն տեսական, այլև զուտ գործնական տեսանկյունից մարդու տարիքային, հոգեբանական պրոբլեմների ախտորոշման, դաստիարակչական, հոգեկարգավորման, հոգեթերապևտիկ ստրատեգիաների ընտրության համար: Նման դասակարգումն անհրաժեշտ է նաև հետազոտական ոլորտների ճշգրտման համար այսինքն պետք է որոշել, կոնկրետացնել, թե ճգնաժամ հարուցող որ տարիքային երևույթներն են հետազոտվելու: Առանց նման ճշգրտման, հետազոտողը քաոսի առաջ կկանգնի, չի կարողանա տեղայնացնել վերացական «ճգնաժամ» հասկացությունը, ճշտել, թե կոնկրետ ինչ է ինքը հետազոտում (թերևս, հենց այդ է պատճառը, որ տարիքային հոգեբանության մեջ ճգնաժամերի պրոբլեմը «խորթ զավակի» դերում է հանդես գալիս՝ ըստ արժանվույն չի հետազոտվում): Մեր ձեռնարկած դասակարգումը նախ և առաջ ուղղված է զուտ հետազոտական խնդիրների լուծմանը, այդ դասակարգմամբ մենք կոնկրետացնում ենք տարիքային նորմատիվ ճգնաժամերի այն ոլորտը, որը մեր հետազոտության օբյեկտն է հանդիսանում:

Ըստ մեզ «տարիքային ճգնաժամ» հասկացությունը կարող է դիտվել որպես ընդհանուր տարիքային նորմատիվ երևույթներով պայմանավորված մի շարք ճգնաժամերի համար: Այդ ճգնաժամերից այսօր վստահորեն կարելի է առանձնացնել երկուսը, որոնք չնայած չեն տարբերակվել, սակայն հետազոտվել են: Դրանք են տարիքային անցումներով և ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերը: Մյուս կարգի ճգնաժամերի գոյության հարցը դեռևս վարկածային բնույթ ունի և առանձին հետազոտության առարկա է:

Նախ՝ անդրադառնանք տարիքային մի փուլից մյուսին անցմամբ պայմանավորված ճգնաժամերի հարցին: Կարծում ենք, որ դրանց համար կարելի է օգտագործել արդեն ընդունված «անցումային տարիքներ» հասկացությունը: Այս հասկացությունը տարիքային հոգեբանու-

թյան մեջ հաճախ օգտագործվում է որպես «զարգացման ճգնաժամ» հասկացության հոմանիշ, մինչդեռ այդ հասկացությունները միանգամայն տարբեր իրողություններ են նշում: Տարիքային անցումը զարգացման գործընթացի օրինաչափություն է, իսկ ճգնաժամը վիճակ է, որի մեջ մարդը հայտնվել է, որոշակի, տվյալ դեպքում տարիքային սթրեսոգեն գործոնների ազդեցության տակ: Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար է տարբերակել «տարիքային անցում» և «տարիքային անցմամբ պայմանավորված ճգնաժամ» հասկացությունները, մանավանդ, որ տարիքային անցումները կարող են անճգնաժամային լինել:

Տարիքային անցումների սթրեսոգենության մի քանի մոդելներ կարելի է առանձնացնել: Այդ մոդելներից է, օրինակ, այն, որ անցումային շրջաններում զարգացումը, փոփոխությունները ռևոլյուցիոն, թռիչքածն բնույթ են կրում, կարճ ժամանակում որակական վերակառուցումներ են տեղի ունենում: Այսպես, ըստ Պ. Բլոնսկու. «... Երեխայի չընդհատվող զարգացումն ընթանում է միայն որոշակի ժամանակի ընթացքում, որից հետո զարգացման մեջ տեղի է ունենում թռիչք (ճգնաժամ)» (29, էջ 53): Այս դրույթը Վիգոտսկին ավելի է կոնկրետացնում. «Հարաբերականորեն կայուն տարիքներում...զարգացումը հիմնականում տեղի է ունենում երեխայի անձնավորության միկրոսկոպիկ փոփոխությունների հաշվին, դրանք, մի որոշակի չափով կուտակվելով, թռիչքածն ի հայտ են գալիս որևէ տարիքային նորագոյացության ձևով...Զարգացումը բուռն, սրընթաց հաճախ աղետալի բնույթ է կրում, այն, ինչպես կատարվող փոփոխությունների տեմպի, այնպես էլ իմաստի տեսակետից, իրադարձությունների հեղափոխական ընթացք է հիշեցնում» (41, էջ 249): Այս հեղափոխական փոփոխություններին հարմարվելու դժվարությունները էլ հենց սթրեսոգեն են դարձնում անցումային տարիքը:

Լ. Վիգոտսկու աշակերտները (Ա. Լեոնտև, Դ. Էլկոնին, Լ. Բոժովիչ և ուրիշներ) ընդունում են զարգացման վերոնշյալ դիալեկտիկական բնութագրերը, սակայն տարիքային անցումները բացատրում են նաև այն բանով, որ այդ շրջաններում փոխվում է առաջատար գործունեությունը, ինչի հետևանքով մարդը հայտնվում է զարգացման հոգեբանական և սոցիալական նոր իրավիճակի մեջ: Օրինակ Ա. Ն. Լեոնտևը գրում է. «Մի աստիճանից մյուսին անցնելու հատկանիշ է հանդիսանում հենց գործունեության առաջատար տիպի, իրականության նկատմամբ երեխայի

առաջատար վերաբերմունքի փոփոխությունը» (5, էջ 486): Այս մոդելում զարգացման նոր իրավիճակին հարմարվելու դժվարություններն են հանդես գալիս որպես սթրեսոգեն գործոն:

Արևմտյան հոգեբանության մեջ անցումային տարիքների սթրեսոգեն լինելը հաճախ բացատրվում է անձնավորության տարիքային մարգինալությամբ. մարդը դուրս է գալիս մի տարիքից, սակայն մյուսի մեջ մտած չի լինում: Այլ կերպ ասած այդ շրջանների սթրեսոգենությունը պայմանավորված է մարդու տարիքային վիճակի. ստատուսի անորոշությամբ:

Տարիքային ֆիզիոլոգիայում անցման մեկ այլ մոդել է տրվում. անցումը դիտվում է որպես կենսաբանական վերակառուցման շրջան: Օրինակ ըստ Ի. Ա. Արշավսկու. «Տարիքային մի փուլից մյուսին անցումն իրենից ներկայացնում է նեղ ժամանակային սահմաններ ունեցող, բեկումնային, կամ, եթե ուզում եք, ճգնաժամային շրջան, որի ընթացքում օրգանների տարբեր համակարգերի գործունեությունը վերակառուցվում է լաբիլության նոր մակարդակի, ինչը ապահովում է հարմարումը միջավայրի սկզբունքորեն նոր այնպիսի պայմաններին, որոնց հետ օրգանիզմը նախորդ տարիքային շրջաններում չէր փոխազդել...» (22 էջ 47):

Այսպիսով տարբեր հեղինակներ անցումային տարիքների տարբեր բնութագրեր են կարևորում և սթրեսոգեն համարում, նախքան այդ բնութագրերի քննարկմանն անցնելը, փորձենք ճշգրտել նս մեկ հարց, այն է տարիքային մի փուլից մյուսին, մի որակական ամբողջականությունից մյուսին անցման մակարդակի հարցը: Փորձենք հստակեցնել ասվածը. մարդը որպես համակարգ, ունի բազմաթիվ ենթահամակարգեր, որանցից յուրաքանչյուրն ունի զարգացման իր գիծը, ուղղությունը, իր անցումները: Հոգեբանության մեջ, ինչպես նշել ենք, կան բազմաթիվ պարբերացումներ, որոնցում հենց այդ ենթահամակարգերի որակական փոփոխություններն են արտացոլվում: Օրինակ Ժ.Պիաժեն հետազոտել է ինտելեկտի զարգացման փուլերը: Ըստ որում, ինտելեկտը որպես համակարգ, ունի իր ենթահամակարգերը, ասենք վերբալ ինտելեկտը, որն էլ, անշուշտ, իր հերթին ունի որակական զարգացման փուլեր:

Այսպիսով տարբեր ենթահամակարգեր կարող են ունենալ զարգացման իրենց փուլերը, հետևաբար նաև անցումային շրջանները, սակայն

որևէ չեն կարող դիտվել որպես ամբողջ համակարգի զարգացման անցումային շրջաններ: Բնականաբար, հարց է ծագում, թե ինչ մակարդակի փոփոխությունների հիման վրա կարելի է որոշել տարիքային մի փուլից մյուսին անցումները: Ռուս փիլիսոփաներ Ա. Ս. Սիկլինը և Վ. Ա. Պոդոլսկին, քննարկելով զարգացման գործընթացում անցումների և թռիչքների տեսակների հարցը, ուրվագծում են նաև դրանց մակարդակները: Օրինակ նրանք առանձնացնում են թռիչքների (անցումների) այսպիսի մակարդակներ. «1. Թռիչքներ, որոնք նշանավորում են անցումը նոր որակի զարգացող համակարգի կազմակերպման նույն մակարդակի շրջանակներում ..2. Թռիչքներ, որոնք նշանավորում են զարգացման գլխավոր մարդուղու արմատական վերակառուցումը. 3. Թռիչքներ, որոնք նշանավորում են ամբողջ համակարգի որակական փոփոխությունը» (101, էջ 67): Եթե ներկայացված սխեման փորձենք կիրառել տարիքային անցումների նկատմամբ, ապա, կարծում ենք, առաջին կետում ներկայացված թռիչքները (անցումները) վերաբերում են մարդու առանձին ենթահամակարգերի զարգացմանը, երբ որակական փոփոխությունները տեղի են ունենում մարդու առանձին ենթահամակարգերում, ինչը, սակայն, չի փոխում զարգացման ընդհանուր ուղղությունը կամ հանակարգի ամբողջության: Թերևս, տարիքային մի փուլից մյուսին անցմանը բնորոշ են երկրորդ և երրորդ կետերը, սակայն վերջին կետում նշվող ամբողջ հանակարգի որակական փոփոխությունն անցումային շրջանում տեղի չի ունենում, այն առկա է տարիքային փուլի վերջում որպես անցման հետևանք: Հետևաբար, տարիքային անցումն առավելագույնս բնութագրվում է «զարգացման գլխավոր մարդուղու վերակառուցմամբ»:

Ինչ վերաբերում է տարիքային անցման վերը ներկայացված մոդելներին, ապա, կարծում ենք, դրանք բոլորն էլ բնութագրում են անցումային շրջանները, սակայն տարբեր տեսանկյուններից: Այսպես, ցանկացած անցում, բնականաբար, ենթադրում է քանակական փոփոխությունների վերածում որակականի, հարցը միայն այն է, թե ո՞ր քանակական փոփոխություններն ինչպիսի որակական փոփոխությունների են հանգեցնում. Մարգինալության վարկածը նույնպես միանգամայն հիմնավորված է. մարդը դուրս է գալիս տարիքային մի փուլից, սակայն դեռևս հաջորդի մեջ մտած չի լինում (ասենք դեռահասը ոչ հատուն մարդ է, ոչ

արեխա). Հին մահացումը և նոր որակների ի հայտ գալը նույնպես բնութագրական է ցանկացած անցմանը: Սակայն այս դնալքում անհրաժեշտ է ճշտել, թե ինչ նոր որակների մասին է խոսքը, եթե դա վերաբերում է նոր տարիքային փուլի նորագոյացություններին, ապա կարելի է ասել, որ անցումը տեղի է ունեցել, սկսել է հաջորդ տարիքը: Թերևս, անցումային տարիքներում ի հայտ եկող նորը, այսպես կոչված, անցումային նորագոյացություններն են (Լ. Վիգոտսկի), որոնք դեռևս բավարար հետազոտության չեն ենթարկվել:

Կարծում ենք, ամբողջ համակարգի մակարդակով անցման չափանիշ կարևոր պահ է նշում Ի. Արշավսկին. իսկապես, եթե զարգացման մարդուղու վերակառուցում է տեղի ունենում, ուրեմն վերակառուցումները պետք է ընդգրկեն բոլոր հիմնական համակարգերը, այսինքն ոչ միայն հոգեկան և սոցիալական, այլև կենսաբանական համակարգը: Այս հանգամանքը տարիքային հոգեբանության մեջ հաճախ հաշվի չի առնվում և որպես տարիքային անցումներ են դիտվում առանձին ենթահամակարգերի, ասենք առաջատար գործունեությունների, սեռակարության զարգացման փուլերի անցումները: Իհարկե, ամբողջ համակարգի զարգացման անցումային տարիքները կարող են համընկնել առանձին ենթահամակարգերի զարգացման փուլերի անցումների հետ, սակայն կարող են նաև չհամընկնել, քանի որ յուրաքանչյուր ենթահամակարգ ունի զարգացման իր ուղին, զարգացումը, ինչպես հայտնի է, հետերոխրոն բնույթ ունի (Բ. Անանև). Ենթահամակարգերի զարգացման մեջ անցումները չեն փոխում ամբողջ համակարգի (մարդու) զարգացման ուղղությունը, իսկ տարիքային անցումների դեպքում հենց համակարգի զարգացման ուղղությունն է փոխվում: Ըստ որում, այդ փոփոխությունն ի հայտ է գալիս թե մարմնական և թե հոգեկան ու սոցիալական ոլորտներում. փոխվում են մարմնական նորագոյացությունների բնույթը (ասենք սկսում է ի հայտ գալ երկրորդային սեռային հատկությունների համալիրը), մոտիվացիոն համակարգը, միջանձնային հարաբերությունների բնույթը և այլն:

Ելնելով շարադրվածից փորձենք ամփոփել տարիքային մի փուլից մյուսին անցման բնութագրերը: Նախ անցումային շրջանը կարելի է դիտել որպես նախորդ տարիքային փուլի վերջի և հաջորդ տարիքային փուլի սկզբի միջև ընկած ժամանակաշրջան, յուրահատուկ լատենտ շր-

ջան, որի ընթացքում փոխվում են օրգանիզմի և հոգեկան համակարգի զարգացման ծրագրերը: Որպես լատենտ շրջաններ անցումային տարիքներում դեռևս նոր տարիքային փուլի դրսևորումները բացակայում են, վերակառուցումները տեղի են ունենում խորքային մակարդակում, ասենք տեղաշարժեր են սկսվում էնդոկրին համակարգում կամ, ասենք, անգիտակցական ոլորտում: Այդ վերակառուցումները հաճախ ընկալվում են որպես անորոշ ցանկություններ (ուզում եմ, չգիտեմ, թե ինչ), անորոշ տխրություն, փոխվելու, հասունանալու, մեծանալու յուրահատուկ զգացողություն, անորոշ տագնապներ, աստենիկ զգացողություններ: Այս անորոշությունն ի հայտ է գալիս նաև սոցիալական ոլորտում. մարդը հայտնվում է անորոշ սոցիալական դիրքում ոչ երեխա է, ոչ դեռահաս, ոչ դեռահաս է, ոչ երիտասարդ, ոչ երիտասարդ է, ոչ տարիքով մարդ: Պետք է ասել, իհարկե, որ անցումային տարիքների բնորոշ, տարբերակիչ ախտանշանները դեռևս հետազոտված չեն (ընդհանրապես անցումները որպես տարիքային ճգնաժամերի առանձին կատեգորիա, առանձնացված չէին):

Անցումը կարելի է բնութագրել նաև որպես տարիքային մի հիմնախնդրի լուծման գործընթացի ավարտման, ամփոփման և հաջորդ տարիքային հիմնախնդրին անցնելու նախապատրաստական շրջան, երբ տեղի է ունենում նախորդ տարիքի ընթացքում կուտակված քանակական փոփոխությունների վերածում որակականի, ինչն էլ, ըստ մեզ, պայման և, ինչ–որ տեղ, նաև ազդանշան է հանդիսանում հաջորդ տարիքային փուլին անցնելու համար, այսինքն մարդը պատրաստ է լինում անցնելու հաջորդ տարիքային հիմնախնդրի լուծմանը: Փորձենք կոնկրետացնել ասվածը. ասենք կյանքի առաջին փուլում ձևավորվում են տեսակային հատկությունները. դրանք դեռևս առանձին հատկություններ են, որոնք կուտակվելով տարիքի վերջում տալիս են նոր որակ՝ երեխան կայանում է որպես մարդ, դրանով իսկ ավարտվում է տարիքային հիմնախնդրի լուծումը. Դա իր հերթին հնարավորություն է տալիս անցնելու հաջորդ հիմնախնդրի լուծմանը սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորմանը: Այսինքն մարդու տարիքային զարգացումը մենք դիտում ենք որպես մեկ ամբողջական գործընթաց, որի մեջ տարիքային յուրաքանչյուր փուլ հանդես է գալիս որպես միջոց. պայման հաջորդին անցնելու համար:

Այժմ, ամփոփելով շարադրվածը, փորձենք ուրվագծել անցումային տարիքների որոշման չափանիշները:

1. Տարիքային անցման մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ անցմանը հաջորդող տարիքային շրջանում սկզբունքորեն փոխվում է զարգացման ուղղությունը: Դրա ցուցանիշ կարող է հանդիսանալ տարիքային նորագոյացությունների համակարգի որակական փոփոխությունը կամ այլ կերպ ասած նորագոյացությունների բնույթի, լության փոփոխությունը. ասենք մի տարիքային ցիկլում ձևավորվում են տեսակային հատկություններ. մյուսում սեռային ակտիվության սուբյեկտի հատկությունները:

2. Անցումային տարիքային շրջանը նախորդ տարիքային ցիկլի վերջին նորագոյացությունների ձևավորմանը հաջորդող և հաջորդ տարիքային ցիկլի առաջին նորագոյացություններին նախորդող ժամանակաշրջանն է: Այս չափանիշը. բնականաբար, խիստ անհատական բնույթ ունի, բացի այդ, տարբեր համակարգերի զարգացումը հետերոխրոն է: Այդ իսկ պատճառով այս չափանիշի վրա հիմնվելիս պետք է հիմք ընդունել, մի կողմից, տվյալ մշակույթի շրջանակներում զարգացման միջին ցուցանիշները (այն, թե տվյալ մշակույթում սովորաբար որ տարիքում են սկսում ի հայտ գալ համապատասխան նորագոյացությունները), մյուս կողմից պետք է հաշվի առնել այդ նորագոյացությունների համընդհանուր բնույթը, այսինքն այն, որ նորագոյացությունները սկսում են ի հայտ գալ մարդու ենթահամակարգերի մեծ մասում: Օրինակ որոշ ենթահամակարգերի ինվոլյուցիան կարող է սկսել նույնիսկ դեռահասության տարիքում (ասենք հայտնի է, որ տիմուսը 13–15 տարեկանից սկսում է ինվոլյուցիա ապրել), սակայն այդ տարիքի համար դա եզակի երևույթ է, և ենթահամակարգերի մեծ մասն այդ շրջանում զարգացում են ապրում:

3. Անցումային տարիքները որոշելիս պետք է նկատի ունենալ, որ անցումը համակարգային գործընթաց է, և հաշվի առնել թե՛ հոգեկան և թե կենսաբանական ու սոցիալական մակարդակներում տեղի ունեցող փոփոխությունները. Տարիքային անցումը չի կարող մի ոլորտում տեղի ունենալ. ասենք, վերաբերել միայն հոգեկանին. առավել ևս հոգեկան ինչ–որ ենթահամակարգի: Զարգացման ուղղության փոփոխությունը այսպես թե այնպես, ազդում է բազմաթիվ ենթահամակարգերի վրա, այդ

իսկ պատճառով, կարծում ենք, տարիքային ցիկլերը և անցումները որոշելիս հոգեբանությունը չի կարող սահմանափակվել միայն հոգեկան և սոցիալ–հոգեբանական գործոնների հաշվառմամբ (այնպես, ինչպես հնարավոր չէ որոշել տարիքային անցումները՝ հաշվի առնելով միայն մարմնական փոփոխությունները), անհրաժեշտ է նկատի ունենալ նաև կենսաբանական գործոնը (հոգեկանն ու մարմինը մեկ միասնական համակարգի տարբեր կողմեր են, և նրանց զարգացումը չի կարող տարբեր ուղղություններով ընթանալ), մանավանդ որ վերջինս հետազոտության համար ավելի «տեսանելի է»:

Ելնելով նշված չափանիշներից և վերը ներկայացված տարիքային պարբերացումից՝ փորձենք առանձնացնել անցումային տարիքները:

Առաջին տարիքային անցումը 7–9 տարիքային շրջանն է: Ըստ Զ. Ֆրոյդի այս տարիքը սեռական զարգացման լատենտ կամ նախապատրաստական շրջանն է, դրանով իսկ այն անցումային է: Ռուս հոգեբանները, ինչպես արդեն նշել ենք, այս տարիքն անցումային (կամ ճգնաժամային) են համարում, սակայն անցումը կապում են առաջատար գործունեության, երեխայի զարգացման սոցիալական իրավիճակի փոփոխության հետ: Է. Էրիքսոնը նույնպես այս տարիքը ճգնաժամային է համարում: Նշված տարիքը մենք անցումային ենք համարում՝ հիմնվելով հետևյալ ցուցանիշների վրա: Յոթ տարեկանի շրջանում ավարտվում է գրեթե բոլոր տեսակային հատկությունների ձևավորումը: Մոտավորապես 8, 9 տարեկանից սկսում է սեռական հասունացումը (դեռևս էնդոկրին համակարգերի մակարդակում), ինչը վկայում է զարգացման ուղղության փոփոխության մասին: Եթե նախորդ շրջանում նորագոյացությունների մեծ մասն ուղղված է անհատի տեսակային բնութագրերի ձևավորմանը, ապա հաջորդ տարիքային ցիկլի նորագոյացությունները հիմնականում վերաբերում են սեռական ոլորտին՝ Միևնույն ժամանակ, այս տարիքում որակական փոփոխություններ են տեղի ունենում բազմաթիվ ենթահամակարգերում: Վերակառուցվում է երեխայի մոտիվացիոն համակարգը, առաջատար գործունեությունը, միջանձնային հարաբերությունների ոլորտը, ինտելեկտը և այլն:

Տարիքային մյուս անցումը վերաբերում է 18–22 տարիքային շրջանին: Այս շրջանը շատ գիտնականներ դիտում են որպես հասունության շրջանի առաջին անցումը կամ ճգնաժամը (Դ. Լևինսոն, Ռ. Գոուլդ և ուրիշներ): Մոտավորապես 18–20 տարեկանում ավարտվում է կենսաբանական սեռական հասունացման գործընթացը (Մ. Կլե, Ս. Սթիվենս–Լոնգ և ուրիշներ), հիմնականում ավարտվում է նաև հոգեբանական և սոցիալական սեռային հասունացումը: Նշված հանգամանքները վկայում են զարգացման ուղղության փոփոխության մասին: Միևնույն ժամանակ, հաջորդ տարիքում սկսում է ձևավորվել նորագոյացությունների միանգամայն նոր համալիր սոցիալական ակտիվության սուբյեկտի հատկությունները:

Վերջին անցումային շրջանը, ըստ մեզ, վերաբերում է 35–40 տարեկանին: Տարիքային այս շրջանն արևմուտքում բնութագրվում է որպես կյանքի կեսի ճգնաժամ և ինտենսիվորեն հետազոտվում է: Այս շրջանում ավարտվում է մարդու որպես սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորման գործընթացը. մարդը կայանում է որպես աշխատանքային, ընտանեկան ակտիվության սուբյեկտ՝ մասնագիտություն է ձեռք բերում, յուրացնում է ընտանեկան դերերը, հասարակության մեջ որոշակի դիրք է գրավում: Միևնույն ժամանակ, այս տարիքից (սովորաբար 40–ից հետո) սկիզբ են առնում ինվոլյուցիայի առաջին նշանները: Այս հանգամանքը նույնպես վկայում է զարգացման ուղղության փոփոխության մասին:

Այսպիսով մենք գտնում ենք, որ մարդու զարգացման ընթացքում երեք տարիքային անցումներ են տեղի ունենում (եթե չհաշվենք մահացման գործընթացը որպես կյանքից մահվանն անցումային շրջան): Սակայն, ինչպես հայտնի է, տարիքային հոգեբանության մեջ առանձնացվում են նաև այլ տարիքային անցումներ կամ ճգնաժամեր: Դրանցից են, ինչպես արդեն նշել ենք, նորածնության շրջանը, 2 ամսական հասակը, 1 տարեկանը, 3 տարեկանը, 27–32 տարեկանը, 55–65 տարիքային շրջանը: Այս տարիքային շրջաններում, ըստ մեզ, զարգացման ուղղության մեջ որակական փոփոխություններ տեղի չեն ունենում: Իհարկե, նշված շրջաններում առկա են տարբեր բնույթի տարիքային տեղաշարժեր, դրանք կարող են ճգնաժամային ընթացք ունենալ, սակայն այդ ճգնաժամերն անցումայնությամբ չեն պայմանավորված: Այսպես նորածնության շրջանը կենսապայմանների փոփոխության, նոր միջավայրին հարմարվելու առումով չափազանց բարդ, իսկապես ճգնաժամային շրջան է, սակայն ինչպես իրավացիորեն նշում է Ի. Ա. Արշավսկին. «Նույնիսկ ներարգան-

դային կյանքից արտարգանդային գոյության անցումը իսկական շրջադարձային պահ չէ զարգացման գործընթացում» (22, էջ 45): Եվ իսկապես, զարգացումն իր ուղղությունը չի փոխում. ինչպես պրենաթալ, այնպես էլ հետծննդյան շրջաններում շարունակվում են ձևավորվել տեսակային հատկությունները, և չնայած այս շրջանում տեղի են ունենում կենսաբանական տեղաշարժեր, սակայն դրանք ուղղակի նոր միջավայրին հարմարվելու հակազդումներ են և ոչ թե կենսաբանական զարգացման ուղղության փոփոխության հետ կապված նորագոյացություններ: Իհարկե, ինչ–որ տեղ այս շրջանը կարելի է համարել անցումային, սակայն զարգացման նույն ուղղության, տարիքային նույն ցիկլի շրջանակներում. խոսքը վերաբերում է կենսաբանական տեսակային հատկությունների ձևավորումից հոգեբանական, վարքային և սոցիալական տեսակային հատկությունների ձևավորմանն անցնելուն, այսինքն այս դեպքում անցում է տարիքային մի ենթաշրջանից մյուսին:

Երկու ամսական տարիքի անցումային լինելը մասնագետներից շատերը չեն ընդունում: Այդ շրջանը, ըստ երևույթին, տեսակի ճանաչման առումով սենզիտիվ շրջան է (երեխան խիստ զգայունություն է դրսևորում մարդկային դեմքերի նկատմամբ, բուռն կերպով հակազդում է դրանց): Ո՛չ կենսաբանական, ոչ էլ հոգեկան ոլորտներում այս շրջանում զարգացման ուղղության փոփոխություն տեղի չի ունենում:

Մեկ տարեկանի շրջանը նույնպես շատ գիտնականներ չեն դիտում որպես անցումային (ճգնաժամային): Ըստ երևույթին, այդ շրջանում մի քանի ենթահամակարգերում (մասնավորապես մոտորային և խոսքային ենթահամակարգերում) քանակական փոփոխությունները վերածում են որակականի երեխան սկսում է քայլել, խոսել: Այս տարիքը, թերևս, կարող է դիտվել որպես նշված տեսակային հատկությունների ձևավորման սենզիտիվ շրջան:

Երեք 11–15, 25–32, 55–65 տարիքային շրջանները մեր հետազոտության բուն թեման են հանդիսանում, այդ տարիքների մանրամասն վերլուծությանը մենք կանդրադառնանք ստորև: Այստեղ ուղղակի նշենք, որ այդ տարիքներից ոչ մեկի ընթացքում զարգացման ուղղության մեջ որակական փոփոխություններ տեղի չեն ունենում:

ԳԼՈՒԽ 3
ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԳՆԱԺԱՄԵՐԸ

3.1. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՏԵՐՀՈԳԵԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՑ ԻՆՏՐԱՀՈԳԵԿԱՆԻՆ ԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Ի տարբերություն կենդանիների, մարդու զարգացումը տեղի է ունենում ոչ միայն իրենից անկախ գործող, չգիտակցվող կենսաբանական, հոգեկան և սոցիալական ծրագրերով, այլև գիտակցաբար, այսինքն մարդը գիտակցում է իրեն որպես զարգացող սուբյեկտ, գիտակցում է իր զարգացման հիմնախնդիրները, ուղղությունները և իր ձեռքն է վերցնում այդ գործընթացը: Սակայն նման գիտակցումը տարիքային ցիկլի հենց սկզբից չէ, որ ի հայտ է գալիս, այլ տեղի է ունենում ավելի ուշ, որոշակի գործոնների ազդեցության տակ: Մարդկային զարգացումն այս տեսանկյունից բնութագրելիս պայմանականորեն կարելի է առանձնացնել այդ գործընթացի երկու տեսակ, ձև. մի դեպքում զարգացումն առավելապես հանդես է գալիս որպես ինքնաբուխ գործընթաց, մարդը հստակորեն չի գիտակցում տվյալ տարիքային հիմնախնդրի հրատապությունը, իրեն որպես տվյալ հիմնախնդիրը կրող: Միևնույն ժամանակ, հասարակությունը նույնպես չի ընկալում մարդուն որպես տվյալ հիմնախնդիրը կրող լիարժեք սուբյեկտ: Այս շրջանում տվյալ տարիքի հիմնախնդրի լուծմանն ուղղված մարդու ակտիվությունն առավելապես պայմանավորված է ներքին կենսաբանական, կենսահոգեկան, հաճախ հստակորեն չգիտակցվող գործընթացներով, մղումներով և արտաքին հանգամանքներով (դաստիարակչական ներգործություններ, հասարակական կարծիք և այլն), իսկ հստակորեն գիտակցվող ձգտումներով պայմանավորված գործունեությունը դեռևս ձևավորված չէ: Տարիքային ցիկլի որոշակի շրջանից, երբ արդեն ձևավորված կամ ինտենսիվ

ձնավորման գործընթացում են լինում տարիքային հիմնախնդրի լուծմանն ուղղված կենսաբանական նորագոյացությունները, երբ զարգացման որոշակի մակարդակի են հասնում նաև հոգեկան, վարքային և սոցիալական ոլորտները, սկսում է փոխվել մի կողմից հասարակության վերաբերմունքը զարգացող սուբյեկտի նկատմամբ (վերջինս սկսում է ընկալվել որպես տարիքային հիմնախնդիրը կրող), մյուս կողմից մարդն ինքն է սկսում գիտակցել իրեն որպես այդպիսին: Միաժամանակ, մարդը սկսում է գիտակցել նաև տարիքային հիմնախնդիրը, դրա հրատապությունը և հատուկ, նպատակաուղղված գործունեություն է ծավալում լուծելու տարիքային հիմնախնդիրը: Այլ կերպ ասած զարգացումն առավելապես ինքնաբուխ գործընթացից վերածվում է առավելապես նպատակաուղղված գործունեության: Այս գաղափարը մենք դիտում ենք որպես Լ. Ս. Վիգոտսկու բարձրագույն հոգեկան ֆունկցիաների ձնավորման կոնցեպցիայի տեղայնացումը տարիքային զարգացման գործընթացի վրա: Ըստ Վիգոտսկու «Բարձրագույն հոգեկան ֆունկցիաների պատմությունը ներկայանում է որպես սոցիալական վարքի միջոցների անհատական–հոգեբանական կազմակերպման միջոցների վերածման պատմություն» (44, էջ 56): Լ. Վիգոտսկին զարգացման ինտերհոգեկան (կամ սոցիալական) գործընթացի ինտրահոգեկանի վերածումը (կամ անհատական–հոգեբանականի) համարում է ոչ միայն առանձին բարձրագույն հոգեկան ֆունկցիաների, այլև անձնավորության ձնավորման կարևորագույն օրինաչափություն (43, էջ 224): Ըստ որում, նա ինտերհոգեկան ակտիվության ինտրահոգեկանի վերածման հետ կապված երկու կարևոր հանգամանք է նշում. այն, որ այդ գործընթացի արդյունքում երեխան իր ձեռքն է վերցնում, սկսում է կառավարել սեփական վարքը և, որ «...իր գործողությունները սեփական իշխանությանը ենթարկելն անհրաժեշտորեն, որպես նախադրյալ պահանջում է... այդ գործողությունների գիտակցում» (43, էջ 225): Վերլուծելով ինտերհոգեկան ակտիվությունից ինտրահոգեկան ակտիվության անցման հարցը Ա. Ն. Լեոնտևը նշում է, որ «... միաժամանակ տեղի է ունենում իրականության հոգեկան արտացոլման ձևի փոփոխություն. սուբյեկտը սկսում է գիտակցել, ներհայեցողության ենթարկել իրականությունը, սեփական գործունեությունը, ինքն իրեն» (83, էջ 97): Հիմնվելով վերոնշյալ դրույթների վրա մենք միաժամանակ գտնում ենք, որ մարդու օնտոգենեզի յուրաքանչյուր փուլում կարելի է առանձնացնել այնպիսի

կոնկրետ շրջան, երբ զարգացումը, տարիքային հիմնախնդրի լուծման գործընթացն առավելապես ինտերհոգեկան բնույթ է կրում, և այնպիսի շրջան, երբ զարգացումը վերածվում է գիտակցական, նպատակաուղղված, կամային գործունեության: Վերջինիս ձնավորման գործում մենք մեծ դեր ենք հատկացնում ոչ միայն ինտերհոգեկան, սոցիալական հարաբերություններին, այդ հարաբերությունների ինտերիորիզացիային, այլև կենսաբանական, հոգեբանական, վարքային իրողությունների զարգացման գործոններին՝ գտնելով, որ կենսաբանական, հոգեկան և վարքային նորագոյացությունների ի հայտ գալը և դրանց ընկալումը մարդու կողմից նույնպես պայմանավորում են զարգացման հիմնախնդրի ևս սեփական ես–ի որպես այդ հիմնախնդիրը կրողի գիտակցումը (օրինակ դեռահասության շրջանում երկրորդային սեռային հատկանիշների ձևավորումը, սեռական պահանջմունքի արթնացումը այն կարևոր հանգամանքներից են, որոնց շնորհիվ երեխան սկսում է գիտակցել, զգալ իրեն որպես տվյալ սեռը կրող):

Այսպիսով տեղայնացնելով Լ. Վիգոտսկու կոնցեպցիան անձնավորության, ես–համակարգի որպես բարձրագույն հոգեկան կառույցի զարգացման գործընթացի վրա կարելի է ասել, որ այդ գործընթացն ունի ինտերհոգեկան և ինտրահոգեկան շրջաններ. առաջինի դեպքում մարդը հստակորեն չի գիտակցում իրեն որպես տարիքային հիմնախնդիրը կրող, որպես տվյալ ակտիվության սուբյեկտ (ասենք որպես սեռային ակտիվության սուբյեկտ կին/տղամարդ), զարգացումն առավելապես կենսաբանական և սոցիալական (ինտերհոգեկան) մակարդակներում է տեղի ունենում: Երկրորդի դեպքում մարդն սկսում է գիտակցել իրեն որպես տվյալ ակտիվության սուբյեկտ, ձնավորում է այդ ակտիվության, ինչպես նաև իր որպես այն իրականացնողի կոնցեպցիաները և, սեփական պատկերացումներին համապատասխան, իրականացնում է այդ ակտիվությունը կերտելով իրեն որպես տվյալ ակտիվության սուբյեկտ: Ավելի հասկանալի լինելու համար կոնկրետացնենք ասվածը մարդու որպես սեռային ակտիվության սուբյեկտի զարգացումը քննելով. Թերևս, արդեն նորածնության շրջանից սկսած ակիզբ է առնում երեխայի անձի հոգեբանական–սեռային բնութագրերի ձնավորումը այսպես ասած ինտերհոգեկան մակարդակում (երեխային իր սեռին համապատասխան անուն է տրվում, վերաբերմունք է դրսևորվում), տարիքի հետ այդ բնութագրերն աճում են և քանակապես, և որակապես երե-

խային սովորեցնում են իր սեռին բնորոշ վարքի ձևերը, խորանում են երեխայի գիտելիքները սեռերի մասին և այլն: Դեռահասությունից սկսած սկիզբ է առնում երկրորդային սեռային հատկությունների ձևավորումը, դաստիարակությունն էլ ավելի է սեռային ուղղվածություն ստանում, փոխվում է վերաբերմունքը դեռահասի նկատմամբ, ի հայտ են գալիս նաև սեռային բնույթի հոգեբանական նորագոյացություններ սեռական պահանջմունքը, հակառակ սեռի նկատմամբ ինտիմ զգացմունքները, արթնանում է սեռային ինքնագիտակցությունը, և զարգացումը թևակոխում է ինտրահոգեկան մակարդակ երեխան սկսում է գիտակցել իրեն որպես սեռային ակտիվության սուբյեկտ, իր ծեռքն է վերցնում իր սեռային զարգացումը. մշակում է կոնցեպցիաներ նույն և հակառակ սեռերի, սեռային վարքի ձևերի, հարաբերությունների մասին և այդ կոնցեպցիաներին համապատասխան էլ ձևավորում է իրեն որպես սեռային ակտիվության սուբյեկտ: Զարգացման գործընթացի բնույթի նման փոփոխությունը կարելի է դիտել որպես հեղաշրջում, որի ժամանակ, նախ և առաջ, որակական վերակառուցում է ապրում մարդու ինքնագիտակցությունը. մարդն սկսում է միանգամայն նոր տեսանկյունից ընկալել իրեն, իր համար հրատապ է համարում միանգամայն նոր հիմնախնդիրներ, որոնց լուծմանն է ուղղված լինելու կյանքի տվյալ ցիկլը: Հենց այս գործընթացներն էլ ի հայտ են բերում տարիքային ճգնաժամերի այն խումբը, որը մենք անվանում ենք «անձնավորության զարգացման ճգնաժամեր»: Նախքան այս ճգնաժամերի ավելի մանրամասն քննությանն անցնելը, համառոտակի անդրադառնանք ինքնագիտակցության և դրա տարիքային վերակառուցումների հիմնախնդիրներին:

3.2. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ինքնագիտակցության էության հիմնախնդիրն ուրվագծվել է հնագույն ժամանակներում և քննվել ու քննվում է ամենատարբեր տեսանկյուններից, մասնավորապես փիլիսոփայության, հոգեբանության, նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի, միստիկայի դիրքերից: Այստեղ

մենք, իհարկե, չենք պատրաստվում ներկայացնել ոչ հարցի պատմությունը, ոչ էլ տեսակետների ողջ բազմազանությունը, այլ քննում ենք հիմնախնդիրը նախ գուտ հոգեբանական դիրքերից և այնքանով, որքանով դա անհրաժեշտ է բուն թեմայի ինքնագիտակցության օնտոգենետիկ վերակառուցումների վերաբերյալ մեր մոտեցումն ավելի հասկանալի դարձնելու համար

Հոգեբանական բառարաններում ինքնագիտակցության տարբեր սահմանումների կարելի է հանդիպել. օրինակ այն բնութագրվում է որպես «մարդու գիտակցված վերաբերմունքն իր պահանջմունքների և ընդունակությունների, վարքի դրդապատճառների և մղումների, ապրումների և մտքերի նկատմամբ» (122, էջ 332): Ա. Նալչաջյանի բառարանում ինքնագիտակցությունը սահմանվում է որպես «մարդու ..գիտակցված պատկերացումն իր որպես անընդհատորեն գոյություն ունեցող միասնական ու անկրկնելի էության մասին, որն առանձնանում է շրջապատող աշխարհից» (12, էջ 85): Մեկ այլ բառարանում «ինքնագիտակցություն» և «ես–կոնցեպցիա» հասկացությունները նույնական են համարվում և հետևյալ կերպ սահմանվում. «Իր մասին անհատի պատկերացումների հարաբերականորեն կայուն, առավել կամ պակաս չափով գիտակցված, որպես եզակիություն ապրվող համակարգ» (121, էջ 475):

Ինքնագիտակցության վերաբերյալ տարաբնույթ տեսակետների կարելի է հանդիպել նաև տարբեր հեղինակների մոտ: Այսպես, ըստ Ս. Ռուբինշտեյնի «Ինքնագիտակցությունը սեփական ես–ի առարկայական գիտակցումն է... այն, յուրաքանչյուր տվյալ, կոնկրետ, մասնավոր ես–ի մեջ ամփոփված համընդհանուր «ես»–ն է» (126, էջ 332): Խորհրդանշային ինտերակցիոնիզմի ներկայացուցիչ Ջ. Միդը, հետևելով Ու. Ջեյմսին, ինքնագիտակցության մեջ առանձնացնում է գիտակցող ես–ին և այդ գիտակցման օբյեկտը հանդիսացող ես–օբյեկտը me–ն, որը, ըստ հեղինակի, ոչ այլ ինչ է, քան «ընդհանրացված ուրիշը» (ըստ 27): Ըստ որում, ինքնագիտակցման գործընթացի էությունը Միդը տեսնում է որպես ուրիշների կողմից անհատի գիտակցման փաստի ընդունում. յուրացում անձի կողմից: Է. Էրիքսոնն ինքնագիտակցությունը բնութագրում է որպես մշտապես ի հայտ եկող ինքնանույնականության (սեփական ես–ը մշտապես նույնը լինելու) սու-

բյեկտիվ զգացողություն: Ըստ էրիքսոնի ինքնանույնականությունն ուրիշների հետ մարդու նույնացումների ինտեգրացման արդյունք է (209):

Խ. Լ. Բերմուդեսը (182) տարբերակում է պարզունակ կամ ոչ կոնցեպտուալ, ոչ լեզվական ինքնագիտակցությունը (ես–ի զգացական, վիզուալ և այլ կարգի ընկալումները) կոնցեպտուալ, «ես» դերանվամբ պայմանավորված ինքնագիտակցությունից: Վերջինիս շնորհիվ մարդը մտորում է իր ես–ի շուրջ. Իր աշխատության մեջ հեղինակը հիմնականում կարևորում և իր ուշադրությունը կենտրոնացնում է ոչ կոնցեպտուալ ինքնագիտակցության վրա, սակայն կարծում ենք, որ չափազանց հետաքրքրական է նաև ինքնագիտակցումը «ես» դերանվամբ պայմանավորելը: Այդ դրույթից ելնելով կարելի է ասել, որ լեզվի մեջ արդեն առկա է անհատականության և դրա գիտակցման կոնցեպցիան «ես» դերանվան ձևով, և վերջինիս յուրացումն անհատի կողմից ինքնագիտակցման գործընթացի կարևոր պահերից մեկն է հանդիսանում:

Հոգեբանության մեջ լայն տարածում ունի ինքնագիտակցության ֆենոմենոլոգիական մեկնաբանությունը, ըստ որի ինքնագիտակցությունը «ինքնաընկալման համակարգ է» (27, էջ 56) կամ, ըստ մեկ այլ հեղինակի «Ինքնագիտակցությունը բարդ հոգեկան գործընթաց է, որը, նախ և առաջ, դրսևորվում է գործունեության, շփման մեջ, տարբեր իրավիճակներում մարդու կողմից սեփական բազմաթիվ «պատկերների» ընկալմամբ» (155, էջ 317): Ֆենոմենոլոգիական տեսանկյունից ինքնագիտակցության մեկ այլ կարևոր ասպեկտ է ես–ի զգացողությունը, որը կարող է «...առավել կամ պակաս պարզորոշ արտահայտված կամ դիֆուզ լինել» (99, էջ 132): Ռուս հոգեբան Վ. Ստոլինն ինքնագիտակցման գործընթացում մի քանի այլ կարևոր պահեր է առանձնացնում. դրանցից են ինքնաառանձնացումը, «իրեն նկատի ունենալու» հանգամանքը (135, էջ 11–16), ինչպես նաև ուրիշների հետ նույնացումն ու միաժամանակ ինքնատարբերակումն ուրիշներից (135, էջ 26): Վերջին հանգամանքը հստակորեն ուրվագծել է դեռևս Կ. Մարքսը. «...Սկզբում մարդն իրեն ընկալում է միայն այլ մարդկանց մեջ ինչպես հայելում: Միայն մարդ Պավելին որպես իր նմանին, վերաբերվելով է, որ մարդ Պյոտրը սկսում է վերաբերվել իրեն որպես մարդու» (97, էջ 59):

Ինքնագիտակցության և ինքնագիտակցման գործընթացի վերաբերյալ տեսակետների այս համառոտ ուրվագծից երևում է, որ տարբեր հեղինակներ այս երևույթների տարբեր կողմերն են կարևորում: Թերևս, այդ կողմերից յուրաքանչյուրն էլ առկա է և որոշակի դեր է խաղում ինքնագիտակցման ամբողջական գործընթացի մեջ. ասենք սեփական ես–ը գիտակցելու համար մարդը պետք է առանձնացնի և ընկալի իրեն, իր զգացումները, միևնույն ժամանակ, ինքնաառանձնացումն ու ինքնաընկալումը գուտ սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված իրողություններ չեն. մարդն սկսում է ընկալել իրեն որպես սուբյեկտ նաև այն բանի շնորհիվ, որ այլ մարդիկ են ընկալում, վերաբերվում նրան որպես այդպիսին: Բնականաբար, ինքնագիտակցումը նաև որոշակի ընդհանրացում է (հետևաբար նաև պատկերացում է, գիտելիք): Ըստ որում, այդ ընդհանրացումը ոչ միայն կոգնիտիվ է, այսինքն ընկալված բազմաթիվ ես–երի նույնականության ընդհանրացումն է, այլև զգացական է՝ ես–ի բազմաթիվ զգացողությունների կամ զգացված բազմաթիվ ես–երի ընդհանրացված զգացումն է (այնպես, ինչպես վախի բազմաթիվ զգացումներն ընդհանրացված են վախի զգացողության ընդհանուր մոդելի մեջ): Որպես ընդհանրացում ինքնագիտակցումը միաժամանակ ենթադրում է նաև տարբերակման գործընթաց, քանի որ ընդհանրացնել նշանակում է նաև տվյալ իրողությունն առանձնացնել, տարբերակել, կոնկրետացնել ավելի ընդհանուրի, դիֆուզի, չտարբերակվածի, վերացականի շրջանակներում, ինչն էլ բնականաբար ենթադրում է նաև կատեգորիզացիա (առանձնացվածը որոշակի կատեգորիայի մեջ մտցնելը): Այսպես, ընդհանրացնել սպիտակը նշանակում է տարբերակել այն «գույն» ընդհանրացման շրջանակում, հետևաբար նաև կատեգորիզացնել: Այլ կերպ ասած գիտակցել սեփական ես–ը նշանակում է ոչ միայն ընկալված և զգացած ողջ ինֆորմացիան ընդհանրացնել որպես «ես», այլև այդ ընդհանրացումը տարբերակել «մարդ» ընդհանրացման շրջանակում (Կ. Մարքս): Սեփական ես–ի ընդհանրացումների և տարբերակումների համակարգը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ, մշտապես զարգացող, փոփոխվող համակարգ է, որն անընդհատ հարստանում, ընդլայնվում է սեփական ես–ի հետ կապված նորանոր ընդհանրացումների ու տարբերակումների (կոգնիտիվ և զգացական) հաշվին: Ըստ որում, այդ հա-

մակարգը զարգանում է ոչ միայն քանակապես, այլև որակապես, այսինքն վերակառուցումներ է ապրում, փոխվում է սեփական ես–ի ընկալումը, կոնցեպցիան: Այսօր ինքնագիտակցության առնվազն երկու տիպի վերակառուցումների մասին կարելի է խոսել: Առաջինն անձնային զարգացման կամ անկման արդյունքում տեղի ունեցող վերակառուցումներն են: Նման վերակառուցումները հաճախ ռևոլյուցիոն ձևով են ընթանում (ասենք մարդու կյանքում տեղի ունեցող նշանակալի իրադարձություններից հետո) ճգնաժամային ապրումների մեջ գցելով մարդուն (ցավոք, այս վերակառուցումներին ավելի շատ ուշադրություն են դարձնում զանազան միստիկական ուղղությունները, քան գիտությունը): Միստիկական ուղղություններում դրանք հաճախ անվանվում են «հոգևոր ճգնաժամեր»: Անձնային զարգացման որակական վերակառուցում կարելի է համարել նաև ես–ի ինքնաակտուալացման մակարդակին հասնելը, որը Ա. Մասլոուն բնութագրում է որպես. «...անձնավորության այնպիսի զարգացում, որն ազատում է մարդուն աճելու պրոբլեմի դեֆիցիտից և կյանքի ներոտիկ (կամ ինֆանտիլ կամ երևակայական կամ ոչ պիտանի կամ անիրական) պրոբլեմներից...» (233, էջ 64): Թերևս նույն կարգի վերակառուցում է նկարագրում նաև Ռ. Ասաջիոլին: Ըստ նրա հոգևոր զարգացում ապրելով մարդը հասնում է ինքնահասկացման, որը հեղինակը բնութագրում է որպես «...սեփական անձի, որպես միավորող հոգևոր կենտրոնի ապրումն ու գիտակցումը» (24, էջ 30): Անձնային զարգացման արդյունքում ինքնագիտակցության և աշխարհընկալման որակական վերակառուցումներից կարելի է համարել նաև հնդկական և չինական կրոնափիլիսոփայական համակարգերում նկարագրվող «լուսավորյալության» վիճակին հասնելը կամ, ասենք, Կ. Կաստանեդայի աշխատություններում նկարագրվող, այսպես կոչված, «տեսնելու» ընդունակության ձեռքբերումը:

Ինքնագիտակցության վերակառուցումների մյուս տեսակը կապված է մարդու տարիքային զարգացման հետ և ուղղակիորեն առնչվում է մեր թեմայի հետ:

3.3. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԿԱ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ջուտ տրամաբանական վերլուծությունն արդեն իսկ հիմք է տալիս ենթադրելու, որ երեխայի ես–ը միայն քանակապես չէ, որ տարբերվում է դեռահասի ես–ից, իսկ վերջինիս ինքնագիտակցությունը որակապես նույնը չէ, ինչ հասուն մարդու կամ ծերունու ինքնագիտակցությունը: Մարդու ես–ի այս վերակառուցումները, կերպարանափոխությունները յուրահատուկ ձևով արտացոլվել են որոշ ժողովուրդների սովորությունների մեջ: Այսպես. «Աֆրիկյան մի շարք ցեղերում ընդունված է այն տեսակետը, որ մարդը կյանքի ընթացքում մի քանի անգամ վերածնվում է: Այս կերպարանափոխությունները կապվում են մարդու սոցիալական դերերի փոփոխության և նոր սոցիալական խմբերի մեջ մտնելու հետ: Կյանքի յուրաքանչյուր փուլում մարդը նոր անուն է ձեռք բերում:

Կորեայում անձնանունն արտացոլում է թե տարիքը և թե ընտանեկան ու սոցիալական դիրքը: Ծնվելուց հետո երեխային տրվում է այսպես կոչված մանկական անուն, ապա, չափահասության հասնելով, նա ստանում է պաշտոնական անուն, ամուսնանալուց հետո նորից անունը փոխվում է...

Աֆրիկյան Մասայիների էթնիկական խմբում երեխան անուն է ստանում միայն 1,5 տարեկանում...ապա նոր տարիքային խմբերի մեջ մտնելուց հետո նրա անունը փոխվում է...» (163, էջ 180):

Գիտության մեջ նույնպես ես–համակարգի, ինքնագիտակցության վերակառուցումների կամ, ըստ որոշ հեղինակների, անձնավորության ծնունդների հիմնախնդիրն ուրվագծվել է: Այս ուղղությամբ առաջին ենթադրություններից էր այն, որ ինքնագիտակցությունը տարիքային զարգացման ընթացքում երկու անգամ «ծնունդ է ապրում»: Ըստ Ա. Ն. Լեոնտևի, Փ. Բլոսի և մի շարք այլ հեղինակների այդ «ծնունդները» տեղի են ունենում 3–5 տարեկանում և դեռահասության շրջանում: Փ. Բլոսն այդ տարիքները բնութագրում է որպես անհատականացման շրջաններ (187): Ավելի ուշ առաջ քաշվեցին վարկածներ, որ հասունության շրջանում նույնպես ես–ի «ծնունդներ» են տեղի ունենում: «Մանկությունից հասունությանն անցնելուց հետո,— գրում են Վ. Մորգունը և Ն. Տկաչևան,— տեղի է ունենում անձնավորության ևս մեկ երրորդ

«ծնունդը» անձնային մի հզոր վերակառուցում: Ժամանակային առումով դա վերաբերում է կամ 22–25 տարիքային շրջանին...կամ որ ավելի հավանական է, անձնավորության երրորդ ծնունդը տեղի է ունենում 30 տարեկանի շրջանում. երբ, ըստ մի շարք հեղինակների վկայության, խոր և կարևոր վերակառուցումներ են տեղի ունենում» (102, էջ 65–66): Վերջին տարիներին Վ. Սլոբոդչիկովը և Գ. Յուկերմանը առանձնացրեցին անձնավորության նաև այլ ծնունդներ և փորձեցին իմաստավորել այդ երևույթը: Ըստ նրանց. «Զարգացման ամեն մի աստիճանում մուտքը նոր հանրության մեջ նման է նոր ծննդյան (մարդը մի անգամ չէ, որ ծնվում է) և ուղեկցվում է աշխարհի հետ հարաբերությունների տեղաշարժերով, որակական վերակառուցումներով...Այդ պատճառով էլ մուտքը նոր հանրության մեջ անվանում ենք ծննդյան ճգնաժամ:

...Ծննդյան ճգնաժամը, կոնկրետ գործունեության յուրացման որոշակիության մեջ...միշտ էլ ինքնության ճգնաժամ է, ինչպես նաև համակեցության նոր ձևերի սպասում, որոնում» (130, էջ 44–45): Հեղինակները, ինչպես արդեն նշել ենք, առանձնացնում են անձնավորության ծննդյան հետևյալ ճգնաժամերը 2 ամսականում, 11–18 ամսականում, 3,5–7,5, 17–21 և 35–45 տարիքային շրջաններում (130, էջ 42): Ցավոք, Վ. Սլոբոդչիկովը և Գ. Յուկերմանը հստակ չեն բացատրում, թե ինչու են նոր հանրության մեջ մտնելն անձնավորության ծնունդ համարում. ինչ դեր է խաղում այդ մուտքը ինքնագիտակցության վերակառուցման գործընթացում (հակառակ դեպքում ինչո՞ւ է օգտագործվում անձնավորության «ծնունդ» հասկացությունը), պետք է ասել նաև, որ դրանք այդ «ծնունդները», ճգնաժամերը հիմնավորող փաստեր, փաստարկներ չեն ներկայացնում: Ակնհայտ է նաև, որ նշված հեղինակները «անձնավորության ծնունդ» հասկացությունը միանգամայն այլ կերպ են հասկանում, քան նախորդները, ինչպես նաև մենք: Նախ, ըստ մեզ, գիտության մեջ չի կարելի հասկացությունները փոխաբերական իմաստով գործածել, քանի որ դա թյուրըմբռնումների տեղիք կարող է տալ. օրինակ «անձնավորության ծնունդ» հասկացությունը կարելի է հասկանալ թե որպես ինքնագիտակցության, ես–համակարգի վերակառուցում, թե որպես անձնավորության հոգեկան կերտվածքի կամ սոցիալական հարաբերությունների վերակառուցում: Մենք ավելի նպատակահարմար ենք գտնում «անձնավորության ծնունդ» հասկացության փոխարեն օգտա-

գործել «ինքնագիտակցության տարիքային վերակառուցում» հասկացությունը տարբերելու համար ինքնագիտակցության այլ հանգամանքների ազդեցությամբ տեղի ունեցող վերակառուցումներից (այդ թվում նաև հիվանդագին կերպարանափոխություններից. երբ մարդն սկսում է իրեն ընկալել որպես միանգամայն այլ մարդ): Ինքնագիտակցության տարիքային վերակառուցում ասելով նկատի ունենք տարիքային տարբեր ցիկլերում կենսաբանական, հոգեկան, սոցիալական տարիքային նորագոյացությունների ի հայտ գալու, ինչպես նաև այլ մարդկանց կողմից դրանց ընկալման և դրա հետևանքով մարդուն այլ կերպ ընդունելու, գիտակցելու, վերաբերվելու հետևանքով սուբյեկտի ինքնագիտակցության, ես–համակարգի վերակառուցումը, այսինքն սեփական ես–ը միանգամայն նոր տեսանկյունից, նոր սոցիալական դերերի կրողի դիրքերից ընկալելը, զգալը, ճանաչելը, գնահատելը և վերաբերվելը:

3.4. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Ինքնագիտակցության վերակառուցումը, ինչպես նշեցինք վերևում, տեղի է ունենում յուրաքանչյուր տարիքային ցիկլի ընթացքում կուտակվող կենսաբանական, հոգեկան և սոցիալական նորագոյացությունների ազդեցության տակ: Այլ կերպ ասած յուրաքանչյուր տարիքային փուլի ընթացքում մարդը փոխվում է կենսաբանորեն, հոգեբանորեն և սոցիալական առումներով. այդ փոփոխությունները տեղի են ունենում աստիճանաբար և քանակապես կուտակվելով տարիքային փուլի որոշակի շրջաններում առաջ են բերում որակական վերակառուցումներ, այսինքն՝ մարդը նորագոյացությունների փաստերի հիման վրա ընդհանրացնում է կատարում իր ես–ի կապակցությամբ՝ մի կողմից տարբերակելով այն ավելի ընդհանուր հասկացության շրջանակներում (կենդանի էակ, մարդ, կին, ծնող և այլն), մյուս կողմից նույնացնելով իրեն համապատասխան խմբի հետ, դասելով, ասենք, մարդ, կին, ծնող, մասնագետ կատեգորիաների մեջ: Այդ ընդհանրացումը, ինչպես արդեն ասել ենք, ունի ոչ միայն կոգնիտիվ, այլև զգացական բնույթ, այսինքն՝ մարդը ոչ

միայն գիտի, գիտակցում է, որ ինքը սա է կամ նա, այլև սկսում է զգալ իրեն որպես այդպիսին (ասենք որպես կին): Ըստ որում, խոսքն այստեղ ոչ թե հուզական գնահատականի, վերաբերմունքի մասին է (սա մեկ այլ զգացական ընդհանրացում է և իր հերթին ունի իր կոգնիտիվ բաղադրիչը), այլ սեփական ես–ի զուտ զգացական ընդհանրացման (համեմատելի է Խ. Բերմուդեսի ոչ կոնցեպտուալ ինքնագիտակցության հետ)· Ինքնագիտակցության մեջ ընդհանրացման կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչները սովորաբար հանդես են գալիս միասնական ձևով, սակայն կարող են նաև խզված հանդես գալ: Ինքնագիտակցության կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչների խզումը հանդիպում է մի շարք հոգեախտաբանական համախտանիշներում, ասենք տրանսսեքսուալ տղամարդը հայտարարում է, որ չի զգում իրեն որպես տղամարդ, կամ մարդը դեպերսոնալիզացիոն երևույթների դեպքում գիտի, որ ինքն ինքն է, բայց չի զգում իր ես–ը: Նորմայի պարագայում էլ երևույթի մասին կարող է լինել միայն գիտելիք՝ առանց աֆեկտիվ բաղադրիչի, ասենք պատերազմ չտեսած մարդն ունի գիտելիք պատերազմի մասին, բայց հնարավոր է չունենա այդ գիտելիքի աֆեկտիվ բաղադրիչը: Տարիքային զարգացման ընթացքում էլ ինքնագիտակցության կոգնիտիվ և զգացական բաղադրիչների որոշակի խզում կարող է լինել. օրինակ՝ երեխան գիտի իր սեռային պատկանելությունը, այսինքն ունի թեկուզ դիֆուզ, վերացական սեռային կոնցեպտուալ ինքնագիտակցություն (ինչպես վկայում են հետազոտությունները, մինչև 5–7 տարեկանը երեխան հավատում է սեռի շրջելիությանը), որի զգացական հիմքը խիստ աղոտ է, սակայն դեռահասության շրջանում նա սկսում է իմաստավորել, ընկալել և իստակորեն զգալ իրեն (զգացական ընդհանրացում կատարել) որպես տվյալ սեռը կրող անձնավորություն, այսինքն սեռային ինքնագիտակցությունը քանակական զարգացումից որակական հեղաշրջում է ապրում· Այլ կերպ ասած՝ մարդու մեջ մի որոշ շրջանում սեփական անձի առնչությամբ կա գիտելիք, ընդհանրացում (որը, թերևս, այլ մարդկանց կողմից է նրան հաղորդված), սակայն այդ գիտելիքը չունի իր զգացական հիմքը (կամ շատ աղոտ է արտահայտված), զգացական փորձը, ինչպես ասենք, մարդը գիտի, որ կա անօդ տարածություն, սակայն դրա փորձը, զգացական հիմքը, ընդհանրացումը չունի:

Ինքնագիտակցության արթնացմանը կամ, որ ավելի ճիշտ է, սեփական ես–ի առնչությամբ ընդհանրացմանը հաջորդում է, այսպես կոչված, «ես» համակարգի ձևավորման գործընթացը, այսինքն գիտակցելով իրեն որպես որոշակի ակտիվության սուբյեկտ մարդը սկսում է իր և իր ակտիվության մասին կարծիք, գնահատական, վերաբերմունք ձևավորել: Այս տեսանկյունից ինքնագիտակցության վերակառուցումները նաև նոր «ես» կոնցեպցիայի ձևավորման շրջաններ են, և չնայած այդ կոնցեպցիան նախնական է և հետագայում անընդհատ փոփոխվում, հարստանում է, այնուամենայնիվ դա այն կայուն հիմքն է, որով մարդը ձեռնամուխ է լինում լուծելու այն խնդիրները, որոնք ծառացած են մարդու՝ որպես տվյալ ակտիվության սուբյեկտի առաջ:

Պետք է ասել, որ «ես» կոնցեպցիայի շրջանակներում ձևավորված ընդհանրացումները (մասնավորապես ինքնագնահատականը) նույնպես ունեն ոչ միայն կոգնիտիվ, այլև աֆեկտիվ, զգացական բնույթ (92) և կարող են դրսևորվել, ասենք, որպես անլիարժեքության (Ա. Ադլեր), լիարժեքության կամ գերլիարժեքության զգացումներ: Սեփական ես–ը կարող է ընդհանրապես մերժվել, այս դեպքում, ըստ Հ. Սալիվանի, մարդը «ոչ ես»–ի ընդհանրացում է կատարում, ինչն ապրվում է որպես սարսափ, վախ, զզվանք (ըստ 30): Թերևս, սեփական ես–ի մերժման հետևանքով են առաջանում հիվանդագին կերպարանափոխությունները, դեպերսոնալիզացիոն երևույթները:

Ինքնագիտակցության տարիքային վերակառուցումներն օրինաչափորեն ի հայտ եկող հզոր սթրեսոգեն գործոն են անձնավորության զարգացման գործընթացում և, ըստ մեզ, հենց տարիքային ճգնաժամերի կամ տարիքային օրինաչափություններով պայմանավորված սթրեսոգեն իրավիճակների մյուս խումբն են հանդիսանում (առաջինը, ինչպես նշեցինք վերևում, անցումային տարիքներն են): Այս ճգնաժամերն ավելի նպատակահարմար է անվանել «անձնավորության զարգացման կամ անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամեր» (առաջինը մենք նախընտրում ենք կարճության պատճառով): Նախ, այս հասկացությունը նոր չէ, միևնույն ժամանակ, այն ճշգրտորեն արտահայտում է ճգնաժամերի այս տեսակի էությունը. Որոշակի իմաստային նրբերանգով այս հասկացությունը տարբերվում է նաև «անձնային զարգացում» և «անձնային զարգացման ճգնաժամեր» հասկացություններից. վերջիններս վերաբերում են անձի անհատական (միայն տարիքային գործոններով չպայմանավորված) զարգացմանը, հասունացմանը կամ անկմանը:

3.5. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսպիսով, ըստ մեզ բացի ասցումայնությամբ պայմանավորված ծգնաժամերից, կան նաև ինքնագիտակցության, ես–համակարգի վերակառուցումներով պայմանավորված ծգնաժամեր, որոնք նպատակահարմար ենք համարում անվանել «անձնավորության զարգացման ծգնաժամեր»: Այդ ծգնաժամերը տեղի են ունենում ինքնագիտակցության վերակառուցումների շրջաններում կյանքի առաջին ցիկլում՝ մոտ երեք տարեկանի շրջանում, երկրորդում 11, 12–13, 15 տարեկան հասակում, երրորդ ցիկլում՝ 25–30, 32 տարիքային շրջանում և վերջին՝ չորրորդ ցիկլում մոտ 55–60, 65 տարեկանում: Ի՞նչ հիմքեր ունենք նշված տարիքային շրջանները դիտելու որպես անձնավորության զարգացման ծգնաժամեր: Նախ, պետք է ասել, որ գիտությանը վաղուց էր հայտնի, որ առաջին երկու ծգնաժամերի ընթացքում ինքնագիտակցության մեջ հեղաշրջումներ կամ ես–ի ծնունդներ են տեղի ունենում, մեր նորամուծությունն այն է, որ բացատրում ենք, թե ինչ բովանդակություն ունեն այդ հեղաշրջումները, և ցույց ենք տալիս, որ նույն մեխանիզմներով հասուն տարիքում էլ են տեղի ունենում ինքնագիտակցության վերակառուցումներ: Ըստ մեզ՝ այն գաղափարը, որ նշված տարիքներում ինքնագիտակցության բովանդակությունն է փոխվում, և ոչ թե նույն ես–ը նորից ու նորից է գիտակցվում, միանգամայն հիմնավորված է. ինչո՞ւ պիտի մի անգամ գիտակցված ես–ը ինչ–որ «քմահաճույքով» նորից գիտակցվեր, մարդը նորից հայտնաբերեր իրեն (կամ, ասենք, երկու անգամ ինդիվիդուացիա տեղի ունենար): Նման անհիմաստ կրկնությունն ուղղակի կհակասեր զարգացման տրամաբանությանը. կստացվեր, որ տարիների ընթացքում ես–համակարգում զարգացում տեղի չի ունեցել, նրա բովանդակությունը նույնն է մնացել, մինչդեռ, ինչպես հայտնի է, անձնավորությունը զարգացման ընթացքում այնքան է փոխվում, որ նույնիսկ նույնականության պահպանման պրոբլեմ է առաջանում (է. էրիքսոն): Հենց այդ փոփոխություններն են, որ վերակառուցում են ինքնագիտակցությունը, և հենց այդ փոփոխությունների բովանդակությունն է որոշում տվյալ տարիքային ցիկլում ինքնագիտակցության վերակառուցման, հետևաբար նաև անձնավորության զարգացման ծգնաժամի բովանդակությունը, էությունը: Ինչ վերաբերում է հասունության շրջանում ինքնագիտակցության վերակառուցումների խնդրին, ապա դրանց գոյությունը և գիտության կողմից առանձնացումը թե զուտ տրամաբանական և թե՛ փաստական առումներով միանգամայն հիմնավորված է: Նախ, պետք է ենթադրել, որ եթե ես–համակարգը կենսաբանական, հոգեկան, սոցիալական փոփոխությունների ազդեցության տակ 15 տարվա ընթացքում երկու անգամ վերակառուցում է ապրում, ապա ինչո՞ւ պիտի դեռահասությունից հետո էլ նման վերակառուցումներ տեղի չունենան, չէ՞ որ զարգացումը կանգ չի առնում, և դեռահասությունից հետո էլ ես–համակարգում նշանակալի փոփոխություններ են կատարվում: Կարծում ենք այն, որ այս հարցը (նկատի ունենք հասուն տարիքում ինքնագիտակցության վերակառուցումների հարցը) մինչև օրս հիմնավոր հետազոտության չի ենթարկվել, պայմանավորված է նրանով, որ անցյալում տարիքային հոգեբանությունը մարդու զարգացման հետազոտությունները սահմանափակում էր դեռահասության–պատանեկության տարիքով (ասենք Զ. Ֆրոյդի, Ժ. Պիաժեի, Լ. Վիգոտսկու և շատ ուրիշների տարիքային պարբերացումները ավարտվում էին դեռահասության–պատանեկության տարիքով), ինչի հետևանքով այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե զարգացումը նշված տարիքներից հետո կանգ է առնում. Տարիքային հոգեբանության մեջ այս «բարդությունն» աստիճանաբար հաղթահարվեց, սկսեց ինտենսիվորեն հետազոտվել նաև հասուն տարիքը, և ակնհայտ դարձավ, որ զարգացումը երբեք կանգ չի առնում. հետազոտություններ հայտնվեցին, որոնք ցույց տվեցին, որ դեռահասությունից հետո ինտելեկտը շարունակում է զարգանալ. է. էրիքսոնը, հիմք ընդունելով ֆրոյդյան տարիքային պարբերացումը, զարգացրեց այն և ընդգրկեց մարդու ամբողջ կյանքը: Այսօր հազվադեպ կարելի է հանդիպել տարիքային հոգեբանության որևէ դասագրքի, որի մեջ ընդգրկված չլինեն հասունության և ծերության տարիքները: Ինչ վերաբերում է հասուն տարիքում ծգնաժամերի գոյության խնդրին, ապա արդեն նախորդ դարի կեսերից սկսած բազմաթիվ հետազոտություններ հայտնվեցին, որոնք ցույց տվեցին, որ տարիքային ծգնաժամերը շարունակվում են մարդու ողջ կյանքում (ավելի վաղ այդ ծգնաժամերի գոյության մասին խոսել են Կ. Յունգը, Շ. Բյուլերը և ուրիշներ): Հասուն տարիքում դրանք ավելի քողարկված են ընթանում, սա-

կայն ոչ պակաս բուռն: Ըստ որում, տեսական և էմպիրիկ հետազոտություններ հայտնվեցին, որոնք հաստատում են, որ հասունության շրջանում նույնպես, այսպես կոչված, անձնավորության ծնունդներ և դրանցով պայմանավորված ճգնաժամեր են տեղի ունենում (այդ հետազոտությունները մենք կներկայացնենք ստորև կոնկրետ ճգնաժամային տարիքները քննելիս): Այսպիսով, կարծում ենք՝ միանգամայն հիմնավորված էր այն ենթադրությունը, որ ինքնագիտակցության վերակառուցումներով ուղեկցվող տարիքային ճգնաժամերը միայն 3 տարեկանով և դեռահասությամբ չեն սահմանափակվում. հասուն տարիքում մարդու կենսաբանական, հոգեկան և սոցիալական ոլորտներում նույնքան հզոր տեղաշարժեր են լինում, որքան 3 տարեկանից մինչև դեռահասություն ընկած ժամանակահատվածում, իսկ այդ տեղաշարժերը, որոնց հետևանքով փոխվում է մարդու կերպարը, չի կարող ինքնագիտակցության մեջ որակական փոփոխություններ առաջ չբերել: Այժմ փորձենք ներկայացնել անձնավորության զարգացման ճգնաժամերի առանձնահատկությունները: Իհարկե, ինքնագիտակցության վերակառուցման գործընթացը և դրանով պայմանավորված ճգնաժամը տարբեր տարիքներում տարբեր բնութագրերով են հանդես գալիս, չնայած դրան որոշ ընդհանուր գծեր կարելի է առանձնացնել: Այս ճգնաժամերը նախ և առաջ բնութագրվում են նրանով, որ մարդը, գիտակցելով իրեն որպես որոշակի ակտիվության սուբյեկտ (ասենք որպես սեռային ակտիվության սուբյեկտ), փորձում է պարզել, թե ինչպիսին պիտի լինի տվյալ ակտիվության սուբյեկտը, գնահատել, թե ինչպիսին է ինքը որպես այդպիսին: Արա շնորհիվ մարդը խիստ զգայուն է դառնում սեփական ես–ի որպես տվյալ ակտիվության սուբյեկտի նկատմամբ. ուրիշների կարծիքը, սեփական հաջողություններն ու անհաջողությունները հզոր հակազդում են առաջ բերում, կասկածներ, մտորումներ են ի հայտ գալիս սեփական ես–ի առնչությամբ: Այս շրջաններում կտրուկ աճում է ներհայեցողությունը. մարդն անընդհատ վերլուծում է իրեն, իր արարքները, ինչը հյուծիչ ազդեցություն է ունենում, խախտում է մարդու ակտիվության սպոնտանությունը: Շատերի մեջ սեփական ես–ի առնչությամբ առորոշ տագնապներ են առաջանում, որոնք հաճախ հիպոխոնդրիկ բնույթ են ստանում: Իր անձի նկատմամբ այս անորոշությունը և զգայունությունն էլ այս շրջանների ամենաէական սթրեսոգեն գործոններն են

հանդիսանում և պայմանավորում ճգնաժամի հիմնական ախտանշանները: Պետք է ասել, որ անորոշությունը որպես հոգեբանական իրողություն, ինքնին բացասական հոգեվիճակների, տագնապի աղբյուր է (Պ. Վ. Սիմոնով), սակայն երբ այդ անորոշությունը վերաբերում է սեփական ես–ի էությանը, գնահատականին, ապա բացասական հոգեվիճակները կարող են վերածել իսկական ողբերգության: Այս անորոշության հետևանքով մարդը դառնում է ծայրահեղ անինքնավստահ, ինչը խաթարումներ կարող է առաջացնել թե սուբյեկտի գործունեության մեջ (ասենք մարդը հրաժարվում է որևէ խնդիր լուծելուց, այն դեպքում, երբ ինքը միանգամայն ի վիճակի էր անել դա, կամ ծայրահեղ անինքնավստահ է դառնում սեփական առողջության կապակցությամբ և, կտրվելով կյանքից, անընդհատ բժիշկների է դիմում), թե՛ միջանձնային հարաբերությունների ոլորտում: Երբեմն անինքնավստահությունը դրսևորվում է չհիմնավորված ռիսկի կամ ոչ ադեկվատ քայլերի ծնով. մարդը ինքն իրեն փորձելու համար օբյեկտիվ տրամաբանության տեսանկյունից չհիմնավորված քայլերի է դիմում: Հարկ է նշել, որ այս տարիքային շրջաններում մարդու անորոշությունը միանգամայն օրինաչափ, օբյեկտիվ հիմքեր ունի, որովհետև քանի դեռ մարդը չի ինքնահաստատվել, չի կերտել իրեն տվյալ ակտիվության մեջ, չի կարող օբյեկտիվորեն պատասխանել այն հարցին, թե ով է ինքը որպես տվյալ ակտիվության սուբյեկտ, սակայն, չնայած դրան շատերն ունեն այն դիրքորոշումը, թե իրենց մեջ ի սկզբանե առկա է տվյալ ակտիվության սուբյեկտի բնութագրերի համալիրը (ասենք նախքան երեք տարեկանում ինքնագիտակցության ծնավորումը, երեխան փորձում է իրեն և ուրիշներին համոզել, որ ինքը լավն է), որն ընդամենը պիտի դրսևորվի: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ֆրանկլը, նույնիսկ ժառանգականությունն ընդամենը կավ է, որից մարդն ինքն է կերտում իրեն (148), և այս դրույթն ապացուցվում է բազմաթիվ հետազոտություններով: Պետք է ասել, որ հենց նման սխալ դիրքորոշման հետևանքով է հաճախ սրվում այս ճգնաժամերի ընթացքը:

Այս տարիքային շրջանների սթրեսոգենությունը պայմանավորված է նաև սեփական ես–ի վրա գերկենտրոնացմամբ (ի դեպ, սեփական անձի վրա գերկենտրոնացումը ներուժիկ հիվանդություններին խիստ բնորոշ բնութագիր է): Նման, հուզականորեն հագեցած գերկենտրոնացու-

մը բարձրացնում է ներշնչվողությունը պարարտ հող ստեղծելով սեփական անձի առնչությամբ ամենաաբսուրդ ընդհանրացումների ձևավորման համար (հիշենք դեռահասության տարիքում ի հայտ եկող դիսմորֆոֆոբիկ երևույթները):

Այս ճգնաժամերի մյուս կարևոր բնութագիրն այն է, որ մարդն ակտիվորեն փորձում է ինքնահաստատվել, ծգտում է ինքն ընդունել և ուրիշներին ընդունել տալ իրեն որպես տվյալ ակտիվության լիարժեք սուբյեկտ: Այս տարիքներում մարդիկ առաջին հերթին հարազատներից են սպասում, որ իրենց ընդունեն այնպիսին ինչպիսին, իրենք ուզում են լինել, և այս հողի վրա հաճախ կոնֆլիկտներ են առաջանում ընտանիքում:

Այս տարիքային շրջաններին (հատկապես նախադպրոցական տարիքին և դեռահասությանը) բնորոշ են վարքի ոչ ադեկվատ դրսևորումները (նկատի ունենք, ասենք, նախադպրոցականի կամ դեռահասի ոչ ադեկվատ «մեծական» վարքի դրսևորումները), ինչը հիմնականում պայմանավորված է մի կողմից ծայրահեղ ռեֆլեքսիայով և անինքնավստահությամբ, մյուս կողմից այն բանով, որ մարդը սկսում է ապրել իր իդեալական ես–ով:

Այս ճգնաժամերի բնութագրերը պայմանավորող մյուս կարևոր հանգամանքը տվյալ տարիքային հիմնախնդրի, տվյալ ակտիվության հետ կապված խնդիրների լուծման առումով գերբարձր մոտիվացիան է, բայց նաև դրանց լուծման ուղիների առնչությամբ անորոշությունը և համապատասխան փորձի, կարողությունների և հմտությունների պակասը: Այս պարագայում մարդը բախվում է ընտրության բազմազանությանը, ստիպված է լինում ինքնուրույն կողմնորոշվել հիմնախնդրի լուծման ուղիների մեջ, իսկ այն հասարակություններում, որտեղ մարդուն տրվում են հիմնախնդրի լուծման հստակ և պարտադիր մոդելներ, ճգնաժամը նկատելիորեն մեղմանում կամ նույնիսկ վերանում է (ասենք պարզունակ հասարակություններում դեռահասներին ծեռնադրում են տալով առնական և կանացի վարքի հստակ մոդելներ, ինչը մեծապես նպաստում է դեռահասության անճգնաժամային ընթացքին):

Այս շրջաններում մարդը նաև անընդհատ փորձարկում է տվյալ ակտիվության հետ կապված հիմնահարցերի լուծման ուղիները, ծգտում է ընդօրինակել, նմանակել, հետևել այն մարդկանց, ովքեր, իր կարծիքով, հաջողությամբ լուծում են տվյալ տարիքային խնդիրները (շատերն իրենց համար իդեալներ, կուռքեր են հորինում): Մարդը հաճախ համեմատում է իրեն ուրիշների հետ (ասենք 30 տարեկանի շրջանում համեմատվում է այն, թե իրենց տարիքում ով ինչպիսի հաջողությունների է հասել): Այլ կերպ ասած այս շրջանները նաև տվյալ տարիքային հիմնախնդրի լուծման կոնցեպցիայի ձևավորման և կյանքի ուղիների մոդելների ընտրության շրջաններ են:

Այս շրջանների բնութագրերից է նաև տարիքային խնդիրների լուծման առումով ֆրուստրացվածության բարձր մակարդակը (խնդիրները լուծելու փորձ գիտելիքներ, հմտություններ չունենալու հեռանքով), ինչը հաճախ հուսահատության կամ ագրեսիվ վարքի պատճառ է հանդիսանում, անլիարժեքության զգացողություն առաջացնում:

Անձնավորության զարգացման ճգնաժամերի ներկայացված բնութագրերը, դրսևորումները կարող են սուր կամ մեղմ ձևով հանդես գալ (հնարավոր է՝ նաև անճգնաժամային ընթացքը), ինչը պայմանավորված է անձի բնութագրերով (ասենք ակցենտուացված բնավորություն ունեցող մարդիկ կամ փսիխոպաթներն այս շրջաններն ավելի բուռն են անցնում) կամ, ասենք, արտաքին բարենպաստ կամ անբարենպաստ հանգամանքներով (դաստիարակություն, սոցիալ–տնտեսական պայմաններ և այլն): Թերևս, ինքնագիտակցության վերակառուցման այս շրջաններում որոշակի դեր է խաղում նաև նախորդ տարիքային ցիկլում ձևավորված ես–կոնցեպցիան (այս հարցը դեռևս հետազոտված չէ): Ըստ որում, կարելի է ենթադրել, որ նախորդ ես–կոնցեպցիան նոր ես–ի որոնումների հավակնային մակարդակն է որոշում (ընդհանրապես, ես–կոնցեպցիան որոշում է, թե ինչ հավակնություններով մարդը պետք է ձեռնամուխ լինի տարիքային հիմնախնդիրների լուծմանը):

Վերջում փորձենք ամփոփել շարադրվածը ներկայացնելով անձնավորության զարգացման ճգնաժամերի վերաբերյալ մեր պատկերացումները:

1.Հոգեբանական գրականության մեջ ներկայացվող «տարիքային կամ զարգացման ճգնաժամ» հասկացությամբ նկարագրվում են տարբեր բնույթի տարիքային սթրեսոգեն իրողություններ, որոնք իրարից տարբերվում են ինչպես արտաքին բնութագրերով, ախտանշաններով, այնպես էլ էությամբ, պատճառներով, մեխանիզմներով: Այս աշխատության մեջ մենք տարբերակում ենք անցումային տարիքները անձնավորության զարգացման ճգնաժամային տարիքներից (հոմանիշներ են

«անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամեր», «անձնավորության զարգացման տարիքային ճգնաժամեր» հասկացությունները): Վերջիններիս առավել տիպական ախտանշանը «ես» համակարգում տեղի ունեցող խմորումներն են գերկենտրոնացածությունը սեփական ես-ի վրա, անհնքնավստահությունը, ծայրահեղ ռեֆլեքսիան և այլն (դեռահասության շրջանում, 25–33 տարեկանում և այլն), այն դեպքում, երբ այլ ճգնաժամային շրջաններին այս ախտանշանները բնորոշ չեն (նորածնության, մեկ, յոթ տարեկանների և այլն):

Անձնավորության զարգացման ճգնաժամային տարիքներն են մոտ 3 տարեկանի շրջանը, 11, 12–13, 15, 25, 26–30, 32 և 55–65 տարիքային շրջանները:

2. Անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամերը պայմանավորված են ինքնագիտակցության որակական վերակառուցումներով, որոնց ընթացքում մարդը կենսաբանական, հոգեկան, սոցիալական տարիքային նորագոյացությունների ազդեցության տակ սկսում է ընկալել և գիտակցել իրեն որպես նոր ակտիվության սուբյեկտ: Ինքնագիտակցության վերակառուցումն ուղեկցվում է նոր «ես» կոնցեպցիայի ձևավորմամբ և այդ կոնցեպցիային համապատասխան ինքնահաստատվելու ձգտմամբ և ջանքերով: Սեփական ես-ի, նոր ես-կոնցեպցիայի ձևավորման (ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ինձնից ներկայացնում որպես տվյալ ակտիվության սուբյեկտ), և այդ կոնցեպցիային համապատասխան՝ ինքնահաստատվելու դժվարությունները էլ պայմանավորում են ճգնաժամերի ախտանշանները:

3. Տարիքային զարգացման ընթացքում ինքնագիտակցությունը վերակառուցում է ապրում չորս անգամ: Երեք տարեկանի շրջանում ձևավորվում է «տեսակային» ինքնագիտակցությունը, այսինքն երեխան սկսում է գիտակցել իրեն որպես մարդ, այնպիսին, ինչպիսին ուրիշները: Ինքնագիտակցության երկրորդ վերակառուցումը վերաբերում է 11, 12–13, 15 տարիքային շրջանին, որի ընթացքում տեղի է ունենում սեռային ինքնագիտակցության ձևավորումը: աղջիկը սկսում է ընկալել իրեն որպես կին, տղան՝ որպես տղամարդ: Երրորդ վերակառուցումը տեղի է ունենում 25, 26–30, 32 տարեկանում. մարդը սկսում է գիտակցել իրեն որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ, այսինքն՝ ընտանեկան (ծնող, ամուսին) և աշխատանքային ակտիվության սուբյեկտ: Վերջին

վերակառուցումը տեղի է ունենում 55–65 տարիքային շրջանում. մարդը սկսում է գիտակցել իրեն որպես մահկանացու:

4. Անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամային շրջաններում մարդը սկսում է գիտակցել ոչ միայն իրեն՝ որպես որոշակի ակտիվության սուբյեկտ, այլև այն հիմնախնդիրները, որոնք պետք է լուծվեն այդ ակտիվությամբ: Այլ կերպ ասած մարդը սկսում է գիտակցել այն տարիքային հիմնախնդիրները, որոնց կրողն է ինքը, և ակտիվորեն փորձում է կողմնորոշվել այդ հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների մեջ. քանզի հենց այդ հիմնախնդիրների լուծման միջոցով է նա ինքնահաստատվում որպես տվյալ ակտիվության սուբյեկտ: Օրինակ դեռահասը ոչ միայն սկսում է գիտակցել իրեն որպես տղամարդ կամ կին. այլև փորձում է հասկանալ, թե ի՞նչ է նշանակում լինել տղամարդ/կին, ի՞նչ պետք է անել լիարժեք տղամարդ/կին դառնալու համար, ինչպե՞ս և ինչպիսի՞ հարաբերություններ պետք է հաստատել իր և հակառակ սեռի մարդկանց հետ. մի խոսքով, դեռահասը սկսում է գիտակցել սեռային ակտիվության հետ կապված հիմնախնդիրները, ինտենսիվորեն որոնում է դրանց լուծման ուղիները և փորձում լուծել դրանք:

Անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են այն հաճախականով, թե որքանով է մարդը կողմնորոշված տարիքային հիմնախնդիրների լուծման ուղիների մեջ և ինչ հաջողությամբ է լուծում այդ հիմնախնդիրները:

3.6. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Տարիքային հոգեբանության մեջ սովորաբար նշված պրոբլեմը չի քննվում, մինչդեռ, ըստ մեզ, ինչպես զուտ հետազոտական, այնպես էլ գործնական առումներով չափազանց կարևոր է այն, թե ինչն ենք մենք համարում ճգնաժամային ախտանշան, ինչով են այդ ախտանշանները տարբերվում, ասենք, նևրոտիկ բնույթի կամ տարիքային նորմալ զարգացումը բնութագրող ախտանշաններից նորագոյացություններից

(խոսքի, քայլքի, երկրորդային սեռային հատկությունների ծնավորումը և այլն): Տարիքային ճգնաժամերին նվիրված հետազոտություններում, սովորաբար, ճգնաժամային ախտանշանները համակարգված ձևով չեն ներկայացվում, ինչի հետևանքով յուրահատուկ կոնգլոմերատ են հիշեցնում, որի մեջ առանձնացված չեն տիպականը ոչ տիպականից, ելակետայինը, գլխավորը երկրորդականից, պատճառը հետևանքից, խառնված են, ասենք, հոգեբուժության մեջ ընդունված բնութագրումները (դեպրեսիա, տագնապային վիճակներ և այլն), կոնֆլիկտային վարքի ախտանշանները (բունտ, նեգատիվիզմ), տարիքային նորագոյացությունները (էգոցենտրիկ խոսք, սեռականության կամ ֆիզիկական ուժերի անկում և այլն): Ակնհայտ է, որ առաջին երկու խմբի ախտանշանները ընդհանրապես բնութագրական չեն տարիքային ճգնաժամերին, առավել ևս կոնկրետ ճգնաժամային տարիքներին, դրանք կարող են ի հայտ գալ ցանկացած սթրեսի պայմաններում: Իսկ տարիքային նորագոյացությունները, նույնիսկ եթե դրանք հայտնվում են ճգնաժամային տարիքներում, բնութագրում են զարգացումը և ոչ թե ճգնաժամը: Վերջինս արտացոլող ախտանշանը պետք է ի հայտ գա բոլոր ճգնաժամերի և ճգնաժամի մեջ հայտնված բոլոր անձանց մեջ: Անշուշտ, տարբեր տարիքներում տարբեր անձանց մեջ այդ տիպական ախտանշանը կունենա իր առանձնահատկությունները, վարիացիաները, սակայն ախտանշանի էությունը, միջուկը նույնն է իր բազմազան դրսևորումների մեջ: Միևնույն ժամանակ, մյուս ախտանշանները պետք է սերտորեն կապված լինեն, կարծես պտտվեն այդ ելակետային ախտանշանի շուրջ, հաճախ էլ պայմանավորված լինեն դրանով:

Պետք է ասել, որ քանի դեռ տարիքային ճգնաժամերը տարբերակված չէին, առանձնացված չէին դրանց տարբեր տեսակները, նման ելակետային, տարբերակիչ ախտանշանի առանձնացումն անհնար էր, քանի որ տարբեր բնույթի, տարբեր տարիքային օրինաչափություններով պայմանավորված ճգնաժամերը չէին կարող ունենալ ընդհանուր, տիպական, տարբերակիչ ախտանշան: Ճգնաժամերի տարբերակումը, անձնավորության զարգացման կամ ինքնագիտակցության տարիքային վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերի առանձնացումը հնարավորություն տվեց բացահայտել այն ելակետային ախտանշանը, որն ի հայտ է գալիս բոլոր տարիքային շրջանների այս տիպի ճգնաժամերի ընթացքում, որի հետ կապված են կամ որով պայմանավորված են մյուս ախտանշանները, և որը կարող է հիմք հանդիսանալ այս ճգնաժամերի տարբերակիչ ախտորոշման համար: Ըստ մեզ որպես այդպիսի ելակետային ախտանշան է հանդես գալիս տարիքով պայմանավորված (առանձնացված ճգնաժամային տարիքներում ի հայտ եկող) գերզգայունությունը սեփական ես–ի նկատմամբ. Սեփական ես–ի նկատմամբ զգայունության սրումը տարբեր տարիքներում անձնավորության ճգնաժամերի ժամանակ տարբեր բովանդակություն և դրսևորումներ է ունենում. ասենք 3 տարեկանի ճգնաժամային շրջանում իր անձի նկատմամբ երեխայի սենզիտիվությունը կապված է սեփական ես–ը որպես լիարժեք մարդ ընդունելու հետ, ինչը հիմնականում վարքային ձևով է դրսևորվում. երեխան ամեն ինչ անում է, որպեսզի իր և ուրիշների կողմից ընդունվի որպես լիարժեք մարդ: Դեռահասն իր սեռային ես–ի առումով է զգայուն, որը դրսևորվում է, ասենք, սեփական մարմնի հետ կապված տագնապներով, իր որպես տղամարդու/կնոջ արժանիքների վերլուծությամբ: 25–33 տարիքային շրջանում մարդը գերզգայուն է դառնում իր սոցիալական ես–ի առումով (ո՞վ եմ ես և ի՞նչ եմ ինձնից ներկայացնում որպես ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտ): 55–65 տարիքային շրջանում սեփական ես–ն ընկալվում է որպես մահկանացու, և մարդը գերզգայուն է դառնում, ասենք, սեփական առողջության, կյանքը երկարացնելու, իր որպես անձնավորության անցած ուղու գնահատման, սեփական կյանքն ամփոփելու հարցերի նկատմամբ. Հասուն տարիքի ճգնաժամերի ընթացքում սեփական ես–ի առումով զգայունությունը կարող է դրսևորվել խոր ինքնավերլուծությունների, ինքնակասկածների, իր անձի սոցիալական արժեքի շուրջ անընդհատ մտորումների, հաճախ էլ սեփական ես–ի առնչությամբ անորոշ տագնապների, հիպոխոնդրիայի ձևով:

Սեփական ես–ի առումով զգայունության դրսևորումները անձնային նշանակալի տարբերություններ ունեն: Օրինակ խոհափիլիսոփայական հակումներ, զարգացած ներհայեցողություն ունեցող մարդկանց մեջ սենզիտիվությունը կարող է ի հայտ գալ սեփական ես–ի էության, կյանքի իմաստի շուրջ անընդհատ մտորումներով, իսկ թույլ զարգացած ներհայեցողություն ունեցող մարդիկ կարող են ուղղակի անորոշ տագնապներ դրսևորել սեփական անձի կապակցությամբ (նշենք, որ

անձնավորության տիպաբանական բնութագրերի և զարգացման ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունների առնչությունների պրոբլեմը չափազանց հրատապ, միևնույն ժամանակ գրեթե չուսումնասիրված ոլորտ է):

Պետք է ասել, իհարկե. որ սեփական անձի նկատմամբ գերզգայունության դրսևորումների կարելի է հանդիպել նաև որոշ հոգեկան հիվանդությունների և սահմանային վիճակների ժամանակ. Այս պարագայում պետք է նկատի ունենալ այն. որ հոգեկան հիվանդությունները շատ հաճախ ի հայտ են գալիս կամ սրվում են տարիքային ճգնաժամերի ընթացքում, ինչը նշանակում է, որ հիվանդագին ախտանշաններին միանում են ճգնաժամային ախտանշանները փոխադարձաբար սրելով երկու գործընթացներն էլ: Միևնույն ժամանակ հայտնի է. որ շատ դեպքերում տարիքային ճգնաժամերն ընթանում են հիվանդագին ախտանշաններով (դեպերսոնալիզացիոն. դեռեալիզացիոն երևույթներ և այլն), որոնք հոգեբուժության մեջ տարիքային իրավիճակի հիման վրա գնահատվում են որպես նորմա: Ասենք նաև. որ լայնորեն ընդունված է այն տեսակետը, որ հոգեկան հիվանդությունները կարող են ի հայտ գալ տարիքային ճգնաժամերի սրման, խորացման, անբարենպաստ ընթացքի հետևանքով (123): Նշված հանգամանքները կարևոր են դարձնում ինչպես տարիքային ճգնաժամի որպես նորմային վերաբերող երևույթի, դիֆերենցիալ ախտորոշման, այնպես էլ ճգնաժամերի խորացման, հիվանդագին ընթացքի, նորմայից հիվանդության անցման բնութագրերի որոշման խնդիրները (հոգեբուժական դասակարգումներում DSM–IV. ICD–10 տարիքային ճգնաժամերը որպես առանձին դիագնոստիկ կատեգորիաներ առանձնացված չեն): Վերջիններս, անշուշտ, հոգեբանահոգեբուժական համալիր հետազոտություն են պահանջում. իսկ այստեղ մենք ուղղակի կփորձենք ընդհանուր գծերով, սեփական դիտումների հիման վրա որոշ տարբերակիչ բնութագրեր ներկայացնել. Նախ. որոշակի տարիքային շրջաններում ի հայտ եկող գերզգայունությունը սեփական ես–ի նկատմամբ և դրանով պայմանավորված ախտանշանները ասենք, տագնապները սեփական արտաքինի, առողջության առնչությամբ, ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայի հետևանք հանդիսացող դեպրեսիվ վիճակները, ագրեսիվ վարքը և այլն, բնութագրական են անձնավորության զարգացման ճգնաժամերի

համար: Ախտաբանական երևույթները ճգնաժամերի ժամանակ էպիզոդիկ բնույթ են կրում. առկա է քննադատականությունը, անձնավորության վարքը տարիքային առեկվատություն ունի, անձնավորությունն ընդհանուր առմամբ հարմարված է միջավայրին. ճգնաժամի ընթացքում սեփական անձին վերաբերող ընդհանրացումները կայուն չեն. սեփական պնդումների առնչությամբ չկա ներքին համոզվածություն: Ըստ որում, հիվանդագին համոզվածության ի հայտ գալը վկայում է ճգնաժամի խորացման, հիվանդագին ընթացք ստանալու մասին (ասենք՝ մարդը սկսում է պնդել. որ ինքը ինքը չէ):

Անձնավորության զարգացման ճգնաժամերի ժամանակ մարդը գերզգայուն է դառնում ուրիշների կողմից իր նկատմամբ արտահայտած կարծիքների. վերաբերմունքի նկատմամբ. իսկ հիվանդություններիի դեպքում նման գերզգայունությունը բացակայում է, շատ դեպքերում նույնիսկ որոշ անտարբերություն է նկատվում ուրիշների կարծիքների նկատմամբ:

Ճգնաժամերի ընթացքում բուռն ինքնահաստատման ձգտում կա, այն դեպքում, երբ հիվանդությունների պարագայում նման ձգտումը բացակայում է կամ շատ թույլ է դրսևորվում:

3.7. ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՏԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.7.1. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Ինչպես արդեն նշել ենք, կյանքի առաջին փուլում հիմնականում ձևավորվում են տեսակային հատկությունները: 2,5–3 տարեկանում երեխայի մեջ արդեն ձևավորված են լինում հիմնական տեսակային հատկությունները (ուղղահայաց քայլվածք, խոսք, գիտակցություն և այլն), նա արդեն յուրացրած է լինում սոցիալական վարքի (այն է՝ տեսակային վարքի) ձևերից շատերը: Մինչև ճգնաժամային տարիքը երեխայի զարգացումը կարելի է բնութագրել որպես ինտերիոգենեզի կամ սոցիալա-

կան: «...Նրա (երեխայի–Ս.Խ) մոտ դեռևս տարբերակված չէ այն, ինչ կա իր և մեծի գիտակցությունների մեջ: Այդ պատճառով էլ առաջնայինը «պրա–մենք» գիտակցությունն է, որից էլ աստիճանաբար առանձնանում է երեխայի պատկերացումն իր մասին» (43, էջ 347): Դա, ինչպես հայտնի է, տեղի է ունենում մոտ 2,5–3 տարեկան հասակում. երեխան սկսում է գիտակցել սեփական ես–ը, հստակորեն առանձնացնել իրեն ուրիշներից, այսինքն անցում է կատարվում զարգացման այսպես կոչված ինտրահոգեկան ձևին (Լ. Վիգոտսկի) կամ փուլին: Սա ինքնագիտակցության զարգացման առաջին խոշոր որակական վերակառուցումն է, որին, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները (25 և ուրիշներ), նախորդում է երկարատև քանակական փոփոխությունների շրջանը: Ի՞նչ բովանդակություն ունի ինքնագիտակցությունն այս տարիքում կամ, այլ ձևակերպմամբ որպես ի՞նչ է երեխան իրեն ընկալում, զգում երեք տարեկանում: Այս հարցի հետազոտությունը, իհարկե, լուրջ դժվարությունների հետ է կապված նախ և առաջ այն պատճառով, որ երեխան սեփական ապրումները, պատկերացումները դժվարությամբ է վերբալիզացիայի ենթարկում: Այս շրջանում ինքնագիտակցության «արթնացմանը» նվիրված հետազոտություններում ուղղակի արձանագրվում են ինքնագիտակցման փաստերը, ասենք այն, որ երեխան այս տարիքում, սկսում է օգտագործել անձնական դերանունները. «Առտավորապես երկուսուկես տարեկանում,— գրում է է. Բերնսը,— դերանունների օգտագործումը, որպես կանոն, այլևս երեխայի համար դժվարություն չի ներկայացնում, ինչը վկայում է, որ նկատելիորեն աճել է նրա ընդունակությունը ընկալել իրեն որպես առանձին անհատ, որին բնորոշ են ինչ–որ ապրումներ, պահանջմունքներ, ինչ–որ գծեր» (27, էջ 89):

2,5–3 տարեկան երեխաների վարքի առանձնահատկությունների, այդ տարիքում հոգեախտաբանական մի շարք դրսևորումների, մասնավորապես հիվանդագին կերպարանափոխությունների, ինչպես նաև 3 տարեկանի ճգնաժամի մեր կողմից կազմակերպված հետազոտությունների արդյունքների (դրանք կներկայացվեն ավելի ուշ) վերլուծությունը հստակորեն ցույց տվեց, որ այդ տարիքում երեխան սկսում է գիտակցել իրեն որպես մարդ էակ, այսինքն նրա մեջ արթնանում է տեսակային ինքնագիտակցությունը (ինչպես արդեն նշել ենք, կենցաղային գիտակցության մեջ էլ այս տարիքն ընկալվում է որպես տեսակային հատկությունների ձևավորման շրջան, իսկ դաստիարակչական համակարգն ուղղված է հենց այդ հատկությունների ձևավորմանը), որը դիֆուզ բնույթ է կրում, այսինքն նրանում հստակորեն տարբերակված չեն սեռային կողմը, սոցիալական դերերը. Ն. Ի. Նեպոմնյաշչայան, անդրադառնալով երեխաների ինքնագիտակցության այս դիֆուզությանը, գրում է. «...Իր անձի, սեփական ես–ի (ի տարբերություն ոչ ես–ի) այդ առաջնային դիֆուզ առանձնացվածությունն սկսում է կապվել գործունեության կամ հարաբերությունների այս կամ այն ոլորտների հետ, որոնք օբյեկտիվորեն առանձնանում են երեխայի համար...» (105, էջ 34): Նման ինքնագիտակցությունը երեխային հնարավորություն է տալիս նմանակել այն ամենը, ինչ նա մարդկային է համարում. խաղերի ժամանակ, նույնիսկ խաղային իրավիճակից դուրս իր վրա վերցնել ցանկացած սոցիալական դեր, նույնացնել իրեն այլ մարդկանց, կենդանիների և նույնիսկ անշունչ առարկաների հետ: Ըստ որում, ինքնագիտակցության սեռային կողմի հստակ տարբերակվածության բացակայության հետևանքով երեխան ազատորեն նմանակում է նաև հակառակ սեռի վարքի ձևերը, սոցիալական դերերը, ասենք փոքրիկ տղան կարող է համոզված լինել, որ ինքը աղի է (167, էջ 88):

Ինչպես հայտնի է, երեխայի նկարչական գործունեությունը սովորաբար սկսում է մոտ երեք տարեկանից. «...Մինչև երեք տարեկանը երեխան հազիվ թե գիտի, թե ընդհանրապես ինչ հետք է թողնում մատիտը թղթի վրա: Բայց հենց այդ հաճույքն ի հայտ է գալիս, 100–ից 99 դեպքերում երեխան պատկերում է մարդ քառակուսու կամ շրջանի ձևով, որից երկու ուղղահայաց գծեր են դուրս գալիս» (33, էջ 18): Ինքնագիտակցության արթնացման այս շրջանում երեխայի զգայունությունը և հետաքրքրությունը մարդու և նրա վարքի ձևերի նկատմամբ, այդ վարքի ձևերի ազատ նմանակումը (խաղերի մեջ կամ առօրյա կյանքում) կարող է նշանակել միայն այն, որ երեխան, գիտակցելով, առանձնացնելով, տարբերակելով իրեն որպես առանձին էակ, միաժամանակ կարևոր ընդհանրացում է կատարում (ցանկացած տարբերակում միաժամանակ նաև ընդհանրացում է ենթադրում) բացահայտում, գիտակցում է իր տեսակային պատկանելությունը. այլ կերպ ասած առանձնացնելով իր ես–ը նա այն դասում է «մարդ» կատեգորիայի մեջ:

Ըստ Ի. Կոնի՝ «Նույնականության հասկացությունը...նշանակում է ոչ

թե սուբյեկտի ինքն իր հետ նույնությունը («ես» = «ես»), այլ նրա գիտակցված պատկանելությունը մարդկանց որոշակի կատեգորիայի («սոցիալական նույնականություն», «սեռային նույնականություն» և այլն)...» (77, էջ 25):

Չափազանց հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ նախամարդու մեջ նույնպես նախնական գիտակցությունը տեսակային բնույթ է կրել, այսինքն մարդն ուղղակի իրեն առանձնացրել է որպես տեսակ: «Շատ ժողովուրդների լեզուներում (կուրնայի, պապուասներ, մելանեզցիներ, բոտոկուդներ, նիվխեր, չուկչիներ և այլն) տվյալ ցեղի կամ ժողովրդի ինքնանվանումը նշանակում է «մարդ» կամ «մարդիկ»: «Մարդ» հասկացության հետ տվյալ կոլեկտիվի անվան համընկնելը,— գրում է Ա. Սպիրկինը,— կարող էր ի հայտ գալ միայն մարդկության հնագույն անցյալում. դա վկայում է այն մասին, որ տվյալ կոլեկտիվը... գիտակցել է իրեն որպես մարդ ընկալելով այլ կոլեկտիվները որպես ինչ-որ այլ բան, հնարավոր է կենդանիների տարատեսակ կամ... կենդանիներին նման ինչ-որ բան» (134, էջ 193): Ըստ որում, Ա. Սպիրկինը գտնում է նաև, որ «վաղ տոհմային հասարակության մարդը (առավել ևս հոտային մարդը) իրեն չէր առանձնացնում շրջակա միջավայրից. Նա զգում էր իր ընդհանրությունը կենդանիների, բույսերի, նույնիսկ անշունչ առարկաների հետ, ինչի մասին են վկայում, օրինակ, տոտեմիզմի փաստերը» (134, էջ 192): Այս առումով հետաքրքրական է նաև այն, որ բազմաթիվ ժողովուրդների վաղ շրջանի բանահյուսության և արվեստի ստեղծագործությունների մեջ առկա է մարդ–կենդանու կերպարը: Օրինակ սֆինքսի մասին առասպելը, թերևս, մարդու ինքնագիտակցության մեջ տեսակային շփոթի ժամանակաշրջանի արձագանքն է: Սֆինքսը կնոջ դեմքով ու կրծքերով և կենդանու մարմնով մի հրեշ էր, որն ուտում էր բոլորին, ով չէր լուծում իր առաջարկած հանելուկը. այն է, թե որ կենդանին է, որ առավոտյան քայլում է չորս, ցերեկը երկու, երեկոյան երեք ոտքով: Հանելուկի լուծումը գտնում է Եդիպոսը, և սֆինքսն իրեն նետում է անդունդը:

Թերևս, վաղ նախադպրոցական տարիքում երեխայի ինքնագիտակցությունը նույնպես յուրահատուկ տեսակային շփոթի շրջան է ունենում որը վերջնականապես հաղթահարվում է երեք տարեկանի ճգնաժամի ավարտի հետ միասին (իհարկե, դրական ելքի դեպքում): Այդ է վկայում,

օրինակ, այն, որ երեխան հեշտությամբ իրեն նույնացնում է կենդանիների հետ, խաղում նրանց դերերը, նրա համար միանգամայն հասկանալի և ընդունելի է, որ հեքիաթներում կենդանիները մարդկային հատկություններ են դրսևորում, խոսում են (երեխայի մեջ տոտեմիզմի յուրահատուկ արտահայտությունը): Ըստ որում, այդ տարիքի երեխաները մարդկանցից բացի շատ են սիրում կենդանիներ նկարել (33, էջ 18): Հետաքրքրական է նաև այն, որ վաղ մանկության շրջանում երեխաների երազներում ամենաշատը կենդանիներ են հայտնվում, ավելին. ըստ Ջ. Սթոուտի երեք տարեկաններին բնորոշ է այն, որ իրենց երազի հերոսին զգում են (experience) որպես կենդանի, քանի որ ես–ի զգացողությունը նրանց մեջ դեռևս բավարար չափով զարգացած չէ, որպեսզի հերոսն իր մանկական տեսքով հանդես գա (246):

Նախադպրոցական տարիքի հոգեախտաբանական մի շարք երևույթներ նույնպես հաստատում են վերը ներկայացված տեսակետը: Օրինակ մանկական աուտիզմի շատ ախտանշաններ վկայում են երեխայի տեսակային օտարվածության մասին, իսկ հիվանդագին կերպարանափոխությունների դեպքերում երեխան ուղղակի մերժում է իր տեսակը, մտնում կենդանու, բույսի և նույնիսկ անշունչ առարկայի կերպարի մեջ (նման խանգարումները տեղի են ունենում երեք տարեկանից հետո, այսինքն՝ հետճգնաժամային շրջանում և, ըստ երևույթին, հանդիսանում են ճգնաժամի հիվանդագին զարգացումը, երբ երեխան, գիտակցելով սեփական ես–ը, ոչ թե ընդունում է իրեն որպես մարդ, դասում իրեն այդ կատեգորիայի մեջ, այլ ինչ–ինչ պատճառներով մերժում կամ կորցնում է իր տեսակային ես–ը): Այսպես, ամերիկացի հոգեբույժ Բրունո Բեթելհեյմը նկարագրում է աուտիզմով տառապող մի տղայի, որը համոզված էր, թե ինքը մեքենա է: Ըստ Բեթելհեյմի երեխան մերժում էր իր տեսակային պատկանելությունը, չէր համարձակվում իրեն մարդ համարել (180, էջ 3–9): Սիա և է. էրիքսոնի կլինիկական դեպքերից մեկը «Ջինը սիրում է միայն գործիքներ ու մեխանիզմներ.. նայելով դրանց նա ժպտում է, ինչ–որ բան շշնջում ու ջերմորեն գրկում: Միայն դրանց առկայությունն արդեն իսկ աղջկան ոգևորում է.. միևնույն ժամանակ, նա միանգամայն անտարբեր է մարդկանց նկատմամբ» (167, էջ 281): Երեխաները հաճախ իրենց նույնացնում են կենդանիների հետ: Որպես օրինակ, ներկայացնենք Գ. Սուխարևայի կլինիկական դիտարկումներից

մի դեպք. «Երեխան համոզված է, որ ինքը կատու է, և պահանջում է, որ կապեն իր պոչիկը, փիսիկ անվանեն: Երբ նրան մերժում են, լաց է լինում և ասում. «Նրանք մտածում են, թե ես տղա եմ, բայց ես փիսիկ եմ» (136, էջ 174): Թերևս, նման դեպքերում մենք գործ ունենք յուրահատուկ ռեգրեսի հետ: Ըստ Ռ. Հայնցի «Ռեգրեսի սուբյեկտը ես–ն է, որը ծայրահեղ դեպքերում կարող է նույնիսկ կորստի մատնվել» (152, էջ 499): Պետք է ասել, որ ավելի ուշ տարիքում հիվանդագին կերպարանափոխությունների ժամանակ, նման դեպքերը բացառություն են. հիվանդը կարող է իրեն այլ մարդ համարել, բայց ոչ կենդանի կամ մեխանիկական սարք:

Հետաքրքրական է աուտիստ երեխաների վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Ըստ Վ. Կագանի աուտիստ երեխան «...նայում է մարդկանց «միջով», քայլում է չնկատելով մարդկանց, նրանց վերբերվում է որպես առանձին հետաքրքիր հատկություններ ունեցող անշունչ էակների» (68, էջ 14): Ինչպես նշեցինք, երեք տարեկանից երեխաներն սկսում են նկարել և իրենց առաջին նկարներում մարդ են պատկերում, իսկ աուտիզմով տառապող երեխաները նկարում են ամեն ինչ, բացի մարդուց կամ էլ մարդկանց աղավաղված են նկարում: Ասենք մարմնի մասերն առանձին են նկարում, երեսը փոխարինում են կիսադեմով, մարդկանց մեջքով են նկարում (33, էջ 14): Այդ երեխաները հաճախ միայն կենդանիներ են նկարում և օժտում նրանց անհատական գծերով (31, էջ 16): «Հիվանդներից շատերը,— գրում է Ս. Բոլդիրևան,— նկարում էին իրենց շրջապատին ոչ հատուկ շնչավոր օբյեկտներ, վաղուց վերացած էկզոտիկ կենդանիներ» (33, էջ 39): Երեխաները հաճախ են մարդակենդանիներ սֆինքսներ նկարում (33, էջ 39): Նման նկարները, կարծում ենք, վկայում են երեխայի ինքնագիտակցության մեջ տեսակային շփոթի մասին (Ինչպես նշեցինք վերևում, ինքնագիտակցության պատմական զարգացման ընթացքում էլ տեսակային շփոթի շրջան է եղել):

Ուշագրավ դիտումներ է ներկայացնում Բ. Ուայթը: Նա նշում է, որ զարգացման մեջ հետ մնացող երեխաները դերային խաղերում նախընտրում են փոքրիկի կամ կենդանու դերերը, մինչդեռ լիարժեք զարգացող երեխաները նախընտրում են մեծերի դերերը (143, էջ 161):

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Լ. Ս. Վիգոտսկու և Ա. Ն. Լեոնտևի (43,

էջ 225, 88, էջ 97) անցումը ինտերհոգեկան զարգացումից ինտրահոգեկան զարգացման ենթադրում է սեփական ես–ի և սեփական գործունեության գիտակցում: Գիտակցելով սեփական ես–ը երեխան աստիճանաբար սկսում է գիտակցել նաև սեփական ներաշխարհը վարքի որդապատճառները, հույզերը, մտորումները, և դրանով իսկ իր ծեռքն է վերցնում սեփական ակտիվությունը (այլևս ոչ թե «Վարդանիկն է ուտում», այլ «ինքն է ուտում»): «Բարձրագույն հոգեկան ֆունկցիաները,— գրում է Լ. Վիգոտսկին,— հիմնվում են...սեփական վարքն իշխելու վրա... Բայց իշխելը որպես նախապայման ենթադրում է արտացոլում գիտակցության մեջ...» (43, էջ 225): 2,5–3 տարեկանում երեխայի կողմից անձնական դերանունների օգտագործումը, բնականաբար, զուտ նոր լեզվական միջոցների կիրառություն չէ, այն վկայում է սեփական անձի վերաբերյալ երեխայի կարևոր ընդհանրացումների մասին: Երեխան սեփական ես–ի հետ է նույնացնում իր ցանկությունները, գործողությունները («ես ուզում եմ», «ես անում եմ»): Այդ հիմքի վրա սկսում են ի հայտ գալ երեխայի կամքը, սեփականատիրական ձգտումները («իմն է»), ինչպես նաև ինքնահաստատման մղումը: Վերջինս այս տարիքում ուղղված է սեփական ես–ը որպես լիարժեք մարդ ընդունելուն և ուրիշներին (մասնավորապես մեծերին) ընդունել տալուն: Այս գործընթացը հստակորեն երևում է թե այն բանում, որ երեխան ակտիվ հետաքրքրություն է դրսևորում մեծերի (այն է՝ լիարժեք մարդկանց) պահվածքի, վարքի, գործունեության նկատմամբ և թե՛ այն բանում, որ նմանակում, դերակատարում, փորձարկում է այդ ամենը: Ըստ որում, իր այդ ակտիվությունը երեխան հստակորեն գիտակցում է և արտահայտում իր խոսքում, օրինակ հայտարարում է, որ ինքը մեծ է կամ ուզում է մեծ լինել: Ինչպես ցույց տվեցին մեր կողմից կազմակերպված հետազոտությունները (դրանք ավելի մանրամասն կներկայացնենք ստորև), երեխայի համար «մեծ» և «լիարժեք» մարդ հասկացությունները հոմանիշներ են երեխան չի ընկալում իրեն որպես հասակով կամ տարիքով մեծ, այլ ուղղակի պնդում է իր լիարժեք մարդ լինելը՝ Որպես օրինակ, ներկայացնենք հետևյալ զրույցը, որով փորձ է արվում պարզել, թե երեխայի համար ի՞նչ է նշանակում «մեծ» հասկացությունը: Երեք տարեկան Արթուրիկին ներկայացվում է մի պատմվածք, որտեղ փոքրիկ տղան չի ենթարկվում մորը, հակառակն է անում (նեգատիվիզմի դրսևորումը):

Փորձարկողը հարցնում է.

— Արթուրիկ, ինչո՞ւ տղան չէր լսում մայրիկի ասածները:

— Որովհետև ինքը մեծ է,— պատասխանում է Արթուրիկը:

— Մայրիկից մե՞ծ է:

— Այո:

— Մայրիկից ավելի բարձրահասա՞կ ու ուժե՞ղ է:

— Չէ, մարդ է, էլի,— պատասխանում է Արթուրիկը (1, էջ 38):

Ահա մեկ այլ դիտում. հորաքույրը չորս տարեկան Հրայրիկին ասում է. «Դու դեռ շատ փոքր ես, որ կարծիք հայտնես», ինչին Հրայրիկը լաց լինելով պատասխանում է. «Բայց մարդ եմ չէ, քո նման մարդ եմ, միայն փոքր» (6, էջ 37):

Թերևս, «մեծ» հասկացությունը երեխան վերցնում է մեծերի խոսքից, քանի որ հենց «մեծ» և «փոքր» հասկացություններով ենք մենք երեխաներին ցույց տալիս մեր և իրենց տարբերությունը: Այս հասկացությունները չափազանց վերացական են, և այն բովանդակությունները, որ սովորաբար դրվում են մեծերի կողմից դրանց մեջ, փաստորեն, երեխային անլիարժեքություն են ներշնչում («դու փոքր ես, չգիտես, չես հասկանում, չես կարող» և այլն), ինչն էլ, ըստ մեզ, ադլերյան մանկական անլիարժեքության, ինչպես նաև այս տարիքի ճգնաժամի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում: Այլ կերպ ասած մեծերն են երեխային ներշնչում անլիարժեքություն, որի հաղթահարմանն էլ հենց ուղղված են ճգնաժամի ախտանշաններից շատերը:

Այս տարիքում որպես լիարժեք մարդ ինքնահաստատվելու կարևոր միջոցներից մեկը խաղն է: Ինչպես նշում է Դ. Բ. Էլկոնինը. «Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ դերային խաղը զգայուն է հատկապես մարդկային գործունեության, աշխատանքի, մարդկանց հարաբերությունների ոլորտների նկատմամբ, և, հետևաբար, երեխայի կողմից իր վրա վերցրած դերի հիմնական բովանդակությունն իրականության հենց այդ կողմի վերարտադրությունն է հանդիսանում» (166, էջ 322). Փաստորեն, երեխան, խաղալով մեծերի դերերը, նույնանում է նրանց հետ, դրանով իսկ ինքն է ընդունում և ուրիշներին ընդունել է տալիս սեփական ես–ի լիարժեք մարդ լինելու հանգամանքը: Նույն բանը տեղի է ունենում նաև ոչ խաղային իրավիճակում. երեխան, նմանակելով մեծերի վարքը կամ, ասենք, ինքնուրույնություն, ինքնակամություն

դրսևորելով («ես ինքս»), նպատակաուղղված ակտիվություն է ծավալում ինքնահաստատվելու որպես լիարժեք մարդ, յուրացնելու մարդկային վարքի ձևերը:

Երեխան փորձում է նաև խոսքով համոզել մեծերին, թերևս, նաև հենց իրեն, որ լիարժեք մարդ է և այդ նպատակով կարող է այնպիսի գլուխգովանություն անել, հորինել այնպիսի պատմություններ, որոնք ուղղակի զառանցանք են հիշեցնում: Ասենք փոքրիկ տղան կարող է հայտարարել, թե ինքն ամուսնացած է, երեխաներ ունի, մեքենա ունի, աշխատում է որպես վարորդ և այլն: «Նրանք (վաղ նախադպրոցական տարիքի երեխաները–Ա.Խ.),— գրում է Վ. Ս. Մուխինան,— իրենց հայտնի բոլոր դրական որակներն իրենց են վերագրում, գերագնահատում են իրենց անվախությունը, ուժը... և հոգ չեն տանում, թե որքանով է դա համապատասխանում իրականությանը: Այն հարցին, թե ուժեղ է արդյո՞ք նա, երեխան պատասխանում է, թե իհարկե, չէ որ ինքը նույնիսկ փիղ կարող է բարձրացնել» (103, էջ 173): Երեխան նույնիսկ սեփական անվան լիարժեքության համար կարող է պայքարել. «Այն ամենը, ինչ կապ ունի երեխայի անվան հետ, նրա համար յուրահատուկ անձնային իմաստ է ստանում» (103, էջ 111): Միևնույն ժամանակ, պետք է ասել, որ նշված երևույթները վկայում են նաև երեխայի մեջ առկա սեփական լիարժեքության (կարելի է ասել, որ այս տարիքում լիարժեքությունը տեսակային իմաստով է ընկալվում, այսինքն՝ երեխան ընկալում է իրեն որպես մարդ, այն դեպքում, երբ, ասենք, դեռահասության տարիքում լիարժեքությունը սեռային իմաստ է ստանում (լավ տղամարդ, կին) վերաբերյալ կասկածների և նույնիսկ անլիարժեքության ապրումների (շատ հնարավոր է ենթագիտակցական) մասին: Վերլուծելով ճգնաժամային ախտանշանները Դ. Կոիլովը գրում է. «Ճգնաժամային շրջանում երեխաների այս բոլոր առանձնահատկությունները խոսում են նրանց ֆրուստրացվածության, ներքին անբավարարվածության մասին, որը դրսևորվում է տագնապայնության, լարվածության մեջ» (82, էջ 20): Այդ առումով, կարծում ենք, մասամբ կարելի է համաձայնել հոգեվերլուծության մեջ ընդունված այն տեսակետի հետ, որ նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ են մեղքի զգացումը, տագնապները, անլիարժեքության զգացողությունը (հաճախ այդ ապրումներն ի հայտ են գալիս երազներում): Ըստ Ա. Ադլերի «Հաճախ իշխտ հիվանդագին ծնով

ապրվող սեփական ֆիզիկական անլիարժեքությունը, անհնքնավստահությունը, անհնքնուրույնությունը, ավելի ուժեղի օգնությունը ստանալու պահանջմունքը, ... ենթակա դիրք գրավելը, նրա (երեխայի–Ս. Խ.) մեջ ծնավորում են անլիարժեքության զգացողություն. որն ուղեկցում է նրան ամբողջ կյանքում» (16, էջ 36): Ըստ մեզ հնքնակասկածներն ու անլիարժեքության զգացողությունը բնորոշ են անձնավորության զարգացման բոլոր ճգնաժամային շրջաններին, երբ ծնավորվում է մարդու ես–կոնցեպցիան, հնքնագնահատականը, վերաբերմունքը սեփական ես–ի նկատմամբ: Այդ զգացողությունների պահպանումը ճգնաժամի ելքով է պայմանավորված. դրանք կարող են վերանալ, վերածել գերհնքնավստահության, գերլիարժեքության, անշուշտ, կարող են նաև ավելի սրվել հանգեցնելով նույնիսկ հնքնամերժման: Այլ կերպ ասած անլիարժեքությունը մարդու մշտական ուղեկիցը չէ, այն ուղղակի ճգնաժամի հանգուցալուծման տարբերակ է և բոլորին չէ, որ բնորոշ է: Ըստ որում, հետազոտությունները հենց այս տեսակետն են հաստատում. հայտնի է, որ ճգնաժամային շրջաններում հնքնագնահատականն անկում է ապրում. որից հետո նորից տեղի է ունենում կայունացում, հնքնագնահատականի բարձրացում (11, 39): Այսպես, ըստ Ս. Յակոբսոնի և Գ. Մորնայի «...ավագ նախադպրոցական տարիքում ընդհանուր հնքնագնահատականն արդեն բավական կայուն և ադեկվատ է լինում և նախադպրոցականի շփման և գործունեության կարևորագույն գործոն է դառնում» (172, էջ 56): Այլ հեղինակների հետազոտությունները վկայում են, որ ճգնաժամից հետո հնքնագնահատականը կարող է անկում ապրել (167, 45), իսկ հիվանդագին զարգացման պարագայում երեխան նույնիսկ կարող է մերժել իր ես–ը, օտարվել իրենից, կերպարանափոխվել (167): Ճգնաժամային ախտանշանները խոսում են այն մասին, որ բուն ճգնաժամի ընթացքում հնքնագնահատականն անկայուն, փոփոխական է դառնում. այդ են վկայում, օրինակ, հաջողությունների և անհաջողությունների նկատմամբ գերզգայունությունը, հնքնակասկածները, գովեստի, խրախուսանքի արժանանալու ձգտումը և այլն: Թերևս, հնքնագնահատականի այդ փոփոխականության մասին են վկայում նաև Վ. Գ. Շչուրի հետազոտությունները. վաղ նախադպրոցականի հնքնագնահատականը, ըստ նրա, կարող է կտրուկ անկում ապրել, եթե նա իրեն այլ տեսքով է պատկերացնում, այն դեպքում, երբ ավելի մեծ երեխաների մոտ նման անկում տեղի չի ունենում, ինչը, փաստորեն, վկայում է հետճգնաժամային շրջանում հնքնագնահատականի կայունացման մասին (64):

Ճգնաժամային շրջանում սկսում են ծնավորվել ես–կոնցեպցիայի նաև այլ կողմեր. «Երեքուկեսից չորս տարեկան հասակում երեխաները սկսում են տարբերակել իրենց արտաքինը կամ ֆիզիկական ես–ը, այսինքն մարմինը, որ տեսնում են այլ մարդիկ և շրջապատողներից թաքնված ներքին ես–ը» (27, էջ 106):

Ես–կոնցեպցիայի կարևոր ենթակառույցներից է իդեալական ես–ը, որը, ըստ երևույթին, նույնպես սկսում է ծնավորվել մոտավորապես 3,5–5 տարեկանում: Այս տարիքում իդեալական ես–ը, թերևս, ծնողական կերպարի վրա է հիմնվում («Մեծանամ, պապայիս նման եմ դառնալու»): Մոտավորապես 4 տարեկանում բարոյականության ծնավորումը (104, էջ 164) նույնպես վկայում է իդեալական ես–ի ծնավորման մասին (նախադպրոցական տարիքում իդեալական ես–ի կամ գերես–ի ծնավորման հիմնախնդիրը մանրամասն հետազոտության է ենթարկվել հոգեվերլուծության մեջ):

Երեխան այս շրջանում անորոշության մեջ է ոչ միայն սեփական ես–ի, այլև տարիքային հիմնախնդրի լուծման հարցում, այսինքն այն բանում, թե ինչպես պետք է լինել, դառնալ լիարժեք մարդ: Այդ հարցում երեխան փորձում է կողմնորոշվել «հետազոտելով» և նմանակելով այն ինչ անում են «լիարժեք մարդիկ» մեծերը: Ըստ որում, նմանակումը, սովորաբար, վերաբերում է մեծերի վարքի զուտ արտաքին կողմին և դրա հետևանքով հաճախ ոչ ադեկվատ, ծիծաղելի է թվում. ասենք երեխան վերցնում է ծխախոտը, հոր նման մեկնվում բազկաթոռին, սուրճ պահանջում մորից: Այս տարիքի երեխաների հետաքրքրությունը մեծերի աշխարհի նկատմամբ հստակորեն արտացոլվում է նրանց հարցերում, որոնց մեջ կարևոր տեղ է գրավում «ինչպիսին պիտի լինի մեծը» թեման: Մեծերին նմանակելու, մեծ դառնալու երեխայի այս բուռն ձգտումը մեծերի կողմից հաջողությամբ օգտագործվում է դաստիարակչական նպատակներով. ասենք «Երեխայի արցունքները գսպելու համար «մեծերը լաց չեն լինում» պնդումը հզոր փաստարկ է» (103, էջ 172):

Ինչ վերաբերում է 3 տարեկանի ճգնաժամի ախտանշանների հայտ-

ևի յոթնյակին (նեգատիվիզմը, համառությունը, ըմբոստությունը, մեծերի արժեզրկումը, բողոքները և բունտը, ինքնակամությունը, մեծերի նկատմամբ դեսպոտիզմը), ապա, ինչպես ցույց տվեցին մեր կողմից կազմակերպված հետազոտությունները (1), դրանք պայմանավորված են սեփական ես–ի նկատմամբ երեխայի գերզգայունությամբ (այս տարիքում երեխան զգայուն է իր որպես լիարժեք մարդու բնութագրերի նկատմամբ) և որպես լիարժեք մարդ ինքնահաստատվելու, իր և ուրիշների կողմից ընդունվելու ձգտմամբ: Համառոտ ներկայացնենք նշված հետազոտությունը: Վերջինիս հիմքում ընկած էր այն գաղափարը, որ ճգնաժամային ախտանշանները որոշակի իրավիճակներում ի հայտ եկող հակազդումներ են, որոնք բացի իրենց արտաքին վարքային դրսևորումներից, ունեն նաև ներքին տրամաբանություն. որոշակի ապրումների, սեփական ես–ի և իրավիճակի յուրահատուկ ընկալման արդյունք են: Բնականաբար, երեխան հենց այնպես չի հայհոյում ծնողին, կամակորություն անում, նեգատիվիզմ դրսևորում. դրանց մոտիվացիոն ասպեկտն էլ հենց ճգնաժամի ներքին բնութագիրը, էությունն է արտացոլում: Հենց այս ներքին կողմի առանձնահատկությունների ուսումնասիրությունն էլ մեր կողմից կազմակերպված հետազոտության նպատակն էր հանդիսանում: Մասնավորապես, մենք նպատակադրվել էինք պարզել, թե այս տարիքի երեխաներն ինչպես են ընկալում, հասկանում, բացատրում ճգնաժամային ախտանշանները, դրանց ի հայտ գալու որդապատճառները:

Հետազոտությունն իրականացվել է ամերիկացի հոգեբան Լուիզա Դյուսի «պատմվածքների» կամ «հեքիաթների» մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակով: Դյուսի մեթոդիկան նախատեսված է փոքրերի, այդ թվում նաև վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հուզական ապրումները, բարդույթները, դիրքորոշումները, իր և ուրիշների նկատմամբ ունեցած վերաբերմունքը, մտածմունքներն ուսումնասիրելու համար:

Մեթոդիկայի էությունը հետևյալն է. երեխաներին ներկայացվում են փոքր պատմվածքներ, հեքիաթներ, որոնց հերոսը փոքրիկ տղան կամ աղջիկը, կենդանու ձագուկի ինչ–որ արարքներ են կատարում, հայտնվում որոշակի իրավիճակների մեջ, ընտրության առաջ կանգնում: Փորձարկվող երեխաներին առաջարկվում է մեկնաբանել, բացատրել հե-

քիաթի հերոսի վարքը, ընտրություն կատարել, արտահայտել հերոսի մտքերը, ապրումները: «Դյուսի բոլոր հեքիաթները,— գրում է Բ Շելբին,— միավորված են մեկ ընդհանուր գործոնով պերսոնաժով, որի հետ երեխան ձգտում է նույնացնել իրեն...» (160, էջ 10): Նույնացման շնորհիվ երեխան, փաստորեն, իր ներքին ապրումներն ու մտորումներն է արտահայտում:

Դյուսի մեթոդիկայի մոդիֆիկացիան հետևյալում է կայանում. կազմվել են նոր պատմվածքներ, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է 3 տարեկանի ճգնաժամի որևէ ախտանշանի ի հայտ գալու բնորոշ իրավիճակը: Պատմվածքի հերոսը դրսևորում է ախտանշանը, իսկ փորձարկվողներին առաջարկվում է բացատրել, մեկնաբանել հերոսի վարքը: Ըստ որում, երեխաներին առաջարկվում էր ոչ թե մեկ հարց, ինչպես Դյուսի մեթոդիկայում, այլ մի քանիսը, որի հետևանքով հետազոտությունը վերածվում էր պատմվածքի շուրջ ծավալվող զրույցի: Դա ավելի լայն հնարավորություն էր տալիս թափանցել երեխայի ներաշխարհը. Երեխաների պատասխաններին զուգահեռ արձանագրվում էին նաև նրանց ոչ խոսքային հակազդումները:

Յուրաքանչյուր պատմվածք երկու տարբերակով էր ներկայացված աղջիկների և տղաների համար: Որպես օրինակ ներկայացնենք պատմվածքներից մի քանիսը:

1. «Գոհարիկն ուզում էր հատակն ավլել, բայց մայրիկը նրան չթողեց, ասաց.

— Չես կարող, բացի այդ, հատակը մաքուր է:

Գոհարիկը լաց եղավ և բողոքեց հայրիկին»:

Առաջարկված հարցերը. ա) Ինչո՞ւ էր Գոհարիկն ուզում հատակը մաքրել, չէ՞ որ այն մաքուր էր. բ) Ինչո՞ւ լաց եղավ Գոհարիկը, երբ մայրիկը նրան ասաց. «Չես կարող ավլել». գ) Ճի՞շտ արեց մայրիկը, որ չթողեց Գոհարիկին հատակն ավլել:

Պատմվածքն արտացոլում է այս տարիքին բնորոշ մեծերին նմանակելու, ինքնուրույնության ձգտումը:

2.«Մայրիկը կանչեց Գոհարիկին հաց ուտելու: Գոհարիկը սովուծ էր, բայց մայրիկին ասաց, որ հաց չի ուտի: Մայրիկը բարկացավ և ուզեց գոռով կերակրել: Գոհարիկը խփեց մայրիկի ձեռքին և լաց եղավ»:

Հարցերը. ա) Ինչո՞ւ Գոհարիկը չուզեց հաց ուտել, չէ՞ որ քաղցած էր.

բ) Ճի՞շտ արեց մայրիկը, որ ուզեց ստիպելով կերակրել Գոհարիկին. գ) Ինչո՞ւ լաց եղավ Գոհարիկը, երբ մայրիկն ուզեց ստիպելով կերակրել նրան:

Պատմվածքն արտացոլում է նեգատիվիզմի ախտանշանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ երեխաներին հիմնականում հասկանալի էր հերոսների վարքը. այդ վարքի դրդապատճառները: Շատ հաճախ երեխաներն արդարացնում էին հերոսներին հիմնավորելով, որ նրանք արդեն մեծ են և պետք է իրենք որոշեն ինչպես վարվել: Ինչպես նշեցինք վերևում, «մեծ» հասկացությունն այս տարիքում հավասարազոր է «լիարժեք մարդ» հասկացությանը, և այս տեսանկյունից ճգնաժամային ախտանշաններն արտացոլում են երեխաների ձգտումը ապացուցելու իրենց և ուրիշներին, որ իրենք լիարժեք մարդ են:

Վերջում համառոտ անդրադառնանք նաև 2,5–4 տարիքային շրջանի հետ կապված ժողովրդական ավանդույթներին (ինչպես դաստիարակության տարիքային առանձնահատկությունների, այնպես էլ տարիքային ավանդույթների մեջ արտացոլվում են այս կամ այն տարիքի վերաբերյալ ժողովրդի գիտելիքները): Պետք է ասել, որ դրանք հազվադեպ երևույթներ են: Եթե դեռահասությունը ժողովրդական տարիքային պատկերացումներում հստակորեն առանձնացվում է որպես անձնավորության զարգացման նշանակալի մի շրջան, և հատուկ ծեռնադրման արարողություններով դեռահասին սեռային ստատուս է վերագրվում (հասարակությունը գիտակցում է, որ երեխան վերածվում է սեռային ակտիվության սուբյեկտի տղամարդու/կնոջ), ապա 2,5–5 տարիքային շրջանին շատ ժողովուրդներ այդպիսի նշանակալիություն չեն տալիս (չնայած այդ շրջանը, գիտական տեսանկյունից, անձնավորության, ինքնագիտակցության ձևավորման առումով պակաս բեկումնային չէ): Թերևս, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տեսակային ինքնագիտակցության ձևավորումն այնպիսի լուրջ պրոբլեմներ չի հարուցում, որքան սեռային ինքնագիտակցության ձևավորումը:

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ որոշ ժողովուրդների մեջ կան ավանդույթներ կապված այս տարիքի հետ: Այսպես, Թաիլանդում նորածնին հաճախ անուն չեն տալիս կամ մականվամբ են անվանում: Անունը տրվում է ավելի ուշ 3–4 տարեկանից, կամ այդ տարիքում փոխ-

վում է երեխայի անունը: (67, էջ 68): Ի դեպ, հենց այս տարիքից էլ սկսում են վարքի ընդունված նորմերի ուսուցումը: Անուն տալը կամ անվանափոխությունը, սովորաբար, անձնավորության ծնունդի կամ կերպարանափոխության խորհրդանիշն է:

3.7.2. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Մոտավորապես 8, 9 տարեկանից սկսում է դեռահասությունը կամ, այսպես ասած, սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորումը, իսկ մոտ 12–15 տարեկանում ինքնագիտակցության նոր վերակառուցում է տեղի ունենում մարդը սկսում է ընկալել իրեն որպես սեռային ակտիվության սուբյեկտ, այսինքն արթնանում է սեռային ինքնագիտակցությունը: Վերջինս մանկության շրջանում զուտ կոգնիտիվ բնույթ է կրում և հիմնվում է առանձին արտաքին հատկությունների վրա (135, էջ 153): Երեխան ուղղակի կարողանում է տարբերակել սեռերը և իրեն դասում է համապատասխան սեռի մեջ, սակայն ինքնագիտակցության աֆեկտիվ բաղադրիչը բացակայում է: Ինչպես իրավացիորեն նշում է Ի. Կ. Կուզնեցովան. «...Վաղ պատանեկան տարիքում սեռային ինքնագիտակցության ձևավորումը տեղի է ունենում որակապես նոր մակարդակով տեղի է ունենում սեփական ես–ի որպես որոշակի սեռի անձնավորության գիտակցում» (83, էջ 81):

Դեռահասության շրջանում սեռային ինքնագիտակցության որակական փոփոխությունը մենք դիտում ենք որպես այդ գործընթացի քանակական զարգացումից. որը տեղի է ունենում ամբողջ մանկության շրջանում, անցում որակականի, այսինքն սեռային ինքնագիտակցության որպես ամբողջական իրողության իր կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչներով: Այլ կերպ ասած՝ դեռահասն արդեն ոչ միայն գիտելիք ունի իր սեռային պատկանելության մասին, այլև զգում է իրեն որպես կին կամ տղամարդ: Այդ գործընթացը հստակորեն ուրվագծվում է դեռահասի վարքի, ապրումների, այլ մարդկանց հետ հարաբերությունների, նույնիսկ այս տարիքին բնորոշ հոգեախտաբանական համախտանիշների մեջ:

Սեռային ինքնագիտակցության արթնացմանը նպաստող կարևորագույն գործոնը կենսաբանական սեռական զարգացումն է: Շատ հեղինակներ կարևորում են աղջիկների մոտ դաշտանային ցիկլի սկսվելը և տղաների առաջին սերմնաժայթքումները որպես ինքնագիտակցության վերակառուցման խթանիչներ (137, 75 և ուրիշներ): Հոգեվերլուծության ներկայացուցիչներից շատերն այս իրադարձություններն ուղղակի բեկումնային են համարում հոգեսեռային զարգացման գործընթացում գտնելով, որ դրանք երկու սեռերի համար հավասարազոր նշանակություն են ունենում. «Երիտասարդ տղամարդկանց վերլուծության մեր կլինիկական փորձը հաստատում է,— գրում են Ֆ.և Ռ. Թայսոնները,— որ առաջին պոլյուցիան տղաների համար զարգացման նույնքան կարևոր չափանիշ է, որքան առաջին դաշտանն աղջկա համար» (137, էջ 79): Պակաս կարևոր դեր չի խաղում նաև երկրորդային սեռային հատկությունների ի հայտ գալը: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ դեռահասներն ահռելի նշանակություն են տալիս առնականության և կանացիության այդ դրսևորումներին և խիստ ծանր են տանում դրանց վաղաժամ կամ ուշ հայտնվելը: Ըստ որում, կենսաբանական սեռական հասունացման հապաղումը հանգեցնում է նաև սեռային ինքնագիտակցության ձևավորման հապաղմանը: Ինքնագիտակցության արթնացման գործընթացում երկրորդային սեռական հատկությունների ի հայտ գալու ահռելի դերը բացահայտվում է նաև այն բանում, որ դրանց դրսևորումից հետո են դեռահասները սկսում ֆիքսվել իրենց արտաքինի վրա (ինչը սեռային ինքնագիտակցության արթնացման կարևոր չափանիշ է): Այս կապակցությամբ հետաքրքիր հետազոտություն է ներկայացնում Ռ. Բերնսը. ուսումնասիրության են ենթարկվել երեխաների նկարները նախքան ֆիզիկական հասունացումը և ֆիզիկական հասունացումից հետո: Այդ ընթացքում երեխաների նկարների մեջ տղամարդկանց և կանանց կերպարները նկատելիորեն ավելի տարբերակված են ներկայացված (27, էջ 183): Արտաքինը. ֆիզիկական կերպարը սեռային ինքնագիտակցության կարևորագույն բաղադրիչն է (թերևս, այն պատճառով, որ հակառակ սեռի հետ հարաբերություններում այդ գործոնը կարևոր դեր է խաղում) և ինքնագնահատականի, սեփական ես–ի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում որոշիչ դեր է խաղում. այն կարող է հզոր ազդեցություն ունենալ դրական կամ բացասական

սեռային ես–կոնցեպցիայի ձևավորման, հետևաբար նաև դեռահասության ճգնաժամի դրական կամ բացասական հաղթահարման գործընթացում: Այդ է վկայում, օրինակ, այն, որ այս տարիքին բնորոշ հոգեախտաբանության մեջ մեծ տեղ են գրավում արտաքինի հետ կապված պրոբլեմները: Այս կարգի համախտանիշները, ըստ էության, կարող են դիտվել որպես բացասական սեռային ես–կոնցեպցիայով պայմանավորված սեռային ինքնագիտակցության խանգարումներ:

Ինքնագիտակցության որակական վերակառուցմանը, սեփական ես–ի որպես սեռային ակտիվության սուբյեկտի գիտակցմանը նպաստող մյուս կարևոր գործոնը սեռական պահանջմունքի, հակառակ սեռի նկատմամբ զգացումների արթնացումն ու գիտակցումն է: Հաջորդ կարևոր գործոնը շրջապատող մարդկանց՝ ինչպես մեծերի, այնպես էլ հասակակիցների հետ հարաբերությունների փոփոխությունն է:

Սեռային ինքնագիտակցության, ինչպես նաև սեռադերային վարքի ձևավորման հարցում ահռելի դեր է խաղում հասակակիցների միջավայրը: Ըստ որոշ մասնագետների «...սեռի հարցում ինֆորմացիայի գերակշիռ մասը դեռահասը ստանում է հասակակիցներից, այդ իսկ պատճառով վերջիններիս բացակայությունը կարող է դանդաղեցնել նրա (դեռահասի–Ա. Խ.) հոգեսեռական զարգացումը կամ դրան անառողջ բնույթ տալ» (76, էջ 128): Բազմաթիվ հետազոտություններով հիմնավորված է, որ հասակակիցների շրջապատի վերաբերմունքն այս տարիքում որոշիչ դեր է խաղում դեռահասի ես–կոնցեպցիայի, ինքնագնահատականի ձևավորման գործում (72):

Կենդանիների վարքի հետազոտությունները ցույց են տվել, որ հասակակիցների միջավայրում չմեծացած դեռահաս կենդանիները լուրջ դժվարություններ են ունենում սեռական կյանքի հարցերում (75, էջ 78–79):

Դեռահասի ինքնագիտակցության մեջ այս շրջանում առկա է որոշակի անորոշություն, շփոթ: Այս անորոշությունը է. էրիքսոնը հետևյալ կերպ է բնութագրում. «Դեռահասը հստակորեն չի պատկերացնում իր այս կամ այն սեռին պատկանելը. նա մեծ ջանքեր է թափում, որ որոշի, թե ինքը արական, իգական, թե մի ինչ–որ միջին սեռի պատկանող էակ է հանդիսանում» (209, էջ 48): Ի. Կոնը գրում է. «Պատանեկան ես–ը դեռևս անորոշ է, հեղհեղուկ, այն հաճախ ապրվում է որպես ադոտ տագ-

նապ կամ ինչ–որ բանով լցնելու կարիք ունեցող ներքին դատարկության զգացողություն» (76, էջ 124): Այդ տագնապը կարող է դրսևորվել օրինակ, հոմոսեքսուալ տագնապի ախտանշանի ձևով, որն իրենից ներկայացնում է. «Սուր տագնապի գրոհ, որը հիմնվում է սեռային նույնականության հետ կապված ենթագիտակցական բախման վրա» (49, էջ 429): Սեռային ինքնագիտակցության մեջ առկա անորոշությունը կարող է առաջ բերել յուրահատուկ կերպարանափոխություն սեփական սեռային պատկանելության մերժում: Ըստ որոշ հեղինակների հոմոսեքսուալիզմն այս տարիքում կարելի է դիտել որպես նորմա (75 և ուրիշներ): Սովորաբար, հոմոսեքսուալ դիրքորոշման կայունացումը տեղի է ունենում դեռահասության շրջանի վերջում, ինչը վկայում է դրան նախորդող շրջանում անորոշության, որոնումների և ի վերջո հիվանդագին կերպարանափոխության մասին (ինչպես նախորդ շրջանում, երեխան հիվանդագին կերպարանափոխությունների դեպքում կորցնում էր իր տեսակային ես–ը՝ նույնացնելով իրեն, ասենք, կենդանու հետ): Այս տեսանկյունից, թերևս, իրավացի են այն հոգեբույժները, ովքեր հոմոսեքսուալիզմը դիտում են որպես հիվանդություն, որի դեպքում առաջատար համախտանիշը սեռային ինքնագիտակցության տրանսֆորմացիան է (դեռահասության տարիքի հոգեախտաբանության հարցերին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև):

Անդրադառնալով դեռահասության տարիքի ճգնաժամային ախտանշաններին պետք է ասել, որ դրանք, ինչպես նաև այս տարիքին բնորոշ շատ հոգեախտաբանական համախտանիշներ, հիմնականում արտացոլում են իրենց սեռային ես–ի նկատմամբ դեռահասների գերզգայունությունը, նրանց սեռային ինքնահաստատման ձգտումը, սեռի և սեռային հարաբերությունների հարցերում անորոշությունը: Այդ ախտանշանները, ըստ էության, պայմանավորված են սեռային ինքնագիտակցության և ես–կոնցեպցիայի ձևավորման դժվարություններով: Այդ են վկայում, օրինակ, արտաքինի հետ կապված ճգնաժամային ախտանշանները (գերկենտրոնացումը սեփական արտաքինի վրա, տերգիտի բարդույթը և այլն), սեռային ինքնահաստատմանն ուղղված ախտանշանները (ասենք տղաների ագրեսիվ վարքը) և այլն:

3.7.3. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Ինչպես արդեն նշել ենք, սեփական ես–ի գիտակցումը մեծապես պայմանավորված է այլ մարդկանց, հասարակության կողմից մարդու գիտակցմամբ (Կ. Մարքս): Այս տեսանկյունից, անհատի կողմից սեփական ես–ի որպես սեռային ակտիվության սուբյեկտի գիտակցման գործընթացում կարևոր դեր է խաղում այն, որ հասարակությունը սկսում է գիտակցել, ընդունել նրան որպես այդպիսին: Այս հանգամանքը, բնականաբար, իր արտացոլումն է գտնում դեռահասի նկատմամբ վերաբերմունքի, դաստիարակչական համակարգի մեջ, իսկ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող, ավանդույթները պահպանած ժողովուրդների մոտ հատուկ ծիսակարգերի մեջ: Այս ավանդույթները հստակորեն արտացոլում են ժողովրդական տարիքային գիտելիքները, ասենք այն, թե որ տարիքից դեռահասը կարող է հանդես գալ որպես սեռային ակտիվության սուբյեկտ: Այդ գիտելիքները զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող գրեթե բոլոր ժողովուրդների մոտ իրենց արտացոլումն են գտնում դեռահասների ձեռնադրման արարողության մեջ: Նախ. «Բոլոր արարողություններում. ծեռնադրման ծեսը վառ արտահայտված սեռային բնույթ է կրում» (72, էջ 39): Բազմաթիվ հեղինակներ ձեռնադրման արարողության հիմնական ֆունկցիան դեռահասին սեռային նույնականություն (այն է ինքնագիտակցություն) վերագրելու մեջ են տեսնում (69, 66 և ուրիշներ) «Դեռահաս–տղաների ձեռնադրման դաժան ծեսերը,— գրում է Ի. Կոնը,— յուրահատուկ հակակշիռ են հակառակ սեռի հետ մանկական նույնականությանը: Հեռացնելով մաշկի վերին հատվածը (խոսքը թլպատման մասին է–Ա.Խ.), որը, խորհրդանշային առումով, դիտվում է որպես կանացի ռուդիմենտ (այնպես ինչպես աղջիկների կլիտորը համարվում է տղամարդկային տարր) հասուն տղամարդիկ տղային «փրկում են» սեռային անորոշությունից և, այդ տեսանկյունից, ոչ թե մայրը, այլ հենց նրանք են տղամարդ դարձնում նրան տալով համապատասխան սեռային նույնականություն. այսուհետև նա պատկանում է տղամարդկանց հասարակությանը» (75, էջ 106):

Աղջիկների ձեռնադրման արարողությունները, որոնք հաճախ դաղտնի են կատարվում, նույնպես խորհրդանշային ձևով կանացի նույ-

նականության վերագրմանն են ուղղված: Այսպես, որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ «կլիտորը կտրելը փոքր փենիսի հեռացումը, նպատակ ունի կնոջ մեջ ճնշել առնական սկիզբը և հաստատել նրա մեջ սեփական սեռականությունը» (72, էջ 38):

Ձեռնադրման արարողությունը շատ ժողովուրդների մոտ ուղեկցվում է նաև անվանափոխությամբ (72 և ուրիշներ), ինչը ժողովրդական պատկերացումներում խորհրդանշում է նոր անձնավորության ծնունդը (146): Որոշ ժողովուրդներ, նույնիսկ, խորհրդանշային ձևով պատկերում են հին անձնավորության մահը և նորի ծնունդը. ասենք ձեռնադրվողներին պահում են անտառի խորքում, ցույց են տալիս, թե իբր նրանց սպանել են, ապա պատկերում են նրանց վերակենդանացումը: Այս ծեսերը նույնպես վկայում են, որ ձեռնադրման հիմնական իմաստը դեռահասին նոր ես–ի (սեռային ակտիվության սուբյեկտի) վերագրելն է:

Ձեռնադրման տարիքը. հիմնականում, միջին դեռահասությունն է, այսինքն սեռային ինքնագիտակցության ձևավորման շրջանը. ինչը վկայում է անհատական ինքնագիտակցության ձևավորման և հասարակության տարիքային գիտելիքների արտացոլումը հանդիսացող ծեսերի համաժամանակության և փոխպայմանավորվածության մասին: Այսինքն, հասարակությունը կարծես ընդառաջ է գնում, օգնում է դեռահասին գիտակցել իրեն որպես սեռային ակտիվության սուբյեկտ, վերացնում է նրա մեջ սեռային անորոշությունը, պարտադրում սեռադերային վարքի հստակ ծրագիր: Մեր կարծիքով, հենց այս հանգամանքով է պայմանավորված այն, որ այս հասարակություններում դեռահասությունն անճգնաժամային ընթացք է ունենում, իսկ սեռային ինքնագիտակցության խանգարումները (տրանսսեքսուալիզմը) հազվադեպ երևույթ են: Փաստորեն, այս հասարակություններում դեռահասին տրվում է հստակ սեռային կոնցեպցիա այն մասին, թե ինչ է նշանակում լինել տղամարդ/կին և, որպես այդպիսին որոնք են նրա ֆունկցիաները: Այլ կերպ ասած տրվում է այն, ինչ որոնում է դեռահասը (հաճախ ցավագին ձևով) զարգացած հասարակության մեջ:

3.7.4. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Հոգեբուժության մեջ լայնորեն տարածված է այն տեսակետը, որ դեռահասության տարիքին բնորոշ հոգեախտաբանությունը շատ դեպքերում այս տարիքի ճգնաժամի ախտանշանների սրված, խորացած, հիվանդագին տարբերակն է հանդիսանում (108 և ուրիշներ): Այսպես Ե. Բեզզուբովան դեռահասությանը բնորոշ դեպերսոնալիզացիայի համախտանիշը կապում է այս տարիքում ի հայտ եկող նույնականության, ինքնագիտակցության ճգնաժամի հետ (181):

Դեռահասության տարիքում հաճախ են հանդիպում արտաքինի հետ կապված հոգեախտաբանական համախտանիշները (հատկապես աղջիկների մեջ, քանի որ նրանց համար արտաքինի պրոբլեմը շատ ավելի հրատապ է, քան տղաների համար), իսկ դրանցից շատերը բնորոշ են հիմնականում դեռահասության տարիքին: Այսպես նյարդային անորեքսիան «հանդիպում է առավելապես աղջիկների մեջ դեռահասության տարիքում» (51, էջ 171): Հիվանդությունն իրենից ներկայացնում է սննդից հրաժարում ավելի գրավիչ, գեղեցիկ երևալու նպատակով (51, էջ 171):

Դեռահասության շրջանում հաճախ հանդիպող համախտանիշներից է դիսմորֆոֆոբիան (մոտ 80% դեպքերում այն հանդիպում է դեռահասության տարիքում 51): Հիվանդները համոզված են, որ իրենք որոշակի ֆիզիկական դեֆեկտ ունեն. «Առավել հաճախ թերությունները վերագրվում են դեմքին խոշոր, տգեղ քիթ (Սիրանո դե Բերժերակի բարդույթը), ցցված ականջներ. «լուսնի նման» կլոր դեմք, դեմքի տգեղ մաշկ և այլն: Այլ դեպքերում տագնապները կենտրոնացած են լինում կազմվածքի վրա չափազանց գիրություն կամ նիհարություն, խոշոր ազդրեր, հաստ, ծուռ կամ բարակ սրունքներ .. տղաների մեջ տագնապները, հաճախ, վերաբերում են առնանդամի կառուցվածքին այն չափազանց փոքր է կամ «ծուռ», «տգեղ» (91, էջ 115): Այս համախտանիշի դեպքում ի հայտ է գալիս այսպես կոչված հայելու սիմպտոմը դեռահասը սկսեռում ձևով հետազոտում է իրեն հայելում, իսկ լուսանկարման սիմպտոմի դեպքում հրաժարվում է լուսանկարվելուց

Հ. Ռեմշմիդտը նկարագրում է դեռահասությանը բնորոշ, այսպես կոչ-

ված, նարցիսիկ ճգնաժամը, որն իրենից ներկայացնում է «...ոչ ադեկվատ գերկենտրոնացածություն սեփական անձի վրա (էգոցենտրիզմ), որը պայմանավորված է հասունացման շրջանի ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Այսպիսի շեղումներ ունեցող դեռահասները գերագնահատում են իրենց ընդունակությունները և հնարավորությունները, ... ավելորդ պատվախնդրություն են դրսևորում, չափից դուրս և անհիմն սպասումներ են ունենում շրջապատողներից (օրինակ անընդհատ բացառիկ ուշադրություն են պահանջում իրենց նկատմամբ)...» (123, էջ 297):

Դեռահասության շրջանում հաճախ են հանդիպում սեռական բնույթի խանգարումներ, որոնցից շատերը պայմանավորված են սեռային ինքնագիտակցության ձևավորման դժվարություններով: «Սեփական սեռականության կայացման հետ կապված դեռահասների անինքնավստահությունն ու կասկածները,— գրում է Հ. Ռեմշմիդտը,— հաճախ հանգեցնում են ծանր ճգնաժամի և սուիցիդալ փորձերի» (123, էջ 291): Այդ խանգարումներից է հոմոսեքսուալիզմը, որի ի հայտ գալու կրիտիկական շրջանը դեռահասությունն է (75, էջ 268): Այսօր լայնորեն տարածված է այն տեսակետը, որ հոմոսեքսուալիզմը սեռային նույնականության (այն է՝ ինքնագիտակցության) խանգարում է (212, էջ 600): Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները (ըստ՝ 75), վաղ դեռահասության շրջանում (մինչև 12 տարեկանը) հոմոսեքսուալ վարքի դրսևորումները նշանակալի թիվ են կազմում (մինչև 18%): Սակայն, ինչպես նշում է Ի. Կոնը, «Դեռահասության և պատանեկության շրջանում հոմոսեքսուալ փորձը կարող է ամենատի հոգեսեքսուալ կենսագրության մեջ եական կամ անէական փաստ լինել, սակայն, ինքնին, այդպիսի փորձը նրան (դեռահասին–Ս. Խ.) «հոմոսեքսուալիստ» չի դարձնում, այնպես, ինչպես ոչ ոք գող չի անվանում այն երեխային, ով ուրիշի խաղալիքն է գողացել» (75, էջ 271): Բանն այն է, որ վաղ դեռահասությունը սեռային ինքնագիտակցության շփոթի շրջանն է. դեռ սեռային ինքնագիտակցությունը վերջնականորեն չի ձևավորվել, երեխան դեռևս չի զգում իրեն որպես կին/տղամարդ իր կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչներով: Այս տեսանկյունից միանգամայն իրավացի է Ի. Կոնը, որը վաղ դեռահասության շրջանի հոմոսեքսուալ փորձարկումները խաղ է համարում (75, էջ 275)՝ նշելով, որ «դեռահասության շրջանի վերջում այդ խաղերը, սովորաբար, վերջանում են. դրանց շարունակվելը 15–16 տարեկանում արդեն անհանգստանալու հիմք է տալիս» (75, էջ 275)՝ Այսինքն կարելի է անհանգստանալ այն ժամանակ, երբ դեռահասի մոտ ավարտվում է սեռային ինքնագիտակցության ձևավորման գործընթացը, և նա իր սեռի առնչությամբ սխալ կոգնիտիվ և աֆեկտիվ ընդհանրացումներ է կատարում:

Այսպիսով դեռահասության տարիքին բնորոշ հոգեախտաբանական համախտանիշները վկայում են նախ, որ ինքնագիտակցությունն այս տարիքում սեռային բնույթի վերակառուցում է ապրում, և, որ այդ համախտանիշները շատ դեպքերում այդ վերակառուցման գործընթացի, այսինքն սեռային ակտիվության սուբյեկտի ձևավորման ճգնաժամի սրման, զարգացման գործընթացի շեղման արտացոլումն են:

3.7.5. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ 25–32 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

Պետք է ասել, որ հասուն տարիքն ընդհանրապես և մասնավորապես հասունության ճգնաժամերը թե էմպիրիկական և, առավել ևս, տեսական առումներով չափազանց քիչ են հետազոտված. բացառություն չէ նաև վերոնշյալ ճգնաժամային շրջանը:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ մեր տարիքային պարբերացման կյանքի երրորդ ցիկլը ընդգրկում է 18, 22–35, 42 տարիքային շրջանը: Մոտ 20 տարեկանում լիովին ավարտվում է սեռական հասունացումը և անցում է կատարվում դեպի զարգացման հաջորդ փուլը սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորումը: Այս հասկացությամբ մենք մասնավորապես նկատի ունենք ընտանեկան և աշխատանքային ակտիվությունները և դրանք իրականացնող սուբյեկտին: Այս ակտիվությունները, նախ և առաջ, ենթադրում են ամուսնական, ծնողական և աշխատանքային ֆունկցիաների, դերերի յուրացում: Այս տարիքում, ըստ մեզ, նույնպես ես–ի վերակառուցում է տեղի ունենում, «արթնանում է», այսպես կոչված, «սոցիալական ակտիվության սուբյեկտի» ինքնագիտակցությունը: Տարիքային հոգեբանության մեջ, ինչպես հայտնի է, ընդունված է ինքնագիտակցության արթնացման շրջաններ համարել 3 տարեկանը

և դեռահասությունը, իսկ 25–30, 32–ի շրջանում ես–ի վերակառուցման կամ «արթնացման» մասին խոսք չի գնում, չնայած տարիքային այդ ճգնաժամի հետազոտություններից շատերում վեր են հանվում այնպիսի ախտանշաններ, որոնք վկայում են ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող որակական փոփոխությունների մասին. Այսպես վերլուծելով Ո Գոուլդի 30 տարեկանի ճգնաժամին նվիրված հետազոտությունները (ըստ հեղինակի ճգնաժամային շրջանն ընդգրկում է 28–34 տարիքային շրջանը) Ջ. Թըրները և Դ. Հելմսը գրում են. «Այս տարիքը հասուն մարդուն հնարավորություն է տալիս ներս շրջվել և վերլուծել իրեն միանգամայն այլ տեսանկյունից.. Երբ նրանք (28–34 տարեկան երիտասարդները–Ա. Խ.) որոշում են դեպի ներս շրջել իրենց էներգիան, ապա, սովորաբար, բացահայտում են համատեղ գոյակցող հակադիր ուժեր և հասուն գիտակցության նոր ոլորտ, որը մեծապես գաղտնի է և անձնային: Գիտակցության այս ոլորտը պարունակում է մղումներ, միտումներ, ցանկություններ, տաղանդներ և ուժեր, որոնց հասուն մարդիկ 20 տարեկանի շրջանում թույլ չէին տալիս մուտք գործել իրենց կյանքը, քանի որ դրանք պետք չէին կամ նկատելի կոնֆլիկտներ չէին հարուցում: Հիմա այդ ապրումները դուրս թափանցելու միտում են դրսևորում, իսկ հասուն մարդիկ բացում են իրենց այդ ներքին ապրումների առաջ: Հասունացման այս շրջանի վերջնական արդյունքն այն է, որ շատերը բացահայտում են աշխարհը հասկանալու նոր ուղիներ» (252, էջ 336): Դ. Լևինսոնը նշում է, որ հասունության շրջանում տեղի է ունենում սեփական ես–ի որպես հասուն մարդու ինքնատարբերակում: Նա 30 տարեկանի ճգնաժամային կարևոր ախտանշան է համարում կասկածները սեփական ես–ի շուրջ, ինչը որպես տարիքային երևույթ (ինքնակասկածները կարող են ի հայտ գալ, ասենք, սթրեսների, անհաջողությունների պարագայում), նույնպես վկայում է ինքնագիտակցության վերակառուցման մասին: Ջ. Լոնինգերը հասունության շրջանում առանձնացնում է անցումային մի շրջան անհատականացման մակարդակը (հեղինակն իր տարիքային շրջաբաժանման մեջ տարիքներ չի նշում, սակայն այդ շրջանն իր բնութագրերով կարելի է նույնացնել 25–30 տարիքային շրջանի հետ), որի ընթացքում, ըստ հեղինակի, մարդն ունենում է սեփական ես–ի եզակիության զգացողություն, սկսում է ավելի հստակ գիտակցել իր ներաշխարհը թերություններն ու առավելությունները, հանգամանք, որը վկայում է աճած ներհայեցողության, հետևաբար նաև ինքնագիտակցության մեջ փոփոխությունների գործընթացի մասին (ըստ 177, էջ 63–64):

Գ. Շիհին նշում է, որ 30–ի շրջանում թե տղամարդիկ և թե կանայք սկսում են նոր արժեքներով ղեկավարվել, նոր խնդիրներ դնել իրենց առաջ. «Միայնակ անձնավորությունն իր մեջ զուգընկեր գտնելու մղում է զգում, կինը, որ նախկինում տանը, երեխաների հետ իրեն լավ էր զգում, ձգտում է մուտք գործել աշխարհ: Երեխա չունեցող զույգը որոշում է երեխա ունենալ» (247, էջ 34): Հեղինակը նշում է նաև, որ այս տարիքում մարդը սկսում է սեփական ես–ն այլ տեսանկյունից ընկալել ու գնահատել: Այս ամենը նույնպես, ըստ մեզ, վկայում է ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող վերակառուցումների մասին: Բ. Լիվեհուդը հետևյալ կերպ է բնութագրում 30 տարեկան մարդկանց. «Անձնավորության հոգեբանական կերպարն ավելի պարզ է դառնում, հստակ ուրվագծեր է ձեռք բերում: Անձնավորությունը գիտակցում է իրեն և գտնում. որ այդպես էլ պիտի շարունակվի» (90, էջ 171): Ռուս գիտնականներ Վ. Մորգունը և Ն. Տկաչևան, վերլուծելով 24–30 տարիքային շրջանը, այն բնութագրում են որպես «...ինքնաորոնման, անհատականության կերտման, սեփական անձի որպես բոլոր իրավունքները և պարտականությունները կրող հասուն մարդու վերջնական գիտակցման շրջան...» (102, էջ 59). Մեկ այլ տեղում նույն հեղինակները, վերլուծելով, այսպես կոչված, անձնավորության «ծնունդների» հարցը, գրում են. «Սանկությունից հասունությանն անցնելուց հետո տեղի է ունենում անձնավորության նս մեկ երրորդ «ծնունդը» անձնային մի հզոր վերակառուցում· Ժամանակային առումով դա վերաբերում է կամ 22–25 տարիքային շրջանին...կամ, որ ավելի հավանական է, անձնավորության երրորդ ծնունդը տեղի է ունենում 30 տարեկանի շրջանում, երբ, ըստ մի շարք հեղինակների վկայության, խոր և կարևոր վերակառուցումներ են տեղի ունենում» (102, էջ 65–66):

Այսպիսով կարելի է ասել, որ 25–30, 32 տարեկանում ինքնագիտակցության վերակառուցման հիմնախնդիրը տարիքային հոգեբանության մեջ ուրվագծվել է: Ինչպես նշեցինք վերևում, այդ վերակառուցումը մենք բնութագրում ենք որպես սոցիալական ակտիվության սուբյեկտի (ըստ կենցաղային արտահայտության հասուն մարդու) ինքնագիտակցության ձևավորման գործընթաց: Ըստ որում, «սոցիալական ակտիվու-

թյան սուբյեկտի ինքնագիտակցություն» հասկացությունը մենք ընկալում ենք որպես ընդհանուր, որը կոնկրետանում է այնպիսի իրողությունների մեջ, ինչպիսին է, օրինակ, ծնողական ինքնագիտակցությունը: Պետք է ասել, որ վերջինիս բնութագրերին մենք չենք հանդիպել գրականության մեջ և ստորև ներկայացնում ենք այդ իրողության վերաբերյալ մեր պատկերացումները: Ծնողական ինքնագիտակցությունը, այսինքն սեփական ես–ի ընկալումը որպես ծնողական ակտիվության սուբյեկտ, ըստ մեզ, ձևավորվում է հիմնականում երկու հանգամանքի ազդեցության տակ. առաջինը ծնողական պահանջմունքի արթնացումն է, երկրորդը երեխայի ծնունդը: Դրանց առկայության պարագայում է ծնողական ինքնագիտակցությունը հանդես գալիս իր կոգնիտիվ և աֆեկտիվ բաղադրիչներով, այսինքն մարդը ոչ միայն գիտի, որ ինքը ծնող է, այլև զգում է իր ծնող լինելը (սովորաբար, պատանի հայրերը և մայրերը երեխա ունենալուց հետո էլ չեն զգում իրենց ծնող լինելը: Նման դեպքերում նրանք ուղղակի հայտարարում են, որ չեն զգում իրենց որպես ծնող, որ դեռ իրենք են երեխա, իսկ նրանց ծնողական վարքը հաճախ ծնական բնույթ է կրում, ասենք երեխային վերաբերվում են որպես խաղալիքի, զվարճանքի առարկայի): Պետք է ասել, իհարկե, որ մարդու ինքնագիտակցության մեջ, ապագա կամ պոտենցիալ ես–ի ոլորտում, ծնողության կոնցեպցիան առկա է շատ ավելի վաղ շրջանից և որոշակի զարգացում է ապրում: Ծնողական ինքնագիտակցության ձևավորումն ու զարգացումը, որքան մեզ հայտնի է, դեռևս հատուկ հետազոտության չի ենթարկվել, չնայած դրան կարծում ենք, եղած ինֆորմացիայի հիման վրա այնուամենայնիվ հնարավոր է ընդհանուր ձևով ուրվագծել այդ գործընթացը: Արդեն նախադպրոցական տարիքում երեխայի խաղերի մեջ ծնողական դերերը մեծ տեղ են գրավում, նաև իրենց ֆանտազիաների մեջ երեխաները հաճախ են իրենց պատկերացնում որպես ծնող: Այսինքն կարելի է ասել, որ ծնողական ես–կոնցեպցիայի հիմքերը ձևավորվում են հենց այս տարիքում տեսակային դիֆուզ ինքնագիտակցության մեջ: Հետագա տարիներին մինչև կյանքի երրորդ փուլը (մինչև 20 տարեկանը), ծնողության վերաբերյալ պատկերացումները, դիրքորոշումները, պոտենցիալ ծնողի ինքնագիտակցությունը զուտ քանակական զարգացում են ապրում, իսկ որակական փոփոխությունը տեղի է ունենում մոտ 25–30 տարիքային շրջանում, երբ

ակտուալանում և գիտակցվում է ծնողական պահանջմունքը, ծնվում են երեխաներ: Սոցիալական ակտիվության սուբյեկտի կամ հասուն մարդու ինքնագիտակցության մյուս բաղադրիչը, որ տարբերակվում է 25–32 տարիքային շրջանում, սեփական ես–ի որպես աշխատանքային ակտիվության սուբյեկտի ինքնագիտակցությունն է: Վերջինս առավելապես քննվում է աշխատանքի հոգեբանության շրջանակներում. «Աշխատանքի հոգեբանության խնդիրներից մեկը,— գրում է Ե. Ա. Կլիմովը,— մասնագիտական ինքնագիտակցության որպես աշխատանքի և մարդկանց մասնագիտական կյանքի ուղիների, «կարիերաների», «աշխատանքային ճակատագրերի» կառուցման կարևորագույն կարգավորիչի, կառուցվածքի և դինամիկայի (զարգացման) հետազոտությունն է» (73, էջ 26): Մասնագիտական ինքնագիտակցությանը հոգեբանության մեջ տարբեր բնութագրեր են տրվում. այն ներկայացվում է որպես որևէ մասնագիտությանը պատկանելու գիտակցում, սեփական մասնագիտական հատկությունների ճանաչում, գնահատում, դրանց նկատմամբ վերաբերմունքի դրսևորում, սեփական ես–ի գիտակցումը որպես մասնագիտական գործունեության սուբյեկտ: Ըստ Ա. Կ. Մարկովայի մասնագիտական ինքնագիտակցությունը ենթադրում է. ա) մասնագիտական նորմերի, կանոնների, մոդելների գիտակցում որպես սեփական հատկությունների գիտակցման չափանիշ, բ) վերոնշյալ հատկությունների գիտակցումն ուրիշների մեջ և որևէ վերացական կամ կոնկրետ կոլեգայի հետ համեմատվելը, գ) մասնագետների կողմից իրեն որպես մասնագետի գնահատումը, դ) սեփական մասնագիտական գործունեության գնահատումը ռետրոսպեկտիվ, ակտուալ և ապագայի, իդեալի տեսանկյուններից, այդ գնահատականի նկատմամբ հուզական վերաբերմունքը (96).

Ըստ մեզ մասնագիտական ինքնագիտակցությունը սեփական ես–ի գիտակցումն է որպես աշխատանքային ակտիվության սուբյեկտ ընդհանուր և կոնկրետ, մասնագիտական առումներով (այս տեսանկյունից, թերևս, ավելի ճիշտ է «աշխատանքի սուբյեկտի կամ աշխատանքային ակտիվության սուբյեկտի ինքնագիտակցություն» արտահայտությունը, քանի որ նախ բոլոր աշխատանքները չեն, որ կարող են դիտվել որպես կոնկրետ մասնագիտություն, մյուս կողմից մարդն սկզբում ընկալում, գիտակցում է իրեն որպես աշխատանքի սուբյեկտ, որից հետո միայն

որպես որևէ մասնագիտության կրող չնայած ասվածին այնուամենայնիվ նպատակահարմար ենք համարում օգտագործել արդեն ընդունված հասկացությունը): Այլ կերպ ասած մարդն սկսում է ընկալել իր անձը որպես աշխատավոր միաժամանակ դասելով իրեն որևէ կոնկրետ աշխատանքային ոլորտի մեջ, ընկալելով իրեն որպես այս կամ այն մասնագիտությունը կրող («ես երաժիշտ եմ», «շինարար» և այլն):

Ինչ վերաբերում է մասնագիտական ինքնագիտակցության ձևավորմանն ու զարգացմանը, ապա այս ոլորտում հատուկ հետազոտությունների մենք չենք հանդիպել, չնայած պետք է ասել, որ բավական լավ է հետազոտված մասնագիտական ինքնորոշման զարգացումը, ինչը մասամբ արտացոլում է մասնագիտական ինքնագիտակցության զարգացման գործընթացը: Ըստ Տ. Վ. Կուդրյավցևի և Վ. Յու. Շեգուրովայի՝ անձի մասնագիտական կայացումը տեղի է ունենում հետևյալ էտապներով. ա) մասնագիտական մտադրությունների ձևավորում, բ) մասնագիտական ուսուցում, գ) մասնագիտությանը հարմարում, դ) աշխատանքային գործունեության մեջ լիակատար կամ մասնակի մասնագիտական ինքնահիրացում (83): Բնականաբար, մասնագիտական ինքնագիտակցությունն էլ զարգացման երկար ճանապարհ է անցնում. արդեն նախադպրոցական տարիքում երեխան դերային խաղերի ժամանակ (նույնիսկ խաղային իրավիճակից դուրս) նույնացնում է իրեն այս կամ այն մասնագետի հետ («բժիշկ եմ», «վարորդ եմ»...), այսինքն արդեն այս տարիքում տեսակային դիֆուզ ինքնագիտակցության մեջ ընդհանուր, վերացական ձևով տարբերակվում և ընդհանրացվում է սեփական ես–ի որպես աշխատանքային ակտիվության սուբյեկտի գաղափարը: Տարիքի հետ այդ գաղափարն ավելի ու ավելի է կոնկրետանում մասնագիտության առումով երազանքներից հասնելով սեփական ես–ի որպես աշխատանքային ակտիվության սուբյեկտի գիտակցմանը և համապատասխան ես–կոնցեպցիայի ձևավորմանը:

Այժմ վերադառնանք մեր բուն թեմային: Ըստ մեզ 25–30, 32–ի շրջանում սկսում է գիտակցվել տարիքային այս ցիկլի հիմնախնդիրը (սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորումը), դրա հիմքում ընկած պահանջմունքները, սեփական ես–ը՝ որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ (ծնող, ամուսին, մասնագետ), ձևավորվում են տարիքային հիմնախնդրի լուծման, այսինքն ծնողության, ընտանեկան կյանքի,

մասնագիտական կարիերայի, նաև սեփական ես–ի որպես ամուսնու, ծնողի, մասնագետի նախնական կոնցեպցիաները՝ Անդրադառնանք այն կենսաբանական, հոգեկան և սոցիալական գործոններին, որոնց շնորհիվ տեղի է ունենում տարիքային հիմնախնդրի գիտակցումը և ինքնագիտակցության վերակառուցումը: Նախ նշենք, որ որևէ իրողության գիտակցումը անգիտակցականից գիտակցության ոլորտը թափանցելը, ենթադրում է տվյալ իրողության որոշակի աճ, զարգացում, հասունացում. օրինակ դեռահասության շրջանում կենսաբանական, հոգեկան և սոցիալական նորագոյացությունների որոշակի զարգացումն է հիմք հանդիսանում, որ այդ տարիքի սկզբից մի քանի տարի անց տեղի ունենա սեռային ինքնագիտակցության արթնացումը (ասենք երկրորդային սեռային հատկությունների ձևավորումը, սեռական պահանջմունքի ակտուալացումը և այլն): Նույն ձևով էլ կյանքի երրորդ փուլի սկզբում (18–20, 22 անցումային շրջանում) ավարտվում է սեռական հասունացումը, մարդը ֆիզիկական, հոգեկան, սոցիալական առումներով ձեռք է բերում հասունությանը բնորոշ գծեր, սակայն զարգացումը նշված ոլորտներում դեռ շարունակվում է և 25 տարեկանի շրջանում հասնում այնպիսի մակարդակի, որ հնարավոր է դառնում տարիքային հիմնախնդրի հետ կապված պահանջմունքների և սեփական ես–ի որպես դրանց կրողի գիտակցումը: Այսպես կոնջ ռեպրոդուկտիվ համակարգը լիովին կայանում է 25 տարեկանի շրջանում (56, էջ 65): Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, ցածր քաշով երեխաների ծնվելու հավանականությունը նվազագույնի է հասնում 25–29 տարեկանում (184, էջ 86), ինչը վկայում է, որ կնոջ օրգանիզմը հենց նշված տարիքում է առավելագույնս հասունացած լինում ծնողական ֆունկցիայի համար: Մեկ այլ կարևոր պահ է ընդհանուր ֆիզիոլոգիական զարգացումը: Այսպես ըստ Ֆ. Հյուջեսի և Լ. Նոպեի «Այն ժամանակ, երբ անձնավորությունը մոտենում է 30 տարեկանի շրջանին, ուղեղը հասնում է իր լիարժեք հասուն քաշին» (221, էջ 102): Ըստ Ջ. Թըրների և Դ. Հելմսի «Եթե վերլուծենք հասուն մարդկանց էլեկտրաէնցեֆալոգրաման (էէգ), ապա մինչև 19–20 տարեկանը ուղեղի ալիքային ակտիվության մեջ չենք տեսնի հասունության նշաններ, իսկ որոշ դեպքերում հասունացումը շարունակվում է մինչև 30 տարեկանը» (252, էջ 323):

Ֆիզիկական ուժի առավելագույն ցուցանիշները վերաբերում են 25–30 տարեկանին (221, էջ 107), մինչև 30 տարեկանը սրտանոթային համակարգը և թոքերը նույնպես հասնում են առավելագույն հզորության: Հոգեկան և հոգեֆիզիոլոգիական բազմաթիվ ֆունկցիաների առավելագույն ցուցանիշները վերաբերում են 25–30 տարեկանին: Ըստ Պ. Պ. Լազարևի սենսորային զգայունության օպտիմումը վերաբերում է մոտ 25 տարեկանին (ըստ՝ 19, էջ 101), գունազգայունության օպտիմումը վերաբերում է 30 տարեկանի շրջանին (19, էջ 105), ինտելեկտուալ ֆունկցիաները զարգանում են մինչև 30 տարեկանը և, ըստ Անանևի, ամենաբարձր մակարդակին են հասնում 25–30 տարեկանում (19, էջ 109): Հոգեկան այլ ֆունկցիաները (հիշողություն, ուշադրություն և այլն) նույնպես էական զարգացում են ապրում մինչև 30 տարեկանը: Ընդհանուր առմամբ, մինչև 32–35 տարեկանը մարդու թե ֆիզիկական և թե հոգեկան ոլորտներում զարգացում է տեղի ունենում, և շատ ցուցանիշներ իրենց առավելագույն մակարդակին են հասնում հենց այս շրջանում (47, էջ 49): Այս շրջանում էական զարգացում է տեղի ունենում նաև սոցիալ–հոգեբանական ոլորտում. «Ձևավորվում է սեփական կյանքի տերը լինելու զգացողություն, սոցիալական պատասխանատվություն իր, աշխատանքի և ուրիշների (օրինակ՝ երեխաների, ծնողների համար) համար» (113, էջ 5):

Բնականաբար, հարց է ծագում՝ ինչո՞ւ պիտի սեռական հասունացումից հետո ևս մեկ տասնամյակ շարունակվի հոգեկան և ֆիզիկական զարգացումը, չէ՞ որ, ինչպես նշում են կենսաբանները, «մարդու, ինչպես նաև կենդանիների, անհատական զարգացման իմաստը սեռահասուն տարիքի հասնելն է...» (22, էջ 245): Կարծում ենք, որ զարգացման շարունակման առավել տրամաբանական բացատրությունը ծնողության և աշխատանքային ակտիվության համար մարդու պատրաստականության ձևավորումն է, քանի որ սեռահասուն լինելը ապահովում է միայն սերնդատվությունը, բայց ոչ սերնդի պահպանումը. վերջինիս համար զարգացման ավելի բարձր մակարդակ է պետք: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական և հոգեկան զարգացման գագաթին հասնելը և դրա սուբյեկտիվ զգացողությունն ու գիտակցումը կարևոր պայման են ընտանեկան ակտիվությանը, խնամվողի վիճակից խնամողի կարգավիճակին անցնելու պատրաստականության համար: Մարդը պետք է զգա իր հոգեկան և ֆիզիկական ներուժը, որպեսզի ընտանիք կազմելու, ծնող

դառնալու համար ունակ համարի իրեն: Թերևս, հոգեկան և ֆիզիկական զարգացման գագաթին մոտենալը հենց այն գենետիկական ազդանշանն է, որ խթանում է ծնողական պահանջմունքի ակտուալացումը և գիտակցումը: Մարդն ուրիշների համար հոգ տանելու ուժ, վստահություն և ցանկություն է զգում, ըստ է. Էրիքսոնի ի հայտ է գալիս գեներատիվությունը, որը Ջ. Բիգները հետևյալ կերպ է բնութագրում. «Ուրիշներին խնամելու ցանկությունն այս դիրքորոշման (գեներատիվության–Ա.Խ.) կենտրոնական բաղադրիչն է» (184, էջ 186):

Ծնողական ինքնագիտակցության արթնացման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև «սիրային փորձարարության» շրջանի ավարտը, ինչը երիտասարդի մեջ անհոգ կյանքից յուրահատուկ հագեցածություն է առաջ բերում արթնացնելով տունուտեղ դնելու ժամանակի զգացողություն: Մեծ դեր են խաղում նաև արտաքին հանգամանքները, մասնավորապես այն, որ փոխվում է միջավայրի վերաբերմունքը երիտասարդի նկատմամբ. եթե ամուսնացած չէ, նրանից պահանջում են ամուսնանալ, իսկ եթե ամուսնացած է, ավելի լուրջ վերաբերմունք՝ ընտանիքի նկատմամբ, երեխաների դաստիարակության հարցերում (ինչպես նշել ենք, կենցաղային գիտակցության մեջ 25–ի շրջանն է ամուսնության համար լավագույնը համարվում. այսինքն, հասարակությունը, մարդու զարգացման դիտումներից ելնելով, հանգել է այն եզրակացության, որ հենց նշված տարիքային շրջանում է երիտասարդը պատրաստ դառնում ընտանիք կազմելու հասմար): Արտաքին դրդող հանգամանքներից կարելի է նշել նաև հասակակիցների ամուսնությունները, երեխաներ ունենալը: Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ այս շրջանում երիտասարդները աշխատանքային ոլորտում այս կամ այն չափով ինքնահաստատվում են, ինչը սոցիալական ուժի զգացողություն է ներշնչում: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները. 25–30 տարիքային շրջանը բեկումնային է մարդու որպես աշխատանքային ակտիվության սուբյեկտի ձևավորման առումով: Ըստ Շ. Բյուլերի 25–ի շրջանում մարդը գտնում է կյանքում իր կոչումը (աշխատանքային իմաստով), անցնում է մշտական աշխատանքային գործունեության (ըստ 113, էջ 5): Ըստ որոշ հեղինակների 25–30–ի շրջանը մասնագիտական ինքնորոշման, սեփական ես–ի որպես մասնագետի գնահատման չափանիշների ձևավորման շրջան է (113, էջ 5): Ամերիկացի հոգեբանների հետազո-

տությունները վկայում են, որ 25–35-ի շրջանը մասնագիտական որոնումների ավարտի, վերջնական կողմնորոշման շրջանն է (248, էջ 326): Ըստ Ե. Դոնչենկոյի «Անձնավորության զարգացման սոցիալական պայմանները, կենսաբանական մակարդակը և հոգեբանական կառույցներն են որոշում այն, որ 25–30 տարեկանում համընկնում են նշանակալի հագեցածություն ունեցող շրջանները ստեղծագործական գործունեության սկիզբը և հասարակական կյանքի մեջ մարդու ինքնուրույն ընդգրկումը» (58, էջ 239):

Անդրադառնալով այս տարիքի ճգնաժամի ախտանշանների խնդրին պետք է ասել, որ դրանք, նախ և առաջ, պայմանավորված են սեփական ես-ի՝ որպես սոցիալական ակտիվության սուբյեկտի առնչությամբ անձնավորության զգայունության գերսրմամբ. երիտասարդները խիստ զգայուն են դառնում իրենց սոցիալական ես-ի առումով. մի կողմից փորձում են կողմնորոշվել տարիքային հիմնախնդրի, ինչպես նաև սեփական ես-ի որպես դրա կրողի հետ կապված հարցերում, մյուս կողմից բուռն ձևով ձգտում են ինքնահաստատվել սոցիալական ոլորտում: Փորձենք կոնկրետացնել ասվածը. այս տարիքում մարդիկ սկսում են խիստ անհանգստանալ, ասենք, իրենց ընտանեկան ստատուսի առումով ամուսնացա՞ծ են, թե՞ ոչ, ի՞նչ դիրք է գրավում իրենց ընտանիքը հասարակության մեջ, ի՞նչ են իրենցից ներկայացնում որպես ամուսին/կին, ծնող, ինչպե՞ս պետք է ճիշտ դաստիարակել երեխաներին, արդյո՞ք ճիշտ են ընտրել մասնագիտությունը, ի՞նչ են իրենցից ներկայացնում որպես աշխատանքի սուբյեկտ, ո՞րն է իրենց կյանքի ուղին, ի՞նչ արժեքներով պետք է կողմնորոշվել այս կյանքում և այլն: Մյուս կողմից, երիտասարդները բուռն կերպով ձգտում են ինքնահաստատվել որպես ծնող, ամուսին, աշխատանքի սուբյեկտ: Նշված ոլորտներում ցանկացած անհաջողություն, նույնիսկ խոչընդոտ բուռն հուզական հակազդում է առաջ բերում: Ըստ որում, անփորձության, նաև խիստ հուզական մոտեցման հետևանքով հաճախ են անհաջողությունները նշված ոլորտներում: Տարբեր հեղինակների կողմից, ինչպես արդեն նշել ենք, առանձնացվում են այս ճգնաժամի հետևյալ ախտանշանները նախկին արժեքների վերաիմաստավորումը, նպատակների, հետաքրքրությունների, մասնագիտությունների փոփոխությունը, անկման, կործանման, հիասթափության զգացողությունը, կասկածները սեփական

ես-ի նկատմամբ, անլիարժեքության զգացողությունը, ինքնաճանաչմանն ուղղված ուժեղ փնտրտուքները, գերզգայունությունը մասնագիտական առաջխաղացման, երեխաներ ունենալու կամ դաստիարակելու հարցերի նկատմամբ և այլն: Այս ախտանշանները նույնպես, ըստ մեզ, հիմնականում վկայում են այն մասին, որ երիտասարդները, գիտակցելով տարիքային հիմնախնդիրը և սեփական ես-ը որպես այդ հիմնախնդրի կրող, ակտիվորեն փորձում են կողմնորոշվել դրանցում և ինքնահաստատվել:

Վերնում, քննարկելով ինքնագիտակցության վերակառուցումները, մենք անդրադառնում էինք նաև տարիքային հոգեախտաբանությանը կարևոր համարելով հատկապես հիվանդագին կերպարանափոխությունները որպես ինքնագիտակցության յուրահատուկ խանգարումներ: Այս տարիքի առնչությամբ մենք չենք հանդիպել տարիքային հոգեախտաբանական հատուկ հետազոտությունների, սակայն հիմնվելով մեր հետազոտությունների վրա (հետազոտության ենք ենթարկել 25–35 տարիքային շրջանում ինքնագիտակցության հիվանդագին կերպարանափոխությունների դեպքերը՝ ըստ հիվանդության պատմությունների) հանգել ենք այն եզրակացության, որ 25-ից հետո տեղի ունեցող հիվանդագին կերպարանափոխությունների ժամանակ մարդն սկսում է նույնացնել իրեն նշանավոր գործիչների հետ (այս համախտանիշի ավելի վաղ դրսևորումների մենք չենք հանդիպել հիվանդությունների պատմությունների ուսումնասիրության ժամանակ). Այս տարիքում են հիվանդները կերպարանափոխվում հիսուսների, նապոլեոնների և այլոց (հոգեբուժության մեջ նման կերպարանափոխությունները դիտվում են որպես զառանցանք): Այլ կերպ ասած այս տարիքում մարդու իդեալն են դառնում քաղաքական, կրոնական, հասարակական գործիչները, և հիվանդագին ինքնամերժման դեպքում մարդը հենց նրանց կերպարի մեջ է մտնում:

Անդրադառնալով այս տարիքային շրջանին վերաբերող ժողովրդական ավանդություններին պետք է ասել, որ դրանք հազվադեպ երևույթ են: Այդպիսի եզակի ավանդություններից կարելի է նշել այն, որ որոշ ժողովուրդների մեջ ընդունված է ամուսնանալուց և աշխատանքային գործունեության անցնելուց հետո անվանափոխություն կատարել (163, էջ 180), ինչը վկայում է, որ ըստ այդ ժողովուրդների պատկերացումների

նշված իրադարձությունները հանգեցնում են անձնավորության նոր ծննդի: Այսպես, ավստրալիական որոշ ժողովուրդների մեջ ընդունված է ծեռնադրությունից մոտ 10 տարի անց (24–25 տարեկանում) յուրահատուկ ծեռնադրություն կատարել կրտսեր տղամարդուն ընդունել ավագ տղամարդկանց շարքը: Ընդունումից հետո երիտասարդի մասնագիտական բնութագրերի հիման վրա անվանափոխություն է կատարվում, օրինակ տրվում են այսպիսի անուններ. «Բունժիլդուանանգուն մարդ, որը քիթը վեր տնկած է մակույկներ պատրաստում: Բունժիլլարլայան՝ մարդ, որն անվրեպ խփում է բադակտուցներին» (23, էջ 105).

3.7.6. 25–32 ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԵԳՆԱԺԱՄԻ ԷՄՊԻՐԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ (ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ԲՈՒԴԴԱ, Լ. ՏՈԼՍՏՈՅ, Վ. ՎԱՆ ԳՈԳ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ) ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Մեր կողմից կազմակերպվել է 25–32 տարիքային շրջանում ինքնագիտակցության և անձնավորության մոտիվացիոն համակարգի առանձնահատկություններին նվիրված հետազոտություն (14), որի արդյունքները համառոտակի ներկայացնում ենք ստորև: Հետազոտության նպատակն էր՝ պարզել, թե որ տարիքային շրջանում են ակտուալանում և հստակորեն գիտակցվում ընտանիք կազմելու, ծնող դառնալու, աշխատանքային առումով կյանքում սեփական տեղը գտնելու և ինքնահաստատվելու պահանջմունքները (հետազոտության են ենթարկվել 30–ից բարձր տարիք ունեցող, սոցիալական տարբեր խավերից 102 մարդ 38 կին և 64 տղամարդ): Բնականաբար, այս պահանջմունքների ակտուալացումը և գիտակցումը վկայում են, որ մարդու մեջ «արթնացել է» հասուն ես–ը, այսինքն մարդն սկսել է գիտակցել իրեն որպես հասարակական ակտիվության սուբյեկտ: Հետազոտությունն իրականացվել է հարցման մեթոդով (հարցաշարը ներկայացված է հավելվածում): Հարցերը վերաբերում էին ամուսնության, ծնողության, կյանքում սեփական տեղը գտնելու, սեփական կյանքն րմաստավորելու, սեփական ես–ի որոնումների, ես–ի «վերածննդի» թեմաներին: Հարցվողներին առաջարկվում էր ընտրել և ընդգծել այն տարիքային շրջանները, երբ նշված պրոբլեմները լրջորեն սկսել են իրենց հուզել: Պատասխանների ընտ-

րության համար ներկայացված էին տարբեր տարիքային շրջաններ (13–40 տարիքային դիապազոնում), ինչպես նաև «ավելի ուշ» պատասխանը (առանց կոնկրետ տարիք նշելու). առաջարկվել են նաև հարցից խուսափելու հնարավորություն տվող պատասխաններ («չգիտեմ», «չեմ զգացել» և այլն):

Հետազոտությունների արդյունքները (տես հավելվածը) ցույց տվեցին, որ « ..վերոնշյալ հարցերն առավել հրատապ են դառնում հենց 25–32 տարիքային շրջանում: Ընդհանուր առմամբ (ըստ բոլոր հարցերին տրված պատասխանների արդյունքների) հետազոտվողների (թե տղամարդկանց և թե կանանց) մոտ 60%–ն ընդգծել էր 25–30 տարիքային շրջանը, այսինքն մեծամասնությունը սոցիալական ակտիվության հետ կապված պրոբլեմատիկան, պահանջմունքները նշված տարիքում է հստակորեն գիտակցել: Որոշ տարբերություն է նկատվել կանանց և տղամարդկանց պատասխաններում. կանանցից շատերի մեջ վերոնշյալ հարցերից մի քանիսի շուրջ մտորումները («Ամուսնության համար լավագույն տարիքը», «Ես յուրահատուկ վերածնունդ եմ ապրել») ավելի վաղ տարիքում են սկիզբ առել, սակայն այս դեպքում էլ 25–32 տարիքային շրջանն ընդգծողների քանակը գերակշռում է: Որոշակի, սպասելի տարբերություններ էին նկատվում նաև վաղ և ուշ ամուսնացածների (կամ չամուսնացածների) պատասխաններում: Վաղ ամուսնացածներից շատերը նշում էին, որ ամուսնության հարցը իրենց ավելի վաղ է հետաքրքրել կամ ընդհանրապես ակտուալ չի եղել նրանց համար, սակայն, որպես ամուսնության համար լավագույն տարիք, նշում էին 25–30 տարիքային շրջանը: Ծնողության հետ կապված հարցերը նրանց համար հրատապ են դարձել նորից 25–30 տարիքային շրջանում (զրույցների ընթացքում, ավելի վաղ տարիքում ծնող դարձած երիտասարդները նշում էին, որ իրենց ծնող լինելը կամ ծնողական պատասխանատվությունը սկզբում պարզորոշ չէին գիտակցում և զգում, քանի որ իրենց դեռ երեխա էին համարում)» (14, էջ 37):

Մեր կողմից կազմակերպվել է նշված տարիքային շրջանի ևս մեկ հետազոտություն կենսագրական մեթոդով: Վերլուծության են ենթարկվել նշանավոր մարդկանց (Հիսուս Քրիստոս, Բուդդա, Ֆրանցիսկ Ասիզացի, Լև Տոլստոյ և ուրիշներ) կենսագրությունները (ինքնակենսագրությունները, նրանց մասին հուշերը) պարզելու 25–32 տարիքային շրջանում

նրանց մեջ ճգնաժամին բնորոշ ախտանշանների առկայությունը, այդ ախտանշանների առանձնահատկությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել նշված տարիքային շրջանում հետազոտվողների ապրումների, մտորումների բովանդակության, աշխարհայացքի, ես–կոնցեպցիայի, սեփական ես–ի նկատմամբ վերաբերմունքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների, կյանքում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունների (մասնավորապես ընտանեկան, հասարակական ակտիվության և աշխատանքային ոլորտներում) վրա: Հետազոտության համար վերցվել են այն նշանավոր մարդկանց կենսագրությունները, որոնցում կենսագիրներն անդրադարձել են ոչ միայն իրենց հերոսների կենսագրական փաստերին, այլև հոգեբանական ոլորտին ներքին ապրումներին, մտորումներին (պետք է ասել, որ այդպիսի կենսագրությունները խիստ հազվադեպ են): Ստորև ներկայացնում ենք մի շարք նշանավոր մարդկանց 25–32 տարիքային շրջանի հոգեկենսագրությունները:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Հիսուսի կենսագրությունից, ինչպես գիտենք, շատ քիչ բան է հայտնի, սակայն եղածը հնարավորություն է տալիս ենթադրել, որ նա 30–ի շրջանում հայտնվել է խոր անձնային ճգնաժամի մեջ և դուրս է եկել այդ ճգնաժամից նոր աշխարհընկալմամբ, «ո՞վ եմ ես» և «ո՞ւր պիտի գնամ» հարցերի պատասխանով (այն, որ Հիսուսը 30–ի շրջանում է սկսում իր ակտիվությունը, վկայում է, որ մինչ այդ տարիքը նա չուներ վերոհիշյալ հարցերի պատասխանը, ասենք եթե նա 20 տարեկանում գիտակցեր իրեն որպես Աստծո որդի և իմանար, թե ինչ պիտի քարոզի, հենց այդ տարիքում էլ կհայտնվեր պատմության թատերաբեմում): Ըստ մեզ կտակարանում հստակորեն նկարագրվում է (խորհրդանշային ձևով, իհարկե) ինչպես Հիսուսի ինքնագիտակցության արթնացման պահը, այնպես էլ ճգնաժամային ապրումները: Բոլոր ավետարանիչները նույնությամբ ներկայացնում են Հիսուսի կենսագրության հետևյալ հաջորդականությունը. մկրտությունը և, այդ պահին, Աստծո կողմից Հիսուսի՝ իր որդին լինելու հանգամանքի հավաստումը. «Երբ Յիսուս մկրտուեցաւ, շուտ մը ջուրեն դուրս ելաւ և ահա երկինքը բացուեցաւ ու տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր ու կուգար իր վրայ:

Եւ ահա երկնքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւներ եմ» (Մատթէոս, Դ: 16–17). Սրան հաջորդում է Հիսուսի փորձությունների նկարագրությունը. «Այն ժամանակ Յիսուսը Հոգիից անապատը տարուեցաւ, որ փորձվի սատանայից: Եվ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո սոված: Եվ փորձիչը նրա մոտ գալով ասեց. Եթե Աստծո որդի ես, ասիր, որ այս քարերը հաց լինեն: Նա էլ պատասխան տուավ և ասեց. Գրուած է՝ Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանիցը:

Այն ժամանակ սատանան նրան առավ տարավ սուրբ քաղաքը, և կանգնեցրեց նորան տաճարի աշտարակի վրայ, և ասեց նորան. Եթե Աստուծոյ որդի ես, քեզ վայր գցիր, որովետև գրուած է, թե իր հրեշտակներին կհրամայե քեզ հանար, և ձեռների վերայ կբարձրացնեն քեզ, որ քո ոտքը քարի չդիպցնես երբեք: Յիսուսը նորան ասեց. Դարձեալ գրված է, թե մի փորձիր Տիրոջը քո Աստծուն:

Դարձեալ առավ տարավ նորան սատանան մի շատ բարձր սար և ցույց տուավ նորան աշխարհքի բոլոր թագավորությունները և նորանց փառքը, և ասեց նորան. Սորանք ամենը քեզ կտամ, եթե ընկած երկրպագես ինձ: Այն ժամանակ ասեց նորան Հիսուսը. Դեն գնա, սատանա, որովետև գրուած է, թե Տիրոջը քո Աստծուն երկրպագիր և միայն նորան պաշտիր: Այն ժամանակ սատանան թողեց նորան, և ահա հրեշտակներ մոտ եկան և ծառայում էին նորան» (Մաթևոս Դ: 1–11): Փորձություններից հետո Հիսուսը սկսում է քարոզչությունը:

Ըստ մեզ մկրտության պահի մեջ խորհրդանշային ձևով նկարագրվում է Հիսուսի ինքնագիտակցության արթնացումը. առաջին անգամ նա հստակորեն ստանում է «ո՞վ է ինքը» հարցի պատասխանը: Սովորաբար, ճգնաժամային շրջաններում ինքնագիտակցության արթնացմանը հաջորդում է ինքնահաստատման, ինքնաորոնումների, ինքնափորձարկումների շրջանը (ասենք դեռահասը, գիտակցելով իրեն որպես տղամարդ/կին, սկսում է փորձարկել իրեն, ինքնահաստատվել): Հետաքրքրական է, որ Հեգելը Հիսուսի փորձությունները փոխաբերական իմաստով է ընկալում և դիտում դրանք որպես Հիսուսի մտորումներ, ներքին տվայտանքներ. «Սի անգամ, միայնակ մտորումների պահին. Նրա (Հիսուսի–Ս. Խ.) մեջ միտք ծնվեց չարժե արդյո՞ք բնությունն ուսումնասիրելու կամ, թերևս, գերագույն ոգիների հետ միավորվելու միջոցով փորձել ա-

նազնիվ մատերիան վերածել ավելի ազնիվ, անմիջական օգտագործման համար ավելի պիտանի մատերիայի, օրինակ, քարերը վերածել հացի, կամ էլ, ընդհանրապես, սեփական անձը բնությունից ավելի անկախ դարձնել (նետվել ներքև), սակայն նա վանեց այդ գաղափարը, մտածելով այն սահմանափակումների մասին, որ բնությունը դրել է իր...վրա, նաև, որ պատիվ չի բերում մարդուն ձգտել նման իշխանության, քանզի նրան տրված է ուժ, որը գերազանցում է բնության զորությունը, ուժ, որի կատարելագործումն ու մեծարումն է իր կյանքի իսկական իմաստը:

Այուս անգամ նրա ներքին հայացքի առաջ հառնում է այն ամենը, ինչ մարդիկ արժանի են համարում մարդկային գործունեությանը և դիտում են որպես մեծագույն նպատակ. այն է՝ իշխել միլիոններին. ստիպել աշխարհին իր մասին խոսել, իր կամքին, իր քմահաճույքներին ենթարկել հազարավոր մարդկանց կամ ուրախանալ կյանքով վայելելով և բավարարելով իր բոլոր պահանջմունքները, ունենալով այն ամենը, ինչ կարող է ցանկանալ փառասիրությունը և ցանկությունները: Սակայն, պատկերացնելով այն պայմանները, որ անհրաժեշտ են այդ ամենը ձեռք բերելու համար (թեկուզ, դրանք ուղղված լինեն մարդկանց բարօրությանը), այն է՝ իր և ուրիշների կրքերին նվաստաբար ծառայելու անհրաժեշտությունը, ինքնահարգանքից հրաժարումը, սեփական արժանապատվությունը մոռանալը, նա հրաժարվում է այն մտքից, որ երբևէ կենթարկվի այդ ցանկություններին ...» (48, էջ 37–38): Կարծում ենք գիտական տեսանկյունից Հեգելի հետ կարելի է համաձայնել և անապատային փորձությունները դիտել որպես Հիսուսի ներքին տվայտանքներ, արժեքների իմաստավորման գործընթաց, սեփական կյանքի ուղու որոնումներ, այսինքն այն, ինչ բնորոշ է 30 տարեկանի ճգնաժամին:

Ասվածը, կարծում ենք, հաստատվում է նաև այն բանով, որ հենց փորձություններից հետո է Հիսուսը սկսել քարոզել (Մաթևոս, 4:17), ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ շրջանում է նրա մեջ ձևավորվել պատկերացումների այն համակարգը, որը նա քարոզել է:

ԲՈՒԴԴԱ (Սակյա Մունի)

Ըստ ավանդության «Կյանքի 29–րդ տարում արքայազնի մեջ կտրուկ բարոյական բեկում է տեղի ունենում, որի հետևանքով նա որոշում

է թողնել նախկին կենսակերպը և նոր կյանք սկսել» (69, էջ 111): Բուդդայի մտորումները վերաբերում էին աշխարհի չար ու բարու, մարդու ճակատագրի, տառապանքից փրկության և նմանատիպ հարցերին: «Նա համոզվեց երիտասարդության խաբուսիկության, վաղանցիկ հաճույքների սին լինելու և կյանքի ունայնության մեջ, նա տեսավ բոլոր այն վայելքների և ժամանցների անիմաստությունը, որոնց ինքն այնքան կրքոտ ծնով տրվում էր և հրաժարվեց դրանցից: Նա սկսեց մտորել կյանքը լցնող չարիքի, հիվանդություններին, ծերությանը, մահվանը ենթակա մարդ էակի դժբախտ ճակատագրի մասին. Նրա բոլոր մտորումներն ուղղված էին աշխարհը չարիքից փրկելու հարցին» (69, էջ 112–113): Ըստ ավանդության Բուդդան թողնում է իր դղյակը, կնոջն ու երեխային, թագավորական հագուստները տալիս է աղքատներին, կտրում է իր երկար մազերը, փոխում անունը վերցնելով Գաուտամա անունը (այս հանգամանքը վկայում է, որ նրա մեջ անձնավորության, ես–ի, ինքնագիտակցության խոր վերակառուցում է տեղի ունեցել), և տրվում ճգնավորության ու մտորումների, որի ընթացքում էլ հասնում է լուսավորյալության և ստեղծում իր ուսմունքը: Բուդդայի ուսմունքում կարևոր տեղ է գրավում մարդու ես–ի պրոբլեմը, ինչը վկայում է, որ այս շրջանում սեփական ես–ի հիմնախնդիրն էլ նրա համար հրատապ է եղել: Սակայն մարդկային ես–ի վերաբերյալ նրա կոնցեպցիան սկզբունքորեն տարբերվում է այլոց մտորումներից: Եթե մարդիկ ձգտում են հասկանալ, բացահայտել իրենց ես–ը, իրենց միսիան, տեղը կյանքում, ապա, ըստ բուդդիզմի, նման մոտեցումը պատրանքային է և տառապանքների աղբյուր է հանդիսանում. Այսպես, բուդդիզմի տեսական հիմքը հանդիսացող և Գաուտամային վերագրվող երեք քարոզներից երկրորդում ասվում է հետևյալը. «Նույն ձևով էլ, օ բիկխու, անցողիկ և անբավարար են զգացմունքները, ընկալումները, գործողությունները, գիտակցությունը: Ճիշտ է արդյո՞ք մտածել այնպիսի անցողիկ բաների մասին, ինչպիսիք են. «Սա իմն է, սա ես–ն է, սա իմ հոգին է». «իհարկե, ոչ, ուսուցիչ». «Այդ դեպքում, օ բիկխու, ամբողջ ռուպպան (նյութական կեցությունը–Վ. Կ.)... պետք է ճիշտ ընկալվի, իր բնական իրականության մեջ. «Սա իմը չէ, սա ես–ը չէ, իմ հոգին գոյություն չունի» (81, էջ 12):

Վ. Վ. Կորնենն այն կարծիքին է, որ «...«լուսավորյալություն» հասկացության տակ նկատի է ունեցվում այն բանի գիտակցումը, որ «ես»–ը

բաղկացած է սկանդխներից (ըստ հեղինակի՝ գիտակցությունը, գործողությունները, զգացմունքները և այլն) և պատրանքային է» (81, էջ 14): Այլ կերպ ասած բուն լուսավորյալության վիճակին հասնելու դեպքում ինքնագիտակցության յուրահատուկ վերակառուցում է տեղի ունենում:

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ (1828–1910)

Կենսագիրը Լ. Տոլստոյի կյանքը 2 շրջանի է բաժանում գտնելով, որ մոտ 30 տարեկանում նրա երկրորդ ծնունդն է տեղի ունեցել: Տոլստոյն այդ շրջանում կանգնում է կյանքի վերաիմաստավորման պրոբլեմի առաջ և հանգում այն եզրակացության, որ իր ապրած նախորդ կյանքը միանգամային անիմաստ է եղել: Ինչպես հայտնի է, կյանքի անիմաստության գգացողությունը ես–ի խոր ճգնաժամի արդյունք է և խիստ բնորոշ է 30 տարեկանի շրջանին (Բուդդա, Քրիստոս, Կոնֆուցիոս և շատ ու շատ ուրիշներ): Տոլստոյին սկսում են հուզել այնպիսի հարցեր, ինչպիսիք են «ի՞նչ է նշանակում լինել գրող», «ո՞վ է ինքը որպես գրող, որպես մարդ» (տվյալ դեպքում «մարդ» հասկացությունը ընկալվում է որպես հասարակական ակտիվության սուբյեկտ), «ինչպե՞ս ինքը պիտի ապրի» (139, էջ 245):

Նա սկսում է կասկածել ինքն իրեն, իր գրողական և անձնային միասիայի. «Այդ մարդիկ (գրողները–Ս.Խ.) ատելի էին դարձել ինձ, ինքս էլ ինձ ատելի էի դարձել, և ես հասկացա, որ այդ հավատը (գրողի դերի նկատմամբ–Ս. Խ.) կեղծիք է» (139, էջ 244): Տոլստոյի մեջ տեղի են ունենում նաև աշխարհայացքային, արժեքային խոր փոփոխություններ (139, էջ 245): Նա իր 30–32 տարիքային շրջանի (արտասահմանից վերադառնալուց հետո) հոգեվիճակը բնութագրում է որպես «հոգևոր առումով հիվանդ» (139, էջ 246): Այս շրջանում Տոլստոյի կյանքում տեղի է ունենում այս տարիքում հաճախակի (հատկապես հոգևոր կյանքով ապրողների) կրկնվող մի սցենար «հեռացում քաղաքակրթությունից» (Հիսուսն այս շրջանում գնում է անապատ, Բուդդան սկսում է թափառել, Զրադաշտը բարձրանում է լեռները, Կոնֆուցիոսը մեկուսանում է և այլն): Տոլստոյը գնում է տափաստան: Մի որոշ ժամանակ մնալով տափաստանում՝ նա վերադառնում է ու ամուսնանում. «Վերադառնալով այնտեղից ես ամուսնացա՝ երջանիկ ընտանեկան կյանքի նոր պայ-

մաններն ինձ լիովին շեղեցին կյանքի ընդհանուր իմաստի որոնումներից» (139, էջ 246): Ըստ երևույթին, հենց այս իրադարձությամբ էլ Տոլստոյի ճգնաժամային շրջանն ավարտվում է:

ՖՐԱՆՑԻՍԿ ԱՍԻԶԱՑԻ

Ֆրանցիսկ Ասիզացու մոտ նույնպես 25–30 տարեկանի շրջանում նկարագրվում է այս ճգնաժամին բնորոշ ախտանշանների ողջ համալիրը. Այդ տարիքում նա հրաժարվում է նախկին ցոփ ու շռայլ կյանքից գիտակցելով իրեն որպես միանգամայն այլ միսիայի համար ծնված մարդ: Կենսագիրն այսպես է նկարագրում այս շրջանի նրա վարքն ու ապրումները. «Ֆրանցիսկը ավելի ու ավելի հաճախ էր առանձնանում իր կերուխումի ընկերներից և օրերով, միայնակ թափառում էր քաղաքի ծայրամասերում... Այսպես, մենակության մեջ նա տառապում էր հոգեկան տխրությունից, խորապես ողբում իր մոլորությունների և մեղքերի համար, տանջվում, որ կյանքն անցնում է աննպատակ, անիմաստ կերուխումների մեջ...» (114, էջ 225):

Այս միայնակ մտորումների ընթացքում նա հանգում է այն եզրակացության, որ «.. ոչ երկրային վայելքները, ոչ փառքը չարժեն, որ մարդն իրեն և իր կյանքը նվիրաբերի դրանց» (114, էջ 225): Ճգնաժամն ավարտվում է սեփական ես–ի և իր կյանքի ուղու վերաբերյալ հստակ կոնցեպցիաներով: «Տառապալից պայքարն ավարտվեց և նրան թվում էր, որ ինքը պարզորոշ տեսնում է իր ճանապարհն առջևում» (114, էջ 229): Ասիզացին որոշում է նվիրել իրեն կրոնական գործունեությանը:

Հարուստ կենսագրական փաստերի առկայության պարագայում, հետազոտությունը հեշտացնելու նպատակով, մշակվել է կենսագրական տվյալների աղյուսակ, որի մեջ ժամանակագրական կարգով անցկացվել են ճգնաժամի հետ առնչություն ունեցող կյանքի իրադարձությունները, ճգնաժամային ապրումների առանձնահատկությունները և այլն: Որպես օրինակ, ներկայացնենք Վ. Վան Գոգի կենսագրական անկետան:

1. Անուն, ազգանուն – Վինսենթ Վան Գոգ
2. Ծննդյան և մահվան տարեթվերը – 1853–1890 թթ.:
3. Մասնագիտության բնութագիրը և պատմության մեջ ունեցած դերը – Նկարիչ, նոր ուղղության հիմնադիր:

4. Սոցիալական ակտիվության բնութագիրը մինչև 25 տարեկանը – Ամուսնացած չի եղել: Շատ վաղ է սկսել նկարել. 16 տարեկանի շրջանում ընտանեկան խորհուրդը որոշել է, որ Վինսենթը պետք է նկարների առևտրով զբաղվի: Մի քանի տարի նկարավաճառությամբ զբաղվելուց հետո Վան Գոգը հիասթափվել է այդ աշխատանքից և 1876–ին թողել այն: Շուտով սկսել է աշխատել որպես ուսուցիչ (ուսուցանել է թվաբանություն, ֆրանսերեն և այլն): Այս շրջանում նա նաև զբաղվել է քարոզչությամբ: Հորեղբոր պնդմամբ նա ընդունվել է աշխատանքի որպես գրախանութի գործակատար: Կարճ ժամանակահատված աշխատելով գրախանությում թողել է նաև այս աշխատանքը և որոշել քարոզիչ դառնալ: 1879 թվականին, սուր ճգնաժամային ապրումներից հետո, վերջնականորեն նվիրվել է նկարչությանը:

5. 25–33 տարիքային շրջանում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունները – Փոխել է մասնագիտությունը. վերջնականորեն նվիրվել է նկարչությանը: Այս շրջանում վատացել են հարաբերությունները ծնողների հետ: Վան Գոգը ծանոթացել է նկարիչների հետ, սկսել է նկարչության դասեր վերցնել: Այս շրջանում սիրահարվել է հորեղբոր աղջկան Կեեին, երազել է ամուսնանալ ընտանիք, երեխաներ ունենալ: Նրա սերը մերժվել է, ինչը խոր հուսահատության մեջ է գցել նրան: Կենսագիրները ենթադրում են, որ այս շրջանում Վան Գոգը երեխա է ունեցել մի պոռնկուհուց Սինից: Այս շրջանում մահանում է Վինսենթի հայրը, սակայն պետք է ենթադրել, որ այդ կորուստը խոր տառապանքի մեջ չի գցել նրան:

Այս շրջանում Վան Գոգը կայացել է որպես նկարիչ, մշակել իր ոճը:

6. Միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններն այս շրջանում – Կոնֆլիկտային հարաբերությունների մեջ է եղել հարազատների հետ հիմնականում լրջմիտ, ստանդարտ կյանք չվարելու, սիստեմատիկ աշխատանքի չանցնելու, նորմալ ընտանիք չկազմելու կապակցությամբ:

7. 25–33 տարիքային շրջանում ապրումների, մտորումների հիմնական օբյեկտը, դրանց արտացոլումը ստեղծագործությունների մեջ – Ըստ կենսագրի նշված շրջանում նրա մտորումները սեփական ես–ի էության, կյանքի ուղու, ճշմարտության, Աստծո ճանաչմանն էին վերաբերում (15, էջ 78–87): Նա փորձում է պարզել արվեստի իմաստը, կյանքի իմաստը

(15, էջ 83), գտնել «Ո՞վ եմ ես և ո՞ւր եմ գնում» հարցերի պատասխանը (15, էջ 55). Կենսագիրը Վան Գոգի այս շրջանը բնութագրում է որպես կերպարանափոխություն. «Այսուհետև, ինչպես ասել էր Վինսենթը, ամեն ինչ այլ կերպ կլիներ: Գրեթե ավարտվել էր նրա կերպարանափոխությունը: Նա վերածնվում էր կյանքի համար, դուրս լողում խավարից.. նրա ողջ նախկին կյանքը սոսկ երկարատև, ծանր հածում էր կեղծ արժեքների լաբիրինթոսում, կույր, տանջալից երթ անորոշ լույսին ընդառաջ, լիարժեք, լիակշիռ իրականությանն ընդառաջ» (15, էջ 87–88): Եղբորը գրած նամակում Վան Գոգն իր հոգեվիճակը բնութագրում է որպես վերածնունդ: Այդ վերածնունդը «...բոլորի աչքի առաջ չէ, որ կատարվում է, այնքան էլ ուրախ տեսարան չէ...» (15, էջ 90): Այս շրջանն ուղեկցվել է բուռն ճգնաժամային ապրումներով, հուսահատությունների և ոգևորությունների հերթափոխով. Կյանքում սեփական տեղը գտնելուն ուղղված որոնումներին զուգահեռ Վան Գոգը երազում էր նաև ամուսնության, ընտանիք կազմելու, երեխաներ ունենալու մասին (15, էջ 120):

8. Հետճգնաժամային իրավիճակը – Ընդհանուր առմամբ հետճգնաժամային շրջանը (մոտավորապես 1880–ականների սկիզբը) կարելի է բնութագրել որպես նկարչության ոլորտում որոնումների, ինքնակատարելագործման, ինքնահաստատման շրջան:

Ներկայացված կենսագրություններում հստակորեն ուրվագծվում է նույն տարիքային շրջանում (25–32 տարեկանում) տեղի ունեցող սցենարը՝ սեփական ես–ի որոնումներ կյանքում իր տեղը գտնելու առնչությամբ, մտորումներ կյանքի իմաստի շուրջ, արժեքների վերակառուցում, հրաժարում նախկին կյանքից և նոր ուղու ընտրություն (կամ ընտրված ուղիով գնալու վերջնական որոշում): Այն, որ միևնույն հարցերը միևնույն տարիքային շրջանում են բարձրանում տարբեր ժամանակաշրջաններում ապրած, կյանքի տարբեր ուղիներ ընտրած մարդկանց կենսագրություններում, կարծում ենք, հստակորեն վկայում է այդ հարցերի նաև տարիքային պայմանավորվածության մասին: Նշված հարցերի ակտուալացումը, դրանց պատասխանների տառապալից որոնումները վկայում են ինքնագիտակցության, ինչպես նաև սեփական կյանքի ուղու կոնցեպցիայի մեջ տեղի ունեցող վերակառուցումների մասին: Կենսագրություններից հստակորեն երևում են «արթնացող» ինքնագիտակցության առանձնահատկությունները, այն է՝ սե-

փական ես–ի որպես հասարակական ակտիվության սուբյեկտի գիտակցումը: Հիսուսը, Բուդդան ընկալում, գիտակցում էին իրենց որպես մարդկության փրկիչներ, Տոլստոյը, Վան Գոգն իրենց հասարակական և մասնագիտական միսիաների շուրջ էին մտածում, սակայն բոլոր դեպքերում նրանց առաջ բարձրանում էր այն հարցը, թե ովքեր են լինելու իրենք որպես հասարակական ակտիվության սուբյեկտներ, նրանք զգում էին իրենց պատասխանատվությունն այլ մարդկանց, նույնիսկ մարդկության առաջ, նրանց համար նախկին, անհոգ կյանքն այլևս անիմաստ էր դառնում (Բուդդա, Ֆրանցիսկ Ասիզացի, Տոլստոյ), այսինքն նրանք այլևս չէին ընդունում իրենց այնպիսին, ինչպիսին կային, գիտակցում էին իրենց որպես որոշակի հասարակական (նույնիսկ տիեզերական, աստվածային) միսիայի կրողներ: Գիտակցելով սեփական ես–ը որպես հասարակական ակտիվության սուբյեկտ բնականաբար, մարդն սկսում է մտորել նաև սեփական կյանքի կոնցեպցիայի, ուղու, կոնկրետ հասարակական ակտիվության ոլորտի, որա արժեքի և նմանատիպ այլ հարցերի շուրջ (ո՞րն է այս կյանքի իմաստը, որտե՞ղ կարող եմ ինձ առավելագույնս դրսևորել, ինչպե՞ս պետք է ապրել այս կյանքում և այլն): Ինչպես երևում է ներկայացված կենսագրություններում, այդ հարցերը նույնպես խիստ հրատապ են տվյալ տարիքային շրջանում:

Պետք է ասել, իհարկե, որ ընտրվել են պատմության մեջ մեծ դեր խաղացած անձանց կենսագրությունները, որոնք, անշուշտ, տարբերվում են սովորական մարդկանց կենսագրություններից: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Մասլոուն, հենց նման մարդկանց մեջ են խտացած, ուռճացած ձևով հանդես գալիս այնպիսի հոգեկան իրողություններ, որոնք սովորական մարդկանց մեջ թույլ դրսևորումներ ունեն:

Ամփոփելով ներկայացված հետազոտությունները կարծում ենք, կարելի է պնդել, որ 25–32 տարիքային շրջանն իսկապես բեկումնային է անձնավորության սոցիալական ես–ի ձևավորման, սոցիալական ակտիվության կոնցեպցիայի մշակման գործընթացներում, և այս տարիքային ճգնաժամը հենց այդ գործընթացների արտացոլումն է հանդիսանում:

3.7.7. ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ 55–65 ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես արդեն նշել ենք, ըստ մեր տարիքային պարբերացման, կյանքի չորրորդ ցիկլի (մոտ 40 տարեկանից մինչև կյանքի վերջ) զարգացման հիմքում ընկած հիմնախնդիրն ինքնահիրացումն է կամ ինքնասպառումը: Կյանքի երրորդ ցիկլի ընթացքում (մոտ 20–40 տարեկանը) մարդը լիովին կայանում է որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ (յուրացնում է ծնողական, ամուսնական, աշխատանքային ֆունկցիաները ու դերերը), ինչին, բնականաբար, պետք է հաջորդի կայացած սոցիալական ակտիվության սուբյեկտի ինքնահիրացումը, դրանով իսկ ինքնասպառումը: Վերջինս էլ աստիճանաբար մարդուն հանգեցնում է մահվան նախ սոցիալական առումով, ապա կենսաբանական և հոգեկան առումներով (13): Այս գործընթացը, ըստ մեզ, 55–65 տարիքային շրջանում վերածվում է գիտակցական գործունեության, այսինքն մարդն սկսում է գիտակցել իրեն որպես մահկանացու (սեփական ես–ի մահն այլևս հեռու և օտար չի թվում, մարդն զգում է իր մահվանը ենթակա լինելը) և նպատակաուղղված ձևով ձգտում է ավարտին հասցնել իր կյանքի նպատակները, դրանով իսկ սպառել իրեն որպես սեռային, ծնողական (երեխաներին ոտքի կանգնեցնելը, «մուրազին» հասցնելը) և աշխատանքային ակտիվությունների սուբյեկտ: Պետք է ասել, որ տարիքային–հոգեբանական գրականության մեջ այս շրջանում (55–65) ինքնագիտակցության վերակառուցման որևէ գաղափարի մենք չենք հանդիպել, սակայն կան բազմաթիվ ակնարկներ, նաև հետազոտություններ, որոնք վկայում են, որ այս տարիքում նույնպես ինքնագիտակցության մեջ որակական փոփոխություններ են տեղի ունենում: Նախ, դեռևս Ցիցերոնը նշում էր, որ ծերության շրջանում մարդը բացահայտում է իր իրական ես–ը, իսկ ըստ Կ. Յունգի այս տարիքում ինքնագիտակցության այնպիսի զարգացում է տեղի ունենում, որը հասու չէ երիտասարդ տարիքին:

Վ. Սորգունը և Ն. Տկաչևան այս ճգնաժամը տեղակայում են 50–55 տարիքային շրջանում և կապում «...տարիքային վերակառուցումների գիտակցման, դրանց այս կամ այն անձնային իմաստ տալու հետ» (102,

էջ 62): Ըստ Բ. Նյուգարտենի այս շրջանում, մասնավորապես 6–րդ տասնամյակի վերջում, աճում է ներհայեցողությունը, փոխվում ինքնագնահատականը (237), ինչը վկայում է ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող վերակառուցումների մասին: Դ. Լևինսոնը, ճգնաժամը տեղակայելով 60–65 տարեկանում, այն բնութագրում է որպես կյանքի ուղու առավել շրջադարձային անցում, որի կարևոր պահերից է այն, որ մարդու համար խիստ հրատապ է դառնում այն հարցը, թե արդյո՞ք հասել է այն ամենին, ինչին կարող էր հասնել: Միևնույն ժամանակ, մարդն սկսում է գիտակցել, որ ինքը մահկանացու է, և շատ երազանքներ չեն իրականացել (228): Է. Էրիքսոնի պարբերացման մեջ այս շրջանը բնութագրվում է որպես էգոյի ամբողջականացման, ինտեգրացման կամ հուսահատության ճգնաժամ, ինչը նույնպես կարելի է դիտել որպես ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող վերակառուցման մասին ակնարկ: Այդ վերակառուցումը ոմանց մեջ հանդես է գալիս որպես «...սեփական կյանքի միակ և անկրկնելի ցիկլի ընդունում...» (167, էջ 376), իսկ մյուս բևեռում. «...այն բանի գիտակցումն է, որ քիչ, շատ քիչ ժամանակ է մնացել, որպեսզի փորձ արվի նոր կյանք սկսել...» (167, էջ 377):

Ըստ Ջ. Մաքքարթիի «Ակնհայտ է, որ 55–ից հետո, միջին տարիքում, երբ մահվան գաղափարը սկսում է հասնել գիտակցությանը, կարող է դեպրեսիա ի հայտ գալ և որպես դրան հակազդում՝ պաշտպանական մոլագարություն՝ Ծեր տարիքում. ֆիզիկական ուժի, կենսունակության, սեռական ներուժի աճող անկումը, սիրելի մարդկանց և ընկերների կորուստը, թոշակի անցնելը և թուլությունը հարկադրում է ինչ–որ տեղ մտածել, որ մահվան ժամանակը մոտենում է» (235, էջ 12): Մեկ այլ հեղինակ Ս. Քատը, գրում է. «Ուշ շրջանի ճգնաժամի ընթացքում մարդը խորքային էգոյի և մարմնական փոփոխությունների նկատմամբ ավելի ներհայող է դառնում» (196, էջ 47):

Սեփական ես–ի որպես մահկանացուի գիտակցման գործընթացը խիստ հուզիչ և պատկերավոր ձևով նկարագրված է Լ. Տոլստոյի խոստովանության մեջ. «...Ինձ սկսեցին տանջել, սկզբում, տարակուսանքի, կյանքի կանգ առնելու րոպեները, կարծես ես չգիտեի ինչպես ապրել, ինչ անել, և ես կորցնում էի ինձ և հուսալքության մեջ ընկնում...Կյանքի այս կանգառները միշտ դրսևորվում էին միևնման հարցերով. «հանուն ինչի՞», «լավ, իսկ հետո՞»: ...Ես հասկացա, որ սա պատահական տկա-

րություն չէ. ինչ–որ շատ կարևոր բան է, և եթե միևնույն հարցերն անընդհատ կրկնվում են, ապա դրանց պետք է պատասխանել: Եվ ես փորձեցի պատասխանել: Բայց հենց խորացա դրանց մեջ և փորձեցի լուծել, նախ իսկույն համոզվեցի, որ դրանք ոչ թե մանկական և հիմար, այլ կյանքի ամենախորը և կարևոր հարցերն են, և երկրորդ որ ես, որքան էլ մտածեմ, չեմ կարող լուծել դրանք: ...Կյանքս կանգ առավ: Ես կարող էի շնչել, ուտել, խմել, քնել, և ես չէի կարող ոչ ուտել, ոչ խմել, ոչ քնել: Կյանք չկար, քանի որ չկային այնպիսի ցանկություններ, որոնց բավարարման մեջ ես իմաստ տեսնեի՝ ...Նույնիսկ ճշմարտությունը հասկանալու ցանկություն ես չէի կարող ունենալ, քանի որ գլխի էի ընկնում, թե ինչ է այն իրենից ներկայացնում: Ճշմարտությունն այն էր, որ կյանքն անիմաստ է, թե ես ապրեցի–ապրեցի, եկա–եկա և հասա անդունդին, ես պարզ տեսա, որ առջևում ոչինչ չկա, բացի վախճանից: Եվ կանգ առնել չի կարելի և հետ գնալ չի կարելի և չի կարելի աչքերը փակել, որ չտեսնես, որ առջևում ոչինչ չկա, բացի տառապանքից և իսկական մահից՝ ոչնչացումից» (139, էջ 247):

Պետք է ասել, իհարկե, որ մարդը մինչև 55–65 տարիքային շրջանն էլ գիտի, որ ինքը մահկանացու է, սակայն այս շրջանում ինքնագիտակցության մեջ սկսում է հանդես գալ ոչ միայն կոգնիտիվ, այլև աֆեկտիվ բաղադրիչը, այսինքն՝ մարդը նաև զգում է, հավատում իր մահկանացու լինելուն այնպես, ինչպես երեխան արդեն վաղ մանկությունից գիտի իր սեռը, սակայն միայն դեռահասության շրջանում է ավելանում սեռային ինքնագիտակցության աֆեկտիվ բաղադրիչը՝ երեխան սկսում է զգալ, ապրել իր կին/տղամարդ լինելը: Սեփական ես–ի՝ որպես մահկանացուի գիտակցումը, նախ և առաջ, նշանակում է սեփական գոյության վերջին մոտենալու զգացողություն. եթե մինչ այդ մահը մարդու համար շատ հեռու, իրեն չվերաբերող իրողություն էր, ապա այժմ այն սկսում է ընկալվել որպես իր հետ կատարվելիք, միանգամայն իրական երևույթ (հետաքրքրական է, որ «մարդ» բառը հնդեվրոպական մի շարք լեզուներում նշանակում է «մահկանացու». (տես 2, էջ 279), ինչը վկայում է, որ մահվանը ենթակա լինելու հանգամանքը տեսակային ինքնագիտակցման գործընթացում ընկալվել է որպես տարբերակիչ բնութագիր)՝

Սեփական ես–ի որպես մահկանացուի ինքնագիտակցումը, նախ և առաջ, տեղի է ունենում ֆիզիկական, հոգեկան և սոցիալ–հոգեբանա-

կան ինվոլյուցիոն երևույթների կուտակման շնորհիվ: Ֆիզիկական ոլորտում դեռևս 40–ի շրջանում սկիզբ առած ծերության նշանները (մազերի ճերմակում, մաշկի փոփոխություններ, ֆիզիկական ուժի անկում և այլն) 60–ի մոտերքում որակական փոփոխություններ են առաջ բերում, փոխվում է մարդու ֆիզիկական կերպարը: Կենսաբանական գործոններից կարելի է նշել նաև ռեպրոդուկտիվ համակարգում տեղի ունեցող ինվոլյուցիոն երևույթները, նկատի ունենք, հատկապես, կլիմաքսը, որը հաճախ հոգեբանական խոր ճգնաժամի մեջ է գցում կանանց առաջ բերելով կյանքի ավարտվածության զգացողություն: Գերմանացի հոգեվերլուծաբան Հելեն Դոյչը մենոպաուզան բնութագրում է որպես «մասնակի մահ» (ըստ 142, էջ 21):

Տղամարդկանց նույնպես վերագրվում են կլիմաքտերիկ երևույթներ (18), որոնք սկիզբ են առնում մոտ 55 տարեկանից: Սեռականության անկումը շատ տղամարդիկ խիստ ծանր են տանում հայտնվելով ապաթիկ, մելանխոլիկ վիճակի մեջ: «Տղամարդկանց կենսական տոնուսն անկում է ապրում, նրանք հայտնվում են մելանխոլիայի մեջ, ինչն էլ հաճախ..., հոգեկան խանգարումների և ինքնասպանությունների պատճառ է հանդիսանում» (17, էջ 67):

Սեփական ես–ի որպես մահկանացուի ինքնագիտակցման գործընթացում էական դեր են խաղում նաև տարիքի հետ ավելացող հիվանդագին երևույթները: Շատ հաճախ մարդու աշխարհայացքի և ինքնագիտակցության խոր վերակառուցումները տեղի են ունենում որևէ ծանր հիվանդության ազդեցությամբ:

Հոգեկան և հոգեֆիզիոլոգիական ոլորտներում ինվոլյուցիոն երևույթներն այնքան ակնառու չեն, որքան ֆիզիկական ոլորտում, այնուամենայնիվ, դրանք նույնպես առկա են և որոշակի դեր են խաղում ինքնագիտակցության վերակառուցման գործընթացում: Այդ տեղաշարժերից կարելի է նշել զգայական համակարգի ինվոլյուցիոն երևույթները ասենք, տեսողության, լսողության փոփոխությունները: 60 տարեկանի շրջանում որոշակի անկումային երևույթներ են նկատվում նաև հիշողության և ինտելեկտի գործառման մեջ (238, էջ 103):

Բազմաթիվ հետազոտություններով հաստատվում է, որ մահվան գաղափարն այս տարիքի գլխավոր հիմնախնդիրն է, և շատ այլ պրոբլեմներ դրա շուրջն են պտտվում: Այդ կապակցությամբ հոգեթերապևտ

Բուտլերը նշում է. «. Տարիքով մարդկանց հոգեթերապիայի հիմնական հարցը մահվան և կորստի պրոբլեմն է: Սահն է, որ առաջ է բերում այն հիմնական հարցերը (Ինչպիսի՞ կյանք եմ ես անցկացրել, ի՞նչ պիտի անեմ ես մահվան փաստի առաջ), որոնց բախվում են թերապիստն ու տարիքով մարդը» (190, էջ 218): Հեղինակը ցույց է տալիս, որ մահվան վախն այս տարիքային շրջանում մարդկանց մեջ զանազան, հաճախ ոչ adekvat պաշտպանական հակազդումներ է առաջ բերում (ասենք ուղղված երիտասարդ երևալուն): «Վերլուծության միջոցով կարելի է պարզել,—գրում է Բուտլերը,— որ ինսոմնիան, թերևս, պայքար է արթուն մնալու համար և ոչ թե անքնության դեմ: Ըստ այդմ էլ, այն մահվան վախի արտահայտություն է» (190, էջ 219): Ըստ ԱՄՆ–ի հոգեկան առողջության ինստիտուտներից մեկի տվյալների տարիքով մարդկանց մոտ 30%–ը մահվան ակնհայտ վախ է դրսևորում, 15%–ի մեջ մահվան ժխտման պաշտպանական մեխանիզմն է ի հայտ գալիս, և 55%–ը միանգամայն իրատեսական մոտեցում է դրսևորում մահվան նկատմամբ (190, էջ 219): Որոշ հետազոտություններ վկայում են, որ մահվան վախի աճը սկիզբ է առնում հենց 55–65 տարիքային շրջանում (235, էջ 27):

Սեփական ես–ի որպես մահկանացուի գիտակցմանը մեծապես նպաստում են սոցիալական գործոնները: Դրանցից նախ և առաջ պետք է նշել աշխատանքային գործունեության ավարտը թոշակի անցնելը, ինչը խոր հոգեբանական տեղաշարժեր է առաջ բերում մարդկանց մեջ, շատերին ճգնաժամային ապրումների մեջ գցում: Ըստ Բ. Գ. Անանևի «Մարդու աշխատունակության և օժտվածության ողջ ներուժի հանկարծակի շրջափակումը, երկար տարիների աշխատանքային գործունեության դադարեցումը չի կարող մարդու, որպես գործունեության սուբյեկտի, հետևաբար, նաև անձնավորության, կառուցվածքում խոր վերակառուցումներ առաջ չբերել» (19, էջ 72): Ուկրաինացի գիտնական Ե. Գոլովախայի հետազոտությունները ցույց են տվել, որ թոշակի անցնելուց հետո «շատերի մեջ մարում են ոչ միայն կյանքի մոտակա շրջանի ծրագրերը, այլև ընդհանուր կենսական նպատակները: Մեծ թվով մարդիկ, որպես կյանքի հիմնական նպատակ, նշում են, որ նրանք ուղղակի ուզում են «հանգիստ ապրել իրենց մնացած տարիները» կամ նույնիսկ «հանգիստ մեռնել» (50, էջ 240): Նման վիճակը, իհարկե, ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մարդը գնահատում, վերաբերվում է իրեն որ-

պես սպառվածի, ինչի արդյունքում «...որոշ «սկսնակ» թոշակառուներ 60–65 տարեկանում արդեն զառամյալ են թվում, տառապում կենսական դատարկությունից և սոցիալական անլիարժեքությունից: Այդ տարիքից նրանց համար սկսում է անձնավորության մահացման ողբերգական շրջանը: Նման դեպերսոնալիզացիան հանգեցնում է նյարդային և սրտանոթային ֆունկցիոնալ հիվանդությունների...» (19, էջ 72):

Միևնույն ժամանակ, մահկանացուի ինքնագիտակցությունը շատերի մեջ ճիշտ հակառակ հակազդումն է առաջ բերում, ստիպում է մարդուն մոբիլիզացնել ուժերը իր կյանքի նպատակներն ավարտին հասցնելու համար: Շատերը ծեռնամուխ են լինում իրականացնելու այն երազանքները, որոնք չեն կարողացել իրականացնել նախկինում:

Սեփական ես–ի՝ որպես մահկանացուի ինքնագիտակցմանը նպաստող մեկ այլ գործոն է ընկերների, հասակակիցների մահը, ինչը գնալով ավելի հաճախակի երևույթ է դառնում: Այդ կապակցությամբ Ք. Միլլերը գրում է. «...երբ մարդիկ տեսնում են իրենց հասակակիցների մահերը, սկսում են ավելի հստակ գիտակցել նաև սեփական անձի մահկանացու լինելը» (238, էջ 74): Թերևս, այս գործընթացում զուտ գիտակցական վերլուծությունների հետ մեկտեղ մեծ դեր են խաղում նաև անգիտակցական նույնացումները, ինչը, հնարավոր է, կարևոր դեր է խաղում ինքնագիտակցության աֆեկտիվ կողմի ծևավորման գործում:

Այս տարիքային շրջանի ճգնաժամային և հոգեախտաբանական ախտանշանները վկայում են մահվան պրոբլեմի և սեփականս ես–ի որպես մահկանացուի առնչությամբ անձնավորության զգայունության աճի մասին: Ինչպես նշել ենք վերևում, այս ճգնաժամին բնորոշ են մահվան տագնապները, դրա հետ կապված դեպրեսիաները, ինքնագնահատականի անկումը, սրանց կարելի է ավելացնել գերկենտրոնացումն առողջության վրա, հիպոխոնդրիկ տագնապները, անտարբերությունը սեփական արտաքինի, հաճախ ընդհանրապես կյանքի նկատմամբ: Պետք է ասել, իհարկե, որ սեփական ես–ի որպես մահկանացուի գիտակցումը և դրանով պայմանավորված ճգնաժամը շատերի մեջ ոչ թե դեստրուկտիվ, այլ հակառակը կոնստրուկտիվ փոփոխություններ են առաջ բերում. մարդիկ ավելի ակտիվորեն են ներգրավվում կյանքի, աշխատանքային գործունեության մեջ, կարծես դառնում են ավելի պրոդուկտիվ:

Մեր կողմից 2003–ին կազմակերպվել է հետազոտություն նվիրված 55–65 տարիքային շրջանի ճգնաժամին (3): Ստորև համառոտ ներկայացնում ենք այդ հետազոտությունը: Այն ուղղված էր պարզելու, թե արդյո՞ք այս շրջանում իսկապես փոխվում է մարդու վերաբերմունքը մահվան և սեփական ես–ի՝ որպես մահկանացուի նկատմամբ: Այդ նպատակով համեմատական վերլուծության էին ենթարկվել երկու տարիքային խմբերի 25–55 և 55–65 տարեկան մարդկանց վերաբերմունքը և պատկերացումները մահվան և սեփական ես–ի որպես մահկանացուի վերաբերյալ: Հետազոտությունը հիմնականում իրականացվել է զրույցի մեթոդով, օգտագործվել են նաև Տ. Թեյլորի տագնապայնության մակարդակը որոշող թեստը և «Նամակ ծառին» պրոյեկտիվ մեթոդիկան: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ «55–65 տարիքային շրջանում մահվան կոնցեպցիան որակական փոփոխություններ է կրում, որոնք բերում են սեփական անձի մասին մարդու պատկերացումների փոփոխմանը» (3, էջ 48): Այս տարիքային շրջանում մահը և սեփական ես–ը որպես մահկանացու, ավելի իրատեսական են դառնում, ինչի հետևանքով աճում է տագնապը մահվան և զանազան հիվանդությունների առնչությամբ (ըստ որում, կանանց մեջ տագնապայնությունն ավելի բարձր է, քան տղամարդկանց մեջ): Թերևս, հենց այս է պատճառը, որ ընդհանուր տագնապայնությունն այս տարիքային խմբում բարձր է, քան ավելի երիտասարդների մեջ: Այս տարիքում մարդկանց ավելի շատ են սկսում հետաքրքրել այնպիսի հարցեր, ինչպիսիք են «ի՞նչ է մահը, ի՞նչ է լինում մահից հետո, ի՞նչ է ինքը թողնելու իր մահից հետո», ինչը վկայում է այս շրջանում մահվան և սեփական ես–ի՝ որպես մահկանացուի կոնցեպցիաների ծևավորման մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով այս աշխատությունը ներկայացնենք այն հետևությունները, որոնց հանգել ենք մեր հետազոտությունների արդյունքում:

1. Զարգացման ճգնաժամերի ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկական հետազոտություններն էապես դժվարանում էին այն պատճառով, որ տարիքային հոգեբանության մեջ չկային տարիքային շրջանների էությունը, նշանակությունը բացատրող պարբերացումներ: Մարդու առանձին ենթահամակարգերի զարգացման վրա հիմնվող, ևկարագրական բնույթի տարիքային շրջաբաժանումները հնարավորություն չէին տալիս հասկանալ, թե որն է զարգացման այս կամ այն շրջանում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունների իմաստը, դրանցով ինչ խնդիրներ են լուծվում: Արդյունքում՝ անհասկանալի էր մնում, թե երբ է սկսվում և վերջանում տվյալ տարիքը, դրա հիմքում ընկած զարգացման հիմնախնդրի լուծման գործընթացը: Բնականաբար, այս շրջաբաժանումների վրա հիմնվելով հնարավոր չէր հասկանալ նաև անցումային շրջանների, տարիքային ճգնաժամերի էությունը. չէ՞ որ մարդու առանձին ենթահամակարգերի զարգացումը չի արտացոլում ամբողջի զարգացումը, հետևաբար տարիքային անցումները և ճգնաժամերը որպես ամբողջի զարգացմամբ պայմանավորված օրինաչափ գործընթացներ, հնարավոր չէր բացատրել հիմնվելով այդ պարբերացումների վրա (ասենք հնարավոր չէ ինտելեկտի կամ գործունեության զարգացման փուլերի հիման վրա որոշել ամբողջական անձնավորության զարգացման անցումային փուլերը): Նույնը կարելի է ասել նաև այլ համակարգերի, ասենք կրթադաստիարակչական համակարգի զարգացման հիման վրա կառուցված պարբերացումների մասին: Դրանք արտացոլում են այդ համակարգերի և ոչ թե մարդու զարգացումը, հետևաբար վերջինիս օրինաչափությունները չեն կարող բացատրել: Ինչ վերաբերում է այն պարբերացումներին, որոնք չունեն տարիքների դասակարգման համար ընդհանուր հիմքեր, տարբեր սկզբունքներով են կառուցված, ապա դրանք ընդհանրապես կույր կարելի է համարել, քանի որ ոչ միայն չեն բացատրում տարիքները, այլև վերջիններս միանգամայն պատահական բնութագրերի հիման վրա են որոշվում. ասենք մի դեպքում տարիքը որոշվում է ըստ այն բանի, որ երեխան դպրոց չի գնում (նախադպրոցական տարիք), այլ դեպքում, որ մարդը հասուն չէ (դեռահասություն):

Այսպիսով եղած պարբերացումները հնարավորություն չեն տալիս բացատրել մարդու որպես ամբողջական համակարգի զարգացման տարիքային փուլերը, իսկ առանց դրա, այսինքն առանց հասկանալու տարիքային փուլերի իմաստը այն, թե այդ փուլերում զարգացումը որպես գործընթաց, ինչ խնդիրներ է լուծում, ինչ արդյունքի է հանգեցնում, հնարավոր չէ բացատրել, թե երբ է սկսվում և ավարտվում այդ գործընթացը, ինչպիսի անցումներ են կատարվում, որն է տվյալ փուլում զարգացման ճգնաժամի իմաստը, բովանդակությունը, ինչ է տեղի ունենում ճգնաժամի ընթացքում

2. Տարբեր տարիքային շրջանների նորագոյացությունների մանրազնին վերլուծությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ դրանք պատահական բնույթ չեն կրում և միմյանցից անկախ չեն, այլ հաջորդական քայլեր են, որոնք հանգեցնում են որոշակի արդյունքի, լուծում են զարգացման որոշակի հիմնախնդիր: Հետևաբար, հնարավորություն է բացվում ֆունկցիոնալ տեսանկյունից բացատրել տարիքները, այսինքն որոշել տվյալ տարիքի ֆունկցիան այն խնդիրը, որ լուծվում է զարգացման գործընթացների արդյունքում:

Հիմնվելով տարբեր տարիքային շրջանների նորագոյացությունների առանձնահատկությունների վրա կարելի է առանձնացնել չորս տարիքային հիմնախնդիրներ, որոնք լուծվում են զարգացման չորս ցիկլերի ընթացքում: Կյանքի առաջին ցիկլը ընդգրկում է էմբրիոգենեզից մինչև 7, 8 տարեկան հասակը: Այս ընթացքում ի հայտ եկող նորագոյացությունները հիմնականում տեսակային հատկություններ են (ուղղահայաց քայլվածք, խոսք, գիտակցություն և այլն), հետևաբար տարիքային այս ցիկլի իմաստը տեսակային հատկությունների ձևավորումն է: Երկրորդ ցիկլը սկիզբ է առնում 8, 9 տարեկանից և ավարտվում է 20 տարեկանի շրջանում: Այս ցիկլն ուղղված է սեռային հատկությունների (երկրորդային սեռային հատկություններ, սեռադերային վարք և այլն) ձևավորմանը. Երրորդ ցիկլն սկսում է մոտ 20 տարեկանից և ավարտվում 40 տարեկանի շրջանում: Այս ցիկլում զարգացումն ուղղված է սոցիալական ակտիվության սուբյեկտի ձևավորմանը, այսինքն այս շրջանում ձևավորվում է անձնավորությունը որպես ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտ: Կյանքի վերջին ցիկլը կարելի է դիտել որպես ինքնաիրացման գործընթաց (մոտ 40 տարեկանից մինչև կյանքի

վերջը)։ Այս շրջանում՝ ձևավորված անձնավորությունը իրացնում, դրանով իսկ սպառում է իրեն որպես սեռային և սոցիալական ակտիվության սուբյեկտ:

3. Ներկայացված շրջաբաժանման հիման վրա կարելի է առանձնացնել անցումային տարիքները: Դրանք են 7–8, մոտ 20 տարեկանի և 40 տարեկանի շրջանները: Անցումային տարիքներն իրենց էությամբ սթրեսոգեն են, սակայն տարիքային ճգնաժամերը միևնույն անցումայնությամբ չեն պայմանավորված: Կան նաև զարգացման այլ օրինաչափություններով պայմանավորված ճգնաժամեր:

4. Յուրաքանչյուր տարիքային ցիկլում ի հայտ եկող նորագոյացությունների ազդեցությամբ տեղի է ունենում ինքնագիտակցության վերակառուցում, և այս գործընթացը նույնպես սթրեսոգեն բնույթ է կրում: Ինքնագիտակցության վերակառուցումների շրջանները տարիքային ճգնաժամերի մյուս խումբն են կազմում, որոնց սթրեսոգենությունը զարգացման միանգամայն այլ օրինաչափություններով է պայմանավորված: Այս շրջաններում անձնավորության յուրահատուկ ծնունդ է տեղի ունենում. մարդն սկսում է ընկալել իրեն որպես նոր ակտիվության սուբյեկտ, փորձում է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում նոր ակտիվությունը և ինքը որպես այն իրականացնող, նա նաև ձգտում է ինքնահաստատվել տվյալ ակտիվության մեջ: Հենց այս ինքնաորոնումների, ինքնահաստատմանն ուղղված ինքնափորձարկումների հետևանքով էլ այս շրջանները ճգնաժամային են դառնում: Այս շրջանների համար, կարծում ենք, նպատակահարմար է օգտագործել «Անձնավորության զարգացման ճգնաժամեր» հասկացությունը, քանի որ դրանք պայմանավորված են ես–համարգում տեղի ունեցող որակական տեղաշարժերի հետ՝

Անձնավորության զարգացման ճգնաժամային տարիքներն են 3 տարեկանի շրջանը կյանքի առաջին ցիկլում, երկրորդում՝ 12–14, երրորդում՝ 25–32 և կյանքի վերջին ցիկլում 55–65 տարիքային շրջանները:

5. Երեք տարեկանի շրջանում տեղի է ունենում ինքնագիտակցության առաջին վերակառուցումը և դրանով պայմանավորված ճգնաժամը: Այս տարիքում ինքնագիտակցությունը տեսակային բնույթ է կրում, այսինքն երեխան սկսում է գիտակցել իրեն որպես մարդ: Այս տարիքի

ճգնաժամային ախտանշաններով երեխան փորձում է մեծերին ընդունել տալ, թերևս նաև ինքն ընդունել իր լիարժեք մարդ լինելու հանգամանքը:

6. Դեռահասության շրջանում մոտ 12–14 տարեկանում, տեղի է ունենում ինքնագիտակցության երկրորդ վերակառուցումը և ճգնաժամը: Այս դեպքում տարբերակվում է սեռային ինքնագիտակցությունը. երեխան սկսում է ընկալել իրեն որպես տղամարդ/կին և որպես այդպիսին՝ փորձում է ինքնահաստատվել: Ճգնաժամի ընթացքում ձևավորվում է երեխայի սեռային ես–կոնցեպցիան, ինքնագնահատականը, վերաբերմունքը սեփական ես–ի որպես սեռային ակտիվության սուբյեկտի նկատմամբ: Միևնույն ժամանակ երեխան փորձում է կողմնորոշվել այն հարցում, թե ինչ է նշանակում լինել կին/տղամարդ, սկսում է յուրացնել սեռադերային վարքի նորմերը:

7. 25–32 տարիքային շրջանում ինքնագիտակցության վերակառուցումը և ճգնաժամը կապված են սեփական ես–ը որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ, ընկալելու հետ: Երիտասարդը սկսում է գիտակցել իրեն որպես ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտ սկսում է մշակել այդ ակտիվությունների, ինչպես նաև իր որպես դրանց կրողի կոնցեպցիաները, փորձում է ինքնահաստատվել նշված ոլորտներում:

8. Ինքնագիտակցության վերջին վերակառուցումը և դրանով պայմանավորված ճգնաժամը վերաբերում է 55–65 տարիքային շրջանին և կապված է սեփական ես–ի՝ որպես մահկանացուի գիտակցման հետ: Գիտակցելով սեփական ես–ը որպես մահկանացու մարդն սկսում է այդ տեսանկյունից գնահատել իրեն, իր անցած ուղին և ապագան: Ճգնաժամային ախտանշանները հիմնականում պայմանավորված են մահվան տագնապով՝

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալավերդյան Ա. Երեք տարեկանի ճգնաժամի ախտանշանների մեկնաբանությունը նախադպրոցականների կողմից, Դիպլոմային աշխատանք, Խ. Աբովյանի անվ. ՊՄՀ, Երևան, 1997, 52 էջ:
2. Ազատյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, 635 էջ:
3. Դադոյան Վ. Անձնավորության զարգացման ճգնաժամը 55-65 տարիքային շրջանում, Դիպլոմային աշխատանք, ԵՊՀ, Երևան, 2003, 54 էջ:
4. Թութունջյան Հ. Ա Երեխայի հոգեբանության հարցեր, Եր., 1980, 188 էջ:
5. Լեոնտև Ա. Ն. Հոգեկանի զարգացման պրոբլեմները, Եր., 1968, 570 էջ:
6. Խուդոյան Ս. Ս. Մարդու կյանքն ուղին և իմաչնիրուկները, Հոգի, հոգեբանական տարեգիրք, 1998, հ. Բ, էջ 26-42:
7. Խուդոյան Ս. Ս Հիսուս Քրիստոսի անձնավորության հոգեբանական վերլուծության փորձ (տարիքային-հոգեբանական մոտեցում), Հոգեկան առողջությունը և քրիստոնեությունը, Եր., 2001 էջ 57-64
8. Խուդոյան Ս Ս Նևրոզների դրսևորմանը նախորդած սթրեսների առանձնահատկությունները 26-60 տարեկանում, թեզիսներ ՀՍՀ պրոֆեսորաստասխոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցողների և գիտաշխատողների 48-րդ գիտաժողովի զեկուցումների (նոյեմբերի 19-22, 1996), Երևան, Մանկավարժ, 1998:
9. Խուդոյան Ս Ս Մարդու կյանքի անցումային և ճգնաժամային տարիքները, Գիտություն և տեխնիկա, N 1-3, 1999, էջ 38-43:
10. Խուդոյան Ս. Ա. Երեք տարեկանի ճգնաժամը և նախադպրոցականի հոգեախտաբանական որոշ համախտանիշների առանձնահատկությունները, Առողջապահություն, N 6 1999, էջ 29-31.
11. Կոն Ի. Ինչպիսին են նրանք իրենց պատկերացմամբ, Եր., Լույս, 1978, 98 էջ.
12. Նալչաջյան Ա. Հոգեբանական բառարան, Եր. 240 էջ:
13. Նալչաջյան Ա. Սահվան հոգեբանություն, Եր., Փյունիկ, 1992. 123 էջ.
14. Սիմոնյան Գ. Զարգացման ճգնաժամը 25-32 տարեկանում. Դիպլոմային աշխատանք, ԵՊՀ Երևան, 2002, 60 էջ:
15. Պերուշո Ա. Վան Գոգի կյանքը, Եր., Հայաստան, 1990:
16. Адлер А. Практика и теория индивидуальной психологии. М., Прогресс, 1995, 296 с.
17. Александрова К. Проблемы социальной и психологическои геронтологии. Лен., Изд. ЛГУ, 1974, 185 с.
18. Ананьев Б. Г. О проблемах современного человекознания. М., "Наука", 1977, 380 с.
19. Ананьев Б. Г. Избранные психологические труды в 2 томах, т.1, М., "Педагогика", 1980, 101 с.
20. Антонов А. И. Социология рождаемости. М., 1980, 271 с.
21. Антонов А. И. Проблемы методологии и методики исследования социально-психологических аспектов репродуктивного поведения семьи, Автореф. канд. дисс. М., 1973, 25 с.
22. Аршавский И. А. Физиологические механизмы и закономерности индивидуального развития. М., " Наука", 1982, 270 с.

23. Артемова О. Ю. Личность и социальные нормы в раннепервобытной общине. М. "Наука", 1987, 197 с.
24. Ассаджоли Р. Психосинтез. М., "REFL-book", 1994, 314 с.
25. Ассаджиолли Р. Самореализация и психологические потрясения,- В кн.: Психология возрастных кризисов: Хрестоматия, сост. К. В. Сельченок, Минск-Москва, "Харвест", 2001, с. 511-537.
26. Балл Г.А. Теория учебных задач. М., "Педагогика", 1990, 184 с.
27. Бернс Р. Развитие Я концепции и воспитание. М., "Прогресс", 1986, 421 с.
28. Блонский П. П. Избранные психологические произведения. М., 1964, 547 с.
29. Блонский П. П. Педология. М., Гос. Уч. Пед. изд., 1934, 356 с.
30. Блюм Г. Психоаналитические теории личности. М., изд. КСП, 1996, 247 с.
31. Божович Л. И. Этапы формирования личности.- В кн.: Возрастная и педагогическая психология: тексты. М., Изд. МГУ, 1992, с. 38-45.
32. Божович Л. И. Проблемы формирования личности. Избр. психолог. труды. Воронеж, 1995, 352 с.
33. Болдырева С. А. Рисунки детей дошкольного возраста больных шизофренией. М., "Медицина", 1974, 160 с.
34. Бойко В. В. Рождаемость. М., "Мысль", 1985, 238 с.
35. Бочаров В. В. Антропология возраста. СПб. Изд. С.-Петербургского университета, 2001, 196 с.
36. Братусь Б. С. К проблеме развития личности в зрелом возрасте.- Вестник МГУ, Сер.14, Психология, 1980, N 2, с. 3-12.
37. Братусь Б. С. Психологические аспекты нравственного развития личности. М., "Знание", 1977, 96 с.
38. Венгер А. Л. Переход от дошкольного к младшему школьному возрасту.- В кн.: Особенности психического развития детей 6-7 летнего возраста. М., Педагогика, 1988, с. 4-12.
39. Вереникина И. М. Развитие ребенка при переходе от младшего школьного к подростковому возрасту.-В кн.: Писхология современного подростка. М., "Педагогика", 1987, с. 56-87.
40. Вейл С. С. Танатология и значение ее для клиники.- Клиническая медицина, 1974, т. 52, N 1, с. 23-31.
41. Вишневский А. Г. О мотивоционной основе рождаемости.-В кн.: Демографическое развитие семьи. Под ред. А. Г. Волкова, М., " Мысль", 1979, с. 73-91.
42. Волков А. Г. Семья-объект демографии. М., "Мысль", 1986, 270 с.
43. Выготский Л. С. Собрание сочинений. т. 4, М., "Педагогика", 1984, 432 с.
44. Выготский Л. С. Собрание сочинений, т. 6, М., "Педагогика", 1984, 400 с.
45. Гаспарова Е. М. Коррекционные игры письма для детей дошкольного возраста с синдромом заниженной самооценки.- В кн.: Игра и развитие личности дошкольника. Под ред. Г. Г. Кравцова и др. М., 1985, с. 38-51
46. Гаулд Р., Левинсон Д., Вейлант Д. Ступени жизни. Наука и жизнь, 1977, N 2, с.135-136.
47. Ганзен В. А., Головей Л. Н. К системному описанию онтогенеза человека.- Психологический журнал, 1980, т.1, N 6, с. 42- 53.

48. Гегель, Философия религии. М. " Мысль", 1976, 533 с.
49. Гиндикин В. Я. Лексикон малой психиатрии, М. "Крон— Пресс", 1997, 576 с.
50. Головаха Е. И. Особенности отношения к жизни на поздних этапах жизненного пути.— В кн. Жизненный путь личности. Под ред. Л. В. Сохань, Киев, "Наукова Думка", 1987 с. 225— 236.
51. Гурева В. А. Психогенные расстройства у детей и подросткок, М. "Крон— Пресс", 1996, 208 с.
52. Гускова Т. В. Психологический анализ симптоматики кризиса 3 лет.— Новые исследования в психологии и возрастной физиологии, 1989. N 1, с. 32—37.
53. Давыдов В. В., Варданян А.У. Учебная деятельность и моделирование. Ереван.: Луйс, 1981.— 220 с.
54. Дарский Л. Е. Рождаемость и репродуктивная функция семьи.— В кн.: Демографическое развитие семьи. Под ред. А. Г. Волкова, М., 1979 с. 85—125.
55. Джемсон Л. Очерк марксистской психологии. М., Кн. изд—во "Современные проблемы", 1925, 226 с.
56.Дильман В. М. Большие биологические часы. М., 1986, 254 с.
57. Дильман В. М. Хронобиологические аспекты геронтологии и гериатрии.— В кн.: Хронобиология и хрономедицина. М., "Медицина" 1989, с. 323—335.
58. Донченко Е. А. Жизненная драма как социально—психологическое явление.— В кн.: Жизнь как творчество. Киев, 1985, с. 85—98.
59. Драгунова Т. В. Проблема конфликта в подростковом возрасте.— Вопросы психологии, 1972, N 2, с. 51— 63.
60. Дубровина И. В. Практическая психология образования. М., 1998, 260 с.
61. Елагина М. Е. Кризис 7 лет и подход к его изучению.— Новые исследования в психологии и возрастной физиологии, 1989, N 1, с. 37—42.
62. Елизаров В. Модель управления репродуктивным поведением.— В кн.. Управление демографическими процессами. М., 1980, с. 45—64.
63. Ермолова Т. В., Мущурякова С. Ю., Ганошенко Н. И. Особенности личностного развития дошкольников в предкризисной фазе и на этапе кризиса 7 лет. Вопросы психологии, 1999, N 2. с. 12—21.
64. Заззо Р. Стадии психического развития ребенка.— В кн.: Развитие ребенка. Под ред. А. В. Запорожца и Л. А. Венгера, М., "Просвещение", 1968, с. 131— 161.
65. Знание—сила, N 2, 2000.
66. Исаев И. Т. Диалектика и проблема развития. М., "Высшая школа", 1979, 181 с.
67. Иванова Е. В. Социализация детей в Тайланде.— В кн.: Этнография детства. Под ред. И. С. Кона и А. М. Решетова, М., "Наука", 1988, с. 62—83.
68. Каган В. Е. Аутизм у детей. М., "Медицина", 1981, 208 с.
69. Карягин К. М. Сакиа Муни (Будда), С. Петербург, 1897, 80 с.
70. Киселева О. А. Жизненный путь как процесс самореализации личности.— В кн.: Жизненный путь личности, Киев, "Наукова думка", 1987, с. 118—133.
71. Козлов В. И. Этническая демография. М., 1972, 240 с.
72. Кле М. Психология подростка. М., "Педагогика", 1991, 176 с.
73. Климов Е. А. Введение в психологию труда. М., МГУ, 1988, 197 с.

74. Коган А. Б., Наумов Н. П., Ретабек Б. Г. Биологическая кибернетика. М., 1977, 408 с.
75. Кон И. С. Введение в сексологию М., "Медицина". 1988, 320 с.
76. Кон И. С. Психология ранней юности. М., "Просвещение", 1989. 255 с.
77. Кон И. С. Категория "Я" в психологии.— Психологический журнал, 1981, Т. 2, N 1, с. 25—38.
78. Кон И. С. Ребенок и общество. М., "Наука", 1988, 270 с.
79. Кондаков Н. И. Логический словарь— справочник. М., "Наука", 1975, 720 с.
80. Конечный Р., Боухал М. Психология в медицине. Прага, "Авиценум", 1974, 405 с.
81, Корнеев В.И. Сущность учения буддизма.— В кн.: Философские вопросы буддизма. Под ред. В. В. Мантатова и др., Новосибирск, 1984, с. 10—20.
82. Крылов Д. Н. Критические периоды в психофизиологическом развитии детей и подростков.— В кн.: Психогигиена детей и подростков. Под ред. Г. Н. Сердюковской и Г. Гельница, М., "Медицина", 1985, с. 17—35.
83. Кудрявцев Т.В., Шегурова В.Ю. Психологический анализ динамики профессионального самоопределения личности.— Вопросы психологии, 1983, N 2, с. 51—59.
84. Кузнецова И. К. Психологические особенности осознания себя как личности определенного пола в юношеском возрасте. М., 1987, 325 с.
85. Лазарев П. П. Современные проблемы биофизики. М.— Л., 1945, 47 с.
86. Ленин В. И. Полное собрание сочинений в 55 томах, т. 29, М., Политиздат, 1954—1981.
87. Лурия А. Р. Об историческом развитии познавательных процессов. М., "Наука", 1974, 172 с.
88. Леонтев А. Н. Деятельность, сознание, личность. М., Полит. Лит. 1975, 304 с.
89. Леонтев А. Н. Избранные психологические произведения. Т. 1, М. "Педагогика", 1983, 392 с.
90. Ливехуд Б. Ход жизни человека, в кн.Психология возрастных кризисов: в кн. Психология возрастных кризисов. Хрестоматия, сост. К. В. Сельченок, Минск— Москва, "Харвест", 2001, с. 142—194.
91. Личко А. Е. Подростковая психиатрия. Ленгинград, "Медицина", 1985, 416 с.
92. Лисина М. И. Проблема онтогенеза общения. М., "Педагогика", 1986, 281 с.
93. Логинова Н. А. Развитие личности и его жизненный путь.— В кн.: Принцип развития в психологии. М., "Наука", 1978, с. 156—173.
94. Мантейфел Б. П. Экологические и эволюционные аспекты поведения животных. М., "Наука", 1987, 270 с.
95. Маркосян А. А. Вопросы возрастной физиологии. М., 1974, 223 с.
96. Маркова А. К. Психология професионализма.—М. 1996, 315 с.
97. Маркс К. Капитал. Т.1, 1955.
98. Массен П., Конгер Дж., Каган Дж., Гивитц Дж. Развитие личности в среднем возрасте.— В кн: Психология личности. Тексты, М: МГУ, 1982, с.182—187.
99. Мейли Р. Различные аспекты Я.— В кн.: Психология личности.Тексты, М., МГУ, 1982, с. 132—142.

100. Мид М. Культура и мир детства. М., Наука, 1988, 429 с.
101. Миклин А. М., Подольский В. А. Категория развития в марксистской диалектике. М , Мысль, 1980, 166 с.
102. Моргун В. Ф., Ткачева Н. Ю. Проблема периодизации развития личности в психологии. М., МГУ, 1981, 84 с.
103. Мухина В.С. Детская психология, М., Просвещение, 1985, 272 с.
104. Мюссен П. и др. Развитие личности ребенка. М., Прогресс, 1987, 273 с.
105. Непомнящая Н. И. Основные компоненты психологической структуры личности.— В кн.: Опыт системного исследования психики ребенка. Под ред. Н. И Непомнящая. М., Педагогика, 1975, 24—66 с.
106. Новоженов Ю. И. Статус — секс и эволюция человека, Свердловск, Изд—во Урал. Ун—та, 1991, 160 с.
107. Обуховский К. Психология влечений человека. М., Прогресс, 1977, 247 с.
108. Пантелеева Г. П. и др. Гебоидная шизофрения. М., Медицина, 1986, 192 с.
109. Перри Дж. Духовный кризис и обнавление, в кн. Психология возрастных кризисов: Хрестоматия, сост. К. В. Сельченок, Минск— Москва, Харвест, 2001, с. 495—510.
110. Петровский А. В. Развитие личности Возрастная периодизация.— В кн.: Психология развивающейся личности. Под ред. А. В. Петровского, М., Педагогика, 1987, с. 38—76.
111. Петровский А. В. Принцип ведущей деятельности и проблема личностно—образующих видов деятельности при переходе от детства к взрослости,— В кн.: Психологические условия и механизмы воспитания подростков. М., 1983, с.12—35.
112. Пиаже Ж. Избранные психологические труды. М., Просвещение, 1969, 659 с.
113. Пиняева С. Е., Андреев И. В. Личностное и профессиональное развитие в период зрелости.— Вопросы психологии, N 2, 1998, с. 3—10.
114. Пименов Э.К. Франциск Ассизский, в кн. Будда, Конфуции, Магомед, Франциск Ассизский, Савонарола, М. 1995, с. 211—279.
115. Платон, Законы. IV, 721 а—д, 1968, 248 с.
116. Платонов К. К. О системе психолгии. М., Мысль, 1972, 216 с.
117. Поливанова К. Н. Психологический анализ кризисов возрастного развития.— Вопросы психологии, 1994, N 1, с. 61—70.
118. Поливанова К. Н. Специфические характеристики развития в переходные периоды (кризис одного года), Вопросы психологии, 1999, N 1, 42—49.
119. Поливанова К. Н. Психология возрастных кризисов. М., Высшее образование, 2000, 178 с.
120. Психология современного подростка. Под ред. Д. И. Фельдштейн, М., Педагогика, 1987, 240 с.
121. Психологический словарь. Под ред. А. В. Петровского и М. Г. Ярошевского, М., Политиздат, 1990, 494 с.
122. Психологический словарь. Под ред. В. В. Давыдова и др. М., Педагогика, 1983, 448 с.
123. Ремшмидт Х. Подростковый и юношеский возраст. М., Мир, 1994.

124. Розова С. С. Классификационная проблема в современной науке. Новосибирск, Наука, 1986, 223 с.
125. Роуз Ф. Аборигены австралии. М., 1981, 318 с.
126. Рубинштейн С. Л. Проблемы общей психологии. М., Педагогика, 1976 416 с.
127. Сапогова Е. Е. Своеобразие переходного периода детеи 6—7 лет.—Вопросы психолгии, 1986, N 4, с. 36— 43.
128. Савинов Л. И. Семья и общество: история, современность и взгляд в будущее, Саранск, изд: Морд. ун—та, 1992, 144 с.
129. Свядощ А. М. Женская сексопатология. М., Медицина, 1988, 176 с.
130. Слободчиков В. И., Цукерман Г. А. Интегральная периодизация общего психического развитияю.— Вопросы психологии, 1996, N 5, с. 51—57.
131. Словарь иностранных слов. М., изд. Рус. Яз., 1983, 608 с.
132. Соколова Е. Т. Самосознание и самооценка при аномалиях личности. М., изд. МГУ, 1989, 260 с.
133. Соловьев В. Смысл любви. Соч. в 2 т., т. 2, М., Современник, 1991, 524 с.
134. Спиркин А. Происхождение сознания. М., Госполитиздат, 1960, 471 с.
135. Столин В. В. Самосознание личности. М., изд. МГУ, 1983, 286 с.
136. Сухарева Г. Е. Лекции по психиатрии детского возраста. М., Медицина, 1974, 320 с.
137. Тайсон Ф., Тайсон Р., Психоаналитические теории развития Екатеринбург, Деловая книга, 1998, 528 с.
138. Тих Н. А. Предистория общества. Лен., изд. ЛГУ, 1970, 309 с.
139. Толстой Л. Н. Исповедь.— В кн., Психология личности.Тексты. М., изд. МГУ, 1982, с. 242—250.
140. Толстых А. В. Возрасты жизни. М., Молодая гвардия, 1988, 221 с.
141. Томе Г. Теоретические и эмпирические основы психологии развития человеческой жизни.— В кн. Принцип развития в психологии. Под ред. Л. И. Анциферова, М., Наука, 1978, с. 173—196.
142. Тювина Н. А. Психические нарушения у женщин в период климактерия. М., 1996, Крон—Пресс, 224 с.
143.Уайт Б. Первые три года жизни. М., 1982, 176 с.
144. Уотсон Л. Ошибка Ромео, в кн. Психология смерти и умирания, Минск, Харвест, 1998, с. 403—608.
145. Фабри Э. Основы зоопсихологии, М., изд. МГУ, 1976, 287 с .
146. Фельдштейн Д. И. Психология развития личности в онтогенезе. М., Педагогика, 1989, 208 с.
147. Филиппов А. Ф. Функциональный подход.— В кн.: Современная западная социология.: Словарь, М., Политиздат, 1990, с. 380—383.
148. Франкл В. Человек в поисках смысла. М., Прогресс, 1990, 368 с.
149. Фрейд З. Лекции по введению в психоанализ. М., Наука, 1989, 456 с.
150. Фрейд З. Я и оно. М., МПО МЕТТЭМ, 1990, 56 с.
151. Хаджнал Дж. Европейский тип брачности в ретроспективе.— В кн.: Брачность, рождаемость, семья за 3 века. М., Статистика, 1979, с. 14—70.
152. Хайнц Р. О регрессии.— В кн., Энциклопедия глубинной психологии. Т. 1, М., 1998, с. 320—332.

153. Хуземан Ф. Об Образе и смысле смерти. М., Энигма, 1997, 144 с.
154. Чарквиани Д. Структурные и функциональные особенности трудовых установок личности. Тб., Мецниереба. 1988, 121 с.
155. Чеснокова И. И. Особенности развития самосознания в онтогенезе.— В кн.: Принцип развития в психологии. М., Наука, 1978, с. 316—336.
156. Чирков В. И. Мотивация трудовой деятельности. Критический анализ зарубежных теории трудовой мотивации. Ярославль, Яр.Гос.Ун—т, 1985, 89 с.
157. Чопра Д. Нестареющее тело, вечный дух, М. КРОН—ПРЕСС, 1995, 368 с.
158. Чуйко Л. В. Браки и разводы. М., Статистика, 1975, 175 с.
159. Шадриков В. Д. Проблема системогенеза профессиональной деятельности. Наука, 1982, 185 с.
160. Шелби Б. Тесты для детей, Тюмень, Скорпион, 1996, 127 с.
161. Шихи Г. Тайны жизненного цикла, в кн.Психология возрастных кризисов: Хрестоматия, сост. К. В. Сельченок, Минск— Москва, Харвест, 2001, с. 100—142.
162. Шовен Р. От пчелы до гориллы. М., Мир, 1965, 296 с.
163. Шульга Н. А. Представление о жизненном пути личности в народной культуре.— В кн.: Жизненный путь личности. Наукова думка, Киев, 1987, с. 171—189.
164. Щур В. Г. Методика изучения представления ребенка об отношения к нему других людей. В кн.: Психология личности. М., 1982, с. 82—100.
165. Эльконин Д. Б. К проблеме периодизации психического развития.— Вопросы психологии, 1971, N 6, с. 5—18.
166. Эльконин Д. Б. Избранные психологические труды. М., 1989, 560 с.
167. Эриксон Э. Детство и общество. Санкт—Петербург, Ленато, 1996, 592 с.
168. Эриксон Э. Идентичность: юнность и кризис, М., Прогресс, 1996, 295 с.
169. Юнг К. Г. Проблемы души нашего времени. М., 1993, 336 с.
170. Юнг К. Г. Психология бессознательного. М., Канон, 1994, 320 с.
171. Юнг К. Г. Ответ Иову, М., Канон, 1995, 352 с.
172. Якобсон С. Г. Морева Г. И. Адекватная самооценка как условие нравственного воспитания дошкольников.— Вопросы психологии, 1985, N 3, с. 18—26.
173. Ames L. B. Changes in Rorschach response throughout the human life span. Genetic psychology monographs, 1974, 125 p.
174. Allgeier A. R., Allgeier E. R. Sexual interactions. Toronto D.Heath & comp.1988, 645 p.
175. Atchley R. C. *The social forces in later life: An introduction to social gerontology.* Belmont, CA: Wadsworth, 1972, 532 p.
176. Bardwick J. M. Evolution and Parenthood: Social issues. 1974, vol. 30 (4)
177. Bee H. E. The journey of adulthood N. Y. 1987. 446 p.
178. Bengston V. L., Reedy M. N., Gordon C. Aging and Self—concept.In. Handbook of Psychology of aging. N. Y. 1985, p. 265—290
179. Benedict R. Continuities and Discontinuities in Cultural Conditioning. Psychiatry. 1938.
180. Bettelheim B. Joe. A mechanical boy. Scientific American. 1959. p 161—167.

181. Bezzubova E. B. Depersonalization as a developmental disorder of self consciousness. Journal of neuropathology and psychiatry im. S. S. Korsakova, 93 (3). From Medline (R) 1/94—1/95
182. Bermudes J. L. The paradox of self—consciousness. MIT press, 1998, 365 p.
183. Bichler R. F. Child Development: An introduction. Boston: Houghton Mifflin, 1976.
184. Bigner J. J. Parent—child relations. An introduction to parenting. Macmillan publ. Comp. N. Y. 1985.
185. Bishof J. Adult psychology. N. Y. Harper & Row, 1969. 320 p.
186. Blazer D. G., Huges D. C., George L. K. The Epidemiology of Depression in an Elderly community Population. The Gerontologist, 1987, p. 85—94.
187. Blos P. On adolescence. Free PressGlencoe. N. Y., 1962, 269 p.
188. Buhler Ch. Der menschliche lebenslauf als psychologisches problem, Leipzig, 1933.
189. Buhler Ch. Genetic aspects of the self, N.Y., 1962, 269 p.
190. Burgess A. W., Baldwin B. A. Crisis intervention: Theory and practice. Englewood Cliffs: Prentice Hall inc.1981, 333 p.
191. Buttler R. Phisical and Psychological Problems of Aging. In Readings in Aging and Death. N. Y., Harper and Row, 1982.
192. Butler R. N., Lewis M.I. Aging and Mental Health. St. Louis c. v. Mosby Comp. 1982.
193. Butler R. N. Toward the Psychiatry of the Life Cycle: In Readings on Aging and Death. N. Y., Harper & Row. 1982.
194. Cameron N. Personality development and psychopathology. Houghton Mifflin Co. N. Y., 1984, 747 p..
195. Caplan G. Principles of preventive psychiatry. N. Y. Basic Books inc.1964.
196. Castiglia P. Th., Harbin R. E. Child health care. Philadelfia: J.B.Lippincott comp.1992. 1054 p.
197. Cath S. Some dynamics of middle and later years: A study in depletion and restitution: In: Geriatric Psychiatry: Grief, Loss, and Emotional Disorders in the Aging Process, Ed. M.A. Berezin S. H. Cath. N. Y. International universities press, inc. 1979, p. 152—174.
198. Chalidze V. Hierarchical Instinct and Human Evolution. Socio—biological approach.. 1989.
199. Chiland C. L'enfant de six ans devenu adolescent. Revue de neuropsychiatrie Infantile et d'hygiene mentale de L'enfance, 1978, 26, 12. Цит. по: Кле М.Психология подростка. М., Педагогика, 1991.
200. Colman J. C. The Nature of Adolescence. Methuen London, 1980
201. Cumming E., Henry W. Growing old: the process of disingagement. N. Y., Basic Books, 1961, 542 p.
202. Dacey J. Adult development. Illinois: Scott, foresman & co. Glenview, 1982.
203. Depression in the Elderly. Interdisciplinary approach. N. Y., J. W. Willey & Sons, 1987.
204. Douvan E., Adelson J. The adolescent experience. N.Y., 1966. Цит. по: Кле М. Психология подростка. М., Педагогика, 1991.

205 Dusek J. B., Flaherty J F The development of the self–consept during the adolescent years.Chicago yniv.press, 1981.
206. Dusen Van V The theory and practice of exsistential analysis. In: Psychoanalysis and exsistential philosophy E. P. Duton & co. inc., 1962, p 24–41.
207 Eizenberg L. A. Developmental approach to adolescence. Children. 1965, Vol. 12 , N 4. Цит. по Воробьева Л. И. и др. Психологическая роль и место подросткового возраста в онтогенезе.– В кн., Психология современного подростка. М., Педагогика, 1987, с. 6–35.
208. Elder Jr. G. H., Borgatta E. F., Lambert W W Adolescent socialisation and Development. In: Handbook of personality: Theory and research. Chicago: Rand McNally, 1968
209. Erikson E. Identity: Youth and Crises. N Y., Norton, 1968.
210. MacKinnon R A. Yudofsky S. C. Principles of the psychiatric evaluation. Philadelphia, J. B. Lippincot comp. 1991, 325 p .
211. Gurland B., Dean L., Cross P., Golden R. The Epidemiology of Depression and Dementia in the Elderly in Psychopathology in the aged. N.Y., Raven 1980
212 Gary F., Kavanagh C Psychiatric mental health nursing. N.Y., J. B. Lippincot comp. 1991, 1058 p.
213. Gould R. Transformations. N.Y., Simon & Shuster, 1978, 343 p.
214. Hall C. S. Adolecsence. Vol.1, 2, 1904, 1905, Цит. по Кле М.Психология подростка. М., Педагогика, 1991, 176 с.
215. Hall C. S. Adolescence: Its Psychlogy and Its Relations to Physiology, Antropology, Sociology, Sex, Crime, Religion and Education. N.Y., V. 1, 2.1922.
216. Hathaway J. R., Monachesi E. D. Adolescent personality and behaviour. Minneapolis, Minnesota Univ press, 1963
217. Havighurst R. S. Developmental tasks and education. N Y., David Mckey comp 1972, 338 p.
218 Havighurst R J., Albrecht R. Older people. N.Y., Longmans Green, 1980, 415 p.
219 Herzberg F. The motivation to work. In Studies in personal and Industrial psychology, Ed by Fleishman E. A., Dorsey press, 1970. Цит по Чирков В. И. Мотивация трудовой деятельности: критический анализ зарубежных теории трудовой мотивации. Ярославль, Яр. Гос.Ун–т, 1985.
220. Hoff L A. People in crisis: understanding and helping Menlo Park, Ca.: Addison–Wesley Publishing comp 1978.
221. Hughes F. P., Noppe L. D. Human development across the life–span. N.Y 1985, 641 p
222. Jacques E. Death and the midlife crisis International journal of psychoanalysis, 1965, 46, p 502–514.
223. Johnes H. E., Mefarlane J M., Eichhorn D H. A progress report on grouth studies at the university of California, Vita humana, 1960, vol. 3 3. Цит. по Томе Г. Теоретические и эмпирические основы психологии развития человеческой жизни.– В кн. Принцип развития в психологии. Гл. ред. Л. И. Анциферова, М., Наука, 1978, с. 173–196.
224 Kalish R. A., Reynolds O. K. Death and Ethnicity: A Psychocultural Study. Los Angeles, University of Southern California press, 1976, 380 p
225 Kruger A The midlife transition: crisis or chimera Psychological reports, 1994, dec. 75 (3 pt 1), 1299–305
226 Lemon B. W., Bengston V. L., Peterson J A. An exploration of the activity theory of aging: Activity tipes and life satisfaction among in–movers to a retirement community Journal of Gerontology, 1972, N 27, 511– 523
227. Langen D. Probleme und prognosen der adoleszenten krize. In Muller H. Adoleszentenmedizin. Urban und schenbucher, Munchen, 1987. Цит по Ремшмидт Х. Подростковый и юношеский возраст. М., Мир, 1994.
228. Levinson D. The seasons of man's life. Knopf N Y. 1978, 363 p.
229 Lawton M P. Competence, environmental press and the adaptation of older people In Lawton M P , Windley P.G., Byerts T. O. (Eds.) Aging and the environment: Theoretical approaches N. Y. Springer publishing co. 1982, pp. 33–59:
230. Lorenz K. On aggression, N Y., 1974, 306 p.
231. Marcia J. E Development and validation of ego identity status Journal of personality and social psychology, N 3, p. 551– 558
232. Maslow A. Motivation and personality Rev. ed., N. Y., Harper & Row, 1970, 369 p
233. Maslow A. Critique of self– actualization. In: Journal of individual psychology, N 4, 1970, Цит. по Фейдман Дж., Фрейгер Р. Абрахам Маслоу и психология самоактуализации, в кн. Хрестоматия по гуманистической психологии, Институт общегуманитарных исследований М. 1995, с.111–152.
234. Masterson J. F., Washburne A The symptomatic adolescent: Psychiatric illness or adolescent turmoil? American journal of psychiatry, 1966, 122 Цит по Кле М. Психология подростка. М., Педагогика, 1991.
235 McCarthy S. Death anxiety. Gardner press, 1980 420 p.
236 Mld M Coming of age in Samoa N.Y. 1961. Цит. по Кле М. Психология подростка. М., Педагогика, 1991, 176 с.
237. Midle age and Aging. Ed. by B. Neugarten, Chicago univ.press, 1968, 536 p.
238 Miller C A Nursing care of older adults Scott, Foresman & comp.1990, 668 p.
239 Newman B. M., Newman P. R. Development through life. A psychosocial approach (3– rd ed.) Homewood. Il: The Dorsey Press 1984. 560 p.
240. Neugarten B. E. Personality and aging In: Handbook of the psychology of aging. N. Y., 1977, p.38–64
241 Offer D. Offer J. From Teenage to Young Manhood A psychological study Basic books, N. Y., 1975, 262 p.
242 Offer D , Offer J. Three Developmental rents through normal male adolescence Adolescent Psychiatry, 1976, vol 47, p. 567–575.
243 Okun Barbara F Effective Helping: Interviewing and Counseling Techniques. Pacific Grove. Brooks/Cole Publishing Company, 1997, 309 p.

244. Pitcher E. G., Schultz L H Boys and Girls at play South Hadley MA. Belgin and Garvey, 1983, 207 p.
245. Rutter M., Graham P., Chadwic O., Yule M Adolescent turmoil: fact or fiction Child Psychology and Psychiatry, 1976, 17, Ցիտ ըստ Кле М.Психология подростка. М., Педагогика, 1991, 176 р..
246. **Stout J. H. Dreamers and their dreams, internet, www. James–harvey–stout. Com**
247. Sheehy G Passages: Predictable crisis of adult life N. Y., 1976, 462 p.
248. Stevens–Long J , Cobb N J, Adolescence and early adulthood. Maifield publ comp. Palo Alto, 1983, 506 p.
249. Shlegel A The Adolescent socialization of the Hopi–girl, Etnology, 1973, N 12, pp 449–462.
250. Taffel S. Factors associated with low birth weight. Vital and health statistics, series 21, 37 In: Bigner J. J. Parent– child relations· An introduction to parenting, Macmillan publ. Comp. N.Y., 1985.
251. Thompson C. Psychoanalyses. Evolution and development. N.Y., 1950, 460 p.
252. Turner J. S., Helms D.B. Lifespan development. Holt, Rinehart, and Winston, N. Y., 1987, 683 p.
253. Vaillant G. Adaptation to life. Boston, Little Brown. 1977, 396 p..

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Ներկայացվող հարցարանը զուտ հետազոտական նպատակներ է հետապնդում: Ուշադիր կարդացեք հարցերը և առանց ժամանակի սահմանափակման, ինքնուրույն պատասխանեք դրանց:

Ձեր տարիքը _____ Սեռը _____

Կրթությունը միջնակարգ, բարձրագույն *(ընդգծել)*

Բնականավայրը _____

Ամուսնացած եք *(նշեք, թե որ տարիքում եք ամուսնացել)* _____

ամուսնացած չեք, ամուսնալուծված եք *(ընդգծել)*

Երեխաների քանակը _____

1. Ամուսնության հարցն ինձ լրջորեն սկսեց հետաքրքրել հետևյալ տարիքում. 18–22, 25–30, ավելի ուշ, չի հետաքրքրել (ընգծել):

2. Ամուսնության համար լավագույն տարիքը . 18–22, 25–30, ավելի ուշ, չգիտեմ (ընդգծել):

3. Մարդն սկսում է իրեն ծնող զգալ և գիտակցել ծնողական պատասխանատվությունը հետևյալ տարիքում. 18– 22, 25–30, ավելի ուշ, չգիտեմ (ընդգծել):

4. Ծնողական պատասխանատվություն ես սկսեցի զգալ հետևյալ տարիքում. 18–22, 25–30, ավելի ուշ, չեմ զգացել (ընդգծել):

5. «Ո՞վ եմ ես» և «ո՞ւր եմ գնում» հարցերն ինձ ամենաշատը հուզել են հետևյալ տարիքում. 13–16, 18–22, 25–30, 30–35, 35–40, ավելի ուշ, չեն հուզել (ընդգծել):


6. Իմ կյանքի համար պատասխանատվություն ես լիովին սկսեցի զգալ հետևյալ տարիքում. 13–16, 18–22, 25–30, 30–35, 35–40, ավելի ուշ, չեմ զգացել (ընգծել):

7. Կարելի է ասել, որ ես յուրատիպ «վերածննդյան» եմ ապրել հետևյալ տարիքում. 13–16, 18–22, 25–30, 35–40, ավելի ուշ, չեմ ապրել (ընդգծել):

8. Կյանքում իմ տեղը գտնելու հարցն ինձ ամենաշատը հուզել է հետևյալ տարիքում. 13–16, 18–22, 25–30, 35–40, ավելի ուշ, չի հուզել (ընդգծել):


9. Կյանքի իմաստի հարցն ինձ ամենաշատը հուզել է հետևյալ տարիքում. 13–16, 18–22, 25–30, 35–40, ավելի ուշ, չի հուզել (ընդգծել):

գրաֆիկ 1




1. Ամուսնության հարցն ինձ լրջորեն սկսեց հետաքրքրել հետևյալ տարիքում

գրաֆիկ 2




գրաֆիկ 3




2. Ամուսնության համար լավագույն տարիքը.

գրաֆիկ 4




որից

գրաֆիկ 5




3. Մարդն սկսում է իրեն ծնող զգալ և գիտակցել ծնողական պատասխանատվությունը հետևյալ տարիքում

գրաֆիկ 6




որից

գրաֆիկ 7




4. Ծնողական պատասխանատվություն ես սկսեցի զգալ հետևյալ տարիքում

գրաֆիկ 8




որից

գրաֆիկ 9




4. «Ո՞վ եմ ես» և «ո՞ւր եմ գնում» հարցերին ինձ ամենաշատը հուզել են հետևյալ տարիքում.

գրաֆիկ 10




որից

գրաֆիկ 11




5. Իմ կյանքի համար պատասխանատվություն ես լիովին սկսեցի զգալ հետևյալ տարիքում.

գրաֆիկ 12




գրաֆիկ 13




6. Կարելի է ասել, որ ես յուրատիպ «վերածննդյան» եմ ապրել հետևյալ տարիքում.

գրաֆիկ 14




գրաֆիկ 15




8. Կյանքում իմ տեղը գտնելու հարցն ինձ ամենաշատը հուզել է հետևյալ տարիքում.

գրաֆիկ 16




որից

գրաֆիկ 17




9. Կյանքի իմաստի հարցն ինձ ամենաշատը հուզել է հետևյալ տարիքում.

գրաֆիկ 18



որից

գրաֆիկ 19



ՍԱՄՎԵԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ԱՆՁԻ ՅԱՐՈՒԹՅԱՆ ՁԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՔՆԵՐԸ

Հրատարակչության տնօրեն — Մ ա շ ու Ս ա ռ ա գ ս ա ն ի ա ն
Գեղարվեստական խմբագիր՝ — Ա ր ա Բ ա ր դ ա ս ա ր ի ա ն
Վերստուգող սրբագրիչ՝ — Ն վ ա ր դ Փ ա ր ս ա դ ա ն ց յ ա ն
Համակարգչային ձևավորումը՝ — Լ ա լ ա Հ ո վ ս ե փ յ ա ն ի
Շապիկի համակարգչային մշակումը — Ա ր և ի կ Հ ա կ ո բ յ ա ն ի

Տպագրությունը՝ օֆսեթ: Շապիկը 60x84 1/16 Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 15.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ.
Գինը պայմանագրային.

«ՁԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051 Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+3741) 23-25-28,
Ֆաքս՝ (+3741) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www.zangak.am



ՍԱՄՎԵԼ ԽՈՒԴՈՅԱՆ

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի և Երևանի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնների դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սամվել Սուրենի Խուդոյանը «Աթրես» հոգեկան առողջության կենտրոնի ոչ դեղորայքային բժշկության բաժնի վարիչն է:

Շուրջ 40 գիտական հոդվածների և մեթոդական ձեռնարկի (2003 թ.) հեղինակ է: Հիմնադրել և խմբագրել է «Հոգի» հոգեբանական տարեգիրքը (1994 թ.), ինչպես նաև համանուն երկշաբաթաթերթը (2002 թ.):

Հիմնական հետազոտությունները վերաբերում են հոգեբանության և հոգեթերապիայի տեսական և կիրառական հարցերին: Այս աշխատությունը հեղինակի առաջին մենագրությունն է շուրջ տասնամյա հետազոտությունների արդյունք: